



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄԻԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՍԱՐՈՒԶՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ  
ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԾԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԸԱՐ  
102



ARCH. MESROB ASHJIAN  
BOO K SERIES  
102

ԵՐԵՎԱՆ  
ՊԱՏՄԻԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
2014

**Երաշխավորվել է հրատարակման ՀՀ ԳԱԱ Պատմության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագիրներ՝ ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,  
պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Մելքոնյան  
ի.գ.թ. Վ. Վարդանյան**

**Մարտյան Արմեն**

Մ399 Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներ ու պատմաիրավական հիմնավորումները/ Ա. Յ. Մարտյան. - Եր.: Պատմ. ինստիտուտ. 2014.- 332 էջ:

Մույն աշխատությամբ փորձ է կատարվում պատմական փաստերը համադրելով միջազգային իրավական նորմերի ու սկզբունքների հետ, վեր հանել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու նախանշել դրանց հաղթահարման պատմաիրավական հիմքերն ու հնարավորությունները:

Գիրքը նախատեսված է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու մասնավորապես պահանջատիրության հիմնահարցերով զբաղվողների, ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 941(479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ)52

ISBN 978-99941-73-85-3 © ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2014  
© Ա. Մարտյան

Հայոց ցեղասպանության մասին անցած տասնամյակների ընթացքում Հայ և օտարազգի պատմաբանները Հսկայական աշխատանք են կատարել այդ Հանցագործության տարբեր հիմնահարցերի ուսումնասիրման և լուսաբանման ուղղությամբ: Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է միջազգային կազմակերպությունների ու երկու տասնյակից ավել երկրների կողմից: Սակայն, չնայած այս ամենին, Թուրքիան շարունակում է ժխտել կատարված Հանցագործությունը, որը մինչ օրս մնում է անպատիժ: Այս տեսակետից Հայ ժողովրդի Համար թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում Հայոց ցեղասպանության հետևանքների Հաղթահարման հիմնահարցը ձեռք է բերել Համազգային նշանակություն: Արդի պայմաններում այս հարցի լուծումը ոչ միայն նպատակ է հետապնդում վերականգնել պատմական արդարությունը, այլև ապահովել Հայության անվտանգությունն ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում:

Պետք է նշել, որ իրավական Հարթության վրա Հայոց ցեղասպանության, որպես մարդկայնության դեմ կատարված Հանցագործության, ուսումնասիրությամբ զբաղվել են ինչպես Հայ, այնպես էլ օտարազգի որոշ մասնագետներ, փորձելով մատնանշել միջազգային իրավունքի տեսակետից Թուրքիայի պատասխանատվությունը Հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած Հանցագործության համար: Մասնավորապես այս հարցում բավականին լուրջ ներդրում ունի Հայազգի Հայտնի իրավաբան-միջազգայնագետ Յու. Բարսեղովը<sup>1</sup>:

<sup>1</sup> Барсегов Ю., Геноцид армян – преступление против человечества, Ер., 1990; Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, Ер., 1995; Ответственность государства за геноцид в международном праве, “Геноцид – преступление против человечества. Материалы I московского международного симпозиума”, М., 1997; Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999; Геноцид армян – преступление по международному праву, М., 2000; Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена “комиссии примирения” Гюндюз Актана), М., 2002; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, т. 1, М., 2002, т. 2, ч.1, М., 2003. т. 2, ч. 2, М., 2005; К вопросу о применимости конвенции 1948 года к геноциду армян, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 1, М., 2004; Новый этап признаний как условие реализации ответственности Турции

Հայ մասնագետներից այս հիմնահարցով Սփյուռքում և Հայաստանում գրադվել են նաև Ե. Թորիկյանը<sup>2</sup>, Վ. Տատրյանը<sup>3</sup>, Գ. Օհանյանը<sup>4</sup>, Հ. Հակոբյանը<sup>5</sup>, Ի. Արարյանը<sup>6</sup>, Վ. Վարդանյանը<sup>7</sup>, Ա. Պապյանը<sup>8</sup> և ուրիշներ, իսկ օտարազգի մասնագետներից՝ Ա. դե Ջայասը<sup>9</sup>, Իվ Տերնոնը<sup>10</sup> և ուրիշներ:

Սակայն պետք է նշել, որ իրավական հարթության վրա կատարված ուսումնասիրություններն ու հետազոտությունները կրում են ավելի շատ գիտատեսական բնույթ, այնինչ անհրաժեշտ է պատմական փաստերը և միջազգային իրավական տեսական գիտելիքները տեղափոխել գործնական-կիրառական հարթություն: Հարկավոր է հստակ պատկե-

за геноцид, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 3, Ep., 2005.

<sup>2</sup> Թորիկյան Ե., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Պեյրոս 1976: Հայաստանի և Եվրոպայի միջև ընկած ընդհանուր կազմող և ներառյալ հեղինակ Ե. Թորիկյան, Պեյրոս, 1978:

<sup>3</sup> Dadrian V. N., The key elements in the Turkish denial of the Armenian Genocide: A case study of distortion and falsification, Toronto, 1999; Дадриан В., Геноцид армян: содержание преступления, Ep., 2005; Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, “Геноцид – преступление против человечества. Материалы I московского международного симпозиума”, М., 1997.

<sup>4</sup> Оганян П., Геноцид армянского народа и защита прав человека, Ep., 2004.

<sup>5</sup> Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000: Տարրազգի հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Եր., 2002:

<sup>6</sup> Արարյան Ի., Տեղասպանությունը և դրա պատժելիությունը, Եր., 1996:

<sup>7</sup> Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանդ» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր N 1(17), Եր., 2006, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 8, Եր., 2003; Основания международно-правовой ответственности за геноцид армян, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 3, Ep., 2005.

<sup>8</sup> Տե՛ս Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Եր., 2007; Հնչեցրե՛ք զանգերը, սա մեր վերջին Սարդարապատն է, Եր., 2009: Հայոց պահանջատիրության հիմնախնդիրներն ու հեռանկարները, Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Եր., 2012:

<sup>9</sup> Տե՛ս Alfred de Zayas, Memorandum on the genocide against Armenians 1915–1923 and the application of the 1948 Genocide Convention, 2004.

<sup>10</sup> Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., 2003:

րացնել, թե ժամանակակից միջազգային իրավունքը ինչ գործնական հնարավորություններ է ընձեռում ցեղասպանության զոհ Հանդիսացող Հայ ժողովրդին հանելու այդ հանցագործության իրական դատապարտմանը և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային իրավունքում մեծ նշանակություն է տրվում նաև իրավակիրառական պրակտիկային, որը զգալի դեր է կատարում միջազգային իրավունքի տեսությունը հարստացնելու և նոր միջազգային իրավական նորմեր ձևավորելու գործում, անհրաժեշտ է նաև ուսումնասիրել այլ ժողովուրդների նկատմամբ կատարված ցեղասպանությունների դատապարտման գործընթացները, փորձելով դրանք դիտարկել իբրև նախադեպեր՝ Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար: Խոսքը մասնավորապես Ողջակիզման, Սրբբերնիցայի, Թուանդայի ցեղասպանությունների դատապարտման գործընթացների մասին է, որոնք միջազգային իրավունքի տեսակետից կարող են գործնական-կիրառական նշանակություն ունենալ և հիմք դառնալ Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար:

Բացի այդ, Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար կարևոր նշանակություն ունեն միջազգային տարբեր կազմակերպությունների ու ատյանների կողմից Հայոց ցեղասպանության որպես հանցագործություն որակման փաստերը, որոնք նույնպես կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում: Ավելին, այդ կառույցների կողմից ընդունված փաստաթղթերը հիմք են տալիս կարծելու, որ դրանք կարող են և պետք է ներգրավվեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում: Իսկ որ այդ կառույցների գործնական աջակցությունն ու օժանդակությունը չափազանց կարևոր կլինի Հաջողության հասնելու համար, կասկածից վեր է:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման առումով կարևոր նշանակություն ունեն նաև միջազգային պայմանագրերը, կոնվենցիաները այն իմաստով, որ դրանց դրույթների հիման վրա հնարավոր է ձևակերպել ու հանցագործ պետությանը ներկայացնել այնպիսի միջազգային իրավական պահանջներ, որոնք անխոցելի կլինեն միջազգային իրավունքի տեսակետից և ընդունելի միջազգային հանրության կողմից:

Առանձին դատավարությունների ուսումնասիրումը, մասնավորապես երիտթուրքերի դատավարությունը և Սողոմոն Թեհլիրյանի դատա-



Հայ մասնագետներից այս հիմնահարցով Սիյուսթում և Հայաստանում զբաղվել են նաև Շ. Թորիկյանը<sup>2</sup>, Վ. Տատրյանը<sup>3</sup>, Պ. Օհանյանը<sup>4</sup>, Հ. Հակոբյանը<sup>5</sup>, Ի. Արաբյանը<sup>6</sup>, Վ. Վարդանյանը<sup>7</sup>, Ա. Պապյանը<sup>8</sup> և ուրիշներ, իսկ օտարազգի մասնագետներից՝ Ա. դե Ջալասը<sup>9</sup>, Իվ Տերնոնը<sup>10</sup> և ուրիշներ:

Սակայն պետք է նշել, որ իրավական հարթության վրա կատարված ուսումնասիրություններն ու հետազոտությունները կրում են ավելի շատ դիտա-տեսական բնույթ, այնինչ անհրաժեշտ է պատմական փաստերը և միջազգային իրավական տեսական գիտելիքները տեղափոխել գործնական-կիրառական հարթություն: Հարկավոր է հստակ պատկե-

за геноцид, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 3, Ep., 2005.

<sup>2</sup> Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Պեյրոս 1976: Հայաստանում ինչու և ամերիկեան քննիչները, կազմող և ներածութեան հեղինակ Շ. Թորիկյան, Պեյրոս, 1978:

<sup>3</sup> Dadrian V. N., The key elements in the Turkish denial of the Armenian Genocide: A case study of distortion and falsification, Toronto, 1999; Дадриян В., Геноцид армян: содержание преступления, Ep., 2005; Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, “Геноцид – преступление против человечества. Материалы I московского международного симпозиума”, М., 1997.

<sup>4</sup> Оганян П., Геноцид армянского народа и защита прав человека, Ep., 2004.

<sup>5</sup> Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000: Տարրագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Եր., 2002:

<sup>6</sup> Արաբյան Ի., Յեղասպանությունը և դրա պատժելիությունը, Եր., 1996:

<sup>7</sup> Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր N 1(17), Եր., 2006, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 8, Եր., 2003; Основания международно-правовой ответственности за геноцид армян, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 3, Ep., 2005.

<sup>8</sup> Տե՛ս Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Եր., 2007: Հնչեցրե՛ք զանգերը, սա մեր վերջին Սարգարապատն է, Եր., 2009: Հայոց պահանջատիրության հիմնախնդիրներն ու հեռանկարները, Հայրենաստիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Եր., 2012:

<sup>9</sup> St’u Alfred de Zayas, Memorandum on the genocide against Armenians 1915–1923 and the application of the 1948 Genocide Convention, 2004.

<sup>10</sup> Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., 2003:

րացնել, թե ժամանակակից միջազգային իրավունքը ինչ գործնական հնարավորություններ է ընձեռում ցեղասպանության զոհ հանդիսացող Հայ ժողովրդին հասնելու այդ հանցագործության իրական դատապարտմանը և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային իրավունքում մեծ նշանակություն է տրվում նաև իրավակիրառական պրակտիկային, որը զգալի դեր է կատարում միջազգային իրավունքի տեսությունը հարստացնելու և նոր միջազգային իրավական նորմեր ձևավորելու գործում, անհրաժեշտ է նաև ուսումնասիրել այլ ժողովուրդների նկատմամբ կատարված ցեղասպանությունների դատապարտման գործընթացները, փորձելով դրանք դիտարկել իբրև նախադեպեր՝ Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար: Խոսքը մասնավորապես Ողջակիզման, Սրեբրենիցայի, Ռուանդայի ցեղասպանությունների դատապարտման գործընթացների մասին է, որոնք միջազգային իրավունքի տեսակետից կարող են գործնական-կիրառական նշանակություն ունենալ և հիմք դառնալ Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար:

Բացի այդ, Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար կարևոր նշանակություն ունեն միջազգային տարբեր կազմակերպությունների ու ատյանների կողմից Հայոց ցեղասպանության որպես հանցագործություն որակման փաստերը, որոնք նույնպես կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում: Ավելին, այդ կառույցների կողմից ընդունված փաստաթղթերը հիմք են տալիս կարծելու, որ դրանք կարող են և պետք է ներգրավվեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում: Իսկ որ այդ կառույցների գործնական աջակցությունն ու օժանդակությունը չափազանց կարևոր կլինի Հաջողության հասնելու համար, կասկածից վեր է:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման առումով կարևոր նշանակություն ունեն նաև միջազգային պայմանագրերը, կոնվենցիաները այն իմաստով, որ դրանց դրույթների հիման վրա հնարավոր է ձևակերպել ու հանցագործ պետությունը ներկայացնել այնպիսի միջազգային իրավական պահանջներ, որոնք անխոցելի կլինեն միջազգային իրավունքի տեսակետից և ընդունելի միջազգային հանրության կողմից:

Առանձին դատավարությունների ուսումնասիրումը, մասնավորապես երիտթուրքերի դատավարությունը և Սողոմոն Թեհլիրյանի դատա-

կան գործը, նույնպես կարող են իրավական հիմք դառնալ և օգտագործվել Հայոց ցեղասպանութան հետևանքների հաղթահարման գործում:

Հայոց ցեղասպանության հետևանքով Հայ ժողովրդի ունեցած կորուստների հատուցման հարցը քննարկելիս պետք նկատի ունենանք, որ գոյություն ունեն մի շարք կարևոր հարցեր, որոնք անմիջականորեն կապ ունեն տվյալ հանցագործության հետևանքների հաղթահարման գործընթացի հետ: Այս հարցի լուծման ճանապարհին կան կոնկրետ հիմնախնդիրներ, որոնք հաջողությամբ հաղթահարելու դեպքում միայն հնարավոր կլինի շարժվել առաջ և հասնել հարցի վերջնական կարգավորմանը: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Չափազանց կարևոր է հիմնավորել, որ Հայոց ցեղասպանությունը անկախ «գեներոցիդ» տերմինի կիրառումից հանցագործություն է համարվել նաև կատարման պահին և դրա համար պատասխանատվություն է սահմանված եղել նաև XIX դարի վերջին և XX դարի սկզբին գործող միջազգային իրավական նորմերով: Ակնհայտ է, որ ժամանակակից միջազգային իրավունքը այս հարցում իր վերաբերմունքը պետք դրսևորի, հենվելով նախկինում ձևավորված միջազգային իրավական նորմերի և դրանց սկզբունքների վրա:

2. Կարևոր հարցերից մեկն էլ հանդիսանում է այն, թե արդյո՞ք - ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում է Հայերի ցեղասպանություն կատարած Օսմանյան կայսրության իրավահաջորդը և հնարավոր է արդյո՞ք այդ հանցագործության պատասխանատվության տեղափոխումը ժամանակակից Թուրքիայի վրա Օսմանյան կայսրության չգոյություն պայմաններում:

3. Այս հարցի հետ սերտորեն առնչվում է այն, թե միջազգային իրավունքի տեսակետից պետության կառավարման ձևի կամ տարածքային փոփոխությունը կարող է արդյո՞ք ազդել ցեղասպանության կատարման համար տվյալ պետությանը պատասխանատվության կանչելու գործընթացի վրա:

4. Նշվածին պետք է հավելենք Հայոց ցեղասպանության իրագործման համար ներկայիս Հայաստանի Հանրապետության ժամանակակից Թուրքիային միջազգային-իրավական պահանջներ ներկայացնելու կամ միջազգային դատական ատյաններում որպես հայցվոր կողմ հանդես գալու իրավունքի հարցը:

5. Միջազգային իրավունքի տեսակետից արդիական է նաև ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի հետադարձ ուժի, այսինքն՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ դրա կիրառելության հարցի հիմնավորումը:

6. Նշված խնդիրների հետ մեկտեղ ծագում է նաև Հայոց ցեղասպանության իրագործման համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային պատասխանատվության կանչելու հնարավոր ձևերի ու միջոցների հարցը: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման տեսակետից չափազանց կարևոր են նաև մեխանիզմների և հաջորդական ճիշտ ու նպատակային քայլերի հստակեցման հարցերը: Այստեղ է, որ ծագում են ընդհանրապես ցեղասպանության հանցագործության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության կանչելու հարցերը, և սրա հետ սերտորեն առնչվող ինչպես ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի բացերի հաղթահարման, այնպես էլ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի իրավասությունները պարզելու խնդիրը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հարցում և այդ քայլերի նպատակահարմարության խնդիրները:

Հայոց ցեղասպանության դատապարտման և այդ հանցագործության հետևանքների լիարժեք հաղթահարման գործընթացը մեծապես պայմանավորված է նշված հիմնախնդիրների հստակ պատասխաններից:

Ներկայացվող աշխատության մեջ փորձ է կատարվել հրապարակել վրա եղած պատմագիտական և իրավագիտական ուսումնասիրությունների, միջազգային իրավական նորմերի և դիվանագիտական փաստաթղթերի հիման վրա ցույց տալ այն հնարավորությունները, որոնք կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում:

## ԳԼՈՒԽ I

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԳԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽԵՆ ԴԻՐՆԵՐԻ ԳԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Նախևառաջ հարկ ենք համարում նշել, որ վերջին ժամանակներս թուրքերի մոտ նույնպես նկատվում են Հայոց ցեղասպանության մասին «Հայկական անհիմն պնդումները» միջազգային իրավունքի տեսանկյունից քննելու միտումներ: Թուրքական պետությունը, ըստ էության՝ պատվեր է տվել թուրք մասնագետներին՝ միջազգային-իրավական տեսանկյունից «հիմնավորել», թե իբր՝ անցած դարասկզբին հայերի հետ Օսմանյան կայսրությունում կատարված իրադարձությունները չեն համապատասխանում ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի դրույթներին, որպեսզի հնարավոր լինի կասեցնել նրա միջազգային ճանաչման գործընթացը: Այսպիսով, թուրքերն էլ են գիտակցում, որ ներկա իրավիճակում առկա հիմնախնդիրը պատմական հարթությունից կարող է տեղափոխվել միջազգային-իրավական դաշտ, ուստի շտապում են ձևավորել «միջազգային-իրավական» մի այնպիսի հայեցակարգ, որով հնարավոր կլինի չեզոքացնել թուրքիային սպառնացող վտանգը: Ինչպես դա ժամանակին տեղի ունեցավ՝ կեղծ-պատմական հայեցակարգի ստեղծման հետ կապված, որով թուրքիայում փորձում էին ժխտել Հայոց ցեղասպանության եղելությունը, այժմ նույնը տեղի է ունենում կեղծ-իրավական հայեցակարգի ստեղծման ուղղությամբ: Թերևս իրենք թուրքերն էլ են գիտակցում Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը միջազգային-իրավական դաշտ տեղափոխելու՝ թուրքիայի համար տխուր հեռանկարները: Ուստի տանուկ տալով պատմագիտական բանավեճը, նրանք շտապում են մեզանից առաջ անցնել իրավաքաղաքական հարթության վրա՝ զարգացումների հաջորդ հանգրվանին պատրաստ լինելու համար:

Դրա հետ կապված՝ 2000 թ. վերջերին և 2001 թ. սկզբներին թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավը, թերևս՝ առաջին անգամ, քննարկեց պայքարի միջազգային-իրավական մեթոդներին դիմելու իր հնարավորությունները: Առաջին քննարկումը տեղի ունեցավ 2000 թ. սեպտեմբերի 29-ին՝ թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի

նիստում, որի ընթացքում, ըստ պաշտոնական հաղորդագրության, «ցավով են ընդունվել, այսպես կոչված, Հայոց ցեղասպանության մասին պնդումների հետ կապված զարգացումները» և որոշվել է դրանց դեմ «փուլ առ փուլ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել»: Պաշտոնաթող դիվանագետ Գյունդուզ Աքթանը, որը թուրքիայում համարվում է Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի «միջազգային-իրավական» ուղղության «հոգևոր հայրը», ԱԱԽ-ի 2000 թ. հոկտեմբերի 27-ի առաջին նիստի հաջորդ օրը հանդես եկավ հոգևածով, որտեղ առաջին անգամ կոչ արեց Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարում հենվել միջազգային-իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի վրա: 2001 թ. լույս տեսած Գյունդուզ Աքթանի «Հայկական հարցը և միջազգային իրավունքը» հոդվածում փորձ է արվում «հիմնավորել», որ 1915 թ. իրադարձությունները միջազգային իրավունքի տեսանկյունից ցեղասպանություն չեն, քանի որ դրանց նկատմամբ չի կարելի կիրառել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի դրույթները<sup>11</sup>: Այլ խոսքերով ասած, թուրք դիվանագետը փորձում է առաջ մղել ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի հետադարձ ուժ չունենալու մասին տեսակետը:

Պետք է նշել, սակայն, որ այս հարցադրմանը պատշաճ ու արժանի հակահարված է տրվել միջազգային իրավունքի անվանի մասնագետ Յուրի Բարսեղովի կողմից: Ի պատասխան թուրք դիվանագետի հոդվածին՝ նա հրապարակել է մի ամբողջ աշխատություն<sup>12</sup>, որտեղ ցույց է տվել Գյունդուզ Աքթանի հարցադրումների սնանկությունը՝ միջազգային իրավունքի տեսակետից:

Այդուհանդերձ, արդեն 2001 թ. մայիսին թուրքիայում ստեղծվեց Հատուկ մարմին՝ «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խուրհուրդ», որի նախագահությունը 2006 թ. ի պաշտոնն ստանձնեց այն ժամանակվա արտաքին գործերի նախա-

<sup>11</sup> Տե՛ս Մաքրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., Գիտական գեկուցումների ժողովածու Մ., 2008, էջ 139:

<sup>12</sup> Տե՛ս Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена "комиссии примирения" Гюндюз Актана), М., 2002.

րար ու փոխվարչապետ Արդուլյա Գյուլը<sup>13</sup>: Սա չափազանց հետաքրքրական իրողություն է, եթե հաշվի առնենք այն փաստը, որ նույն Ա. Գյուլն արդեն Թուրքիայի նախագահի պաշտոնում էր զբաղվում հենց՝ Հայ-Թուրքական հարաբերությունների «կարգավորմամբ»:

Ժամանակին Ա. Գյուլը, ստանձնելով տվյալ կառույցի նախագահի պաշտոնը, հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցում նշել է, որ «մանրակրկիտ» աշխատանք է կատարվել «Հայոց ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումները» միջազգային ասոցիացիաներ տեղափոխելու հնարավորությունների ուսումնասիրման ուղղությամբ, որ այդ գործընթացում ներգրավված են պաշտոնաթող դիվանագետներ, ինչպես նաև թուրք և օտարազգի վստահելի իրավագետներ և որ Թուրքիայի այս նոր մոտեցման որդեգրումը դրական է գնահատվում մի շարք պետությունների կողմից:

Պետք է նշել, որ Թուրքիայի խորհրդարանում Ա. Գյուլի ունեցած այս բովանդակությամբ ելույթը Գյուլեդուզ Աքթանը, որը, հավանաբար նույնպես ընդգրկված է հիշյալ կառույցի աշխատանքներում, որակել է որպես «չափազանց խիզախ»<sup>14</sup>:

2006 թ. դեկտեմբերի 26-ին Ա. Գյուլի նախագահությամբ կայացած հիշյալ կառույցի հերթական նիստում քննարկվել էր այս հարցին ընթացք տալու տարբեր տարբերակներ՝ դիմել Մարդու իրավունքների եվրոպայի դատարան՝ Հայոց ցեղասպանության մասին Ֆրանսիայի խորհրդարանի հայտնի որոշումը բողոքարկելու նպատակով կամ հարցը հանձնել ՄԱԿ-ի միջազգային դատարան և այլն, սակայն մինչ այդ անհրաժեշտ է համարվել հարցը քննարկել թուրք և օտարազգի իրավագետների հետ<sup>15</sup>:

Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ընթացող գործընթացների խորապատկերի վրա, Թուրքիան, հնարավոր է, որ առ ժամանակ կասեցրել է տվյալ մտադրության իրականացումը: Սակայն դա ամենևին չի կարող նշանակել, որ մենք նորից պետք է դիտորդի կեցվածք ընդունենք և սպասենք Թուրքիայի հաջորդ քայլերին: Ընդհակառակը, այս ուղղությամբ հարկավոր է որդեգրել մտածված, նախաձեռնող ու հետևողական քայլեր, այլ ոչ թե՝ կրկին ուշացած կերպով արձագանքել Թուրքիայի կողմից ծրագրավորվող հակաքայլերին:

Ինչպես արդեն նշել ենք, Հայոց ցեղասպանության հետևանքով Հայ ժողովրդի կորուստների հատուցմանը հասնելու գերխնդիրը քննարկելիս պետք նկատի ունենանք, որ գոյություն ունեն մի շարք հիմնահարցեր, որոնք անմիջականորեն կապ ունեն տվյալ հանցագործության հետևանքների վերացման հետ: Միայն դրանք հաջողությամբ հաղթահարելու պարագայում հնարավոր է շարժվել առաջ և հասնել հարցի վերջնական կարգավորմանը: Այդ հիմնահարցերը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբերի:

### 1.1. Հայոց ցեղասպանության կատարման պահին գործող միջազգային իրավունքի կողմից դրա գնահատման խնդիրը

Անհրաժեշտ է այն փաստի հիմնավորումը, որ Հայոց ցեղասպանությունը՝ անկախ ավելի ուշ ստեղծված «գենոցիդ» եզրույթից, այդ ոճագործության կատարման պահին համարվել է նույնբովանդակ, ուրեմն նաև՝ նույն պատիժը ենթադրող հանցագործություն, որի համար պատասխանատվություն է սահմանված եղել դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գործող միջազգային իրավական նորմերով: Եթե հնարավոր լինի հիմնավորել, որ հայերի զանգվածային սպանությունները դրանց կատարման պահին միջազգային իրավունքի կողմից համարվել են հանցագործություն, ապա դրանից միանշանակորեն բխում է, որ անկախ հանցագործության անվանումից և նրա կատարման ժամանակից, ներկայումս գործող միջազգային իրավունքը չի կարող այդ գործողությունները դիտարկել իբրև օրինական և ոչ հանցավոր գործողություններ:

Այս առումով պետք է նշել, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Հայերի զանգվածային սպանությունների կատարման ժամանակ եվրոպական տերությունների կողմից Օսմանյան կայսրության նկատմամբ կիրառվեցին մի շարք մարդասիրական միջամտություններ: Սակայն, նախքան բուն Հայկական հարցի հետ կապված Օսմանյան կայսրության նկատմամբ մարդասիրական միջամտություններին անցնելը, նպատակահարմար գտանք առհասարակ ներկայացնել Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության իրավունքների պաշտպանության ուղղված միջամտությունները և կատարել դրանց պատմաիրավական քննությունը:

<sup>13</sup> Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում... էջ 139-140:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 140:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 141:

Նման մոտեցումը արդարացված ենք համարում, ելնելով նրանից, որ Հայկական Հարցի հետ կապված տերութունների մարդասիրական միջամտությունները հանդիսանում էին Օսմանյան կայսրության նկատմամբ տերութունների մարդասիրական միջամտությունների ընդհանուր շղթայի օղակներից մեկը և, բացի այդ, Հայկական Հարցի միջազգայանցմանը նախորդող միջամտությունները նախադեպային են եղել վերջինիս համար:

### 1.1.1. Օսմանյան կայսրության նկատմամբ քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանության նպատակով մեծ տերութունների մարդասիրական միջամտությունները XVIII—XIX դարերում

XVIII դարից սկսած մարդասիրության սկզբունքները սկսեցին արմատավորվել միջպետական հարաբերություններում, ինչի հետևանքնով միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքում սկսվեցին արդեն գործնականում կիրառվել մարդասիրական միջամտություններ: Մարդասիրության սկզբունքներից ելնելով, «քաղաքակիրթ» եվրոպական երկրներն իրենց իրավունք էին վերապահում միջամտել ինքնիշխան պետության ներքին գործերին, եթե վերջինիս կողմից չէին ապահովվում սեփական հպատակների, մասնավորապես քրիստոնյաների, իրավունքները: Իրավական տեսակետից մարդասիրական միջամտության նպատակ էր հռչակվում քրիստոնյա հպատակների պաշտպանության ապահովումը և փորձ էր կատարվում նրանց իրավունքները խախտած պետությանը հարկադրել կատարել սեփական հպատակների նկատմամբ ունեցած իր պարտականությունը: Սակայն քաղաքական առումով այս պատրվակն, անշուշտ, օգտագործվում էր տվյալ պետությունից ինչ-որ քաղաքական զիջումներ կորզելու համար:

Պետք է նշել, որ սկսած XVIII դարի վերջերից նման մարդասիրական միջամտությունների մի ամբողջ շղթայի թիրախ դարձավ Օսմանյան կայսրությունը, որի նկատմամբ եվրոպական տերութունները առանձին կամ միասին իրականացրեցին բազմաթիվ միջամտություններ՝ նրա տարածքում բնակվող քրիստոնյա բնակչության իրավունքների պաշտպանությանն ուղղված: Իսկ XIX դարում մարդասիրական միջամտությունների պրակտիկական լայն տարածում գտավ, մեծ տերութուններից Ֆրանսիան հովանավորում էր կայսրության կաթողիկոսներին,

Ռուսաստանը ուղղափառ սլավոնական ժողովուրդներին ու հույներին, ինչպես նաև Հայ առաքելականներին, իսկ Անգլիան՝ ընդհանրապես քրիստոնյաներին<sup>13</sup>:

Այս առումով Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացրած մարդասիրական միջամտությունների սկիզբը դրվեց 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը եզրափակող Քյուչուկ Կայնարջի պայմանագրով: Պետք է նշել, որ այս պայմանագրից սկսած մեկնարկում է Ռուսաստանի մարդասիրական միջամտությունների մի ամբողջ շարք Օսմանյան կայսրության նկատմամբ և բոլոր ռուս-թուրքական պատերազմները եզրափակող պայմանագրերում անպայմանորեն զետեղված էին քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հատուկ հոդվածներ:

1774 թ. հուլիսի 10-ին ստորագրված պայմանագրի 1-ին իսկ հոդվածով պայմանավորվող կողմերը՝ Օսմանյան կայսրությունը և Ռուսաստանն ընդհանուր փոխադարձ պարտավորություն էին ստանձնում համաներում շնորհել իրենց այն հպատակներին, ովքեր պատերազմի ընթացքում հանցանքներ էին կատարել սեփական իշխանությունների նկատմամբ, պետք է ազատ արձակեին բանտարկյալներին, թույլ տային, որ աքսորվածներն ու գաղթականները վերադառնան իրենց նախկին բնակավայրեր և վերականգնեին նրանց նախկինում ունեցած իրավունքներն ու սեփականությունը<sup>14</sup>: Այս հոդվածի ամրագրման իմաստը կայանում էր նրանում, որ երկուստեք, թե՛ Օսմանյան կայսրության և թե՛ Ռուսաստանի համապատասխանաբար քրիստոնյա և մահմեդական բնակչությունը, ի վնաս սեփական պետության, օժանդակել էր հակառակորդի զորքերին և տվյալ հոդվածի ամրագրումով կողմերը փորձում էին կանխել այդ հպատակների նկատմամբ վրեժխնդրության և պատժի գործողությունները, որոնք կարող էին տեղի ունենալ պատերազմի ավարտից հետո:

Բացի այդ ընդհանուր դրույթի ամրագրումից, պայմանագրի 7-րդ հոդվածով Ռուսաստանը Բարձր Դուռը պարտավորեցնում էր Օսմանյան կայսրությունում ապահովել քրիստոնեական օրենքների և եկեղեցիների պաշտպանությունը<sup>15</sup>: Պետք է նշել, որ հենց այս դրույթը հիմք

<sup>13</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1917), խմբագիր Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 13:

<sup>14</sup> Под стягом России. Сборник архивных документов, “Русская книга”, М., 1992, с. 80.

<sup>15</sup> Նույն տեղում, с. 82.

Հանդիսացավ, որ Ռուսաստանն, ինքն իրեն հռչակելով փոքր քրիստոնյա ժողովուրդների պաշտպան, Հետազայում առանձին կամ մյուս տերությունների հետ համատեղ մարդասիրական միջամտությունների մի ամբողջ շարք իրականացնի Օսմանյան կայսրության նկատմամբ:

Պայմանագրում հատուկ առանձնացված էին հողվածներ, որոնցով կանոնակարգվում էին ռուսական զորքերի կողմից զբաղված և Օսմանյան կայսրությանը վերադարձվող հիմնականում քրիստոնյաներով բնակեցված տարածքներում այդ բնակչության իրավունքների պաշտպանության հարցերը:

Այսպես, 16-րդ հողվածով մասնավորեցվում էին 1-ին հողվածում ամրագրված ընդհանուր պարտավորությունները Օսմանյան կայսրությանը վերադարձվող Բեսարաբիայի, Վալախիայի և Մոլդավիայի քրիստոնյա բնակչության նկատմամբ:

Մասնավորապես 16-րդ հողվածի 2-րդ կետով Բ. Դուռը պարտավորվում էր ապահովել այդ տարածքներում քրիստոնեական օրենքների և սովորույթների կատարումը և չպետք է խոչընդոտեր դրանց ազատ կիրառումը, պետք է նպաստեր նոր եկեղեցիների կառուցմանը և հների վերականգնմանը, իսկ 4-րդ կետով պետք է պատշաճ կերպով հարգվեին քրիստոնյա հոգևորականության իրավունքները<sup>16</sup>:

Պայմանագրի 17-րդ հողվածով նույն իրավունքներն ամրագրվում էին Օսմանյան կայսրությանը վերադարձվող էգեյան ծովի կղզիների հուլյն բնակչության համար<sup>17</sup>:

Ռուսաստանը չբավարարվեց Բ. Դուռն պարտավորությունների ամրագրումով և պայմանագրում նախատեսեց նշված դրույթների կատարման երաշխիքային հողվածներ, որոնք պետք է հարկադրեին Բ. Դուռնը օր առաջ կատարել քրիստոնյա բնակչության իրավունքների պաշտպանության իր ստանձնած պարտավորությունները:

Օրինակ, 24-րդ հողվածով երկու ամիս ժամկետով ռուսական զորքերը շարունակելու էին մնալ իրենց կողմից զբաղեցրած տարածքներում և այդ ժամանակաշրջանում այդ տարածքներում տարածվելու էին ռուսական զինվորական իշխանությունների լիազորությունները<sup>18</sup>: Փաստորեն այս հողվածով Ռուսաստանը հարկադրում էր Բ. Դուռնը կատարել պայմանագրի 1-ին, 16 և 17-րդ հողվածների պահանջները:

Նույն հողվածով այդ տարածքների քրիստոնյա բնակչությունը կարող էր ընտանիքներով ռուսական զորքերի հետ տեղափոխվել Ռուսաստանի տարածք, իսկ Բ. Դուռը չպետք է արգելքներ ստեղծեր այդ հարցում<sup>19</sup>: Այս դրույթի ամրագրումը, թերևս վկայում էր այն մասին, որ նշված տարածքների քրիստոնյա բնակչության մի մասն, այնուամենայնիվ, թերահավատորեն էր վերաբերվում իրենց իրավունքների պաշտպանության թուրքական իշխանությունների պարտավորությունների կատարմանը և միայն այդ տարածքները լքելու մեջ էր տեսնում իր անվտանգության երաշխիքը:

1787–1791 թթ. ռուս-թուրքական հաջորդ պատերազմն ավարտվեց 1792 թ. հունվարի 9-ի Յասսայի պայմանագրով, որով Օսմանյան կայսրությանը հերթական անգամ վերադարձվող Մոլդավիայի և Վալախիայի քրիստոնյա բնակչության նկատմամբ հաստատվում էին 1774 թ. Քյուչուկ Կայնարջիի պայմանագրով սահմանված իրավունքներն ու առանձնաշնորհումները:

1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքներն ամփոփող 1812 թ. մայիսի 16-ի Բուխարեստի պայմանագրում Ռուսաստանը վերահաստատում էր քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Քյուչուկ Կայնարջիի և Յասսայի պայմանագրերի դրույթները:

Այսպես, պայմանագրի 2-րդ հողվածով Քյուչուկ Կայնարջիի 1-ին հողվածի կրկնությամբ կողմերը փոխադարձ համաներում էին հայտարարում պատերազմի ընթացքում հակառակորդին օժանդակած իրենց հպատակների նկատմամբ, որոնք չպետք է հետապնդվեին և վերադառնալու էին իրենց բնակավայրեր, վերականգնվելու էին նրանց իրավունքներն իրենց ունեցվածքի նկատմամբ<sup>20</sup>:

Բուխարեստի պայմանագրի 8-րդ հողվածով մասնավորեցվում էր սերբերի իրավունքների պաշտպանության հարցը, որոնք պատերազմի ընթացքում օժանդակել էին ռուսական զորքերին, և Բ. Դուռը պետք է ընդհանուր ներում շնորհեր ու ապահովեր նրանց անվտանգությունը: Նույն հողվածում նշվում էր, որ սերբերը պետք է ստանան այն իրավունքներն ու առանձնաշնորհումները, որոնք Բ. Դուռն կողմից տրվել էին էգեյան ծովի Արշիպելագի կղզիների և այլ վայրերի քրիստոնյաներին<sup>21</sup>: Ակնհայտ է, որ այս հողվածը հղում է կատարում Քյուչուկ Կայ-

<sup>16</sup> Под стягом России. Сборник архивных документов, с. 85.

<sup>17</sup> Նույն տեղում, с. 87.

<sup>18</sup> Նույն տեղում, с. 88.

<sup>19</sup> Под стягом России. Сборник архивных документов, с. 89.

<sup>20</sup> <http://warsonline.info/1812-god/bucharestskiy-mimiy-dogovor-1812-goda-tekst.html>

<sup>21</sup> Նույն տեղում:

նարջի պայմանագրի 16 և 17-րդ հոդվածներին, որոնցով իրավունքներ էին սահմանվել Բեսարաբիայի, Մոլդավիայի, Վալախիայի քրիստոնյաների, ինչպես նաև էգեյան ծովի կղզիների հույն բնակչության համար: Բուխարեստի պայմանագրի սույն հոդվածով այդ քրիստոնյաների իրավունքների պաշտպանության դրույթները 1812 թ. սկսած փաստորեն տարածվում էին նաև սերբերի վրա:

Բուխարեստի պայմանագրում նույնպես սահմանվում էր երաշխիքային 11-րդ հոդվածը, որի համաձայն սահմանվում էր պայմանագիրը վավերացնելու եռամսյա ժամկետ, իսկ մինչ այդ ռուսական զորքերը շարունակելու էին մնալ զբաղեցրած տարածքներում, և Մոլդավիայի, Վալախիայի և Ասիական Թուրքիայի վերահսկվող տարածքներում տարածվելու էին ռուսական զինվորական իշխանությունների լիազորությունները և այդ ընթացքում բացառվելու էր թուրքական իշխանությունների միջամտությունը այդ շրջանների կառավարմանը<sup>22</sup>:

Մոլդավիայի և Վալախիայի քրիստոնյա բնակչության իրավունքների պաշտպանության հարցը կրկին արծարծվում է արդեն 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը եզրափակող 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրում: Այս պայմանագրի 5-րդ հոդվածում փաստորեն կրկնվում են Քյուչուկ Կայնարջի պայմանագրի 16-րդ հոդվածի պահանջները և նշվում է, որ քանի որ Ռուսաստանը ստանձնել է այդ շրջանների քրիստոնյաների բարօրության երաշխավորությունը, ուստի, դրանից ելնելով, պարտավորեցնում է Բ. Դուռը ապահովել նրանց բոլոր իրավունքները, արտոնությունները, կրոնական ազատությունները և կատարյալ անվտանգությունը<sup>23</sup>: Ադրիանապոլսի պայմանագրում կրկին ամրագրված է երաշխիքային 11-րդ հոդվածը, որը գրեթե կրկնում է Քյուչուկ Կայնարջի պայմանագրի 24-րդ հոդվածի դրույթն առ այն, որ Բ. Դուռը անհապաղ պետք է կատարի քրիստոնյաների իրավունքների ապահովման պարտավորությունը և հենց որ այդ պահանջները համարվեն կատարված, Ռուսաստանը կվսի դուրս բերել իր զորքերը զբաղեցրած տարածքներից, իսկ մինչ այդ գրավված տարածքներում տարածվելու էին ռուսական զինվորական իշխանությունների լիազորությունները, և Բ. Դուռն իրավունք չունի միջամտել այդ շրջանների կառավարման գործիքին<sup>24</sup>:

Քյուչուկ Կայնարջի պայմանագրի 1-ին հոդվածի կրկնությամբ Ադրիանապոլսի պայմանագրի 13-րդ հոդվածով կողմերը փոխադարձաբար լիակատար ներում էին շնորհում իրենց բոլոր այն հպատակներին, որոնք պատերազմի ընթացքում օժանդակել էին հակառակորդ պետությանը: Այդ անձինք չպետք է ենթարկվեին հետապնդումների և վերականգնվելու էին նրանց իրավունքներն իրենց ունեցվածքի նկատմամբ: Բացի դրանից, 18-րդ հոդվածում կրկնվում էր Քյուչուկ Կայնարջի պայմանագրի 24-րդ հոդվածի այն դրույթը, թե մի պետության հպատակներն առանց խոչընդոտների իրավունք ունեն տեղափոխվել մյուս պետության տարածք<sup>25</sup>: Հատկանշական է, որ տվյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության նկատմամբ մարդասիրական միջամտություն իրականացրեց նաև ԱՄՆ-ը, որը 1840 թ. միջամտեց ի պաշտպանություն Հոռոսի և Դամասկոսի հրեաների<sup>26</sup>:

Օսմանյան կայսրության նկատմամբ հաջորդ մարդասիրական միջամտությունը կատարվեց արդեն Ղրիմի պատերազմի ավարտից հետո, երբ 1856 թ. մարտի 30-ին կնքվեց Փարիզի պայմանագիրը: Այդ պայմանագրով Օսմանյան կայսրությունը մուտք էր գործում եվրոպայի քաղաքակիրթ պետությունների ընտանիք: Ի դեպ, այս ձգտումը թուրքական պետության համար օրակարգային է նաև մեր օրերում, սակայն, ինչպես հիմա, այնպես էլ 19-րդ դարի կեսերին, այդ մուտքը պայմանավորված է եղել թուրքական պետության առջև որոշակի նախապայմաններ առաջադրելով, քանզի ակնհայտ էր, որ տվյալ պետությունը չէր համապատասխանում եվրոպական արժեհամակարգին ու չափանիշներին: Որպես նախապայման Փարիզի պայմանագրով ամրագրվում էր եվրոպական տերությունների հովանավորության հաստատումը սուլթանի քրիստոնյա հպատակների նկատմամբ: Այդ կամավոր-պարտադիր միջազգային իրավական կարգավիճակը համաձայնեցվեց մեծ տերությունների միջև և ձևակերպվեց Փարիզի պայմանագրի 9-րդ հոդվածով<sup>27</sup>: 9-րդ հոդվածի համաձայն սուլթանը պարտավորվում էր հրովարտակ հրապարակել, որով առանց կրոնական և ազգային տարբերությունների պետք է բարելավվեր բոլոր հպատակների վիճակը<sup>28</sup>:

Այն հանգամանքը, որ սուլթանի հրովարտակն ընդունվել է Փարիզի պայմանագրի վերընշված հոդվածի հետևանքով, վկայում է այն մա-

<sup>22</sup> <http://warsonline.info/1812-god/bucharestskiy-mirmiy-dogovor-1812-goda-tekst.html>

<sup>23</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 76:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>25</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 80:

<sup>26</sup> Kuper L., Genocide: Its Political Use in the Twentieth Century, New Haven, 1982, p. 19.

<sup>27</sup> Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геополитики, с. 15.

<sup>28</sup> Сборник договоров России с другими государствами (1956–1917), М., 1952, с. 25.

սին, որ սեփական քրիստոնյա Հպատակների պաշտպանութեան մասին միջազգային պայմանագրի դրույթը սուլթանն իր Հրովարտակով ստիպւած է եղել դարձնել կայսրութեան ներքին օրենսդրութեան մաս և որ մինչ այդ քրիստոնյա Հպատակները կայսրութեան օրենսդրութեամբ եղել են անպաշտպան և այդ վիճակը, Համենայնդեպս օրենսդրորեն, շտկվել է միայն մեծ տերութունների մարդասիրական միջամտութեան հետևանքով:

Նույն Հողվածով տերութուններն, ի գիտութուն ընդունելով սուլթանի այդ Հաղորդումը, ընդունում էին, որ դա իրավունք չի տալիս իրենց առանձին կամ միասին միջամտել սուլթանի և նրա Հպատակների Հարաբերութունների կամ կայսրութեան կառավարման գործերին<sup>29</sup>: Այսինքն, սովյալ դեպքում խոսքը պատիվ միջամտութեան մասին էր, ինչը չպետք է վերածվեր կայսրութեան ներքին գործերին ակտիվ միջամտութունների: Սակայն, մյուս կողմից, սուլթանի Հրապարակած Հրովարտակով քրիստոնյա Հպատակների մահմեդականների հետ Հավասարութեան Հապահովումը կարող էր առիթ տալ տերութուններին այս Հարցը նրա առջև կրկին բարձրացնելու Համար:

Ի տարբերութուն Քյուչուկ Կայնարջիի պայմանագրով իրականացված մարդասիրական միջամտութեան, Փարիզի պայմանագրով իրագործվում էր ոչ թե մեկ տերութեան՝ Ռուսաստանի, այլ եվրոպական տերութունների կողմից միջամտութուն, ինչը թե՛ քաղաքական և թե՛ իրավական առումով ավելի լուրջ ու բազմակողմանի պարտավորութուններ էր դնում թուրքական իշխանութունների վրա: Բացի այդ, ի տարբերութուն նախորդ միջամտութունների, որոնք ունեին մասնավոր բնույթ և վերաբերվում էին Օսմանյան կայսրութեան կոնկրետ տարածքների՝ Բեսարաբիայի, Մոլդավիայի և էգեյան ծովի կղզիների քրիստոնյա բնակչության իրավունքների պաշտպանութեանը, Փարիզի պայմանագրով Օսմանյան կայսրութեան վրա դրվում էր նրա ամբողջ տարածքի քրիստոնյա բնակչության իրավունքների պաշտպանութեան ընդհանուր պարտավորութունը:

Ռուս Հայտնի իրավաբան-միջազգայնագետ Մ. Ն. Կապուստինը Հենց 1856 թ. Հրատարակված իր աշխատութեան մեջ տվել է միջազգային Հանրութեան մարդասիրական միջամտութուն կատարելու իրավունքի հիմնավորումը: Ոչ միայն թուլյատրելի, այլև անհրաժեշտ Համարելով, ըստ էութեան, ինքնիշխան պետութեան ներքին գործերին նման միջամտութունը, Կապուստինն այդ գործողութունը պայմանա-

վորում էր նրանով, որ միջազգային Հանրութունը ձգտում է մարդասիրական միջամտութունը դարձնել Համաեվրոպական գործողութուն և այդպիսով վերցնել այդ իրավունքը առանձին պետութուններից<sup>30</sup>: Հաշվի առնելով այն Հանգամանքը, որ աշխատութեան Հրապարակման պահին արդեն կար միջազգային պայմանագրով ամրագրված մարդասիրական միջամտութեան թարմ օրինակը՝ 1856 թ. Փարիզի պայմանագրի 9-րդ Հոդվածը, կարելի է պնդել, որ ռուս Հեղինակն իր աշխատանքում նկատի ունեցնում էր այդ վերջին զարգացումները, կապված Օսմանյան կայսրութունում քրիստոնյա փոքրամասնութունների շահերի ու իրավունքների պաշտպանութեան հետ, ինչի երաշխավորը պետք է լիներ նրանչա՞ռ ողջ Համաեվրոպական Հանրութունը, այլ ոչ թե առանձին պետութունները: Այդ Հողվածով փաստորեն մեծ տերութունները վերացրեցին օսմանյան լծի տակ Հեծող քրիստոնյաների պաշտպանութեան Ռուսաստանի իրավական ու բարոյական մենաշնորհը, որը Հաստատվել էր դեռ Քյուչուկ Կայնարջիի պայմանագրով:

Այսպիսով, Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով Հայկական Հարցի միջազգայնացումից դեռ 20 տարի առաջ 1856 թ. Փարիզի բազմակողմ միջազգային պայմանագրերը միջազգային Հանրութեան պաշտպանութեան տակ էր առնում Օսմանյան կայսրութեան Հալածանքների ենթարկվող ողջ քրիստոնյա բնակչությանը, այդ թվում նաև արևմտահայկայնացիները:

Սակայն, չնայած սուլթանի Հրովարտակի Հրապարակմանը, թուրքական իշխանութունները առանձնապես ջանք չէին գործադրում մահմեդականների հետ քրիստոնյաների իրավունքների Հավասարեցման ուղղությամբ: 1859 թ. Հոկտեմբերի 5-ին Բ. Դուանն ուղղված Հուշագրում եվրոպական տերութունները ափսոսանք էին Հայտնում, որ կայսրութեան կողմից Համապատասխան քայլեր չեն կատարվում բարենորոգումների անդառնալի և աստիճանական իրագործման նպատակով և որ կայսրութեան կողմից չեն դրսևորվում բավարար ջանքեր 1856 թ. Հրապարակված Հրովարտակի նպատակներին ձգտելու ուղղությամբ<sup>31</sup>: Փաստորեն սուլթանի Հրովարտակի Հրապարակումից 3 տարի անց տերութուններն այս Հուշագրով արձանագրում էին նաև Փարիզի պայմանագ-

<sup>30</sup> Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 16.

<sup>31</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, с. 694.

<sup>29</sup> Сборник договоров России с другими государствами (1956–1917), с. 26.



րի Գրդ Հողվածով Օսմանյան կայսրության կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման փաստը:

Փարիզի պայմանագրի գործնական կիրառումն իրեն երկար սպասեցնել չտվեց: Այդ պայմանագրի Գրդ Հողվածի կիրառման դրսևորում եղավ այն, որ տերությունները կրկին միջամտեցին Օսմանյան կայսրության ներքին գործերին, երբ վերջինիս տարածքում՝ Սիրիայում, 1860 թ. մայիս-հուլիս ամիսների ընթացքում մահմեդական դրուզների կողմից կոտորվեցին ավելի քան 20.000 քրիստոնյա մարոնիներ: Այդ իրադարձությունների ընթացքում մահմեդականների կողմից Հարձակումների և թալանի ենթարկվեցին նաև եվրոպական տերությունների հյուպատոսությունները<sup>32</sup>: Դիվանագիտական Հաստատությունների վրա Հարձակումները պայմանավորված էին նրանով, որ մահմեդականները եվրոպական հյուպատոսությունները դիտարկում էին իբրև քրիստոնյաներին հովանավորող կառույցներ:

Փարիզի պայմանագիրը ստորագրած տերություններից Ֆրանսիան փորձեց այս Հարցը ինքնակամ ձևով լուծել՝ էքսպեդիցիոն կորպուս ուղարկելով Սիրիա, սակայն Անգլիայի միջամտությունը կաշկանդեց Ֆրանսիացիների Հետագա առաջխաղացումը: Արդյունքում մեծ տերությունները վերադարձան 1856 թ. Փարիզի պայմանագրի Գրդ Հողվածին, որի Համաձայն քրիստոնյաները գտնվում էին ոչ թե մեկ, այլ բոլոր եվրոպական տերությունների հովանավորության ներքո:

Տվյալ պարագայում թույլ չտրվեց, որ մարդասիրական միջամտությունը կատարվի մեկ տերության՝ Ֆրանսիայի կողմից և 1860 թ. օգոստոսի 24-ին Ռուսաստանը, Ավստրիան, Ֆրանսիան, Անգլիան, Պրուսիան և Օսմանյան կայսրությունը ստորագրեցին «Սիրիայի եվրոպական օկուպացիայի մասին» բազմակողմ պայմանագիրը: Սիրիայում քրիստոնյաների արյունահեղությունը դադարեցնելու և այնտեղ արագ կարգուկանոն Հաստատելու վճռականությունից ելնելով, եվրոպական տերությունները պատրաստակամ էին մինչև 12.000 եվրոպական խառը կոնստինդնուպոլ գործ ուղարկել Սիրիա՝ խաղաղությունը վերականգնելու համար<sup>33</sup>:

Ակնհայտ է, որ ի տարբերություն Փարիզի պայմանագրի, այս փաստաթուղթը նախատեսում էր արդեն եվրոպական տերությունների Համատեղ ուժային մարդասիրական միջամտության իրավունքը Օսմանյան

կայսրության նկատմամբ՝ վերջինիս Հպատակներ Հանդիսացող քրիստոնյա մարոնիներին պաշտպանելու նպատակով:

Պայմանագրի 4-րդ Հողվածով եվրոպական տերությունները խոստանում էին իրենց ցամաքային ուժերի Հաջողությունները ապահովելու համար այնտեղ ուղարկել նաև ռազմածովային ուժեր: Տերությունների կողմից Սիրիայի օկուպացիայի ժամկետը սահմանվում էր վեց ամիս, սակայն 1861 թ. մարտի 7-ին նույն պետությունները կնքեցին նոր պայմանագիր, որով Սիրիայի օկուպացիայի ժամկետը երկարաձգվեց մինչև 1861 թ. հունիսի 5-ը<sup>34</sup>:

Մարդասիրական միջամտության այս հերթական փաստն ակնհայտորեն խոսում է այն մասին, որ Օսմանյան կայսրությունը խախտել էր Փարիզի պայմանագրի Համապատասխան Հողվածը, լավագույն դեպքում թույլ տալով, եթե ոչ խրախուսելով, մահմեդական դրուզների կողմից քրիստոնյա մարոնիների զանգվածային սպանությունները Սիրիայում, ինչն էլ առիթ էր Հանդիսացել մեծ տերությունների հերթական միջամտության համար: Անշուշտ, մարդասիրական միջամտության կիրառումը տեղի էր ունենում մեծ տերությունների ակնհայտ մրցակցություն պայմաններում, որոնցից յուրաքանչյուրը Հետապնդում էր իր շահերը տարածաշրջանում: Սակայն, անկախ այդ գործողության շարժառիթներից, մի բան հստակ էր, որ արդեն ավելի շոշափելի ձևով սահմանափակվում էր Օսմանյան կայսրության ինքնիշխանությունը տվյալ տարածքի նկատմամբ, ինչը պայմանավորված էր նրանով, որ վերջինս կամ չի ցանկացել, կամ չի կարողացել ապահովել սեփական քրիստոնյա Հպատակներին իր մահմեդական Հպատակների Հարձակումներից, ինչն էլ իրավունք է տվել տերություններին գործնականում կիրառել Փարիզի պայմանագրի Համապատասխան Հողվածը:

Հարաբերական խաղաղություն Հաստատելուց Հետո եվրոպական տերություններն անցան այդ տարածքի Հետագա ճակատագրի և մասնավորապես կարգավիճակի Հարցի քննարկմանը: Անգլիայի և Ֆրանսիայի պահանջով ստեղծվեց Լեռնային Լիբանանի բարեփոխումների Հարցով Հատուկ միջազգային Հանձնաժողով, որի մեջ ընդգրկված էին Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Պրուսիայի և Օսմանյան կայսրության ներկայացուցիչները: Հանձնաժողովի գործունեության արդյունքում 1861 թ. ընդունվեց «Լեռնային Լիբանանի օրգանական կանոնադրությունը»: 1861 թ. հունիսի 9-ին ընդունված այս փաստաթղթով Լեռնային Լիբանանի նախկին երկու շրջանները միավոր-

<sup>32</sup> <http://gendoocs.ru/v10420/?cc=7>

<sup>33</sup> Сводник договоров России с другими государствами, с. 71.

<sup>34</sup> Сводник договоров России с другими государствами, с. 73.

վում էին մեկ միասնական ինքնավար մարզի մեջ՝ եվրոպական պետութ-  
յունների վերահսկողության ներքո<sup>35</sup>։ Լեոնային Լիբանանի ինքնավար  
մարզը կառավարելու համար սուլթանի կողմից տերութայունների համա-  
ձայնությամբ ոչ լիբանանցի քրիստոնյա օսմանահայատակներից նշա-  
նակվում էր նահանգապետ, որը պատասխանատու էր Լեոնային Լիբա-  
նանում կարգուկանոնի և հասարակական հանգստության համար<sup>36</sup>։  
Հատկանշական փաստ է, որ Լեոնային Լիբանանի առաջին նահանգա-  
պետ եվրոպական տերութայունների ներկայացմամբ սուլթանը նշանակեց  
հայազգի Արթին Կարապետ Դաուդյանին<sup>37</sup>։

Նահանգապետն իրավունք ուներ նշանակել պաշտոնյաների, հրա-  
վիրել կենտրոնական վարչական խորհրդի նիստեր։ Այս մարմինը ուներ  
խորհրդակցական բնույթ և համամասնության սկզբունքով կազմված էր  
լինելու տարբեր կրոնական համայնքների ներկայացուցիչներից։ Լեո-  
նային Լիբանանի ինքնավար մարզը բաժանվում էր 6 շրջանների, որոն-  
ցից յուրաքանչյուրում ստեղծվում էին տարբեր կրոնական համայնքնե-  
րի ներկայացուցիչներից կազմված խառը վարչական խորհուրդներ և  
դատարաններ։ Օսմանյան զորքերը դուրս էին բերվում Լեոնային Լիբա-  
նանի տարածքից և դրանք կարող էին մուտք գործել մարզի տարածք  
միայն նահանգապետի խնդրանքով։ Լեոնային Լիբանանի անվտանգ-  
ությունն ապահովվելու էր տարբեր կրոնական համայնքների ներկա-  
յացուցիչներից կազմված ոստիկանության ուժերով<sup>38</sup>։

Կանոնադրության մեջ տերութայունների կողմից միայն մեկ անգամ  
1864 թ. կատարվեցին աննշան փոփոխություններ և լրացումներ, ինչից  
հետո ուղիղ կես դար Կանոնադրությունը գործեց անխափան, ընդհուպ  
մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը, ապահովելով Լեոնային Լիբա-  
նանի կայունությունը և բացառելով նոր կոտորածների հնարավորութ-  
յունները։

Կարծում ենք, որ թուրքական իշխանությունների կողմից Լեոնա-  
յին Լիբանանի Կանոնադրության դրույթների պահպանումը մեծապես  
պայմանավորված էր նրանով, որ նրանք ուղղակի խուսափում էին այս  
հարցում եվրոպական տերութայունների նոր մարդասիրական միջամ-

տությունից, ինչը 1860 թ. դրսևորվեց գինված ուժեր ուղարկելու տար-  
բերակով։

Փարիզի պայմանագրի ստորագրումից 15 տարի անց 1870 թ. Ռու-  
սաստանը նախաձեռնեց Փարիզի պայմանագրի որոշ դրույթների վերա-  
նայման գործընթաց և իր այդ մտադրության մասին տեղյակ պահեց Փա-  
րիզի պայմանագիրը ստորագրած երկրներին։ Փոփոխությունների նախա-  
ձեռնության շարժառիթների թվում հիշատակվում էր նաև այն, որ Փարի-  
զի պայմանագրով նախատեսված քրիստոնյաների իրավունքների պաշտ-  
պանության պարտավորությունը չի կատարվում սուլթանի կողմից<sup>39</sup>։ Այս  
փաստը հերթական անգամ վկայում է այն մասին, որ Օսմանյան կայ-  
սրությունը հետևողականորեն շարունակում էր խախտել Փարիզի պայ-  
մանագրի 9-րդ հոդվածի պահանջները։

Մարտիներին իրավունքների պաշտպանության մարդասիրական  
միջամտությունից անմիջապես հետո 1862 թ. օգոստոսին Սերբիայի ինք-  
նավարության տարածքում տեղի ունեցան բախումներ, և այս դեպքում  
ինքը՝ Բ. Դուռը նախաձեռնեց Փարիզի պայմանագիրը ստորագրած եվ-  
րոպական տերութայունների ներկայացուցիչների խորհրդաժողովի հրա-  
վիրում Կ. Պոլսում։ Ակնհայտ էր, որ խախտվել էին Փարիզի պայմա-  
նագրի սերբերի իրավունքներին վերաբերող 18 և 19-րդ հոդվածները և  
թուրքական իշխանություններն այս կերպ փորձում էին կանխարգելել  
արդեն սերբական հարցով եվրոպական տերութայունների նոր միջամ-  
տությունը։

խորհրդակցությունների արդյունքում 1862 թ. օգոստոսի 27-ին  
Փարիզի պայմանագրի կողմ հանդիսացող եվրոպական տերութայունները  
և Օսմանյան կայսրությունը ստորագրեցին արձանագրություն, որի նա-  
խաբանում Բ. Դուռը մեկ անգամ ևս պաշտոնապես պարտավորվում էր  
բոլոր միջոցները ձեռնարկել Փարիզի պայմանագրի 18 և 19-րդ հոդված-  
ներով նախատեսված սերբերի ինքնավարությունը պահպանելու ուղ-  
ղությամբ, բայց միևնույն ժամանակ պահանջում էր, որ սերբերն էլ  
իրենց հերթին անհերքելի ապացույցներով հավաստիացնեն, որ Օսման-  
յան կայսրության հետ կապերը խզելու քայլեր չեն ձեռնարկվել<sup>40</sup>։ Սա  
կանխարգելիչ քայլ էր թուրքերի կողմից, որոնք, առաջ ընկնելով տե-  
րութայուններից, փորձում էին թույլ չտալ, որ մահաբեղականների հարձա-  
կումները սերբերի վրա տերութայունների կողմից իբրև հարմար առիթ  
չծառայեցվեին վերջիններիս ինքնավարությունը անկասկածյա վերածե-

<sup>35</sup> Թովուդյան Հ. Ն., Սիրիայի և Լիբանանի հայ գաղթօջախների պատմություն  
(1841–1946 թթ.), Եր., 1986, էջ 302։

<sup>36</sup> Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազ-  
գային իրավունքը, էջ 134։

<sup>37</sup> Հովհաննիսյան Ն., Արմենոլոգիա ճանաչված ցեղասպանություն է, Եր., 2010, էջ 78։

<sup>38</sup> [http://enc-dic.com/enc\\_sie/Organicheski-statut-livana-1861-18456.html](http://enc-dic.com/enc_sie/Organicheski-statut-livana-1861-18456.html)

<sup>39</sup> Сворник договоров России с другими государствами, с. 105.

<sup>40</sup> Նույն տեղում, с. 85.

լու համար: Դրանից անմիջապես առաջ նմանատիպ իրադրություն հետևանքով արդեն հռչակվել էր Լեոնային Լիբանանի ինքնավարությունը, ուստի այս հնարավոր զարգացումները լրջորեն մտահոգում էին թուրքերին:

Արձանագրության առաջին հոդվածով թուրքական իշխանությունները պարտավորվում էին մահմեդական բնակչությանը հեռացնել սերբերով բնակեցված տարածքներից՝ հետագա բախումները կանխելու նպատակով և նրանց հողատարածքները և սեփականությունը հատուցման դիմաց պետք է փոխանցվեր սերբական կառավարությանը<sup>41</sup>: Այսպիսով տերությունները փորձում էին որքան հնարավոր է հեռացնել մահմեդական բնակչությանը սերբերից, քանզի, որպես կանոն, հենց խառը բնակեցված շրջաններում էին սկսվում այդ բախումները:

10-րդ հոդվածով բացի Բելգրադի միջնաբերդի թուրքական սահմանափակ պահակազորից նախատեսվում էր ոչ սերբ բոլոր զինված խմբավորումների անհապաղ կազմալուծում<sup>42</sup>: Ակնհայտ է, որ մահմեդականների և սերբերի բախումների ժամանակ այնտեղ տեղակայված թուրքական զորքերը, բնականաբար, անցնում էին մահմեդականների կողմը և իրենց գործողություններով կամ անգործությամբ նպաստում էին սերբերի կոտորածներին, ուստի այս առումով տվյալ հոդվածն առավել քան կարևոր էր սերբերի անվտանգությունը պաշտպանելու տեսակետից:

Արդյունքում 1871 թ. մարտի 1-ին ստորագրվեց Լոնդոնի կոնվենցիան, որի նախաբանում հատուկ շեշտվում էր, որ Փարիզի պայմանագիրը ստորագրած տերությունները հավաքվեցին Լոնդոնում՝ 1856 թ. Փարիզի պայմանագիրը փոփոխելու նպատակով<sup>43</sup>: Սակայն Լոնդոնի կոնվենցիայի 8-րդ հոդվածը ուժի մեջ էր թողնում տվյալ կոնվենցիայով փոփոխության չենթարկված Փարիզի պայմանագրի դրույթները, մասնավորապես նաև քրիստոնյաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող 9-րդ հոդվածի պահանջները<sup>44</sup>:

XIX դարի վերջին նոր թափ էր ստացել բալկանյան ժողովուրդների ազգային - ազատագրական շարժումը: Թուրքական տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների վիճակը զնայով վատանում էր, որի հետևանքով էլ ավելի հաճախակի էին դարձել ելույթներն ու ընդհարումները: 1875 թ. Բոսնիայի և Հերցեգովինայի, 1876 թ. բուլղար-

ների ապստամբությունները կրկին հանգեցրին եվրոպական տերությունների մարդասիրական միջամտություններին:

1876 թ. մայիսի 1-ին Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միջև ստորագրվեց հուլազիր բալկանյան հարցերով: Հուլազիր նախաբանում տերությունները այս հերթական մարդասիրական միջամտության անհրաժեշտությունը պայմանավորում էին նրանով, որ իրենց կառավարությունները բարոյական իրավունք են ստանձնել հետևել Բոսնիայում և Հերցեգովինայում խոստացված բարենորոգումների ընթացքին, ուստի փորձում են իրենց մասնակցությունը բերել այդ տարածքներում շուտափույթ խաղաղություն հաստատելու գործին<sup>45</sup>:

Բոսնիայում և Հերցեգովինայում խոստացված բարենորոգումների ծրագրի իրագործման հարցում տերությունները տեսնում էին երկու հիմնական խոչընդոտ՝ մի կողմից ապստամբած քրիստոնյաների պնդումը, որ նախկին փորձը իրենց թույլ չի տալիս վստահել Բ. Դուան բարեփոխումների խոստումներին, առանց եվրոպայի իրական երաշխիքների և մյուս կողմից Բ. Դուան հայտարարությունը, որ չի կարող բարենորոգումներ իրականացնել, քանի դեռ այնտեղ կան զինված խմբեր, որոնք թույլ չեն տալիս, որ մահմեդականները վերադառնան իրենց բնակավայրերը<sup>46</sup>:

Հուլազիրի վերջում տերությունները եզրակացնում էին, որ ութ ամսյա ռազմական գործողությունները Բոսնիայում և Հերցեգովինայում հիմք են տալիս իրենց կարծելու, որ Բ. Դուանը միայն առերևույթ է ընդառաջ գնացել եվրոպայի դիվանագիտական քայլերին և, ըստ էության, ոչ մի մտադրություն չունի իրագործելու խոստացված բարենորոգումները<sup>47</sup>: Այս դատողություններով փաստորեն հերթական անգամ արձանագրվում էր Փարիզի պայմանագրով Օսմանյան կայսրության քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության իր ստանձնած պարտավորության չկատարման փաստը:

Հուլազիրն ստորագրող տերությունները երկու ամսյա ժամկետ էին տալիս Բ. Դուանը, որ նա դադարեցնի ռազմական գործողությունները և սկսի բարենորոգումները Բոսնիայում և Հերցեգովինայում: Երեք տերությունները հարմար էին գտնում Սալոնիկի, Ջմուռնիայի և Կ. Պոլսի գոտիներ ուղարկել իրենց ռազմանավերը, որոնց հրամանատարները պետք է համագործակցեին միմյանց հետ՝ վերջնազարային պահանջի կատարմանը հետևելու և քրիստոնյաների անվտանգությունն ապահովելու

<sup>41</sup> Сборник договоров России с другими государствами, с. 86.

<sup>42</sup> Նույն տեղում, с. 91.

<sup>43</sup> Նույն տեղում, с. 107.

<sup>44</sup> Նույն տեղում:

<sup>45</sup> Сборник договоров России с другими государствами, с. 140-141.

<sup>46</sup> Նույն տեղում, с. 141.

<sup>47</sup> Նույն տեղում:

նպատակով<sup>48</sup>: Հուլիսի տեքստն ուղարկվեց Բ. Դուանը և այդ մասին տեղյակ պահվեցին Փարիզի պայմանագիրը ստորագրած մյուս եվրոպական տերութիւնները՝ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան:

Բոսնիայի և Հերցեգովինայի դեպքերին զուգահեռ 1876 թ. բուլղարները ապստամբության ժամանակ թուրքական ոչ կանոնավոր զորքերը կոտորեցին շուրջ 12 հազար բուլղարների, և միջազգային հանրության արձագանքը միանշանակ էր՝ թուրքերը պետք է հեռանան ոչ միայն Բուլղարիայից, այլ նաև Բալկաններից<sup>49</sup>: Ռուսաստանը պահանջում էր հրավիրել միջազգային համաժողով թուրքական տիրապետության տակ գտնվող սլավոն և մյուս քրիստոնյա ժողովուրդների հարցը դիվանագիտական ճանապարհով կարգավորելու համար:

1877 թ. հունվարին Լոնդոնում հրավիրվեց արդեն Փարիզի պայմանագիրը ստորագրած 6 եվրոպական տերութիւնների (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ավստրո-Հունգարիա, Գերմանիա) ներկայացուցիչների խորհրդակցություն: Խորհրդակցության արդյունքում եվրոպական տերութիւնները 1877 թ. մարտի 19-ին ընդունեցին հատուկ հռչակագիր բալկանյան հարցերով: Սա արդեն չորրորդ մարդասիրական միջամտությունն էր Օսմանյան կայսրության նկատմամբ՝ ուղղված բալկանյան քրիստոնյա ժողովուրդների իրավունքների պաշտպանությանը: Հռչակագրում ընդգծվում էր այն միտքը, որ Բ. Դուանը կամավոր պարտավորություն է ասանձնել բարելավել կայսրության քրիստոնյա բնակչության վիճակը և բարենորոգումներ կատարել մասնավորապես Բոսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում<sup>50</sup>: Արձանագրությունում այնուհետև նշվում էր, որ տերութիւնները մտադիր են Կ. Պոլսում իրենց ներկայացուցիչների միջոցով վերահսկողություն իրականացնել բարենորոգումներ կատարելու թուրքական կառավարության խոստումների կատարման գործընթացի նկատմամբ: Տերութիւնները միաժամանակ նախագուշացնում էին, որ եթե իրենց սպասումները քրիստոնյա հպատակների վիճակի բարելավման հետ կապված չարդարանան, որոնց իրավունքների պարբերական խախտումները հանգեցնում են խաղաղության խաթարմանը Արևելքում, ապա այդ դեպքում, նրանք իրենց իրավունք են վերապահում միասնաբար քննարկել այն միջոցները, որոնք առավել հարմար կհամարեն կիրառել քրիստոնյա բնակչության

վիճակը բարելավելու և համընդհանուր խաղաղությունը ապահովելու նպատակով<sup>51</sup>: Դժվար չէ նկատել, որ այս արձանագրությունում արդեն ուղղակի սպառնալիք կա, ուղղված Բ. Դուանը, որ պարտավորությունները չկատարելու դեպքում տերութիւնները կդիմեն միջամտության ավելի գործուն միջոցների: Արձանագրության վերջում տերութիւնները առաջարկում էին Բ. Դուանը միանալ այս փաստաթղթին և այդպիսով ևս մեկ անգամ վերահաստատել իր պարտավորությունները, ինչպես նաև պաշտոնապես համաձայնվել այն մտքի հետ, որ դրանք չկատարելու դեպքում տերութիւնները կարող են դիմել արդեն միջամտության ուժային մեթոդների: Սակայն Բ. Դուանը հրաժարվեց միանալ լոնդոնյան արձանագրությանը, դիտելով այն իբրև միջամտություն երկրի ներքին գործերին, ինչից հետո 1877 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը և սկսվեց 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

Բելգիացի իրավաբան-միջազգայնագետ Մ. Ռոլեն-ժակմենը 1887 թ. հրատարակված «Հայաստանը, Հայերը և դաշնագրերը» իր աշխատության մեջ նշում է, որ Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացրած մարդասիրական միջամտությունների ընթացքում եվրոպական տերութիւնները սկզբում դիմում էին միջամտության հայեցողական, ոչ պարտադիր մեթոդների, սակայն այնուհետև դրանք փոխարինվեցին հարկադրական գործողությունների: Իբրև օրինակներ նա ներկայացնում է 1859 թ. հոկտեմբերի 5-ի թուլյ հուլիսի 1877 թ. մարտի 31-ի ավելի կոշտ ու սպառնալից արձանագրությունը<sup>52</sup>: Ակնհայտ է, որ եթե թուրքական իշխանությունները եվրոպական տերութիւնների ոչ պարտադիր միջամտությունների հետևանքով կատարեին իրենց իսկ կողմից ստանձնած պարտավորությունները, ապա այդ միջամտությունները թերևս չէին վերածի սպառնալիքների և նույնիսկ ռազմական գործողությունների: Այնպես որ տերութիւնների կողմից Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացվող մարդասիրական միջամտությունների բնույթի փոփոխությունը պետք է համարել նորմալ և դրա ամբողջ պատասխանատվությունն ընկնում է թուրքական իշխանությունների վրա:

1903 թ. քրիստոնյաների ապստամբությունը Մակեդոնիայում, որը սուլթանը խեղդեց արյան մեջ, հանգեցրեց տերութիւնների նոր միջամտությանը Օսմանյան կայսրության նկատմամբ: 1903 թ. հոկտեմբերին

<sup>48</sup> Сборник договоров России с другими государствами, с. 141.

<sup>49</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 90.

<sup>50</sup> Сборник договоров России с другими государствами, с. 156.

<sup>51</sup> Сборник договоров России с другими государствами, с. 157–158.

<sup>52</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, с. 688.

Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև կնքվեց Համաձայնագիր Մակեդոնիայի բարենորոգումների մասին, որը Հոկտեմբերի 9-ին Կ. Պոլսում հավաստարմազրված այդ երկրների դեսպանների կողմից ներկայացվեց Բ. Դոանը: Այս ծրագիրը գալիս էր լրացնելու 1876 և 1878 թթ. մակեդոնական ընդվզումներից հետո մշակված ծրագրերը:

Համաձայնագրի դրույթները բաղկացած էին Մակեդոնիայի քրիստոնյա բնակչության անվտանգության ապահովման և բարեփոխումների ընթացքը ապահովող դրույթներից: Քրիստոնյաների անվտանգության ապահովման դրույթներից էին 6-րդ կետը, որով հատուցում էր տրվելու այն քրիստոնյաներին, ովքեր վնասներ էին կրել այդ իրադարձությունների հետ կապված և, բացի այդ, նրանք երկու տարով ազատվելու էին Հարկերից և 9-րդ կետը, որով պետք է լուծարվեին այն գործադիրությունները, որոնք բռնություններ էին իրականացրել քրիստոնյաների նկատմամբ<sup>53</sup>:

Մակեդոնիայում բարեփոխումների ընթացքը ապահովող դրույթներից էր Համաձայնագրի 1-ին կետը, որով Մակեդոնիայում նշանակված նահանգապետին կից երկու տարի ժամկետով նշանակվելու էին Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչներ, որոնք նահանգապետի ուշադրությունը պետք է հրավիրեին քրիստոնյա բնակչության կարիքների վրա, մատնանշելու էին տեղական իշխանությունների չարաշահումները, նրան էին փոխանցելու Կ. Պոլսում երկու երկրների ցուցումները և դեսպաններին զեկուցելու էին այն ամենի մասին, ինչ կատարվում էր Մակեդոնիայում: Սա նշանակում էր, որ երկու երկրները վստահություն չունեին թուրքական իշխանությունների և առավել ևս նրանց բարեփոխումներ իրականացնելու նրանց խոստումների նկատմամբ և իրենց ներկայացուցիչների միջոցով փորձում են վերահսկել Մակեդոնիայում տեղի ունեցող գործընթացները: Նույնը կարելի է ասել ժանդարմերիայի բարեփոխումների մասին, քանզի 2-րդ կետով այդ գործընթացները տեղությունները պահանջում էին դնել ոչ օսմանահպատակ գեներալի հսկողության տակ: 3-րդ կետով նախատեսվում էր տարածքների էթնիկ կազմի հիման վրա իրականացնել նահանգների ճշգրիտ վարչական բաժանումներ, իսկ 4-րդ կետով վարչական և դատական մարմիններում պաշտոններ պետք է ստանային նաև քրիստոնյաները:

5-րդ կետով Հավասարության սկզբունքով քրիստոնյաներից ու մահմեդականներից կազմվելու էին Հանձնաժողովներ, որոնք քննելու էին քաղաքական հանցագործությունների գործերը, ընդ որում, այդ

Հանձնաժողովներում մասնակցելու էին նաև երկու երկրների ներկայացուցիչները<sup>54</sup>:

Դժվար չէ նկատել, որ մարդասիրական միջամտությունների հետևանքով ներկայացված բարենորոգումների ծրագրերում հիմնականում շրջանառվում էին քրիստոնյաների իրավունքների պաշտպանության միևնույն կամ նմանատիպ դրույթները, երբ մի դեպքում կիրառված դրույթները նախադեպ էին ծառայում մյուս դեպքերի համար:

Մակեդոնիայի հետ կապված միջամտության այս ծրագիրը մի կողմից իր մեջ ներառում էր նախկին, այդ թվում՝ 1880 և 1895 թթ. Հայկական Հարցում իրականացված երկու միջամտությունների ծրագրերի դրույթները, մյուս կողմից մակեդոնական ծրագրի դրույթները հետագայում՝ 1914 թ. դրվեցին Հայկական բարենորոգումներին վերաբերող ուսա-թուրքական պայմանագրի հիմքում:

Մարդասիրական միջամտությունների այս շարքը, որն անընդհատ կիրառվում էր Օսմանյան կայսրության նկատմամբ, վկայում էր այն մասին, որ այդ պետությունը հետևողականորեն խախտում է իր տարածքում ապրող ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես նաև այդ Հարցում իր ստանձնած միջազգային պարտավորությունները՝ Հանգեցնելով մեծ տերությունների օրինական միջամտությանը իր ներքին գործերին:

Չնայած միջազգային Հարաբերություններում լայն կիրառում գտած ինչպես ներկայացված, այնպես էլ և բազմաթիվ այլ մարդասիրական միջամտություններին, մարդասիրության սկզբունքները միայն XIX դարի վերջին և XX դարի սկզբին վերջնականապես ամրագրվեցին միջազգային իրավունքում, իբրև նրա անբաժանելի մասը:

«Մարդկության օրենքներ» ձևակերպումը առաջին անգամ իր տեղը գտավ Հաագայի 1899 թ. խաղաղության առաջին կոնֆերանսում ընդունված II՝ «Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին» առաջին կոնվենցիայում, որով սահմանվում էին «մարդկության» և «մարդկության օրենքների» սկզբունքները, որոնցով դատապարտվում են խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններն ու կոտորածները<sup>55</sup>: Այս ձևակերպումը և նաև նրա իրավական բնութագրումը նրա հեղինակ-

<sup>53</sup> Сборник договоров России с другими государствами, с. 332.

<sup>54</sup> Сборник договоров России с другими государствами, с. 331.

<sup>55</sup> Տե՛ս Մարտիանյան Տ., Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915-1923 թթ.), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, Եր., 2002, էջ 77:

կի՝ ուսս ականավոր իրավաբան-միջազգայնագետ պրոֆեսոր Յ. Մարտենսի անունով հայտնի է «Մարտենսի վերապահում» անվան տակ:

«Մարտենսի վերապահումը» Հաագայի 1907 թ խաղաղության երկրորդ համաժողովի ընթացքում Հաագայի 1899 թ. համաժողովի երկրորդ կոնվենցիան անշան խմբագրական ուղղումներով վերահաստատվեց Հաագայի 1907 թ. հոկտեմբերի 18-ի չորրորդ «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիայի նախաբանում, որտեղ մասնավորապես նշվում էր, որ «մինչ այն պահը, երբ հնարավոր կլինի ստեղծել պատերազմի օրենքների առավել ամբողջական ժողովածու, պայմանավորվող բարձր կողմերը հարկ են համարում ընդգծել, որ իրենց ընդունած որոշումներով չնախատեսված դեպքերում բնակչությունը և պատերազմող կողմերը գտնվում են միջազգային իրավունքի նորմերի պաշտպանության ներքո, քանզի դրանք բխում են ժողովուրդների միջև հաստատված սովորույթներից, մարդկայնության օրենքներից (Ընդգծումը՝ Ա. Մ.) և հասարակական գիտակցության պահանջներից»<sup>56</sup>:

Նախաբանի այս ձևակերպումների հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. Կոնվենցիայի հեղինակներն, ի դեմս Մարտենսի և մյուսների, գիտակցելով, որ սովյալ փաստաթղթի շրջանակներում չեն կարող նախատեսվել պատերազմի օրենքների և սովորույթների խախտման բոլոր դեպքերը, ուստի և պատիժներ սահմանվել դրանց համար, հայտարարում են, որ չնախատեսված դեպքերի պարագայում խաղաղ բնակչությունը գտնվում է միջազգային իրավունքի նորմերի պաշտպանության ներքո: Տվյալ դեպքում խաղաղ բնակչության գանգվածային բնաջնջումը, ինչն այն պահին հայտնի էր կոտորածներ, ջարդեր անվանումներով, ոչ այլ ինչ էր, քան չնախատեսված դեպք, ուստի սովյալ պարագայում պետք է գործեին մարդկայնության օրենքները:

2. Այս կոնվենցիան առաջին բազմակողմ միջազգային իրավական փաստաթուղթն է, որում խոսվում է մարդկայնության օրենքների և դրանց հնարավոր խախտման մասին: Կոնվենցիան չէր անդրադառնում կոնկրետ խմբերի ոչնչացման հարցին, սակայն եթե արգելվում էր խաղաղ քաղաքիական բնակչության ոչնչացումն առհասարակ, ապա ինքնին ենթադրելի է, որ նույնը վերաբերվում էր նաև այդ բնակչության մաս հանդիսացող կոնկրետ խմբերին, որոնց ոչնչացումը նույնպես ար-

գելվում էր: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ցեղասպանություն հանցագործությունը միջազգային իրավունքի հետագա զարգացման արդյունքում գնահատվեց որպես մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն, այսինքն՝ հանցագործություն, որով խախտվում են մարդկայնության օրենքները, կարելի է վստահաբար պնդել, որ հենց սովյալ կարևոր միջազգային իրավական փաստաթուղթն է հետագայում ծնունդ տվել ցեղասպանության (գենոցիդի) «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» լինելու միջազգային սահմանմանը:

Կոնվենցիայի նախաբանում տեղ գտած մարդկության օրենքների սկզբունքը լրացնելու է գալիս հավելվածի 3-րդ հոդվածում այն ընդհանուր դրույթի ամրագրումը, որ պատերազմող կողմը պատասխանատվություն է կրում իր զինված ուժերի կազմում գտնվող անձանց բոլոր գործողությունների համար և պետք է հատուցի հասցված վնասների դիմաց, եթե կան դրա հիմքերը<sup>57</sup>: Փաստորեն պատերազմող կողմը պատասխանատվություն էր կրելու հակառակորդի տարածքում կատարված պատերազմական հանցագործությունների համար, որոնք կարող էին կատարվել ոչ միայն զինվորականների, այլ առավելապես անգն խաղաղ բնակչության նկատմամբ, որոնք չէին կարող դիտվել իբրև պատերազմող կողմ: Սակայն, ինչպես նշվում է կոնվենցիայի նախաբանում, անհնարին էր կանխատեսել պատերազմական հանցագործությունների բոլոր դեպքերը, այդ թվում նաև այնպիսիք, երբ պատերազմող կողմը կարող էր կոնվենցիայով արգելվող ուժային գործողություններ իրականացնել նաև սեփական անգն բնակչության նկատմամբ, նրանց դիտելով իբրև հակառակորդին օժանդակող ուժ: Կոնվենցիայի ոգուց ելնելով անգամ այս դեպքերն էին դատապարտելի, քանզի հենց նախաբանի «Մարտենսի վերապահման» մեջ ամրագրված է, որ անգամ «չնախատեսված դեպքերում խաղաղ բնակչությունը գտնվում է միջազգային իրավունքի նորմերի պաշտպանության ներքո»: Այս առումով ամենևին պատահական չենք համարում այն փաստը, որ Օսմանյան կայսրությունը, սովյալ կոնվենցիան ստորագրելով, վերապահում կատարեց հենց 3-րդ հոդվածի կապակցությամբ<sup>58</sup>:

Որոշ թուրք «մասնագետներ», հիմք ընդունելով այն, որ Մարտենսի հռչակագիրը հանդիսանում է Հաագայի կոնվենցիայի անբաժանելի

<sup>57</sup> Международное право. Ведение военных действий..., с. 19.

<sup>58</sup> Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, էջ 39:

<sup>56</sup> Международное право. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001, с. 19.

մասը, փորձում են «մարդկայնության օրենքներին» սկզբունքի գործողությունը սահմանափակել միայն պատերազմող կողմերի հարաբերություններով: Կոնվենցիայում տեղ գտած իր հռչակագրով Մարտենսը, սակայն, նորարարություն չէր կատարում միջազգային իրավունքում, այլ ընդամենն առաջարկում էր ամրագրել այն նորմերն ու սկզբունքները, որոնց հիման վրա մինչ այդ արդեն իսկ բազմաթիվ մարդասիրական միջամտություններ էին կատարվել միջազգային հանրության կողմից մասնավորապես Օսմանյան կայսրության նկատմամբ: Հատկանշական է, որ պատերազմական գործողությունների ժամանակ խաղաղ բնակչության կոտորածների վերաբերյալ իր դատողություններում Մարտենսը հենվում է հենց Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների կոտորածների փաստերի վրա: 1879 թ. իր «Արևելյան պատերազմը և Բրյուսելյան կոնֆերանսը» աշխատության մեջ նա նշում է, որ եթե արդարացիվում են խաղաղ բնակչության կոտորածները պատերազմական գործողությունների ընթացքում, ապա «այդ դեպքում պետք է խոնարհվենք թուրքերի իրենց բոլոր քրիստոնյա հպատակներին հետևողականորեն սպանելու ու ոչնչացնելու «աստվածային իրավունքի» առջև»<sup>59</sup>:

Այս առումով թուրքերի չմասնակցելը 1907 թ. կոնվենցիային, ըստ էության, ոչինչ չի փոխում, քանզի նախ այն նրանց կողմից ստորագրված 1899 թ. կոնվենցիայի անշան փոփոխված տարբերակն էր, և, բացի այդ, դրանք միջազգային իրավունքի համապարտադիր նորմեր էին բոլորի համար անկախ մասնակցությունից:

Անմիջապես 1877–1878 թթ. ուս-թուրքական պատերազմից հետո հրապարակված իր գրքում Մարտենսը փաստորեն քննարկում էր այդ պատերազմի արդյունքում ստորագրված Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրի դրույթները, որոցով Ռուսաստանի օգնությամբ կյանքի կոչվեց բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, սակայն այդպես էլ չկենսագործվեց արևմտահայերի համար բարենորոգումներ իրականացնելու համեստ պահանջը: Սակայն այս առումով չափազանց տեղին է հեղինակի հարցադրումն առ այն, որ պատերազմի ընթացքում խաղաղ բնակչությունը, օրինակ՝ Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչությունն ու մասնավորապես արևմտահայերի պաշտպանվածությունը պետք է երաշխավորված լինի ոչ թե Ռուսաստանի կամ որևէ այլ մեծ տերության ռազմական ուժի միջոցով, այլ միջազգային իրավունքի համապատասխան նորմերով: Մարտենսի 19-րդ դարի

վերջերին առաջ քաշած այս դիտարկումն արդիական է նաև մեր օրերում: Թերևս հենց այս շարժառիթներն էին, որ նրան մղեցին ավելի ակտիվ մասնակցելու Ոսմանյան համաժողովին և կոնվենցիայի մշակմանը, որպեսզի ստեղծվեն այնպիսի միջազգային իրավական նորմեր, որոնք ամրագրեն խաղաղ բնակչության պաշտպանությունը պատերազմների ընթացքում:

XIX դարի վերջին և XX դարի սկզբում միջազգային իրավունքի անբավարար զարգացման արդյունք պետք է համարել այն, որ Հաագայի կոնվենցիայի շրջանակներում խաղաղ բնակչության դեմ կատարված բռնությունները, մասնավորապես այն ժամանակ Չարդեր կամ կոտորածներ համարվող ցեղասպանային գործողությունները, դիտարկվել են իբրև պատերազմական հանցագործություններ: Մինչդեռ կոնկրետ ցեղասպանության հանցագործության համար պատերազմի առկայությունը բարենպաստ, բայց ոչ պարտադիր գործոն է, ուստի սխալ է այն պայմանավորել պատերազմով, կամ դասել պատերազմական հանցագործությունների շարքը: Սակայն այս թերությունը հանդերձ, Հաագայի 1899 թ. II և 1907 թ. IV կոնվենցիաներում «մարդկայնության օրենքներին» սկզբունքի ամրագրումը պետք է համարել հեղափոխական՝ քայլ, որով միջազգային իրավունքում կանխորոշվեց ցեղասպանության հանցագործության և դրա համար պատասխանատվության հետագա սահմանումը:

**1.1.2. Օսմանյան կայսրության նկատմամբ Հայկական հարցի հետ կապված մեծ տերությունների մարդասիրական միջամտությունները XIX դարի վերջին – XX դարի սկզբին և Հայերի ցեղասպանության համար պատասխանատվության սահմանումը**

Միանգամայն բնական է, որ Օսմանյան կայսրության նկատմամբ քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ուղղված եվրոպական տերությունների ընդհանուր ու մասնավոր մարդասիրական միջամտություններն ու դրանց հետևանքով ամրագրված նորմերը պետք է տարածվեն նաև կայսրության հայ բնակչության վրա: Այս առումով կայսրության հայ բնակչության նկատմամբ Փարիզի պայմանագրի 9-րդ հոդվածի գործնական քայլ հանդիսացավ արևմտահայերի Ազգային սահմանադրության ստեղծումը, որն ընդունվեց արևմտահայերի Ազգային ժողովի կողմից 1860 թ. մայիսի 24-ին,

<sup>59</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, с. 18.

սակայն արևմտահայերի իրավունքները նվազեցնող բազմաթիվ փոփոխություններից ու վերախմբազրույթներից հետո միայն երեք տարի անց, 1863 թ. մարտի 17-ին Հաստատվեց Բ. Դուռն կողմից: Արևմտահայերն անկեղծ հավատալով Օսմանյան կայսրության դեպի լավ փոխվելուն, փորձեցին օգտվել ընձեռված հնարավորություններից և կայսրության ներքին օրենսդրությամբ ամրագրել սեփական իրավունքները՝ Ազգային սահմանադրության տեսքով: Սակայն Բ. Դուռնը, այս քայլին զնալով, ընդամենը արևմտահայերի պաշտպանության պատրանք էր ստեղծում եվրոպական տերությունների աչքերում, ձգտելով բարձրացնել Օսմանյան կայսրության հեղինակությունը Եվրոպայում և կանխել տերությունների միջամտությունը արևմտահայերի իրավունքների պաշտպանության հետ կապված:

Ինչպես Հայտնի է, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով դրվեց Հայկական Հարցը միջազգայնացման սկիզբը, իսկ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով այն ճիշտ այնպես, ինչպես մարոնիների և բալկանյան ժողովուրդների հարցերը, դարձավ միջազգային հարաբերությունների ու նաև միջազգային, այլ ոչ թե միայն օսմանյան իրավունքի կարգավորման առարկա: Սակայն Օսմանյան կայսրությունն չնայած տերությունների մարդասիրական միջամտությանը ինչպես մյուս քրիստոնյա փոքրամասնությունների, այնպես էլ Հայկական Հարցում ոչ միայն չէր կատարում իր ստանձնած պարտավորությունները, այլև ավելի դժամորեն էր կոտորում այն փոքրամասնությանը, որին պաշտպանելու համար մեծ տերությունները նախաձեռնել էին այդ միջամտությունը: Հաշվի առնելով այս իրողությունը, մեծ տերությունները ևս մեկ մարդասիրական միջամտություն ձեռնարկեցին Հայկական Հարցի հետ կապված 1880 թ. հարկադրելով սուլթանին կատարել Բեռլինի պայմանագրով հայերի իրավունքների պաշտպանությանն ուղղված իր պարտավորությունները: Ու չնայած սուլթանի կողմից տրված հավաստիացումներին ու խոստումներին, որ Բ. Դուռնը կկատարի իր պարտավորությունները, ակնհայտ էր, որ դա արվում էր ընդամենը տերություններին հանգստացնելու և ավելի կոշտ միջամտություններից խուսափելու համար:

Ասվածի վառ ապացույցը Աբդուլ Համիդի կողմից 1894–1896 թթ. իրականացված արևմտահայերի զանգվածային կոտորածներն էին: Վստահաբար կարելի է պնդել, որ դրանք տեղի չէին ունենա, եթե մեծ տերություններն ավելի հետևողականորեն լինեին Հայերի իրավունքների պաշտպանության հարցերում, ինչպես դա կատարվեց մարոնիների և սերբերի դեպքում: Մեծ տերություններից միայն երեքը՝ Անգլիան,

Ֆրանսիան և Ռուսաստանը բավարարվեցին 1895 թ. մայիսին բարենորոգումների նոր փաթեթ ներկայացնելով, որում հղում էր կատարվում Բեռլինի պայմանագրի համապատասխան հոդվածի վրա<sup>60</sup>: Այս փաստը վկայում էր այն մասին, որ Օսմանյան կայսրությունը չէր կատարում Հայկական նահանգներում բարենորոգումներ կատարելու և Հայերի անվտանգությունն ապահովելու իր ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել էր մեծ տերությունների հերթական մարդասիրական միջամտությանը Հայկական Հարցի հետ կապված: Սակայն այս անգամ էլ չհաջողվեց այն հասցնել վերջնական նպատակին:

Մեծ տերություններն, իրենց վրա վերցնելով բարենորոգումների իրականացման վերահսկողության գործառույթը, այդպիսով իրենց բաժին պարտավորությունն էին ստանձնում այդ հարցում, ուստի նրանց կարելի է մեղադրել պատշաճ վերահսկողություն չիրականացնելու և Օսմանյան կայսրության վրա համապատասխան ճնշում չգործադրելու մեջ: Օսմանյան կայսրության նկատմամբ մարդասիրական միջամտություն իրականացնելու հարցում մեծ տերությունների անհետևողականությունը մեծապես պայմանավորված էր նրանց շահերի միջև նկատվող հակասություններով: Տվյալ պայմաններում գործընթացը հանգեցնում էր ոչ թե մարդասիրական միջամտությանը, այսինքն՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների իրական պաշտպանությանը, այլ ընդհակառակը՝ ավելի էր սանձազերծում Օսմանյան կայսրության կառավարող վարչակարգին:

Բալկանյան պատերազմից մինչև Առաջին աշխարհամարտի նախաշեմն ընկած ժամանակաշրջանում տերությունները բալկանյան հարցերին զուգահեռ կրկին ստիպված եղան անդրադառնալ Հայկական Հարցին, քանզի ակնհայտ էր, որ թուրքական իշխանությունները ոչինչ չէին անում Հայերի վիճակը փոքրիշտեք բարելավելու ուղղությամբ: Համառ պայքարի արդյունքում ռուսական դիվանագիտությանն ի վերջո հաջողվեց հասնել 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական պայմանագրի ստորագրմանը, որով Բ. Դուռնն այս անգամ արդեն ավելի հստակ ու կոնկրետ պարտավորություններ էր ստանձնում բարենորոգումներ իրականացնել Արևմտյան Հայաստանում: Թեև այս պայմանագիրը երկկողմ էր՝ Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև, այդուհանդերձ, բարենորոգումների գործընթացը գտնվելու էր եվրոպական տերությունների հսկողության տակ, քանզի նրանք մասնակցել էին պայմանագրի մշակմանը և, բացի այդ, նշանակվելու էին երկու եվրոպացի

<sup>60</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 131:



վերատեսուհիներ, որոնք էլ ուղղորդելու էին բարեփոխումների գործընթացը Արևմտյան Հայաստանում: Սակայն այս անգամ էլ վրա հասած համաշխարհային պատերազմը Հարմար առիթ հանդիսացավ երիտթուրքերի համար, որ նրանք ոչ միայն «մոռանան» 1914 թ. պայմանագրի պարտավորությունները, այլև իրականացնեն Հայերի ցեղասպանությունը:

Հաագայի կոնվենցիայի ու մասնավորապես «Մարտենսի վերապահման» «մարդկության օրենքների» ոգով էր, որ արդեն Հայոց ցեղասպանության ընթացքում 1915 թ մայիսի 24-ին Անտանտի տերությունները ընդունեցին համատեղ հայտարարություն, որով դատապարտում էին Օսմանյան կայսրության կողմից Հայ բնակչության զանգվածային սպանությունները կայսրության ողջ տարածքում<sup>61</sup>:

Հատկանշական է, որ դաշնակից տերություններին Հայերի զանգվածային կոտորածների վերաբերյալ համատեղ հռչակագիր ընդունելու առաջարկն անելիս Ռուսաստանի արտգործնախարար Ս. Գ. Սազոնովն իբրև նման ակցիայի նախադեպ մատնանշում էր մարտնիների իրավունքների պաշտպանության հետ կապված եվրոպական տերությունների համատեղ մարդասիրական միջամտությունը: 1915 թ. մայիսի 18-ին՝ Փարիզում և Լոնդոնում ուսումնասիրության հրահանգում էր դաշնակիցներին հղված դիմումի մեջ հիշեցնել 1860 թ. Սիրիայում տեղի ունեցած կոտորածներից հետո եվրոպայի կողմից ձեռնարկված պատժիչ միջոցների մասին<sup>62</sup>:

1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրով Անտանտի տերությունները Օսմանյան կայսրությունում կատարվող Հայերի զանգվածային կոտորածներին տալիս էին թե՛ քաղաքական և թե՛ իրավական գնահատական՝ դա հանցագործություն է ուղղված մարդկայնության և քաղաքակրթության դեմ: Այս փաստաթղթի հրատարակումը՝ արդեն բուն կոտորածների ընթացքում, ևս մեկ վառ ապացույց է այն բանի, որ Հայերի հետ կատարվածը համարվել է հանցագործություն՝ համաձայն տվյալ պահին գործող միջազգային իրավական նորմերի:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կնքվեցին Վերսալի, սպա Սևրի հաշտության պայմանագրերը՝ համապատասխանաբար Գերմանիայի ու Թուրքիայի հետ, և դրանցում հստակորեն նշված էր, որ

պետք է ստեղծվեն միջազգային դատական ատյաններ պատերազմական հանցագործներին դատելու համար<sup>63</sup>: Թերևս, սրանից վախենալով էր, որ Թուրքիան հապճեպ ձեռնարկեց երիտթուրքերի դատավարությունը՝ Հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը բարդելով միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության ու նրա առաջնորդների վրա ու փորձելով խուսափել թուրքական պետության պատասխանատվությունից, ինչը կարող էր ծագել միջազգային ատյանում նման դատավարություն սկսելու պարագայում:

Այսպիսով, ցեղասպանության հանցագործությանը տրված «մարդկության դեմ կատարված հանցագործություն» որակումը, որն առկա է 1899 թ. և 1907 թ. Հաագայի համապատասխանաբար երկրորդ և չորրորդ կոնվենցիաներում և 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարության մեջ, ոչ պատահականորեն, այլ օրինաչափորեն արտացոլվեց նաև ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» (1948 թ.) ու «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968 թ.) կոնվենցիաներում: Ուրեմն՝ Հայերի զանգվածային սպանություններն անկախ «զենոցիդ» տերմինի կիրառումից, համարվել են հանցագործություն՝ համաձայն մինչև Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության ընթացքում և դրանից հետո գործող միջազգային իրավունքի նորմերի: Ուստի ներկայումս գործող միջազգային իրավական նորմերը թույլ են տալիս հենվել նաև հենց ցեղասպանության կատարման պահին գործող նորմերի վրա և համապատասխան գնահատական տալ 20-րդ դարակզբին կատարված հանցագործությանը:

<sup>61</sup> Stb. Internationale Beziehungen in der Epoche des Imperialismus, Dokumente aus dem Archiv des Kaiserlichen und des Kaiserlichen Reichs. 1878-1917, M.-L. 1931-1940, серия III, т. 7, ч. 2, с. 252.

<sup>62</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 369: Stb. Russische Quellen über die Genozide der Armenier in der Osmanischen Empire 1915-1916. Сост. Г. А. Авраамян, Т. Г. Севан-Хачатрян, Ер., 1995, с. 15.

<sup>63</sup> Հովհաննիսյան Վ., Սևրի 1920 թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և Հայոց պահանջատիրությունը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական գեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 20:

Քանի որ 1907 թ. կայացած Խաղաղության երկրորդ համաժողովին ընդունված կոնվենցիաների թիվը աճեց, ուստի 1899 թ. II կոնվենցիան ստացավ IV հերթական համարը:

## 1.2. Թուրքիայի Հանրապետության Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու հարցը

Թուրքիայի Հանրապետության, իբրև Օսմանյան կայսրության իրավահաջորդի հիմնավորման հիմնահարցը չափազանց կարևոր է, քանզի միայն ժամանակակից Թուրքիայի Օսմանյան կայսրության իրավահաջորդ հանդիսանալու փաստի ապացուցումը կարող է հանգեցնել նրան պատասխանատվության կանչելուն՝ իր նախորդի կատարած հանցադործության համար:

Օսմանյան կայսրության փլուզումից և նրա որպես պետություն անհետացումից հետո, նրա նախկին տարածքներում առաջացել են Թուրքիայի հետ կապ չունեցող մի շարք նոր պետություններ, ինչպիսիք են Իրաքը, Սիրիան, Հորդանանը, Իսրայելը, Լիբանանը, Սաուդյան Արաբիան և այլն: Սակայն, Օսմանյան կայսրության փլուզումից հետո արդյո՞ք նոր պետություն էր Թուրքիան՝ ինքը, թե՞ շարունակում է Օսմանյան կայսրության իրավահաջորդությունը:

Ինչպես հայտնի է, միջազգային իրավահաջորդությունը դա որևէ պետության իրավունքների և պարտականությունների փոխանցումն է մեկ այլ պետության, ինչը նշանակում է արդեն գոյություն չունեցող պետության շարունակություն, այսինքն՝ իրավահաջորդ պետությունը ստանձնում է իրավանախորդի ինչպես իրավունքները, այնպես էլ պարտավորությունները:

Իրավահաջորդության հարցի առաջացումը կապված է պետությունների տրոհման, նրանց տարածքների բռնակցման կամ մի քանի պետությունների միավորման ու դաշնակցային պետության ստեղծման հետ: Եվ պետք է հստակեցվի, թե նշված գործընթացներում կա՞րդյոք որևէ պետություն, որը շարունակում է նախորդ պետության իրավահաջորդությունը, թե՞ ոչ:

Տեսականորեն իրավահաջորդության հարցի հստակեցումը կապված է նրա հետ, թե նոր առաջացած պետությունն արդյո՞ք պահպանում է նախորդ պետության գլխավոր հատկանիշերը՝ պատմական կապը, հիմնական բնակչությունը, նրա ազգային ծագումը, լեզուն, շարունակվում է արդյոք տիտղոսակիր ազգի կառավարումը և այլ բնութագրիչներ: Եթե պատասխանը դրական է, ուրեմն՝ այդ դեպքում գործ ունենք ոչ թե նոր առաջացած պետության, այլ նախորդ պետության իրավահաջորդի հետ<sup>64</sup>:

Ելնելով այս դրույթներից, ակնհայտ է դառնում, որ Թուրքերը իշխել են Օսմանյան կայսրության ժամանակ և այդ տիրապետումը փոխանցվել է նաև ժամանակակից Թուրքիային, ընդ որում, այդ նույն ժողովուրդը պահպանել է Օսմանյան կայսրության ժամանակ ունեցած իր ավանդույթները և լեզուն: Հատկանշական է, որ Օսմանյան կայսրության պետական ծառայողների 85 և բանակի սպաների 93 տոկոսը պահպանեցին իրենց պաշտոնները նոր հանրապետությունում<sup>65</sup>: Ավելին, ինչպես հայտնի է, երիտթուրքերից շատերը հետագայում դարձան քեմալական շարժման ղեկավարներ, և անկախ կառավարման եղանակից, հանրապետական կարգերի պարագայում, ինչպես և Օսմանյան կայսրության ժամանակ, շարունակվեց Թուրքերի իշխանությունը տվյալ տարածքի վրա: Ակնհայտ է, ուստի, որ ի դեմս Թուրքիայի գործ ունենք Օսմանյան կայսրության իրավահաջորդի հետ:

Սակայն, Թուրքիայի Օսմանյան կայսրության իրավահաջորդության հարցը չի սահմանափակվում լուր միջազգային իրավունքի տեսական հիմնավորումներով: Գործնականում Թուրքիայի իրավահաջորդության հարցը առաջադրվել է Լոզանի համաժողովից հետո 1925 թ., երբ քննարկվում էր նախկին Օսմանյան կայսրության պարտքի հարցը: Խնդիր էր դրված պարզել, թե այդ պետության չգոյության պայմաններում ո՞վ պետք է ստանձնի պարտքի վճարման պարտավորությունը: Թուրքական կողմը իրեն բնորոշ եղանակով հայտարարեց, որ Թուրքիան ոչ մի կապ չունի Օսմանյան կայսրության հետ, որն արդեն գոյություն չունի: Թուրքերը պնդում էին, որ օսմանյան պարտքի մարումը պետք է կատարվի Լոզանի պայմանագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ըստ որի Թուրքիան ստեղծվել էր ի թիվս Օսմանյան կայսրության անդամահատումից հետո առաջացած Սիրիայի, Լիբանանի և Իրաքի: Ուստի, եթե կա Օսմանյան կայսրության պարտքերի վերադարձի խնդիր, ապա այն պետք է բաշխվի նոր առաջացած բոլոր պետությունների վրա: Չնայած Լոզանի պայմանագրի դրույթներին, հարցը հանձնվեց միջազգային իրավարարության: Միջազգային իրավարար Բորելը վճռեց, որ ըստ միջազգային իրավունքի՝ միայն Թուրքիան է հանդիսանում Օսմանյան կայսրության իրավահաջորդը, ուստի հենց նա էլ պետք է վճարի Օսմանյան կայսրության պարտքը<sup>66</sup>: Այս վճռի հիման վրա Թուր-

<sup>64</sup> Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, էջ 193:

<sup>65</sup> Дадриян В., Геноцид армян как проблема международного уголовного права, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Եր., 2006, N 13, էջ 8:

<sup>66</sup> Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, էջ 195:

քիան ստանձնեց Օսմանյան կայսրության պարտքի վճարման պարտավորությունը:

Չնայած հսկայական զիջումներին, Թուրքիայի Հանրապետությունը Օսմանյան կայսրության պարտքը կարողացավ փակել միայն 1944 թ. հունիսին<sup>67</sup>: Այն, որ Թուրքիան ընդհուպ մինչև 1944 թ. վճարել է Օսմանյան կայսրության պարտքը, վերջնականապես հաստատում է, որ ինքը Թուրքիան արդեն իսկ ընդունել է, որ Հանդիսանում է Օսմանյան կայսրության իրավահաջորդը: Բացի այդ, Թուրքիան Լոզանի պայմանագրի 12 և 17-րդ հոդվածներով համաձայնվել է նաև որոշ տարածքների օտարման վերաբերյալ Օսմանյան կայսրության կողմից նախկինում ստորագրված պայմանագրերի դրույթների հետ<sup>68</sup>:

Միջազգային իրավունքում տարբերում են իրավահաջորդության երկու տեսակ՝ ամբողջական և մասնակի: Վերջինս հստակեցնում է իրավահաջորդության չափերի հարցը, թե իրավահաջորդ պետությունն ի՞նչ ծավալով պետք է ստանձնի նախորդի իրավունքներն ու պարտականությունները: Սակայն այս վերջինն ավելի շուտ տեսական բնույթի հարց է և որպես կանոն հիմնականում կիրառվում է ամբողջական իրավահաջորդության տեսակը: Այս առումով գոյություն ունի թյուր կարծիք, թե Թուրքիան ճանաչվել է Օսմանյան կայսրության իրավահաջորդ միայն մասնակիորեն՝ բացառապես օսմանյան պարտքի մասով: Մինչդեռ իրավարար Բորելը չէր կարող որոշել օսմանյան պարտքի ճակատագրի հարցը, չպարզելով, թե որ՞ երկիրն է Հանդիսանում գոյություն չունեցող Օսմանյան կայսրության իրավահաջորդը: Ու թեև քաղաքական տեսակետից, բացի այլ գործոններից նաև օսմանյան պարտքի մարման հարցն է Հանգեցրել նրան, որ Թուրքիան ճանաչվի Օսմանյան կայսրության իրավահաջորդ, այդուհանդերձ, իրավական տեսակետից, օսմանյան պարտքի մարելու հանգամանքը Թուրքիայի իրավահաջորդության ոչ թե պատճառ է, այլ հետևանք: Ուստի իրավարար Բորելը նախ՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդ է ճանաչել միայն Թուրքիան, ինչից սրամաբանորեն բխում էր, որ հենց նա էլ պետք է վճարի նախկին օսմանյան պարտքերը: Այնպես որ, սովյալ դեպքում տեղին է խոսել ոչ թե մասնակի, այլ ամբողջական իրավահաջորդության մասին, քանզի Թուրքիայի իրավահաջորդության հարցի

<sup>67</sup> Դադրյան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական քաղաքական և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պատմագրությունում հիմնախնդիրները», (գիտագործնական միջազգային գիտաժողով), էջ 179:

<sup>68</sup> [http://www.lib.byu.edu/index.php/Treaty\\_of\\_Lausanne](http://www.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne)

լուծումը վերաբերում է ոչ միայն օսմանյան պարտքի մարման պարտավորությանը, այլև կայսրության կողմից գործած հանցանքների համար միջազգային պատասխանատվությանը<sup>69</sup>:

Լուվենի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր, միջազգային իրավունքի փորձագետ Ջո Վերհովենը Թուրքիայի իրավահաջորդության հետ կապված գրում է. «Ինչ ցնցումներ ու վայրկյաններ էլ տեղի ունեցած լինեն Թուրքիայում քեմալականների հաստատումից ու Օսմանյան կայսրության կազմալուծումից հետո, երբեք կասկած չի առաջացել այն հարցում, թե պատերազմի ավարտից հետո առաջացած Թուրքական պետությունը նույնական չէ այն պետության հետ, որը պատերազմից առաջ դաշինքի մեջ մտավ Գերմանիայի հետ: Այս եղրակացությունը համոզիչ կերպով հաստատեց իրավարար Բորելը, երբ 1925 թ. լսվում էր օսմանյան պետական պարտքի հարցը<sup>70</sup>:

Ի վերջո ներկայիս Թուրք բարձրաստիճան պետական պաշտոնյաներն էլ չեն թաքցնում իրենց կապը Օսմանյան կայսրության հետ, երբ նեոօսմանականությունը հռչակվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության ուղենիշ, դրանից բխող բոլոր հետևանքներով: Օրինակ, Թուրքիայի մշակույթի նախարար Իստեմիհան Թալալը հրապարակայնորեն հայտարարել է, որ Թուրքիայի Հանրապետությունը Օսմանյան կայսրության շարունակությունն է, որի ժառանգությունը Թուրքական պատմության մի մասն է և դրա համար ամաչելը, ըստ նախարարի, հավասարազոր է սեփական գոյության ժխտմանը<sup>71</sup>:

Հանրապետական Թուրքիան, մերժելով Հայոց ցեղասպանությունը, ինքնաբերաբար հաստատում է իր Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելը նաև այն իմաստով, որ այդ կերպ փաստորեն շարունակում է վերջինիս քաղաքականությունը, ուստի և ստանձնում է պատասխանատվություն այդ հանցագործության համար<sup>72</sup>:

Այսպիսով, եթե Թուրքիան ճանաչվել է որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ և որպես այդպիսին կատարել է իր նախորդի պարտավորությունները՝ կապված պետական պարտքի մարման հետ, ապանա պատասխանատվություն է կրում նաև վերջինիս կատարած հանցագործությունների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության համար:

<sup>69</sup> Տն՝ Թորիկեան Շ., Հայկական հարցը ու միջազգային օրենքը, էջ 195:

<sup>70</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, с. 768.

<sup>71</sup> Dadrian V. N., The key elements in the Turkish denial of the Armenian Genocide: A case study of distortion and falsification, Toronto, 1999, p. 5.

<sup>72</sup> Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., 2013, էջ 212:

Իրավահաջորդության խնդրի հետ սերտորեն առնչվում է նաև այն հարցը, թե պետության կառավարման ձևի (վարչակարգի) կամ տարածքի փոփոխությունը միջազգային իրավունքի տեսակետից կարո՞ղ է արդյոք ազդել՝ ցեղասպանության իրականացման համար տվյալ պետությանը պատասխանատվության կանչելու գործընթացի վրա: Իսկապես, պետության կառավարման ձևի կամ պետության տարածքի փոփոխությունն իբրև փաստարկներ նույնպես կարող են բերվել Թուրքիայի իրավահաջորդությունը ժխտելու համար: Սակայն պետք է նշել, որ միջազգային իրավունքում կան բավարար ապացույցներ, որոնք հաստատում են, որ տվյալ հանգամանքները որևէ կերպ չեն կարող ազդել իրավահաջորդության հարցի վրա, եթե անգամ վարչաձևի փոփոխությունը հեղափոխության հետևանք է<sup>73</sup>:

Սա, թերևս, բացատրվում է նաև նրանով, որ միջազգային որոշակի պարտավորություններ ստանձնած կամ միջազգային հանցագործություն կատարած պետությունը, իր պարտավորությունների կատարումից կամ պատասխանատվությունից խուսափելու համար, հնարավորություն ունի դիմելու ծրագրավորված իմիտացիայի (նմանակման): Արդյունքում նա կարող է ձևականորեն վերաբաժանել իր տարածքը, կամ էլ՝ հեղափոխություն նմանակելու միջոցով՝ փոխել կառավարման ձևը և դրա հիման վրա պնդել, թե իբր՝ տվյալ պարտավորությունները ստանձնել կամ հանցագործությունը կատարվել է այլ պետություն կամ վարչակարգ: Պետք է նշել, որ ի դեմս քեմալական շարժման՝ մենք գործ ունենք հենց նման երևույթի հետ, քանզի հայտնի է, որ, ըստ էության, նախկին երիտթուրքերն անցան քեմալական շարժման գլուխ, իսկ հետո էլ՝ ստանձնեցին հանրապետական Թուրքիայի կառավարման դեկը:

### 1.3. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում Հայաստանի Հանրապետության իրավասուբյեկտության հարցը

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իմաստով կարևոր է նաև Հայաստանի երրորդ Հանրապետության կողմից ժամանակակից Թուրքիային միջազգային-իրավական պահանջներ ներկայացնելու կամ միջազգային դատական ատյաններում որպես հայցվոր կողմ

<sup>73</sup> Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, էջ 192:

հանդես գալու իրավունքի հարցի հստակեցումը: Տեսականորեն՝ Հայոց ցեղասպանության հետ կապված հիմնահարցերի լուծումը պետք է ստանձնի Հայ ժողովրդի այն հատվածը, որն անմիջականորեն տուժել է երիտթուրքերի կողմից իրականացված ցեղասպանության քաղաքականությունից, ինչի արդյունքում էլ սփռվել է աշխարհով մեկ՝ ձևավորելով հայկական Սփյուռքը: Այլ խոսքով՝ հենց անմիջական տուժողը պետք է ստանձնի իր իրավունքների ու շահերի պաշտպանությունը և պատասխանատվության կանչելով հանցագործ պետությունը՝ հասնի նյութական (այդ թվում՝ տարածքային) և բարոյական վնասների հատուցմանը:

Սակայն, համաձայն գործող միջազգային իրավական համակարգի ու գոյություն ունեցող նորմերի՝ միջազգային իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում միայն միջազգայնորեն ճանաչված պետությունները, որոնք օժտված են ինքնիշխանությամբ: Հասկանալի է, որ հայկական Սփյուռքը օժտված չէ ինքնիշխանությամբ, ինչից ելնելով էլ չի կարող դիմել իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ և, հետևաբար, որպես պահանջատեր՝ չի կարող հանդես գալ որևէ միջազգային ատյանում:

Մյուս կողմից էլ, պետք է նշել, որ Հայաստանաբնակ հայության մեծամասնությունը նույնպես Հայոց ցեղասպանության զոհերի և վերապրածների ժառանգներ են: Ուստի եթե անգամ Սփյուռքը ունենար իրավական հնարավորություն՝ ներկայացնելու ցեղասպանության հետևանքով տուժած Հայ ժողովրդի շահերն ու իրավունքները, տրամաբանական չէր լինի այդ գործընթացից դուրս թողնել Հայաստանում բնակվող ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներին: Բացի այդ, հարկ է մեկընդմիջտ ձեռքազատվել մեզանում առկա այն սխալ ու վնասակար մտայնությունից, որ Հայոց պահանջատիրությունը միայն Սփյուռքի խնդիրն է:

Սակայն միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը կարող է ներկայացնել ու պաշտպանել միայն Հայոց ցեղասպանության այն զոհերի ու վերապրածների ժառանգների շահերն ու իրավունքները, որոնք հանդիսանում են իր քաղաքացիները: Ինչ վերաբերում է արևմտահայերի շահերի ներկայացմանն ու պաշտպանությանը, ապա Հայաստանի Հանրապետությունը կարող է ստանձնել այդ իրավունքն այն դեպքում, եթե արևմտահայերի լիազոր և լեգիտիմ մարմինն օժտել է նրան նման իրավունքով:

Այս իմաստով պետք է նշել, որ Արևմտահայերի երկրորդ համագումարը դեռևս 1919 թ. օժտել է Հայաստանի Առաջին Հանրապետությանը նման իրավունքով: 1919 թ փետրվարի 12-ին համագումարի ընդունած

«Քաղաքական բանաձևի» 5-րդ կետի համաձայն արևմտահայերի Գործադիր մարմինը Արարատյան Հանրապետության կառավարության և պարլամենտի հետ միասին պետք է ձեռնարկեր իրական քայլեր Միացյալ, Ազատ Հայաստանի հռչակման ուղղությամբ<sup>74</sup>: Այս ձևակերպումով արևմտահայերի լիազոր և լեգիտիմ մարմինը փաստորեն լիազորում էր Հայաստանի առաջին Հանրապետությանը հանդես գալ նաև իր անունից իբրև պահանջատեր, քանզի Միացյալ, Ազատ Հայաստանի հռչակումն անպայմանորեն ենթադրում էր Հայոց պահանջատիրությունը: Պետք է նշել, որ Հայաստանի առաջին Հանրապետությունն իր հերթին ստանձնել է այդ հանձնառությունը: Ի կատարումն փետրվարին տեղի ունեցած Արևմտահայերի երկրորդ համագումարի որոշումների, վարչապետ Ալ. Խատիսյանի կառավարությունը մայիսի 28-ին՝ անկախության տարեդարձի օրը, ընդունեց ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի հռչակագիրը, որով հանրապետության իշխանություններն իրենց ազդարարում էին նաև Արևմտահայաստանի տերը<sup>75</sup>:

Այս առումով ծագում է նաև իր՝ Հայաստանի երրորդ Հանրապետության իրավահաջորդության հարցը՝ պարզելու համար, թե արդյո՞ք նա հանդիսանում է առաջին հանրապետության իրավահաջորդը: Կարծում ենք, որ ՀՀ իրավահաջորդության հարցը համեմատաբար կարգավորված խնդիր է, քանզի Հայաստանի առաջին Հանրապետությունը Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագրի դրույթներով իշխանությունը բուլղարիայի հեղկոմին փոխանցելու ժամանակ վերջինիս է փոխանցել նաև իր իրավունքներն ու պարտավորությունները: Այսինքն՝ Խորհրդային Հայաստանի իշխանություններն, ըստ էության, ստանձնել են Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդությունը<sup>76</sup>:

Այնուհետև Խորհրդային Հայաստանը, դառնալով սկզբում Անդրֆեդերացիայի, իսկ հետո էլ՝ Խորհրդային Միության մասը, իր իրավահաջորդությունը փաստորեն փոխանցել է ԽՍՀՄ-ին<sup>77</sup>: Թերևս, հենց սրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Խորհրդային Միությունն իրեն իրավունք վերապահեց հանդես գալու Խորհրդային Հայաստանի անունից և տարածքային հարց բարձրացնելու՝ Թուրքիայի առջև: Այս փաստը նույնպես հստակ

ցույց է տալիս, որ ԽՍՀՄ-ը ժառանգել էր Խորհրդային Հայաստանի իրավահաջորդությունը, հակառակ պարագայում սովյալ պահին հենց Թուրքիան կվիճարկեր Խորհրդային Հայաստանի անունից ԽՍՀՄ հանդես գալու իրավունքը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ներկայիս Հայաստանի Հանրապետությունը ժառանգեց Խորհրդային Հայաստանի իրավահաջորդությունը: Այսպիսով, դժվար է նկատել, որ Հայաստանի երրորդ Հանրապետությունը հանդիսանում է Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդը: Հայաստանի Հանրապետության առաջին Հանրապետության իրավահաջորդ լինելն ամրագրված է նաև ՀՀ Անկախության հռչակագրում, որի նախաբանում նշված է, որ Հայաստանի Հանրապետությունը զարգացնում է 1918 թ. մայիսի 28-ին ստեղծված Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները<sup>78</sup>:

Այսպիսով Հայաստանի ներկայիս Հանրապետությունը, իբրև առաջին Հանրապետության իրավահաջորդ, իրավական տեսակետից արևմտահայության լեգիտիմ և լիազոր մարմնի կողմից լիազորված է զբաղվել նաև ցեղասպանությունից սուժած արևմտահայության իրավունքների պաշտպանության հարցերով:

Չպետք է մոռանալ, սակայն, որ Արևմտահայերի երկրորդ համադուժարը Հայաստանին նման իրավունքով լիազորելով հանդերձ, միևնույն ժամանակ ընդժում էր միասին ու համատեղ այս ուղղությամբ աշխատելու կարևորագույն հանգամանքը: Այս դրույթը խիստ արդիական է նաև այսօր, քանզի այն ենթադրում է թե՛ Հայաստանի, և թե՛ Սփյուռքի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման գործում: Ելնելով համընդհանուր ազգային շահերի գիտակցումից, Սփյուռքն ու Հայաստանը պետք է որդեգրեն կառուցողական մոտեցումներ միմյանց նկատմամբ և չփորձեն իրենց մենաշնորհը համարել այս հարցով զբաղվելու իրավունքը: Մի կողմից՝ Սփյուռքը պետք է գիտակցի, որ ցեղասպանության դատապարտման և այդ հանցագործության հետևանքների վերացման գործում ինքնուրույն չի կարող հասնել ավելի լուրջ հաջողությունների, քան որևէ երկրի Խորհրդարանում Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումն է, քանզի չի հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ, հետևաբար՝ չի կարող լիարժեք և արդյունավետ կերպով պաշտպանել Հայոց պահանջատիրությունը միջազգային դատական աստիճաններում: Մյուս կողմից՝ Հայաստանն այս գործում անպայման պետք է ներգրավի Սփյուռքի համապատասխան

<sup>74</sup> Մելիքեան Վ., Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական նարցի փուլերը 1917–1923 թթ., Եր., 2007, էջ 10:

<sup>75</sup> Մելքոնյան Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Եր., 2011, էջ 387:

<sup>76</sup> Թորիկեան Ը., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, էջ 200:

<sup>77</sup> Նույն տեղում:

<sup>78</sup> Տե՛ս ՀՀ Անկախության հռչակագիր, ընդունված 23 օգոստոսի 1990 թ.:

կառուցյաներին ու հաշվի առնի թե՛ նրանց փուլըն ու գիտելիքները և թե՛ նրանց կարծիքներն ու մտածումները: Այս իմաստով խիստ կարևոր է Սփյուռքի ու Հայաստանի միջև կատարել ճիշտ դերաբաշխում Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման գործընթացում, ելնելով նրանցից յուրաքանչյուրի հնարավորություններից, եղած սեփականություններն ավելի արդյունավետ ու նպատակային օգտագործելու առումով: Կարծում ենք, որ սա չափազանց կարևոր հարց է Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համազգային ռազմավարության ու մարտավարության մշակման տեսակետից:

#### 1.4. ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ ուժի հարցը

Միջազգային իրավունքի տեսակետից խիստ կարևոր է նաև Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի կիրառելիությունը, այսինքն՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ կոնվենցիայի հետադարձ ուժի հարցը:

Թուրք «մասնագետները» շարունակաբար պնդում են, որ 1948 թ. ընդունված ՄԱԿ-ի կոնվենցիան չի կարող հետադարձ ուժ ունենալ և վերաբերել 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության տարածքում տեղի ունեցած իրադարձություններին<sup>79</sup>: Բայց որքան էլ պարադոքսալ կարող է թվալ առաջին հայացքից, նման ձևակերպմամբ թուրք հեղինակներն այդ պնդումով անուղղակիորեն ընդունում են, որ 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության տարածքում Հայերի նկատմամբ իրականացվել է ցեղասպանություն: Փաստորեն թուրք «մասնագետներին» բավականին անհանգստացնում է այն հարցը, որ կոնվենցիայի հետադարձ ուժ ունենալու պայմաններում դա կհանգեցնի նաև պատասխանատվության, քանզի իրենք էլ փայլուն կերպով գիտեն, որ այն, ինչն իրականացվել է Հայերի նկատմամբ 20-րդ դարասկզբին՝ լիովին համապատասխանում է ցեղասպանության հանցագործության հանցակազմին:

ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի Հայոց ցեղասպանության նկատմամբ հետադարձ ուժ ունենալու հարցին անդրադարձել են Հայ և օտարազգի

<sup>79</sup> Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 51.

հեղինակավոր գիտնականներ՝ Շ. Թորիկյանը, Յու. Բարսեղովը, Ա. դը Զայասը և ուրիշներ, որոնք իրենց աշխատություններում հիմնավորել են կոնվենցիայի հետադարձ ուժ ունենալու հանգամանքը և դրա կիրառելիությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հանցագործության հետևանքները դեռևս չեն հաղթահարվել և հայ ժողովուրդը շարունակում է դրանք իր վրա կրել, ուստի տվյալ պարագայում գործ ունենք շարունակվող հանցագործության հետ, իսկ այդ դեպքում կոնվենցիայի հետադարձության հարց առհասարակ չի կարող առաջանալ:

Թուրք «մասնագետները» պնդումները թերևս հիմնվում են նրա վրա, որ 1948 թ. կոնվենցիայի Գրդ հոդվածի համաձայն՝ տվյալ փաստաթղթի մեկնաբանման և դրա հետ կապված վեճերի քննարկման իրավասությունը հանձնվել է ՄԱԿ-ի միջազգային դատարանին<sup>80</sup>: Ուստի 1948 թ. կոնվենցիայի հետադարձ ուժի կիրառման հարցը նույնպես նշված դատարանի որոշելիք խնդիրն է<sup>81</sup>: Սակայն չպետք է մոռանալ, որ դատարանի այդ իրավասությունը կոնվենցիայում ամրագրվել է 1948 թ. դրույթով, որը ուժի մեջ է մտել 1951 թ.: Սակայն դրանից հետո միջազգային իրավունքը շարունակել է զարգանալ, տվյալ ոլորտում ընդունելով նոր փաստաթղթեր:

«Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ. կոնվենցիայի ընդունումից 20 տարի անց՝ 1968 թ. նոյեմբերի 26-ին, ՄԱԿ-ն ընդունել է նաև մեկ այլ կոնվենցիա՝ «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին»: Նշված կոնվենցիայում պայմանավորվող կողմերը ընդգծում են, որ «պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար պատասխանատվության կանչելու կամ պատժելու վերաբերյալ առկա որևէ հոչակազրույթ, ակտում կամ կոնվենցիայում նախատեսված չէ վաղեմության մասին դրույթ»<sup>82</sup>: Ավելին, նրանում ընդգծվում է, որ տվյալ կոնվենցիայով միջազգային իրավունքում համընդհանուր կիրառության մեջ է մտնում «այն սկզբունքը, համաձայն որի պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունները

<sup>80</sup> Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 782.

<sup>81</sup> Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եզրակացություններ, ձևերը և տեսակները, էջ 25:

<sup>82</sup> Права человека. Сборник международных договоров, с. 786.

Համար գոյութիւն չունի վաղեմութեան ժամկետ»<sup>83</sup>: «Պատերազմական Հանցագործութիւնների և մարդկութեան դեմ կատարված Հանցագործութիւններին նկատմամբ վաղեմութեան ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիայի Հենց առաջին Հոդվածում հստակորեն նշված է այն պարտադիր դրույթը, որ «անկախ կատարման ժամկետից (ընդգծումը մերն է – Ա. Մ.) պատերազմական Հանցագործութիւններին և մարդկութեան դեմ կատարված Հանցագործութիւններին նկատմամբ որևէ վաղեմութեան ժամկետներ չեն կիրառվում»<sup>84</sup>:

Այսպիսով, ընդգծելով, որ վերը նշված Հանցագործութիւններին նկատմամբ նախկինում որևէ միջազգային փաստաթղթում գոյութիւն չի ունեցել վաղեմութեան ժամկետի մասին դրույթ, ինչպես նաև, Հաշվի առնելով այդ Հանցագործութիւններին՝ միջազգային իրավունքի տեսակետից առանձնապես ծանր լինելու Հանգամանքը, ՄԱԿ-ը սույն կոնվենցիայով միջազգային իրավունքում շրջանառութեան մեջ է դրել պատերազմական Հանցագործութիւններին և մարդկութեան դեմ կատարված Հանցագործութիւններին նկատմամբ վաղեմութեան ժամկետ չկիրառելու սկզբունքը:

Կոնվենցիան նաև պարզաբանումներ է տալիս այն Հարցի Հետ կապված, թե ինչ է Հասկացվում «պատերազմական Հանցագործութիւններ և մարդկութեան դեմ կատարված Հանցագործութիւններ» անվան տակ: Համաձայն կոնվենցիայի երկրորդ Հոդվածի «մարդկութեան դեմ կատարված Հանցագործութիւն է Համարվում նաև ցեղասպանութեան Հանցագործութիւնը, որը սահմանվել է ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանութեան Հանցագործութեան կանխարգելման և դրա Համար պատժի մասին» կոնվենցիայով, նույնիսկ եթե այդ գործողութիւնները այն երկրում, որտեղ կատարվել են, չեն Համարվում ներքին օրենսդրութեան խախտում»<sup>85</sup>:

Եթե Հաշվի չառնենք 1919 թ. նախկին երիտթուրքական կառավարութեան անդամների դատավարութիւնը թուրքական ռազմական տրիբունալում, ապա կարելի է պնդել, որ կոնվենցիայի սույն Հոդվածը անմիջականորեն և այն էլ՝ կրկնակի Հիմքերով վերաբերում է Հենց Թուրքիային: Պատճառն այն է, որ նախ թուրքական պետութիւնը և Հանցագործութեան իրական կազմակերպիչները խուսափեցին պատասխանատվութիւնից, իսկ Օսմանյան կայսրութեան իրավահաջորդ Թուրքիան ոչ միայն բանտերից ազատեց ռազմական տրիբունալների վճիռներով նաև Հայերի ցեղասպանութեան Համար դատապարտված Հանցագործներին, բացի այդ էլ, ներկայիս Թուրքիան անհերքելի փաստերի առկա-

յութեան պայմաններում շարունակում է ժխտել կատարված Հանցագործութիւնն ու պնդել 1948 թ. ցեղասպանութեան մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի վաղեմութեան ժամկետի վրա:

Հաշվի առնելով այն Հանգամանքը, որ ՄԱԿ-ի 1968 թ. կոնվենցիան ուղղակիորեն Հղում է կատարում 1948 թ. կոնվենցիայի վրա, միաժամանակ կարելի է արձանագրել, որ առաջինը փաստորեն երկրորդի լրացումն ու շարունակութիւնն է և պետք է կարծել, որ այս նոր կոնվենցիայով ՄԱԿ-ն, ըստ ամենայնի, ճշգրտում կատարեց 1948 թ. կոնվենցիայի կիրառման և նրա Հետադարձ ուժ ունենալու Հարցում: Այնպես որ, եթե անգամ ընդունենք, որ 1948 թ. կոնվենցիայի 9-րդ Հոդվածով տվյալ փաստաթղթի մեկնաբանման, այսինքն՝ նաև դրա Հետադարձ ուժի կիրառման Հարցի լուծման իրավասութիւնը պատկանում է ՄԱԿ-ի միջազգային դատարանին, այդուհանդերձ միանշանակ է, որ դատարանը տվյալ Հարցում որոշում կայացնելիս չի կարող անտեսել կամ չըջանցել ՄԱԿ-ի 1968 թ. կոնվենցիայի վերընշված դրույթները, անկախ նրանից, որ այն վերաբերում է Ֆիզիկական անձանց պատասխանատվութեան ենթարկելուն ու չի ընդունվել ավելի մեծ թվով երկրների, այդ թվում՝ Թուրքիայի կողմից:

Ի վերջո Հենց ՄԱԿ-ի միջազգային դատարանն էլ է պաշտոնապես արտահայտել իր տեսակետը 1948 թ. կոնվենցիայի մասին, երբ դեռ 1951 թ. մայիսի 28-ին Գլխավոր Ասամբլեայի խնդրանքով խորհրդատվական եզրակացութիւն Հրապարակեց «Ցեղասպանութեան Հանցագործութեան կանխարգելման և դրա Համար պատժի մասին» կոնվենցիայի դրույթների Հետ կապված վերապահումներ կատարելու վերաբերյալ: ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացութիւնում մասնավորապես նշվում էր, որ կոնվենցիայի Հիմքում ընկած սկզբունքները ճանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետութիւնների կողմից որպես պարտադիր՝ անգամ առանց պայմանագրային ամրագրման<sup>86</sup>: Այսպիսով, դատարանը փաստորեն ընդգծում է, որ անգամ տվյալ կոնվենցիայի բացակայութեան պայմաններում էլ քաղաքակիրթ պետութիւններին Համար նրանում նշված դրույթները պարտադիր են, ուստի կոնվենցիայի ստորագրման և ուժի մեջ մտնելու ամսաթիվերը չեն կարող շահարկվել նրա դրույթների կիրառումը սահմանափակելու առումով: Սա նշանակում է, որ Թուրքիայի կողմից կոնվենցիայի Հետադարձ ուժ չունենալու վերաբերյալ Հնարավոր վերապահումները կամ պնդումները չեն կարող էական նշանակութիւն ունենալ Հարցի Հանգուցալուծման ժամանակ:

<sup>83</sup> Права человека. Сборник международных договоров, с. 786.

<sup>84</sup> Նույն տեղում:

<sup>85</sup> Նույն տեղում, с. 787.

<sup>86</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, док 15, с. 32.

## ԳԼՈՒԽ II

### **ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴ ԹՈՒՐԻԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՀՆՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

Հայկական Հարցն իր միջազգայնացման պահից ի վեր արտացոլվել է մի շարք միջազգային պայմանագրերում, որոնց մեջ տեղ գտած ձևակերպումներից կարելի է դատել, թե ինչ փոխակերպումների է այն ենթարկվել տասնամյակների ընթացքում, կապված աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության և միջազգային հարաբերությունների գլխավոր դերակատարների ուժերի վերադասավորումների հետ:

Հայկական Հարցի ձևակերպումների և առաջարկվող լուծումների ուսումնասիրությունը Սան-Ստեֆանոյի, Բեռլինի, Կոստանդնուպոլսի, Սևրի, Մոսկվայի, Կարսի, Լոզանի պայմանագրերում և այլ միջազգային փաստաթղթերում բնավ էլ ինքնանպատակ չէ: Դրանցով Օսմանյան կայսրությունը, իսկ հետո էլ նրա իրավահաջորդ Թուրքիան ստանձնել են որոշակի պարտավորություններ, որոնք, ինչպես կտեսնենք, հետևողականորեն չեն կատարվել և խախտվել են, ինչը միջազգային իրավունքի տեսակետից իրավախախտ պետության համար պետք է առաջացնի անբարենպաստ իրավական հետևանքներ, ընդհուպ մինչև պատասխանատվություն:

#### **2.1. Հայկական Հարցում Օսմանյան կայսրության պարտավորությունը Սան-Ստեֆանոյի պայմանագրով**

Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացված հերթական մարզասիրական միջամտությունը տեղի ունեցավ արդեն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով կնքված սկզբում մարտի 3-ի

Սան-Ստեֆանոյի նախնական, իսկ հետ էլ Հուլիսի 13-ի Բեռլինի պայմանագրերով, որոնցով, ըստ էության, Հայկական Հարցը միջազգայնացվում էր և զուտ Օսմանյան կայսրության ներքին Հարցից վեր էր ածվում նաև միջազգային հարաբերությունների և իրավունքի Հարցի:

Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանն Օսմանյան կայսրությանը պարտավորեցնում էր ճանաչել Չերնոգորիայի, Սերբիայի և Ռումինիայի անկախությունը, Բուլղարիային տրվում էր ինքնավարություն, իսկ Բոսնիայում ու Հերցեգովինայում կատարվելու էին բարեփոխումներ: Ի տարբերություն բալկանյան ժողովուրդների իրավունքների պաշտպանության դրույթների Հայկական Հարցն առաջին անգամ իր արտահայտությունը գտավ պայմանագրի 16-րդ հոդվածում հետևյալ ձևակերպմամբ. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»<sup>87</sup>: Հատկանշական է, որ Բ. Դուռը պարտավորվում էր քրդերից ու չերքեզներից, այլ ոչ թե Թուրքերից պաշտպանել հայերին, ինչով որոշակի միտում է նկատվում հայերի կոտորածների պատասխանատվությունը հեռացնել տիտղոսակիր ցեղից, մինչդեռ ակնհայտ էր, որ Թուրքերը նույնպես ակտիվ մասնակցություն են ունեցել այդ գործում և առանց Թուրքական իշխանությունների թողտվության ու հրահրման քրդերն ու չերքեզները չէին կարող իրականացնել նման մասշտաբի գործողություններ:

Այդուհանդերձ, 16-րդ հոդվածում Բ. Դուռը փաստորեն կրկնակի պարտավորություն էր ստանձնում Ռուսաստանի առջև «հայաբնակ մարզերում անցկացնել բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից», թեև պետք է նշենք, որ, ի տարբերություն բալկանյան ժողովուրդների իրավունքների պաշտպանության հոդվածների, չէին նշվում ինչպես բարենորոգումների իրագործման, այնպես էլ Ռուսաստանի կողմից դրանց վերահսկման կոնկրետ մեխանիզմները: Այս հոդվածն, անշուշտ, իր հստակությամբ էականորեն տարբերվում էր կայսրության եվրոպական տիրույթների քրիստոնյաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող ձևակեր-

<sup>87</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 92:



պումներին: Դա թերևս բացատրվում էր նրանով, որ բալկանյան ժողովուրդների իրավունքների պաշտպանության հարցերը ավելի առաջնահերթ էին Ռուսաստանի համար և դրանք մինչ այդ արդեն բազմիցս շրջանառվել էին միջազգային փաստաթղթերում, հատկապես՝ ուսթուրքական պատերազմները եզրափակող պայմանագրերում:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի անմիջականորեն արևմտահայութանը վերաբերող 16-րդ հոդվածից զատ տվյալ պայմանագրում կան մի շարք հոդվածներ, որոնք թեև անուղակիորեն, բայց վերաբերվում են հայերի իրավունքների պաշտպանությանը, դրանցից են 17, 25, 26 և 27 հոդվածները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել՝ ա/ 16-րդ հոդվածը երաշխավորող և բ/ 16-րդ հոդվածը լրացնող խմբերի:

Այսպես, Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը երաշխավորող հոդվածների շարքում պետք է առանձնացնել 25 և 26 հոդվածները: 25-րդ հոդվածով բարենորոգումներ անցկացնելու թուրքական խոստումների դիմաց վեց ամսվա ընթացքում ուսական զորքերը պետք է դուրս բերվեին «Ասիական թուրքիայից»<sup>88</sup>: Ռուսական զորքերի առկայությունը Օսմանյան կայսրության տարածքում թուրքական իշխանություններին մշտապես պետք է հիշեցնեք քրիստոնյա բնակչության, մասնավորապես հայերի համար բարենորոգումների անցկացման մասին և նրանք պետք է ձգտեին օր առաջ սկսել այդ բարենորոգումները, որպեսզի այդ զորքերի տեղակայումը ավարտվի վեց ամիս հետո, և Ռուսաստանը բարենորոգումները չկատարելու պատրվակով հնարավորություն չստանար հետաձգել իր զորքերի դուրսբերման ժամկետը:

25-րդ հոդվածին ուղղակիորեն լրացնում է 26-րդը, որով ուսական զորքերի տեղակայման վայրերում դադարեցվում էր թուրքական իշխանության տարածումն այդ տարածքների վրա և ընդհուպ մինչև զորքերի դուրսբերումը այդ տարածքներում տարածվելու էին ուսական զինվորական իշխանությունների իրավասությունները<sup>89</sup>:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը լրացնող հոդվածների շարքում պետք է առանձնացնել 17 և 27 հոդվածները: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 17-րդ հոդվածով Բարձր Դուռը պարտավորվում էր լիակատար և անվերապահ ներում շնորհել և անհապաղ ազատ արձակել պատերազմական իրադարձություններին մասնակցած բոլոր այն օսմանահպատակներին, ովքեր բանտարկվել էին դրա հետևանքով<sup>90</sup>: Սա

<sup>88</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 92:

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 92:

վերաբերում էր նաև կայսրության հպատակ այն արևմտահայերին, ովքեր ուսական զորքերին օժանդակելու մեղադրանքներով բանտարկվել էին թուրքական իշխանությունների կողմից:

27-րդ հոդվածը փաստորեն լրացնում է 17-րդ հոդվածի պահանջը և թուրքական իշխանությունների վրա նոր, լրացուցիչ պարտավորություն է դնում, որ նա ոչ միայն ինքը չի հալածելու, այլ նաև չպետք է թույլ տա, որ հալածվեն այն թուրքահպատակներին, որոնք պատերազմի ժամանակ համագործակցել էին ուսական բանակի հետ<sup>91</sup>: Տվյալ ձևակերպման համադրությունը 16-րդ հոդվածի այն դրույթի հետ, որ թուրքական իշխանությունները պետք է ապահովեն հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից, հանգեցնում է նրան, որ թուրքական իշխանությունները չպետք է փորձեն հաշվհարդար տեսնել հայերի հետ անգամ քրդերի կամ չերքեզների միջոցով:

Նույն հոդվածով թուրքական իշխանությունները չպետք է ընդդիմանային, եթե որոշ անձինք իրենց ընտանիքներով հանդերձ ցանկանային հեռանալ ուսական բանակի հետևից<sup>92</sup>: Այս դրույթի առկայությունը խոսում է այն մասին, որ նախկին պարտավորությունների կատարման հետ կապված առանձնապես մեծ հույսեր չկան և որպես օսմանահպատակ քրիստոնյաների, այդ թվում արևմտահայերի, համար նախատեսվում էր փրկության նաև այս տարբերակը, ինչը կարող էր հանգեցնել հայ բնակչության թվաքանակի նվազման և Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերի դիմախեղման:

16-րդ հոդվածը երաշխավորող ու հատկապես լրացնող հոդվածներից կարելի է ենթադրել, որ Ռուսաստանն էլ էր գիտակցում էր, որ կայսրության քրիստոնյաները, այդ թվում հայերն, իրենց կյանքի համար մեծ ռիսկի էին դիմել, օգնելով ուսական բանակին և սրանք չափազանց կարևոր հոդվածներ էին այն իմաստով, որ Ռուսաստանն օսմանյան ներպետական օրենսդրությունից դուրս էր հանում պատերազմի ժամանակ հակառակորդ համարվող իր զորքերին սատարած օսմանահպատակների պաշտպանության հարցը, քաջ գիտակցելով, որ նրանք պատերազմի ավարտից հետո պետք է ենթարկվեին հալածանքների:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ուղղված վերընշված հոդվածներն իրենց բովանդակությամբ, անշուշտ, նորույթ չէին, քանզի ուսական դիվանագիտության համար թվարկված հոդվածների ձևակերպում-

<sup>91</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 97:

<sup>92</sup> Նույն տեղում:

ները դարձել էին սովորական կաղապարներ, որոնք օգտագործվել էին գրեթե բոլոր ուսու-թուրքական պատերազմները եզրափակող պայմանագրերում, կապված Բեսարաբիայի, Վալախիայի, Էգեյան ծովի կղզիների հույների, ինչպես նաև բալկանյան այլ ժողովուրդների հետ կապված: Նորույթը թերևս այն էր, որ մարդասիրական միջամտությունների շարքում կնքված պայմանագրերում Սան-Ստեֆանոյով Բ. Դուռն առաջին անգամ կոնկրետ պարտավորություններ էր ստանձնում կապված կայսրության հայ բնակչության հետ:

Սան-Ստեֆանոյի պայմանագրով պատերազմում հաղթանակած Ռուսաստանը ցանկանում էր վերադարձնել ուսու-թուրքական պատերազմների ընթացքում վաստակած փոքր քրիստոնյա ժողովուրդների պաշտպանի իր երբեմնի տիրոջը, որը չեզոքացվել էր Ղրիմի պատերազմից հետո կնքված Փարիզի պայմանագրով և նոր միջազգայնացվող Հայկական հարցում իրագործել միանձնյա մարդասիրական միջամտություն Օսմանյան կայսրության նկատմամբ: Այսպիսով Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրության նկատմամբ կատարվող մարդասիրական միջամտությունը հիմնվում էր ոչ այնքան միջազգային իրավունքի դրույթների վրա, ինչքան ենթադրում էր համաեվրոպական միջամտություն, որքան սեփական հաղթանակի և Ասիական Թուրքիայում տեղակայված իր գործերի վրա: Սակայն Ռուսաստանը նաև քաջ գիտակցում էր, որ նշված դրույթները դեռ հարկավոր էր համաձայնեցնել մյուս եվրոպական տերությունների հետ, որոնք ուշադիր հետևում էին տեղի ունեցող զարգացումներին և բնավ չէին պատրաստվում թույլ տալ Ռուսաստանի այդ աստիճան ամրապնդումը Օսմանյան կայսրությունում ճիշտ այնպես, ինչպես դա թույլ չտրվեց Ֆրանսիային Սիրիայում 1860 թվականին, կապված մարոնիների հետ: Տերությունների համար ակնհայտ է, որ այս դեպքում էլ անկախ Օսմանյան կայսրության դեմ տարած հաղթանակից, Ռուսաստանը խախտում էր Փարիզի պայմանավորվածությունները և միայնակ փորձում էր միջամտություն իրականացնել ոչ միայն բալկանյան ժողովուրդների իրավունքների պաշտպանության, այլ նաև Հայկական հարցում:

Ստեղծված պայմաններում Ռուսաստանը կամ պետք է պատերազմեր Փարիզի պայմանագիրը ստորագրած եվրոպական տերությունների դեմ՝ Սան-Ստեֆանոյի դրույթները պահպանելու համար, ինչի հնարավորությունն ու ցանկությունը չունեն, կամ պետք է թույլ տար Սան-Ստեֆանոյի դրույթների վերանայումը և նրա դրույթների համապատասխանեցումը թե բոլոր եվրոպական տերությունների շահերին և թե

միջազգային իրավունքում արդեն ամրագրված համաեվրոպական կոնկրետ մարդասիրական միջամտության սկզբունքին:

Սակայն Սան-Ստեֆանոյից մինչև Բեռլինի վեհաժողով ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցան գաղտնի դիվանագիտական գործարքներ, որոնց արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները հիմնականում հայերի իրավունքների զիջման հաշվին էին: Դրանք էլ փաստորեն կանխորոշեցին Բեռլինի ապագա պայմանագրի դրույթները մասնավորապես Հայկական հարցում:

Ինչպես և սպասվում էր, Անգլիան առաջինն իր առարկությունները ներկայացրեց Սան-Ստեֆանոյի դեմ, որով, նրա կարծիքով, խախտվել էին 1856 և 1871 թթ. պայմանագրերով սահմանված իր իրավունքներն ու շահերը, ուստի պահանջում էր Սան-Ստեֆանոյի դրույթների վերանայման հարցը քննարկել միջազգային վեհաժողովում: Անգլիական դիվանագիտության ճնշման տակ 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում ստորագրվեց «Համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին» գաղտնի համաձայնագիրը:

Համաձայնագրի 7-րդ կետում նշվում էր, որ Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի մեջ Հայաստանի վերաբերյալ պարունակվող խոստումները պետք է տրվեին ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլև Անգլիայի անունից: Պայմանագրի 10 կետով անգլիական կառավարությունը Ռուսաստանից կարողացավ կորզել նաև համաձայնություն այն մասին, որ Օսմանյան կայսրությանը պետք է վերադարձվեին Բայազետն ու Ալաշկերտը, իսկ 11 կետով Ռուսաստանը հավաստիացնում էր Անգլիային, որ իր սահմանը չի ընդլայնվի Ասիական Թուրքիայի կողմից<sup>93</sup>: Եթե հաշվի առնենք, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին պետք էր անցնեին Կարսը, Բաթումը, Բայազետը, Արդահանը, Օլթին, Ալաշկերտը, Կաղզվանը, ապա ստացվում էր, որ անգլո-ռուսական պայմանագրով Ռուսաստանը, հրաժարվելով Բայազետից ու Ալաշկերտից, պահպանելու է Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները:

Այսպիսով, եթե Սան Ստեֆանոյի պայմանագրով միայն Ռուսաստանն էր վերահսկելու Հայկական բարենորոգումների իրականացումն, ապա այս համաձայնագրով այդպիսի իրավունք էր ստանում նաև Անգլիան: Ակնհայտ է, որ ուսու-անգլիական տարածայնությունների ու շահերի ակնհայտ հակադրության պայմաններում այս հանգամանքը կարող էր աշխատել միայն ի վնաս հայ ժողովրդի իրավունքների:

<sup>93</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 101:

Անգլիական դիվանագիտութունը, սակայն, չէր պատրաստվում բավարարվել սրանով: Ռուսաստանի Հետ պայմանավորվելուց Հետո Անգլիան գաղտնի բանակցություններ սկսեց Օսմանյան կայսրության հետ: Ռուսական զորքերի շուրջ վեց ամսյա ներկայությունը գրավված տարածքներում, բնականաբար, անհանգստացնում էր սուլթանին և անգլիական դիվանագիտությունն առիթը բաց չթողեց օգտվելու այդ Հանգամանքից:

1878 թ. Հունիսի 4-ին Կ. Պոլսում Օսմանյան կայսրության և Անգլիայի միջև կնքվեց պաշտպանողական դաշնագիր, որի առաջին հոդվածի Համաձայն, եթե Ռուսաստանն իր ձեռքում պահի Բաթումը, Արդահանը, Կարսը կամ դրանցից որևէ մեկը և հետագայում էլ փորձի տիրել Ասիական Թուրքիայի տարածքներին, ապա Անգլիան պարտավորվում էր իր ռազմական ուժով պաշտպանել այդ տարածքները<sup>94</sup>:

Հետագրքերն այն էր, որ անգլո-ռուսական գաղտնի պայմանագրով Անգլիան արդեն Համաձայնվել էր, որ Բայազետից ու Ալաշկերտից բացի Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները անցնեին Ռուսաստանին, սակայն անգլո-թուրքական գաղտնի պայմանագրում պարտավորվում էր Ռուսաստանից իր ռազմական ուժով պաշտպանել Ասիական Թուրքիայի բոլոր տարածքները, այդ թվում՝ Կարսը, Արդահանը և Բաթումը:

Այս «աջակցության» դիմաց սուլթանից պահանջվում էր, որ վերջինիս խոստանա Անգլիային անհրաժեշտ բարենորոգումներ կատարել քրիստոնյա Հպատակների վիճակը բարելավելու և նրանց անվտանգությունն ապահովելու հետ կապված<sup>95</sup>: Առաջին Հայացքից անգլիական փոխադարձ պահանջը կարող էր բավականին պարկեշտ թվալ իր «անշահախնդիր» աջակցության դիմաց, սակայն նույն հոդվածում նշվում էր, որ քրիստոնյաների պաշտպանության իր պարտականությունը կատարելու համար սուլթանը Համաձայնվում է, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից<sup>96</sup>: Այս հոդվածով անգլիական դիվանագիտությունը մի կողմից՝ ռուսների հետ ձեռք բերված պայմանավորվածությունից գործնական օգուտ էր քաղում թուրքերից, իսկ մյուս կողմից՝ թուրքերի և միջազգային Հանրության առջև ներկայանում իբրև կայսրության քրիստոնյա բնակչության իրավունքների պաշտպան:

Երկու գաղտնի պայմանագրերի հոդվածների պարզ համադրությամբ ակնհայտ է դառնում, որ Անգլիան փաստորեն չէր կատարում

Կարսի, Արդահանի և Բաթումի Ռուսաստանից պաշտպանելու իր պարտավորությունը, ուստի նա պետք է հրաժարվեր Կիպրոսի նկատմամբ իր Հավակնություններից, սակայն, ինչպես տեսնում ենք, անգլիական դիվանագիտությունը, օգտվելով թուրքերի անտեղյակությունից, չէր խորշում անգամ խաբեության միջոցով տարածքներ գավթելու մեթոդներից:

Անգլիացի պատմաբան Ն.Բաքսթոնը իրավացի է, երբ գրում է, որ եթե Ռուսաստանը ստիպված չլիներ Անգլիայի ճնշման տակ ազատել Արևմտյան Հայաստանը Հայկական բարենորոգումները ուժի մեջ մտցնելուց առաջ, ապա անակասկած 1895–1896 թթ ջարդերը տեղի չէին ունենա<sup>97</sup>:

Ռուսական օգնությամբ թուրքական լծի բալկանյան ժողովուրդների ազատագրվելը, սակայն, պայման չէր, որ այդ նորանկախ պետությունները դառնային Ռուսաստանի վասալները: Բիսմարկն իրավամբ գրում էր, որ Պետերբուրգում Հույս ունեին, որ Բուլղարիան, անջատվելով Օսմանյան կայսրությունից մշտապես կմնա կախման մեջ Ռուսաստանից: Այդ Հույսերը Հավանաբար չէին արդարանա և այն դեպքում, եթե Սան-Ստեֆանոյի պայմանները լիովին իրականացվեին<sup>98</sup>: Դրանք բուֆերի պես բաժանում էին Ռուսաստանն իր նպատակից՝ նեղուցներից ու Կ. Պոլսից, թեև այս կողմից նպատակն ավելի մոտ էր, քան Կովկասից, երբ պետք էր Արևմտյան Հայաստանի վրայով դուրս գալ դեպի Միջերկրական և Մերձավոր Արևելք: Բայց այստեղ ռուսները անկախ պետություններ չէին ստեղծում, նույնիսկ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցում հետևողական չէին: Այստեղ նրանք ձգտում էին ընդլայնել իրենց կայսրությունը, որը վտանգավոր միտում էր Անգլիայի և Ֆրանսիայի համար:

Արդյոք տվյալ փուլում մարտավարական սխալ չէր ռուսական դիվանագիտության կողմից, որ բալկանյան նույն սցենարը չէր կիրառում նաև այստեղ՝ Արևմտյան Հայաստանի անկախության կամ գոնև ինքնապարտության ձևով, ինչի դեպքում եվրոպական տերությունները գուցե վարկության ձևով, ինչի դեպքում եվրոպական տերությունները Հայ աստիճան սփյններով չընդունեին Ռուսաստանի առաջարկները Հայկական Հարցի հետ կապված: Սակայն Հայ ժողովրդի մի մասը՝ արևելահայությունը ռուսական կայսրության մեջ էր և Անգլիան ու մյուս եվրոպական տերությունները հիմնավոր մտավախություններ ունեին Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի բռնակցման հարցում:

<sup>94</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 104:

<sup>95</sup> Նույն տեղում:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>97</sup> Հակոբջան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, էջ 136:

<sup>98</sup> Бисмарк О., Мысли и воспоминания, т. 2, М., 1940, с. 194.

**2.2. Հայկական Հարցում Օսմանյան կայսրության պարտավորությունը Բեռլինի և 1879 թ. Կ. Պոլսի ուսուցիչական պայմանագրերով**

Բեռլինի վեհաժողովի բացման հանդիսավոր նիստում գերմանական կանցլեր Բիսմարկն իր ելույթում նշեց. «Մենք հավաքվել ենք այստեղ, որպեսզի Սան-Ստեֆանոյի տրակտատը ենթարկենք ազատ քննարկման»<sup>99</sup>: Այսինքն ի սկզբանե հստակորեն հայտարարվում էր, որ Բեռլինի վեհաժողովի մասնակից տերությունները հավաքվել են նախորդ պայմանագրերը փոփոխելու մտադրությամբ և տվյալ վեհաժողովի քննարկումների արդյունքում է պարզվելու, թե Սան-Ստեֆանոյի պայմանագրի դրույթներից որոնք են իրենց համար ընդունելի, իսկ որոնք պետք է ենթարկվեն փոփոխության: Վեհաժողովի հրավիրման իրավական հիմնավորումն այն էր, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումով փոփոխվել էին մինչ այդ 1856 թ. և 1871 թ. պայմանագրերով ձեռք բերված պայմանավորվածությունները, ինչի հետևանքով խախտվել են նշված պայմանագրերը ստորագրած տերությունների օրինական շահերն ու իրավունքները:

Վեհաժողովի արդյունքում 1878 թ. Հոկտեմբերի 13-ին ստորագրված Բեռլինի պայմանագրով վերանայվեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի որոշակի դրույթներ, որոնք իրենց բացասական հետևանքներն ունեցան նաև Հայկական հարցի լուծման գործում:

Բեռլինի պայմանագրի 58-րդ հոդվածով Բ. Դուռը Ասիայում Ռուսաստանին էր զիջում Արդահանի, Կարսի և Բաթումի տարածքները, իսկ 60-րդ հոդվածով Սան-Ստեֆանոյի 19-րդ հոդվածով Ռուսաստանին զիջված Ալաշկերտի հովիտը և Բայազեդ քաղաքը վերադարձվում էին Օսմանյան կայսրությանը<sup>100</sup>: Այս հոդվածները փաստորեն կրկնում էին անգլո-ուսական գաղտնի պայմանագրի 10-րդ հոդվածի դրույթները և ուղղակիորեն հակասում էին անգլո-թուրքական դաշնագրի 1-ին հոդվածի պահանջներին: Այս ժամանակ միայն թուրքերը թերևս հասկացան անգլիացիների նենգությունը և, անշուշտ, այս պայմաններում իրավունք ունեին հետ պահանջելու Կիպրոսը, սակայն այդ մասին խոսք անգամ լինել չէր կարող:

Ինչպես հայտնի է, Բեռլինի պայմանագրով Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց 61-րդ

հոդվածով, որը սուլթանին պարտավորեցնում էր առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չեղքեզներից և քրդերից<sup>101</sup>:

Այսպիսով, թուրքական կառավարությունը, ստանձնելով Հայկական վիլայեթներում բարենորոգումների և հայ բնակչությանը քրդերի և չեղքեզների հարձակումներից պաշտպանելու պարտավորությունը, փաստորեն ընդունում էր, որ կայսրության հպատակ հանդիսացող արևմտահայերի կյանքի և գույքի անվտանգության երաշխիքներ Օսմանյան կայսրությունում չկային: Այսպիսով ակնհայտ էր դառնում, որ թուրքական իշխանությունները կամ չեն ցանկանում, կամ չեն կարողանում ապահովել իրենց հպատակներ հանդիսացող ազգային խմբի ներկայացուցիչների անվտանգությունը: Երկու դեպքի պարագայում էլ հիմքեր էին ստեղծվում մարդասիրական միջամտության համար:

Սակայն, ի տարբերություն Սան-Ստեֆանոյի, Բեռլինի պայմանագրում Հայաստան հասկացության փոխարեն օգտագործվում էր կայսրության «հայաբնակ մարզեր» հասկացությունը, որը ամենևին էլ պատահական չի կիրառվել և հակասում է հայերի պատմական հայրենիքի գաղափարին:

61-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ Բ. Դուռը պարավորվում էր ձեռնարկած միջոցների մասին պարբերաբար տեղեկացնել տերութուններին, որոնք պետք է վերահսկեին բարենորոգումների կատարման ընթացքը<sup>102</sup>: Այս հոդվածի և ընդհանրապես մարդասիրական միջամտությունների ոգուց ու տրամաբանությունից ելնելով, Բ. Դուռն կողմից պարբերաբար ներկայացվող կամ չներկայացվող տեղեկությունների հիման վրա տերությունները ստանում էին մի կողմից իրավունք, իսկ մյուս կողմից ստանձնում պարտավորություն՝ համապատասխան քայլեր ձեռնարկել չկատարվող բարենորոգումների հետ կապված: Այսինքն, տերությունները պատասխանատվություն կրելով բարենորոգումների ընթացքի հարցում, կարող էին և պարտավոր էին քննադատել բարենորոգումների գործընթացը, գնահատել ձեռնարկվող ջանքերն անբավարար, դատապարտել թուրքերի անգործությունը և կիրառել ավելի արդյունավետ ներազդելու միջոցներ՝ ընդհուպ մինչև նոր, արդեն ուժային մարդասիրական միջամտության իրականացումը՝ Հայկական հարցում ստանձնած պարտավորությունները Բ. Դուռնը հարկադրելու համար:

<sup>99</sup> Պաղտյան Ս., Գոյատևման պայքարի քառույթներում, Եր., 1988, էջ 91:

<sup>100</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 127:

<sup>101</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 128:

<sup>102</sup> Նույն տեղում:

Միջազգային իրավական տեսակետից շատ կարևոր էր, որ Ռուսաստանի նախաձեռնած միանձնյա մարդասիրական միջամտությունը Հայական Հարցում վեր էր ածվում միջազգային կոլեկտիվ միջամտության և բարենորոգումների անցկացումն այլևս Հայեցողական չէին Օսմանյան կայսրության համար: Իրենց վրա վերցնելով բարենորոգումների վերահսկողության գործը, մեծ տերությունները ստանձնում էին իրենց պատասխանատվության բաժինը Հայկական բարենորոգումների հարցում: Սակայն, մյուս կողմից, բարենորոգումների գործըթացը դրվում էր ոչ թե մեկ, այլ եվրոպական բոլոր տերությունների հսկողության տակ, իսկ նրանց միջև առկա հակասությունների ու տարաձայնությունների պայմաններում Հայկական Հարցի լուծումն այդպիսով էսպես բարդանում էր:

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածին որոշակիորեն լրացնում է 62-րդ հոդվածը, որը, թեև անուղղակիորեն, վերաբերում էր նաև կայսրության Հայ բնակչության իրավունքների պաշտպանությանը: 62-րդ հոդվածով Բ. Դուռը մեկ անգամ ևս հրապարակայնորեն հուշակում էր կրոնական ազատությունների սկզբունքի պահպանման իր պարտավորության պահպանման մասին:

Հոդվածի համաձայն, Օսմանյան կայսրության տարածքում կրոնական տարբերությունը չէր կարող առիթ տալ որևէ Հպատակի իրավունքները բացառելու համար բոլոր այն դեպքերում, որոնք վերաբերում էին քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելուն, հանրային պաշտոններ վարելուն, պաշտոնական գործեր կատարելուն և պարզև ստանալուն կամ զանազան մասնագիտություններով և արհեստներով զբաղվելու հնարավորությանը<sup>103</sup>: Այս դրույթի արձանագրումն, ըստ էության, նշանակում էր, որ նախ կայսրությունը փաստացի չի կատարել իր ոչ մահմեդական հպատակների ազատությունների և հավասարության սկզբունքի պահպանման նախորդ պարտավորությունը, որն ամրագրվել էր 1856 թ. Փարիզի պայմանագրի 9-րդ հոդվածով: Տերությունները, արձանագրելով այս փաստը, նոր պայմանագրում արդեն ավելի հստակ նոր պարտավորություններ էին դնում Բ. Դուռն վրա: Ասվածի ապացույցն է այն, որ նախավերջին՝ 63-րդ հոդվածով վերահաստատվում էին տերությունների միջև կնքված 1856 թ. Փարիզի և 1871 թ. Լոնդոնի պայմանագրերով ստանձնած պարտավորությունները<sup>104</sup>:

<sup>103</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 128:

<sup>104</sup> Նույն տեղում, էջ 129:

Այնուհետև 62-րդ հոդվածում հուշակվում էր առանց դավանութային խտրականության բոլոր հպատակների իրավունքը վկայություն տալու դատարաններում: Բացի այդ, ոչ մահմեդականների համար ապահովվում էր եկեղեցական ծիսակատարությունների ազատություն և ոչ մի տեսակի ճնշումներ չպետք է գործադրվեին կրոնական համայնքների հիերարխիական կառուցվածքի նկատմամբ և իրենց հոգևոր հովիվների հետ ունեցած հարաբերություններում<sup>105</sup>:

Այս դրույթի ամրագրումը չափազանց կարևոր էր Օսմանյան կայսրության կազմում գտնվող Հայ առաքելական եղեկեցու կառույցների՝ Պոլսի և Երուսաղեմի Հայոց պատրիարքարանների և Սսի կաթողիկոսության անկախ գործունեության իրականացման տեսակետից, քանզի այս դրույթներով բացառվում էր նրանց գործերին միջամտելու թուրքական իշխանությունների իրավունքը:

1887 թ. հրատարակված «Հայաստանը, Հայերը և դաշնագրերը» իր աշխատության մեջ բելգիացի իրավաբան-միջազգայնագետ Մ. Ռոլեն-ժակենը վերլուծության է ենթարկում Հայկական Հարցի միջազգայնացման գործընթացը և իրավացիորեն հանդում է այն կարևոր եզրահանգման, որ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը ոչ թե միջազգային դիվանագիտության քմահաճույքի արդյունք էր, այլ նախորդ փաստերի, նախադեպերի և համապատասխան գործողությունների հետևանք<sup>106</sup>:

Սակայն, եվրոպական տերությունները և առաջին հերթին Անգլիան, զրկելով Ռուսաստանին Հայկական Հարցում մենաշնորհից և վերացնելով Սան-Ստեֆանոյով նախատեսված բարենորոգումների իրագործման հստակ երաշխիք հանդիսացող 25-րդ և 26-րդ հոդվածները, Բեռլինի պայմանագրում չառաջարկեցին նման երաշխիքային հոդվածներ, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին ոչինչ չձեռնարկել 61 և 62 հոդվածների կատարման ուղղությամբ:

Թեև Բեռլինի պայմանագիրը որոշակի փոփոխություններ մտցրեց Սան-Ստեֆանոյի պայմանագրում, սակայն ամբողջովին չփոխարինեց այն, ինչը նշանակում էր, որ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ավարտող վերջնական պայմանագիրը պետք է ստորագրվեր հաշվի առնելով ինչպես Բեռլինի պայմանագրի ճշգրտումները, այնպես էլ Սան-Ստեֆանոյի չփոփոխված դրույթները:

<sup>105</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 128:

<sup>106</sup> Նույն տեղում, c. 688:

Բեռլինի պայմանագրի ստորագրումից հետո Կ. Պոլսում 1879 թ. հունվարի 27-ին ստորագրվեց ռուս-թուրքական «Նաղաղության մասին» վերջնական պայմանագիրը, որն էլ, հաշվի առնելով Բեռլինի պայմանագրով Սան-Ստեֆանոյի փաստաթղթում կատարված փոփոխությունները, վերջակետ դրեց 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին:

Պետք է նշել, որ նախ 1879 թ. պայմանագրի 3-րդ հոդվածով Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի Բեռլինի համաձայնագրով չվերանայված դրույթները համարվում էին հաստատված այս պայմանագրով: Մասնավորապես, նոր պայմանագրի 8-րդ հոդվածը կրկնում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 27-րդ հոդվածի պահանջը և պարտավորություն էր դնում կողմերի վրա չհետապնդել և հալածանքների չենթարկել իրենց այն հպատակներին, որոնք կասկածվում էին պատերազմի ընթացքում հակառակորդի բանակի հետ հարաբերություններ ունենալու մեջ: Բացի այդ, նույն հոդվածում վերահաստատվում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 27-րդ հոդվածով սահմանված թուրքական իշխանությունների պարտավորությունն առ այն, որ եթե որոշ անձինք ցանկանային հեռանալ ռուսական զորքերի հետ, ապա նրանք չպետք է արգելքներ ստեղծեն տեղափոխման հարցում<sup>107</sup>:

1879 թ. պայմանագրի 9-րդ հոդվածը վերահաստատում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 17-րդ հոդվածի պահանջը, որով թուրքական իշխանությունները պարտավորվում էին լիակատար համաներում չնորհել բոլոր այն օսմանահպատակներին, որոնք մասնակցել էին պատերազմական գործողություններին և պետք է վերականգնվեին բոլոր այն անձանց իրավունքները, որոնք աքսորվել կամ գաղթել էին իրենց հայրենիքից<sup>108</sup>:

Այսպիսով, եթե Բեռլինի պայմանագրով վերացվեցին օրինակ հայկական բարենորոգումները երաշխավորող Սան-Ստեֆանոյի 25 և 26-րդ հոդվածները, ապա 1879 թ. պայմանագրով վերահաստատվեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի հայերի բարենորոգումների 16-րդ հոդվածը լրացնող 17 և 27 հոդվածները, որոնք չէին վերացվել ու փոփոխության չէին ենթարկվել Բեռլինի պայմանագրով:

Բարենորոգումների անցկացման հստակ մեխանիզմների բացակայությունը թուրքական կողմին հնարավորություն էր տալիս անընդհատ խուսանալով, չկատարել ստանձնած պարտավորությունները, ժամանակ չահել, սպասելով տերությունների միջև անհամաձայնությունների և

տարաձայնությունների առաջացմանը, ինչը թույլ կտար առհասարակ մոռանալ ստանձնած պարտավորությունների մասին, դեռ ավելին՝ փորձել յուրովի «լուծել» Հայկական հարցը՝ տվյալ փոքրամասնությանն ուղղակի բնաջնջելով:

### 2.3. Մեծ տերությունների 1880 թ. մարդասիրական միջամտությունը և Օսմանյան կայսրության նոր պարտավորությունները Հայկական հարցում

Թեև Սան-Ստեֆանոյի, Բեռլինի և Կ. Պոլսի պայմանագրերով Օսմանյան կայսրությունը հստակ պարտավորություններ էր ստանձնել Հայկական վիլայեթներում բարեփոխումներ կատարելու հետ կապված, սակայն Բ. Դուռը ոչ միայն քայլեր չէր կատարում դրանք կատարելու ուղղությամբ, այլև ձեռնամուխ եղավ լայնամասշտաբ հայկական կոտորածների: Դա հանգեցրեց նրան, որ եվրոպական տերությունները ստիպված էին կրկին անդրադառնալ Հայկական հարցին և Բ. Դուռն ստանձնած պարտավորությունների չկատարմանը:

1880 թ. հունիսի 11-ին տերությունները Բ. Դուռը բողոքի նոտաներ ներկայացրեցին, պահանջելով Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունների կատարում, որոնք ամրագրվել էին Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածում: Այդ փաստաթղթերում մասնավորապես նշվում էր, որ Բ. Դուռը տերություններին երբեք չի հայտնել այն միջոցների մասին, որոնք իր կողմից իրագործվում են Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կատարման ուղղությամբ: Տերությունների գործակալների կողմից ստացվող տեղեկությունների համաձայն հիշյալ շրջանների վիճակը ծայրաստիճան ողբալի է, և տերությունները չեն կարող թույլ տալ, որ Բեռլինի պայմանագրի բարենորոգումներին վերաբերող դրույթները մեռած տառ մնան: Ելնելով դրանից, տերությունները պահանջում էին անհապաղ և ամբողջությամբ իրականացնել 61-րդ հոդվածի պահանջները և առաջարկում էին սուլթանին, ելնելով տվյալ հոդվածի դրույթներից, հաշվետվություն ներկայացնել ձեռնարկված միջոցառումների մասին<sup>109</sup>: Այսպիսով, տերությունները ոչ միայն իրացնում էին Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով սահմանված իրենց

<sup>107</sup> Сводник договоров России с другими государствами, с. 209.

<sup>108</sup> Նույն տեղում:

<sup>109</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 150.

իրավունքը, այլև կատարում էին նույն Հողվածով նախատեսված բարենորոգումների գործընթացի վերահսկման իրենց պարտավորությունը:

1880 թ. Հուլիսի 5-ին ստացվեց անորոշ ձևակերպումներով թուրքական պատասխանը, որով Օսմանյան կայսրությունը մի կողմից իբր պատրաստակամություն էր հայտնում կատարել բարենորոգումները և տեղյակ պահել դրանց ընթացքի մասին տերություններին, սակայն մյուս կողմից բերվում էին փաստարկներ դրանց իրագործման անհնարինությունը հետ կապված: Մասնավորապես պնդվում էր, թե Վանում, Դիրաբեքիում, Բիթլիսում, էրզրումում, Խարբերդում և Սեբաստիայում հայերը կազմում են փոքրամասնություն, ուստի բարեփոխումները, թուրքական կողմի կարծիքով, պետք է անցկացվեն Քրդստանում և այն տարածքներում, որտեղ բնակվում էին նաև հայեր<sup>110</sup>: Թուրքական պատասխանում դիտավորյալ խեղաթյուրվում էին փաստերը, ներկայացվում կեղծ վիճակագրական տվյալներ, որոնցով նվազեցվում էր հայերի թվաքանակը հայկական նահանգներում և, բացի այդ, Արևմտյան Հայաստանը ներկայացվում էր որպես Քրդստան, աղավաղելով հայերի պատմական հայրենիքում հատուկ նրանց իրավունքների պաշտպանությանն ուղղված մարդասիրական միջամտության էությունը և բարեփոխումները ներկայացվում էին իբրև ընդհանուր գործընթաց ամբողջ կայսրության համար:

Տերություններին, բնականաբար, չի բավարարում թուրքական պատասխանը և 1880 թ. սեպտեմբերի 7-ին տերությունները Բ. Դուանը ներկայացնում են արդեն միասնական բողոքի նոտա, որում ընդգծվում էր, որ թուրքական պատասխանը ոչ ոգով, ոչ էլ ըստ էության չի համապատասխանում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պահանջներին: Տերությունների բողոքի նոտայում մանրամասն ներկայացվում էր հայկական վիլայեթների ծանր վիճակը, արձանագրվում էր, որ արդարագատության ոլորտում չկան դրական տեղաշարժեր և չկան անգամ փաստեր, որ թուրքական կառավարությունը մտադիր է բարելավել ոստիկանության աշխատանքը նշված վիլայեթներում, որպեսզի կանխարգելվի կամ վերջ դրվի այն բռնություններին, որոնք մշտական սպառնալիք են հանդիսանում այդ տարածքներում բնակվող հայերի կյանքի, գույքի և արժանապատվության համար: Ելնելով այս ամենից, տերությունները եզրակացնում են, որ Բ. Դուան իրեն հաշիվ չի տալիս այն պարտավորությունների հետ կապված, որոնք ստանձնել է Բեռլինի պայմանագրով

և այդ մասին է վկայում նաև այն փաստը, թե ինչ ձևակերպումներ են տեղ գտել թուրքական պատասխան նոտայում, կապված հայաբնակ շրջաններում կատարվող հանցագործությունների հետ, որոնց շարունակությունը ամենայն հավանականությամբ կարող է հանգեցնել հայկական նահանգներում ամբողջ քրիստոնյա բնակչության ոչնչացմանը<sup>111</sup>: Փաստորեն վիճակն այն աստիճան ծանր էր, որ բոլոր վեց տերությունները, այդ թվում Օսմանյան կայսրությանը հովանավորող երկրները, ընդունում էին թուրքական քաղաքականության իրական սպառնալիքները ոչ միայն հայերի, այլև ամբողջ քրիստոնյա բնակչության համար:

Ստեղծված պայմաններում տերությունները գործողությունների սեփական ծրագիրն էին առաջ քաշում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պահանջների կատարման հետ կապված: Համաձայն այդ ծրագրի առաջարկվում էր.

1. Հաշվի առնել հայկական վիլայեթների տեղական պահանջները, լայնորեն զարգացնել հավասարության և ապակենտրոնացման սկզբունքները և բավարարել հայ բնակչության օրինական պահանջները, ապահովելով նրա մասնակցությունը հայկական տարածքների կառավարման գործում:

2. Հաշվի առնելով հայկական վիլայեթների վարչական սահմանների կամայական փոփոխությունների նպատակներն ու հետևանքները, տերությունները նշում էին, որ տեղական կարիքների բավարարման համար անհրաժեշտ է վերանայել հայերով բնակեցված վիլայեթների գոյությունը ունեցող աշխարհագրական սահմաններն այնպես, որ հայերն առանձնացվեն քրդերից և թուրքերից<sup>112</sup>:

Ի պատասխան տերությունների արդեն կոլեկտիվ պահանջի սուլթանը զարմանք էր արտահայտում տերությունների ներկայացրած ծրագրի «սահմանափակ» լինելու առիթով և «խոստովանում», որ կայսրության կառավարման համակարգը խոշոր թերություններ ունի ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ կայսրության տարածքում: Այսպիսով կրկին փորձ էր կատարվում կիրառվող մարդասիրական միջամտությունը շեղել բուն նպատակից:

Համընդհանուր դիվանագիտական ճնշման տակ 1880 թ. հոկտեմբերի 3-ին թուրքական կառավարությունը վերջապես հայտարարեց, որ սկսում է իրագործել բարենորոգումները և հղում էր կատարում Բեռլինի

<sup>110</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 151.

<sup>111</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 152.

<sup>112</sup> Նույն տեղում:

պայմանագրի 61-րդ հոդվածի վրա, սակայն ոչ մի հիշատակում չկար տերութունների կողմից նոտայի մասին: Այս քայլը սակայն միտված էր ընդամենը տերութուններին հանգստացնելուն և ավելի լուրջ քայլերից նրանց հետ պահելուն, իրականում թուրքական կառավարությունը բոլորովին չէր պատրաստվում որևէ բան անել իր ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ:

Ամիսներ անց, տեսնելով թուրքերի անգործությունը, անգլիական դիվանագիտությունը կրկին փորձեց իր ձեռքը վերցնել նախաձեռնությունը Հայկական հարցում: 1881 թ. հունվարի 12-ին Անգլիայի արտգործնախարար Գրենվիլը կրկին կոչ արեց տերութուններին համատեղ պահանջ ներկայացնել Բ. Դուանը, քանզի նախորդ բողոքի նոտայից հետո ոչ մի էական տեղաշարժ թուրքերի կողմից չէր կատարվել: Ռուսաստանը և Իտալիան հայտնում են իրենց պատրաստակամությունը, իսկ Գերմանիան և Ֆրանսիան գտնում էին, որ Հայկական հարցի բարձրացումը սովյալ փուլում կխանգարի հունական սահմանի հարցի կարգավորմանը: Ակնհայտ է, որ սա կեղծ պատճառաբանություն էր, իրականում միասնական ճնշման դեպքում տերութունները կարող էին զուգահեռաբար հասնել թե՛ Հայկական հարցի և թե՛ հունական սահմանի կարգավորման հարցում թուրքական կառավարության պարտավորությունների կատարմանը: Տերութունների հետաքրքրությունների տարբերությունները շահավետ էին միայն թուրքական կողմի համար, որը ձգձգելով Բեռլինի պայմանագրի 24-րդ հոդվածի՝ հունական սահմանի հստակեցման հարցի լուծումը, ժամանակ էր շահում նաև 61-րդ հոդվածի պահանջների չկատարման հարցում:

Օսմանյան կայսրությունում ծառայող երկու անգլիացի հյուսիսաստաններ՝ գնդապետ Վիլսոնը և Տրոտերը սեփական կառավարությունից հանձնարարություն են ստանում մշակել հայկական բարենորոգումների ծրագիր: Նրանց կազմած ծրագրի համաձայն Արևմտյան Հայաստանում բարենորոգումների գործընթացը վերահսկելու նպատակով տերութունների համաձայնությամբ պետք է նշանակվեին երկու կոմիսարներ առևժամգն 3 տարի ժամկետով: Նրանք պետք է օժտված լինեին կաշառակեր պաշտոնյաների, ընդհուպ մինչև մութասերիֆների, աշխատանքից հեռացնելու իրավասություններով: Կոմիսարներից մեկի իրավասությունը պետք է տարածվեր էրզրումի, Վանի, Բիթլիսի և Հաբիարիի շրջանի, իսկ երկրորդինը՝ Խարբերդի, Դերսիմի և Դիրաբեքիի վրա<sup>113</sup>: Անգլիական

<sup>113</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 160.

ծրագրում Արևմտյան Հայաստանը երկու մասերի բաժանելու դրույթը, հավանաբար պայմանավորված էր նրանով, որ անգլիացի հյուսիսաստանները հաշվի էին առել թուրքերի մտավախությունը, թե հայկական միասնական վարչական միավորի ստեղծումը հետագայում կարող է հիմք հանդիսանալ այդ տարածքի լայն ինքնավարության կամ էլ ընդհանրապես անջատման համար, ինչը կարող էր ծրագրի մերժման հիմք դառնալ:

Մրագիրը ներկայացվեց մյուս տերութուններին, առաջարկելով հրավիրել նոր համաժողով, որում, ի լրումն 1880 թ. սեպտեմբերի 7-ի կոնվենտիվ նոտայի, տերութունները նոր միասնական պահանջներ կներկայացնեին Բ. Դուանը, որի հիմքում կզբվեր անգլիացի հյուսիսաստանների կազմած ծրագիրը: Սակայն այս անգամ Ռուսաստանը դեմ դուրս եկավ անգլիական այդ նախաձեռնությանը, փորձելով Լոնդոնին զրկել Հայկական հարցում առաջատարի դիրքերից: Ռուսաստանը գտնում էր, որ նոր միասնական նոտայի անհրաժեշտություն չկա, բավական է, որ տերութուններից յուրաքանչյուրը նույնբովանդակ բողոքի նոտա ներկայացնեի սուլթանին<sup>114</sup>: Մարտավարական առումով սա կոպիտ սխալ էր, քանզի ակնհայտ է, որ առանձին-առանձին ուղարկված նոտաներ ուղարկելը ակնհայտորեն խոսում էր տերութունների անմիաբանության մասին, եթե անգամ դրանց բովանդակությունը լիներ նույնը: Հենց սովյալ միջամտության ընթացքում էլ պարզ դարձավ, որ թուրքական իշխանությունները բարեհաճեցին ինչ-որ գործողություններ կատարել ոչ թե տերութունների առանձին բողոքի նոտաների, այլ միասնական վճռական պահանջի ներկայացումից հետո միայն, ուստի սովյալ՝ դեպքում ոռուսական առաջարկն ընդամենը հանգեցնելու էր միջամտության ձախողմանը: Բացի այդ էլ, ոչ մի երաշխիք չկար, որ առանձին ներկայացվելիք նոտաների բովանդակությունը չէր տարբերվի մեկը մյուսից, ինչը թուրքական կողմին լրացուցիչ հնարավորություն կտար պարտավորությունների կատարումից խուսափելու համար: Տերութունների միջև մրցակցությամբ և ամբիցիաներով պայմանավորված տարաձայնություններն ի վերջո հանգեցրին նրան, որ սովյալ փուլում չհաջողվեց Բ. Դուանը հարկադրել կատարել Բեռլինի պայմանագրով հայկական նահանգներում նախատեսված բարենորոգումները: Թուրքական կառավարությանն այս անգամ էլ տարկետում տրվեց Հայկական հարցում, ինչը շատ կարևոր էր թուրքերի և շատ աղետաբեր Արևմտյան Հայաստանի հայ բնակչության համար:

<sup>114</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 163.



**2.4. Հայկական Հարցում Մեծ տերությունների 1895 թ. մարդասիրական միջամտությունը և Օսմանյան կայսրության հերթական պարտավորությունները**

1895 թ. Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ հերթական նախագիծը սուլթանական կառավարությանը ներկայացվեց 1894 թ. Սասունում կազմակերպված Չարդերից հետո, որոնք մեծ արձագանք էին գտել Եվրոպայում:

Չորս տերությունների՝ Յրանսիա, Անգլիա, Ռուսաստան և Իտալիա, պահանջով ձևավորվեց Միջազգային հետաքննիչ Հանձնաժողով, որի իրավական հիմքն էին կազմում Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները Փարիզի և Բեռլինի պայմանագրերով: Հանձնաժողովը պետք է պարզեր Հայերի սպանությունների իրական պատճառները և դրանց հետևանքով նրանց ունեցվածքի ոչնչացման պատասխանատվության հարցերը: 1895 թ. ընթացքում Հանձնաժողովը 107 նիստ է անցկացրել և հարցաքննել 190 վկաների, ու, չնայած թուրք անդամների հակազդեցությանը, Հանձնաժողովը Հայերի զանգվածային սպանություններում մատնանշեց թուրքական պետության անմիջական մասնակցությունը<sup>115</sup>: Հանձնաժողովի գործունեության արդյունքում ստացվող տեղեկությունները հիմք հանդիսացան մեծ տերությունների կողմից Հայկական Հարցում հերթական մարդասիրական միջամտություն իրականացնելու համար:

Ստեղծված իրավիճակում Կ.Պոլսում Յրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանները 1895 թ. մարտ-ապրիլ ամիսներին ձեռնամուխ եղան բարենորոգումների նոր ծրագրի մշակմանը: Բրիտանական կառավարությունը ներկայացրեց մի նախագիծ, որն ուղղված էր Հայերով բնակեցված Վանի, էրզրումի, Սեբաստիայի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիի վիլայեթներում վարչական կառավարման բարելավումներին: Նախկինում անգլիացի հյուպատոսներ Վիլսոնի և Տրոտերի կազմած ծրագրի վերամշակված այս նոր տարբերակով նախատեսվում էր՝ 1. գերազանցապես Հայերով բնակեցված շրջանների կառավարական պաշտոնյաների մեկ երրորդը պետք է կազմված լիներ քրիստոնյաներից, 2. ժանդարմերիայում պետք է հավասարապես ներկայացված լինեին ինչպես մահմեդականներն, այնպես էլ քրիստոնյաները, 3. հարկահավաքը պետք է կատարվեր ոչ թե ժանդարմների, այլ հատուկ պաշտոնյաների

կողմից, որոնք նշանակվելու էին համայնքափն խորհուրդների կողմից, 4. տերությունների համաձայնությունը վիլայեթների ղեկավար էր նշանակվելու քրիստոնյա նահանգապետ, որի գործունեությունը պետք է վերահսկեր Կ. Պոլսում գործող մահմեդականներից և քրիստոնյաներից բաղկացած խառը Հանձնաժողովը, 5. բարենորոգումների իրագործման գործընթացը պետք է իրականացվեր տերությունների ներկայացուցչի՝ գերագույն կոմիսարի հսկողության ներքո<sup>116</sup>: Հատկանշական է, որ ի տարբերություն նախկինի, այս ծրագիրը հիշեցնում էր 1861 թ. ընդունված և 1864 թ. փոքր-ինչ վերամշակված «Լեռնային Լիբանանի օրգանական կանոնադրությունը», որով վերջինս միավորվեց մեկ միասնական վարչական միավորի մեջ և փաստորեն նույնն առաջարկվում էր նաև Արևմտյան Հայաստանի համար, որն սրդեն էլ էր բաժանվում երկու մասերի:

Հայկական Հարցում բրիտանական դիվանագիտության ցուցաբերած այս նախաձեռնողականությունն, անշուշտ, պայմանավորված էր ոչ թե մարդասիրությունով, կամ հայերի նկատմամբ սիրով, այլ այն վտանգով, որն Անգլիան տեսնում էր ռուսական սեփական նավատորմի վերածնունդի և դեպի Աֆրիկայի ու Հնդկաստանի սահմաններն ուղղված Ռուսաստանի առաջխաղացման մեջ: Մարդասիրական միջամտության հարցում Ռուսաստանից իզամ մենաշնորհը այն խաղաքաբան էր, որն Անգլիան վտրձում էր օգտագործել Ռուսաստանի դեմ:

Այս նախագիծի հիման վրա մշակվեց միասնական հուշագրի տեքստը, որը մայիսի 11-ին մեծ տերություններից երեքը՝ Ռուսաստանը, Անգլիան և Յրանսիան ներկայացրին Բ. Դուանը: Հայկական նահանգներում Հայ բնակչության վիճակի բարելավմանն ուղղված բարենորոգումների այս ծրագիրը բաղկացած էր 12 հիմնական կետերից: Առաջարկված դրույթները պայմանակետորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ա/ հայերի խախտված իրավունքների վերականգնող և բ./ հայերի իրավունքների խախտումները ապագայում կանխարգելող դրույթների:

ա./ Հայերի խախտված իրավունքների վերականգնող դրույթներ նախատեսված էին հետևյալ կետերով՝

Երրորդ կետով սուլթանը պարտավորվում էր ներում շնորհել բոլոր այն հայերին, ովքեր մեղադրվում էին կամ սրդեն դատապարտված էին քաղաքական հանցանքների համար և որոնց մեղավորությունը դեռևս ապացուցված չէր<sup>117</sup>:

<sup>115</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. т. 2, ч. 2, с. 166.

<sup>116</sup> Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.), Եր., 1999, էջ 313:

<sup>117</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 132:

Պորրորդ կետով բոլոր Հայերը, անկախ կրոնական պատկանելութ-  
յան, որոնք աքսորվել էին իրենց բնակավայրերից, պետք է վերադա-  
նալին և ստանալին գաղթելուց առաջ ունեցած իրենց սեփականությունը<sup>118</sup>։ Այս կետում կարևոր էր ոչ միայն աքսորված Հայերի վերադարձի  
իրավունքի ամրագրումը, ինչպես որոշակիորեն կվերականգնվեր ժողովր-  
դագրական պատկերը հօգուտ Հայերի, այլև նրանց ունեցած սեփակա-  
նություն վերականգնման դրույթը, քանզի սեփականությունը չվերա-  
կանգնելու դեպքում Հայերի վերադարձն ինքնին դառնում էր անի-  
մաստ, առանց գոյություն միջոցների Հայերն ուղղակի չէին կարող վե-  
րահաստատվել իրենց նախկին բնակավայրերում։

Հինգերորդ կետով քրեական հանցանքների քննությունը պետք է  
իրականացվեր խառը հանձնաժողովների կողմից, որոնցում երկու մահ-  
մեղականներից բացի լինելու էին նաև երկու քրիստոնյաներ<sup>119</sup>։ Հավա-  
սարություն սկզբունքով ձևավորվող խառը հանձնաժողովները պետք է  
ապահովեին յուրաքանչյուր դեպքի արդար ու անկողմնակալ քննու-  
թյունը, ինչը կբացատրեր տարբեր հանցագործություններում կեղծ և չին-  
ծու մեղադրանքներով Հայերին բանտարկելու դեպքերը։

Իններորդ կետով Սասունի, Տալոթիկի և այլ բնակավայրերի դեպ-  
քերի հետևանքով վնասներ կրած Հայերը պետք է պատշաճ հատուցում  
ստանալին իրենց կորուստների դիմաց<sup>120</sup>։

բ./ Հայերի իրավունքների խախտումները ապագայում կանխարգե-  
լող դրույթներ նախատեսված էին հետևյալ կետերով։

Առաջին կետի համաձայն, քանի որ բարեփոխումները պետք է  
անցկացվեին էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սեբասիայի, Խարբերդի և  
Դիարբեքի վեց վիլայեթներում, նախագծի հեղինակների կարծիքով,  
պետք է աշխատանքներ տարվեին այդ վիլայեթների թվի պակասեցման  
ուղղությամբ։ Այդ աշխատանքները պետք է կատարվեին այնպես, որ  
ազգաբնակչության բաժանման արդյունքում ամեն մի նահանգի վար-  
չական ստորաբաժանում ըստ կարելիության համացեղ լիներ<sup>121</sup>։ Այս  
պահանջի ներկայացումը առավել քան հստակ էր, քանզի հայկական կո-  
տորածների համար խթան էր հանդիսանում նաև այն, որ թուրքական  
կառավարության կանխատեսված քաղաքականության արդյունքում  
մահմեդական ցեղերով բնակեցված տարածքները արհեստականորեն

<sup>118</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 132:

<sup>119</sup> Նույն տեղում:

<sup>120</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>121</sup> Նույն տեղում, էջ 131:

կցվում էին հայերով բնակեցված վարչական միավորներին։ Այդ կերպ  
մահմեդականներին ուղղորդում էին հայերի դեմ վերջիններիս կոտո-  
րածները կազմակերպելու համար։ Երեք տերություններն այս դրույթով  
փորձում էին ապագայում կանխարգելել հայերի կոտորածների այս  
կարևոր պատճառներից մեկը։ Տասներկուերորդ կետը, լրացում էր կա-  
տարում այս դրույթներում և անգամ ոչ հայկական նահանգների որոշ  
տեղերում (օրինակ Հաճնը՝ Ադանայի վիլայեթում և Ջեյթունը՝ Հալեպի  
վիլայեթում), որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում, եղած  
վարչական բաժանումները պետք է բարեփոխվեին այնպես, որ հայերը  
առանձնացվեին առանձին շրջաններում<sup>122</sup>։

Երկրորդ կետով, հղում կատարելով Բեռլինի պայմանագրի համա-  
պատասխան հոդվածի վրա, որում նախատեսվում էին բարենորոգում-  
ներ կատարել հայկական նահանգներում, տերությունները պահանջում  
էին, որ վերընշված վեց վիլայեթներում նշանակվող վալիների թեկնա-  
ծությունները համաձայնեցվին՝ իրենց հետ<sup>123</sup>։ Այս կետը ավելի շատ  
ուղղված էր հայկական նահանգներում նշանակված թուրք նահանգա-  
պետերի կողմից հայ բնակչության նկատմամբ կատարվող չարաչառու-  
մանն ու հայաթանջները կանխելուն։ Տերություններն այս կերպ հույս  
ուներին հայկական նահանգներում նահանգապետերի պաշտոններում  
հաստատել այնպիսի անձանց թեկնածությունները, ովքեր իրենց սվյալ-  
ներով չունեին ակնհայտ հակահայկական տրամադրվածություն։

Վեցերորդ կետով վիլայեթներում բարենորոգումների վերահսկո-  
ղությունը պետք է դրվեր սուլթանի կողմից տերությունների համաձայ-  
նությամբ նշանակվող գերագույն հանձնակատարի վրա, որը պետք է  
վերահսկեր վալիների գործունեությունը և կարող էր բողոքներ ու  
խնդրագրեր ընդունել վիլայեթների հայ բնակչությունից։ Եթե Գերա-  
զույն հանձնակատարը լիներ մահմեդական, ապա նրա օգնականը  
պետք է լիներ քրիստոնյա և հակառակը<sup>124</sup>։

Ութերորդ կետով պետք է ստեղծվեր բարենորոգումների վերահսկո-  
ղության հանձնաժողով, բաղկացած վեց անձից, որոնցից երեքը մահմե-  
դական, երեքը՝ քրիստոնյա։ Հանձնաժողովը նույնպես պետք է վերահս-  
կեր վիլայեթների տեղական իշխանությունների գործունեությունը և  
անկարգությունների կամ խախտումների դեպքում տեղեկացնելու էր

<sup>122</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 136:

<sup>123</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>124</sup> Նույն տեղում, էջ 133:

Բ. Դուանը: Հանձնաժողովի գործունեությունը ուղղորդելու էին տերուսթյունների դեսպանները՝ իրենց թարգմանների միջոցով<sup>125</sup>:

Տասներորդ կեսով Բ. Դուանը պետք է հետևեր, որ կրոնափոխության գործընթացը իրականացվի 1856 թ. սուլթանական հրովարտակի դրույթների համաձայն: Կրոնափոխ լինող անձինք պետք է լինեին չափազանց և կարող էին կրոնափոխ լինել միայն մեկ շաբաթ անց այն օրվանից, երբ նման ցանկություն էին հայտնել, ընդ որում, այդ շաբաթվա ընթացքում նրանք պետք է գտնվեին իրենց կրոնական հովվի հսկողության տակ<sup>126</sup>: Սա արվում էր նրա համար, որ կանխարգելվեր այլ քրիստոնյաների և մասնավորապես հայերի նկատմամբ պետական իշխանությունների կողմից իրականացվող բռնի կրոնափոխության քաղաքականությունը, այս դրույթով կրոնափոխությունը պետք է իրականացվեր բացառապես կամավորության սկզբունքով:

Տասնմեկերորդ կեսով Բ. Դուանը պետք է երաշխիքներ ապահովեր, որ չխախտվեին հայ հոգևորականության և հայկական համայնքի այն արտոնությունները, որոնք հստակեցված էին նրանց 1863 թ. սահմանադրությամբ և սուլթանի հրամաններով<sup>127</sup>: Դեսպանների հուշագրում հայերի 1863 թ. սահմանադրության վրա հղում կատարելը չափազանց կարևոր էր այն իմաստով, որ տերությունները փաստորեն հիշեցնում էին Բ. Դուանը, որ Հայ առաքելական եկեղեցու և հայկական համայնքի իրավունքները պաշտպանող այդ փաստաթուղթը, թեև հաստատվել է թուրքական իշխանությունների կողմից և օրինական ուժի մեջ է մտել, սակայն դրա դրույթները խախտվում ու չեն կատարվում թուրքական իշխանությունների կողմից:

Վերջապես տասներկուերորդ կեսով Փոքր Ասիայում և այլ վիլայեթներում, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում, այդ վիլայեթների վալիներին պետք է կցվեր հատուկ քրիստոնյա պաշտոնյա, որին պետք է հանձնարարվեր տվյալ վիլայեթում հայերի իրավունքների պաշտպանության հարցը: Հատուկ պաշտոնյան պետք է հայերից ընդունելու բողոքներ ու խնդրագրեր և դրանք հասցնել նահանգապետի գիտությունը, որը քրիստոնյա պաշտոնյայի համաձայնությունով պետք է ընթացք տար դրանց: Այդ պաշտոնյան, բացի այդ, պետք է կանոնավոր

<sup>125</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 134:

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>127</sup> Նույն տեղում:

կերպով գեկուցագրեր ներկայացնել Կ. Պոլսում գործող մշտական հանձնաժողովին<sup>128</sup>:

Դեսպանները քաջ գիտակցում էին, որ հայերի վիճակը չի կարող բարելավվել առանց կայսրության ընդհանուր վիճակի բարելավման, ուստի հուշագրի մեջ կային նաև կայսրության ընդհանուր բարենորոգումներին վերաբերող դրույթներ:

Դեսպանները հուշագրում հղում էին կատարում Բեռլինի պայմանագրի վրա, նշելով, որ այս առաջարկվող միջոցառումներից է հասկես կախված Բեռլինի դաշնագրով նախատեսված բարեփոխումների իրագործումը<sup>129</sup>: Հուշագրին կցվում էր վարչական բարենորոգումների ծրագիրը, որոնք պետք է իրագործվեին էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիի վիլայեթներում:

Հուշագրին, ըստ էության նշանակում էր, որ մեծ տերությունները ընդունում էին, որ Բեռլինի պայմանագրի 61 և 62-րդ հոդվածներով ստանձնած պարտավորությունները չեն կատարվում սուլթանի կառավարության կողմից, ինչն էլ հանգեցնում էր հերթական մարդասիրական միջամտությանը Հայկական հարցում:

Այս փաստաթղթի իրավական կարգավիճակը բավականին ցածր էր: Ի տարբերություն 1880 թ. միջամտության, Բ. Դուանը ներկայացվող փաստաթուղթը ոչ թե բողոքի նոտա, այլ ընդամենը հուշագիր էր, որով պարզապես Բ. Դուանը առաջարկվում էր իրագործել հուշագրին կից ներկայացվող ծրագիրը, որը չէր կրում վերջինիս համար պարտադիր բնույթ: Փաստաթղթի նման կարգավիճակը պայմանավորված էր նաև նրանով, որ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան, որոնք ստորագրել էին Բեռլինի պայմանագիրը, չմիացան այս գործընթացին:

Այս պայմաններում բոլորովին էլ պատահական չէր 1895 թ. հունիսի 3-ի Բ. Դուան հանդուգն պատասխանը Կ. Պոլսի դեսպանների հուշագրին, որում մասնավորապես ասվում էր, որ սուլթանը արդար համարեց չսահմանափակել վարչական այս բարենորոգումների կիրառումն իր կայսրության միայն մի մասի մեջ, այլ իրականացնել դրանք բոլոր վիլայեթներում<sup>130</sup>:

Բ. Դուան նման պատասխանը հանգեցրեց նրան, որ միջազգային հանրության ճնշման պայմաններում, ինչը դրսևորվեց մեծ տերությունների դիվանագիտական միջամտությունների և Կ. Պոլսում սուլթանի

<sup>128</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 136

<sup>129</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>130</sup> Նույն տեղում, էջ 148:

պալատի առջև իրականացված ռազմացոլային ուժերի սպառնալից ցուցադրութեամբ, սուլթանը ստիպված եղավ երեք տերութիւնների դեսպանների հետ համաձայնագիր ստորագրել, որը հաստատվեց 1895 թ. հոկտեմբերի 5-ի սուլթանի հրամանով, իսկ հոկտեմբերի 20-ին մեծ վեզիրը պաշտոնապես տերութիւնների դեսպաններին ներկայացրեց «Հայաստանում բարենորոգումների մասին» սուլթանի հրամանագիրը: Փաստաթղթում հստակեցվում էր իրականացվող բարենորոգումների տարածքը՝ Էրզրումի, Սեբաստիայի, Վանի, Դիարբեքի, Բիթլիսի և Խարբեքի վիլայեթներն են, ինչպես նաև Զեյթունի և Հաճնի կազաներ<sup>131</sup>: Թուրքական իշխանութիւնները այդպիսով փաստորեն կրկին ճանաչեցին Արևմտյան Հայաստանի առանձնացումը կայսրութեան այլ տարածքներից, որտեղ պետք է անցկացվին բարենորոգումներ: Դեռ ավելին, թուրքական իշխանութիւնները ստիպված եղան բարենորոգումները տարածել նաև Արևմտյան Հայաստանից դուրս Հայաշատ բնակավայրերի՝ Զեյթունի և Հաճնի վրա:

Այս հաջողութիւններով բավարարված և հանգստացած տերութիւնները հերթական անգամ զբաղվեցին ինքնախաբեութեամբ, թե սուլթանն արդեն կկատարի ստանձնած պարտավորութիւնները, մանավանդ որ արդեն հստակեցվել էին դրանց իրականացման կոնկրետ մեխանիզմները: Սակայն XIX դարի վերջերին եվրոպայում կատարվում էին նոր աշխարհաքաղաքական վերազաստավորումներ ու ընթանում էին ռազմաքաղաքական դաշինքների ձևավորման գործընթացներ, իսկ Հայկական հարցը ընդամենը այն հարցերից մեկն էր, որի հետ կապված հակադրվում էին տերութիւնների աշխարհաքաղաքական շահերը: Նման պայմաններում տերութիւնների համար Հայկական հարցն աստիճանաբար մղվում էր հետին պլան, իսկ Աբդուլ Համիդը, օգտվելով իրավիճակից, 1895—1896 թթ. առավել լայն չափերով ձեռնարկեց Հայերի զանգվածային կոտորածը, որի հետևանքով զոհվեց շուրջ 300 հազար մարդ:

<sup>131</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 168.

## 2.5. 1914 թ. ռուս-թուրքական պայմանագրով Հայկական հարցում Օսմանյան կայսրութեան ստանձնած պարտավորութիւնները

Գիտակցելով Արևմտյան Հայաստանում թուրքական վարչակարգի արմատական բարեփոխման և Հայկական հարցում իր մենաշնորհը վերականգնելու անհրաժեշտութիւնը Ռուսաստանը 1913 թ. հունիսի սկզբներին մեծ տերութիւնների քննարկմանը ներկայացրեց Կ. Պոլսի դեսպանատան առաջին դրագոման և խորհրդական Ա. Ն. Մանդելշտամի կազմած Հայկական բարենորոգումների ծրագրի նախնական տարբերակը: Նախագիծը, բնականաբար, առաջ բերեց Եռյակ Միութեան երկրների համառ դիմադրութեանը:

Պետք նշել, որ Մանդելշտամն իր առաջարկած ծրագրում փորձում էր ամփոփել մինչ այդ Օսմանյան կայսրութեան նկատմամբ իրականացրած մարդասիրական միջամտութիւնների արդյունքները, իմի բերել տերութիւնների հետ կնքած պայմանագրերով Բ. Դուան կողմից ստանձնած պարտավորութիւնները և օսմանյան ներպատական օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերով ընդունված որոշումները: Մանդելշտամի բարենորոգումների ծրագրի իրավական հիմքն ուղղակի անթերի էր, քանզի առաջարկվող հոդվածներից յուրաքանչյուրը հիմնվում էր կոնկրետ պայմանագրերի, սուլթանի հրամանների կամ հրովարտակների, օսմանյան օրենքների, Բ. Դուան կողմից հաստատված կանոնադրութիւնների դրույթների վրա:

Մանդելշտամի ծրագրի հիմքում ընկած իրավական փաստաթղթերի առաջին խմբում Օսմանյան կայսրութեան նկատմամբ իրականացված մարդասիրական միջամտութիւնների փաստաթղթերն էին՝

1. 1861 թ. հունիսի 9-ի Լեռնային Լիբանանին ինքնավարութիւն շնորհող Փարիզի արձանագրութիւնը;
2. 1878 թ. Բեռլինի պայմանագիրը;
3. 1880 թ. Հայկական հարցում եվրոպական հանձնաժողովի ծրագրերը;
4. 1895 թ. մայիսի 11-ի Հայկական բարենորոգումների վերաբերյալ երեք դեսպանների հուշագիրը:

Երկրորդ խմբում մարդասիրական միջամտութիւնների արդյունքում Օսմանյան կայսրութեան կողմից ընդունված կամ հաստատված փաստաթղթերն էին և այլ ներպատական իրավական ակտերը՝

1. 1864 թ. Լեռնային Լիբանանի օրգանական կանոնադրութիւնը

2. 1895 թ. Հոկտեմբերի 20-ի սուլթանի հրովարտակը

3. 1896 թ. Կրետեի կանոնադրությունը

4. 1913 թ. վիլայեթների վարչության օրենքը

5. 1913 թ. ապրիլի 6-ի ներքին գործերի նախարարի շրջաբերականը արաբական վիլայեթների առթիվ<sup>132</sup>:

Փաստաթղթերի շարքից երևում է, որ Մանդելշտամը մանրամասն ուսումնասիրել էր մինչ այդ կայսրության քրիստոնյաների իրավունքների պաշտանության վերաբերյալ միջազգային և օսմանյան ներպետական փաստաթղթերը և դրանք իբրև նախադեպ էր ծառայեցրել հայկական բարենորոգումների նոր ծրագիրը կազմելու համար: Այս հանգամանքը կարևոր էր նաև նրանով, որ եվրոպական տերությունները և հենց Ք. Դուռը չէին կարող առարկել այս ծրագրի դեմ, քանի որ Հայկական հարցը, լինելով կայսրության քրիստոնյաների իրավունքների պաշտպանության հարցերից մեկը, պետք է լուծվեր այն նույն սկզբունքներով ու մեխանիզմներով, որոնք արդեն իսկ կիրառվել էին այլ նմանատիպ դեպքերում:

Ընդհանուր առմամբ ուսսական ծրագրի հիմնական դրույթները հանգեցվում էին հետևյալին.

1. հայկական նահանգները պետք է առանձնացվեին մեկ ինքնավար վարչական միավորի մեջ;

2. տերությունների համաձայնությամբ սուլթանը նշանակելու էր գեներալ-նահանգապետ, որն օժտված էր լինելու լայն լիազորություններով;

3. սահմանվում էր շրջանային ժողով լայն իրավասություններով, որում մահմեդականներին և քրիստոնյաներին հատկացվում էին հավասար տեղեր;

4. հավասարության սկզբունքը տարածվելու էր նաև հայկական նահանգներում պաշտոնների բաշխման վրա, ներառյալ ոստիկանությունը և ժանդարմերին;

5. քրդական «Համիդիե» գնդերը պետք է լուծարվեին<sup>133</sup>:

Շուտով, թուրքական կառավարությունը՝ Գերմանիայի խորհրդով, շտապ ներկայացրեց բարենորոգումների իր ծրագիրը, որը սկզբունքային հարցերում հակադրվում էր ուսսական ծրագրի դրույթներին, փորձելով նույնիսկ առհասարակ ձախողել Հայկական հարցի հետ կապված այս նոր մարդասիրական միջամտությունը: Լարված մրցակցության պայմաններում Ռուսաստանը հետևողական ու դժվարին դիվանագիտա-

<sup>132</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 210–219:

<sup>133</sup> Նույն տեղում:

կան պայքար էր մղում թուրքական կառավարության ու նրան սատարող Գերմանիայի դեմ: Ի վերջո, 1914 թ. հունվարի 26-ին ստորագրվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների մասին համաձայնագիրը, որը փաստորեն ուսսական և գերմանո-թուրքական ծրագրերի միջև փոխդիվանային տարբերակ էր, իսկ զիջումներն էլ, անշուշտ, կատարվել էին Հայ բնակչության նախատեսված իրավունքների նվազեցման հաշվին:

Պայմանագրի համաձայն էրզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի վիլայեթներից և Վանի, Բիթլիսի, Դիարբեքիլի ու Խարբեքիլի վիլայեթներից կազմվելու էին երկու առանձին վարչական միավորներ, որոնք ղեկավարելու էին տերությունների առաջադրած ու թուրքական կառավարության նշանակած եվրոպացի ընդհանուր վերատեսուչները: Վերջիններս իրականացնելու էին երկու միավորների վարչության, արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի կազմակերպումն ու վերահսկողությունը: Բարենորոգումների վերջնական ծրագրի կարևոր դրական կետերի շարքում կարելի է առանձնացնել այն, որ

1. վերատեսուչներն ունենալու էին նաև ռազմական ուժի միջոցով կարգուկանոն ապահովելու, պաշտոնյաներին նշանակելու և արձակելու, սուլթանի հաստատմանը բարձր պաշտոնյաների ու դատավորների թեկնածություններ ներկայացնելու իրավունք;

2. կոնկրետ վիլայեթի ժողովրդական կրթության բյուրոն յուրաքանչյուր ազգություն ունենալու էր լուսավորության նպատակներով իր վճարած հարկերին համապատասխան մասնաբաժին և յուրաքանչյուր ազգություն ստանում էր մասնավոր դպրոցներ ունենալու իրավունք;

3. մահմեդականների ու քրիստոնյաների միջև հավասարության սկզբունքով ձևավորվելու էին վարչական խորհուրդներ, նույն սկզբունքով երկու հատվածներում բաշխվելու էին ոստիկանության ու ժանդարմերիայի պաշտոնները:

Եթե համեմատելու լինենք փաստաթղթի վերջնական տեքստը ուսսական նախնական ծրագրի հետ, ապա պարզ կդառնա, որ Ռուսաստանը նահանջել էր Հայերի համար խիստ կարևոր և շոշոփելի հարցերում: Ծրագրի թերությունների շարքում կարելի է առանձնացնել այն, որ ուսսական դիվանագիտությանը չհաջողվեց

1. Արևմտյան Հայաստանը պահպանել իբրև մեկ միասնական վարչական միավոր և այն բաժանվեց երկու մասերի,

2. դուրս մղել հայկական շրջաններին արհեստականորեն միացված մահմեդականներով բնակեցված տարածքները,

3. Հասնել ամբողջ Արևմտյան Հայաստանի Համար միասնական ժողովի ստեղծմանը;

4. կազմավորել քրդական «Համիդիե» գնդերը, որոնք միայն պետք է զինաթափվեն և վերակազմավորվեն պահեստային հեծելազորի:

Բացի դրանից, նախնական ծրագրի՝ բռնազրաված հողերը վերադարձնելու և բալկանյան փախստականներին Հայկական վիլայեթներում վերաբնակեցնելն արգելելու վերաբերյալ հստակ պահանջը փոխարինվեց հողային հարցերը ընդհանուր վերատեսուչների ուղղակի վերահսկողությամբ կարգավորելու անորոշ բանաձևով<sup>134</sup>: Նախնական ծրագրի դրույթների նման փոփոխությունները թուրքական իշխանություններին հնարավորություն էին տալիս վերջնականապես փոխել Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը:

Սակայն, հանուն ճշմարտության պետք է նշենք, որ տվյալ պարագայում Ռուսաստանի Համար առաջնահերթ կարևոր խնդիրն այն էր, որ կրկին Հայկական հարցը դառնում էր Ռուսաստանի մենաշնորհը, ինչով բարձրանում էր վերջինիս միջազգային հեղինակությունը, իսկ պայմանագրի բովանդակային մասը Պետերբուրգի Համար մղվում էր երկրորդ պլան, մանավանդ եթե հաշվի առնենք մեծ տերությունների և Օսմանյան կայսրության հակազդեցությունը: Իսկ ինչ վերաբերվում է մյուս տերություններին, ապա նրանց Համար կարևոր էր այն, որ Համաձայնագիրը թուլացրեց թուրքական պետության հնարավոր բաժանման մտավախությունից առաջացած միջազգային լարվածությունը, պահպանեց Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, որը տվյալ պատմական պահին նախընտրելի էր նրանց Համար:

Իր թերություններով հանդերձ, սակայն, այս պայմանագրով փաստացի Հայկական նահանգների Համար ստեղծվում էր մի դրույթ, որը մոտ էր «Լիբանանի օրգանական կանոնադրությանը», սակայն այն առավելություններ, որ եթե վերջինիս դեպքում գեներալ-նահանգապետները նշանակվում էին օսմանահպատակներից, որոնց վրա թուրքական իշխանությունները առավել մեծ ազդեցություն կարող էին ունենալ, ապա Հայկական բարեփոխումների պարագայում վերատեսուչները լինելու էին արտասահմանցիներ<sup>135</sup>: Եթե Համաձայնագիրը Համեմատենք 1895 թ. հուլիսի ծրագրի հետ, ապա պարզ կդառնա, որ ի տարբերություն վեր-

<sup>134</sup> Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, էջ 349:

<sup>135</sup> Генциал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 176..

ջինիս Հայկական նահանգներում նշակավոր պաշտոնյաների սկզբունքը սահմանվում էր ոչ թե Համաձայնությունը, այլ հավասարությունը, ինչը լուրջ առաջընթաց էր:

Չնայած Համաձայնագրում ամրագրված արևմտահայերի Համար աննպաստ հիմնադրույթների՝ Հայ հասարակական շրջաններում ակնկալվում էր, որ Հայկական նահանգներում Համաձայնագրի իրագործումը հնարավորություն կտար ապահովել Հայ բնակչության ֆիզիկական գոյությունը, հիմք կդառնար տերությունների՝ նախևառաջ Ռուսաստանի վերահսկողությամբ Հայերի ինքնակառավարման Համար<sup>136</sup>:

Անգամ նշված զգալի զիջումներից հետո էլ, հավատարիմ մնալով Օսմանյան կայսրության արդեն ավանդական դարձած քաղաքականությունը՝ երիտթուրքերն ամեն կերպ ջանում էին ձգձգել ուսու-թուրքական Համաձայնագրով ստանձնած բարենորոգումների իրագործումը: Երիտթուրքական կառավարությունը Արևմտյան Հայաստանի երկու հատվածների վերատեսուչների ընտրությունը թողնելով մեծ տերությունների վրա, հիմքեր ստեղծեց նրանց միջև լարված պայքար ծավալելու Համար, քանզի այդ պատասխանատու պաշտոններում նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր հաստատել սեփական թեկնածուին: Ռուսական դիվանագիտության ջանքերի շնորհիվ վերջապես Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի քննարկմանը մասնակցած եվրոպական վեց տերությունների միջև Համաձայնեցվեց վերատեսուչների պաշտոնին հավակնող հինգ թեկնածուների ցուցակ: Երկար քննարկումների արդյունքում՝ ապրիլի 2-ին թուրքական կառավարությունն ընտրեց Արևելյան Հնդկաստանում Հոլանդիայի մշտական ներկայացուցչի օգնական Վեստենենկին և Նորվեգիայի ռազմական նախարարության գլխավոր քարտուղար Հոֆֆին: Այս ընտրությունը նույնպես պատահական չէր: Երկու թեկնածուներն էլ անձանթ էին կայսրության պետական կառավարման ձևին և անտեղյակ էին Հայ ժողովրդի ճակատագրին ու Հայկական հարցի պատմությանը:

Վեստենենկը նշանակվեց այն հատվածի վերատեսուչ, որն ընդգրկում էր Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի վիլայեթները, իսկ Հոֆֆը նշանակվեց Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքի վիլայեթներն ընդգրկող հատվածի ընդհանուր վերատեսուչ: Առաջինի նստավայրը գտնվելու էր Սեբաստիա քաղաքում, իսկ երկրորդինը՝ Վանում: Անհրաժեշտ է նշել նաև, որ ընտրված թեկնածուները միանգամից չա-

<sup>136</sup> Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, Եր., 2002, էջ 35:

ցան գործի: Վերատեսուչները մինչև իրենց աշխատանքային պարտականություններին անցնելն արձակուրդի տեսքով նախ մեկնելու էին իրենց Հայրենիք և այնտեղ էին մնալու ամենաուշը մինչև հուլիսի 5-ը<sup>137</sup>:

Ցավոք, գլխավոր վերատեսուչներն այդպես էլ չանցան իրենց պարտականությունների կատարմանը: Կ. Պոլսում ուսուցիչական Գիրսը նախարար Սազոնովին 1914 թ. մայիսի 10-ի հեռագրում Հայտնում էր, որ նրանք Հասցրել էին կնքել իրենց աշխատանքային պայմանագրերը ներքին գործերի նախարար Թալեաթի հետ<sup>138</sup>: Նորվեգացի Հոֆֆը Հասցրեց ժամանել Վան, իսկ հուլանդացի Վեստենենկը ուղևորվում էր Էրզրում, երբ Օսմանյան կայսրությունը, պատերազմի մեջ մտնելով Ռուսաստանի հետ, ձախողեց Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրը<sup>139</sup>: Այս անգամ էլ վրա հասած Առաջին աշխարհամարտը ոչ միայն «փրկեց» թուրքերին Հայկական բարենորոգումներն իրագործելու իր համար խիստ անցանկալի գործընթացից, այլև հնարավորություն ընձեռեց իրականացնել Հայերի ցեղասպանությունը:

Ճիշտ է, պատերազմը պայմանագրերը կատարելու տեսակետից ֆորս-մաժորային (անհաղթահարելի ուժ) իրավիճակ է և տվյալ պայմաններում պայմանագրի դրյուժները իրագործման մասին խոսելն ավելորդ է, սակայն պատերազմի ավարտից հետո գոնե պայմանագրի կողմ հանդիսացող Ռուսաստանը, որն այդքան շահագիրգիր էր դրա ստորագրման գործում, պետք է անդրադառնար դրա դրյուժները կատարելու Հարցին: Սակայն խորհրդայնացումից հետո նոր իշխանությունները բավարարվեցին միայն «Թուրքահայաստանի մասին դեկրետի» ընդունումով և գործնականում քայլեր չձեռնարկեցին տվյալ պայմանագրով Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները հսկելու և կատարել տալու ուղղությամբ:

Ամփոփելով մեծ տերությունների կողմից Հայկական Հարցում նախաձեռնված մարդասիրական միջամտությունների շարքը, ստիպված ենք արձանագրել, որ դրանց ոչ լիարժեք ու անհետևողական կիրառելու արդյունքում Աբդուլ Համիդը, իսկ հետագայում էլ երիտթուրքերը դառնալով պատրվակ օգտագործեցին հենց արևմտահայերի դեմ, կազմակերպելով գանգվածային կոտորածներ ու ցեղասպանություն: Այս տեսակե-

տից մեծ տերությունները պատասխանատվության իրենց բաժինն ունեն Հայկական Հարցում իրականացրած մարդասիրական միջամտություններում իրենց կիսաքայլերի համար, որոնք սաղրեցին թուրքերին կազմակերպելու Հայ ժողովրդի «Հուճանիտար աղետը» – Հայոց ցեղասպանությունը: Նշված պայմանագրերի և պայմանավորվածությունների չիրագործման համար պատասխանատու են այն երկրները, որոնք ստորագրել էին պայմանագրերի տակ կամ նախաձեռնել էին մարդասիրական միջամտությունները, սակայն չկատարեցին իրենց պարտավորությունները և հետևողական չեղան՝ Հայկական բարենորոգումների գործընթացը վերահսկելու և Օսմանյան կայսրությանն իր ստանձնած պարտավորությունների կատարումը պարտադրելու իմաստով:

## 2.6. Հայերի գանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվությունը 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրով

Արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին իրականացվող Մեծ եղեռնի ընթացքում 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի դաշնակից տերությունների երեք մայրաքաղաքներում՝ Փարիզում, Լոնդոնում և Պետրոգրադում միաժամանակ հրապարակվեց համատեղ Հայտարարություն, որի հեղինակն ու նախաձեռնողը Ռուսաստանն էր: Հայտարարության վերջնական տեքստը Պետրոգրադում պաշտոնապես հրապարակեց Պետրոգրադի հեռագրային գործակալությունը. «Վերջին ամսվա ողջ ընթացքում Հայաստանում կատարվում է Հայերի ջարդ քրդերի և թուրքերի կողմից օսմանյան իշխանությունների բացահայտ թողալովությամբ, իսկ երբեմն էլ ուղղակի օժանդակությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին Հայերի ջարդ է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Էջի-նում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Չելթունում և ամբողջ Կիլիկիայում, գլխովին կոտորվել են Վանի շրջակայքի հարյուր գյուղերի բնակիչները, բուն Վանում Հայկական թաղամասը պաշարվել է քրդերի կողմից: Միևնույն ժամանակ Կ. Պոլիսի թուրքական կառավարությունը բանտարկման և չտեսնված ճնշումների է ենթարկում խաղաղ Հայ բնակչությանը: Ելնելով թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություններից, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնային կառավարությունները սրանով հրապարակայնորեն Հայտարարում են թուրքիայի կառավարությանը,

<sup>137</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), Материалы Поли-тархива Кайзеровской Германии, сост. отв. Редактор, автор примечаний д.и.н., профессор В. Микаелян, Ер., 1995, с. 166.

<sup>138</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 365:

<sup>139</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 178.

որ իրենք այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական ներկայացուցիչների վրա, որոնք հանցակից են նման կոտորածին»<sup>140</sup>: Փաստաթղթում հստակ բնորոշվում է թուրքական կառավարության վերաբերմունքը Հայերի զանգվածային կոտորածներին՝ ոչ միայն «թողտվության», այլև «ուղղակի օժանդակության» ձևով: Սկզբունքային նշանակություն ունի այն փաստի արձանագրումը, որ կատարվում են նոր հանցագործություններ, դրանով իսկ առաջին նշվում է, որ Հայերի զանգվածային ոչնչացման նախկին գործողությունները նույնպես եղել են հանցագործություններ և երկրորդ ընդգծվում է Հայերի նկատմամբ կատարված նոր հանցագործությունների կապը նախկինների հետ: Միջազգային իրավունքի տեսակետից Հայտարարությունը նշանակալից է նրանով, որ Հայերի ցեղասպանությունը որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ» ուղղված հանցագործություն որակելով, այդ միջազգային հանցագործության անձնական քրեական պատասխանատվությունը դրվում էր թուրքական կառավարության և նրա տեղական ներկայացուցիչների բոլոր անդամների վրա: Սրանով իսկ հռչակագիրը միջազգային մակարդակով սկիզբ դրեց ֆիզիկական անձանց անձնական պատասխանատվությանը, ընդ որում, այն բացահայտ և ոչ երկիմաստորեն մերժում էր «պետական գործողության» ուսմունքին հղում կատարելու հնարավորությունը, որի համաձայն պետական մարմինների վարչազիծը վերագրվում էր պետությանը, ինչը բացառում էր ֆիզիկական անձանց անձնական պատասխանատվությունը, որոնք հանդիսանում են այդ գործողությունների իրականացնողները<sup>141</sup>: Համաձայն Հայտարարության, Հայերի ցեղասպանության մեջ մեղավոր անձանց պաշտոնական դրույթները, անկախ այն բանից, թե նրանք հանդիսանում են կառավարության անդամները, թե կառավարության ներկայացուցիչները տեղերում, չի կարող դիտարկվել որպես արդարացուցիչ հանգամանք պատիժը մեղմացնելու համար: Հայերի ցեղասպանության այսպիսի որակումն իր հետ բերում է միջազգային հանրության և առաջին հերթին այն պետությունների (որոնք ստորագրել են Հայտարարության տակ կամ ընդունել են նրանում ամրագրված տվյալ գնահատականը) կողմից արդարադատության ճանաչու-

<sup>140</sup> Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1878–1917, М.–Л., 1931–1940, серия III, т. 7, ч. 2, с. 252.

<sup>141</sup> Геноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М. Нерсисяна, Ер., 1983, с. 280.

մը, որը հնարավոր է դարձնում այդ հանցագործության հետևանքների ավելի ամբողջական վերացումը, իրավունքի և ճշմարտության վերականգնումը<sup>142</sup>:

Այս փաստաթղթով արժանի պատասխան էր տրվում Հայոց ցեղասպանության ժխտողականությանը և մասնավորապես Վանում Հայերի ապստամբության թուրքական շինծու վարկածին: Հռչակագրում արձանագրվում էր, որ Վանի շրջակա հարյուր գյուղերի բնակիչները գլխովին կոտորվել են, իսկ Վանի հայկական թաղամասը պաշարված է քրդերի կողմից: Փաստաթղթի այս ձևակերպումներից պարզ է դառնում, որ կոտորվելու հերթը հասել էր Վանի հայկական թաղամասում բնակվող պաշարման մեջ գտնվող Հայերին, որոնք ինքնապաշտպանության վերջին ճիգերն էին գործադրում ողջ մնալու համար:

Պետք է նշել, որ Անտանտի տերությունների այս համատեղ հռչակագիրը նախադեպային փաստաթուղթ է հանդիսացել հետագայում նմանատիպ դեպքերի իրավաքաղաքական գնահատման տեսակետից: Երկրորդ աշխարհամարտի տարիներին 1943 թ. հոկտեմբերի 30-ին ՆԱՂՄ նախաձեռնությամբ ընդունվեց «Հիտլերականների կողմից իրականացվող բազանությունների վերաբերյալ» հռչակագիրը, որը գրեթե բառացիորեն կրկնում է 1915 թ. Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի դրույթներն ու ձևակերպումները: Հակահիտլերյան կոալիցիայի մոսկովյան հռչակագրում ճիշտ այնպես, ինչպես Անտանտի համատեղ հռչակագրում, կատարված զանգվածային սպանությունների համար անձնական պատասխանատվություն էր նախատեսվում գերմանացի այն սպանների և զինվորների, ինչպես նաև նացիստական կուսակցության անդամների համար, ովքեր մասնակցություն են ունեցել այդ գործողություններին<sup>143</sup>: Այս փաստաթուղթը հիմք դրեց այն գործընթացին, որ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո հակահիտլերյան կոալիցիայի հաղթանակած տերությունները Նյուրնբերգյան միջազգային տրիբունալում նախաձեռնեին նացիստական հանցագործներին դատապարտելու դատավարությունը: Ծավոք, այդ նույն հետևողականությունն ու վճռականությունը Անտանտի տերությունները չզրբսևորեցին Առաջին աշխարհամարտից հետո, համատեղ հռչակագրի դրույթները արդյունավետ կատարելու, մասնավորապես միջազգային տրիբունալ ստեղծելու, առումով:

<sup>142</sup> Барсегов Ю., Геноцид армян - преступление против человечества, с. 26.

<sup>143</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны. Сборник материалов и документов, т. 1, М., 1946, с. 418–419.



Հատկանշական է, որ ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի ընդունումից առաջ Միավորված ազգերի Պատերազմական Հանցագործությունների Հանձնաժողովը 1948 թ. մայիսի 28-ին Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում հայերի զանգվածային սպանություններին տրված «մարդկության դեմ կատարված հանցագործություն»՝ ձևակերպումը համարեց նույնական այն հանցագործությունների հետ, որոնք Նյուրնբերգյան դատավարության ժամանակ միջազգային իրավունքի կողմից որակվել էին իբրև անմարդկային գործողություններ սեփական հպատակների նկատմամբ, այսինքն՝ ցեղասպանություն<sup>144</sup>։ Ի թիվս պատերազմական հանցագործությունների նացիստական հանցագործները Նյուրնբերգյան դատավարության ընթացքում պատասխանատվության ենթարկվեցին նաև մարդկության դեմ կատարված հանցագործությունների, այդ թվում՝ ցեղասպանության համար։

## 2.7. Հայկական Հարցի արծարծումը Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի բաժանման Անտանտի տերությունների գաղտնի համաձայնագրում

Օսմանյան կայսրության և դրա հետ մեկտեղ նաև Արևմտյան Հայաստանի բաժանման հարցը Անտանտի տերությունների օրակարգի մեջ կրկին հայտնվեց արդեն Առաջին համաշխարհային ընթացքում և անգամ կազմվել էր համաձայնագրի նախագիծ, որը հավանության արժանացավ երեք կառավարությունների կողմից և դրան հետագայում միացավ նաև Իտալիան։ Օսմանյան կայսրության բաժանման այդ գաղտնի համաձայնագիրը հայտնի է փաստաթղթի նախագծի հեղինակներ՝ մերձավորարևելյան Հարցերով անգլիացի փորձագետ Մարկ Սայքսի և Բեյրութում Ֆրանսիայի նախկին գլխավոր հյուպատոս Ֆրանսուա ժորժ Պիկոյի անուններով։

Պատերազմի ընթացքում այս հարցն ի հայտ եկավ թերևս այն պատճառով, որ 1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին գրանցվեցին ռուսական զինքի նոր հաջողությունները Կովկասյան ճակատում, կապված 1916 թ. սկզբին էրզրումի գրավման հետ, որից հետո Արևմտյան Հայաստանի մեծ մասը պատմության մեջ առաջին անգամ գտնվում էր ռուսա-

<sup>144</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч.2, с. 651.

կան վերահսկողության տակ<sup>145</sup>։ Անգլիան և Ֆրանսիան արտաքուստ ողջունելով ռուսական բանակի այդ հաջողությունները, իրականում թշնամաբար էին տրամադրված իրենց դաշնակցի հանդեպ, քանի որ, տիրանալով Ասիական Թուրքիային և դուրս գալով դեպի արաբական աշխարհ ու ծովային նոր ուղիներ, Ռուսաստանը շոշափում էր նրանց մեծապետական շահերը<sup>146</sup>։ Առանց էրզրումի հաղթանակի, դաշնակիցները հազիվ թե այդքան լուրջ հաշվի նստեին Ռուսաստանի հետ մերձավորարևելյան հարցերի քննարկման ժամանակ։ Իրենց դիրքերը ամրապնդելու համար դաշնակիցները մի շարք միջոցների դիմեցին՝ Եգիպտոսի, Բաղդադի, Մուսուլի և Հարավային Պարսկաստանի շրջանում։

Ռուսաստանը բաց էր թողել Օսմանյան կայսրության բաժանման նախագիծ կազմելու նախաձեռնությունը, և այժմ դաշնակիցներն էին տոն տվողը այս հարցում։ Նրանք ի դեմս դաշակից Ռուսաստանի տեսնում էին մրցակցի և ամեն կերպ ձախողում էին ամբողջ Արևմտյան Հայաստանի անցումը վերջինիս, փորձելով թույլ չտալ նրա ելքը դեպի Մերձավոր Արևելքի նալթայի պաշարներ։ Մյուս կողմից, ամբողջ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի գիջումը Ռուսաստանին արդեն իսկ ելք կապահովեր վերջինիս համար դեպի Միջերկրական ծով, ինչը էապես կթուլացներ Ռուսաստանի հետաքրքրությունը Բոսփոր-Դարադանեղ նեղուցների նկատմամբ և այդպիսով կնվազեին դաշնակիցների ազդեցության հնարավորությունները Ռուսաստանի վրա։

Անգլիայի և Ֆրանսիայի միջև ձեռք բերված համաձայնության արդյունքները 1916 թ. մարտի 6-ին ներկայացվեցին ցարական կառավարությանը։ Օսմանյան կայսրության ասիական տարածքների նոր բաժանման քարտեզի համաձայն Ֆրանսիական գոտու մեջ ներառված էր Արևմտյան Հայաստանի գրեթե կեսը և ամբողջ Քրդստանը և, հակառակ Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովի պնդման, ռուսական և Ֆրանսիական գոտիների միջև չկար որևէ «բուֆերային կազմավորում»՝ «անկախ թուրքական պետություն» և այս գոտիներն ունեին ուղղակի ընդհանուր սահման<sup>147</sup>։

Համաձայն ներկայացված ծրագրի, Արևմտյան Հայաստանի տարածքները բաժանումը կատարված էր հետևյալ կերպ՝ Ռուսաստանին էին անցնում իրեն սահմանակից էրզրումի և Վանի վիլայեթները, Տրա-

<sup>145</sup> Հարությունյան Ա. Հ., Շահերի ներսկություններն ու զուգադիպումները Անտանտի ներքում 1917-1918 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, Եր., 1964, էջ 144:

<sup>146</sup> Նույն տեղում, էջ 144:

<sup>147</sup> Ахопян С. М., Западная Армения в планах империалистических держав, Ер., 1967, с. 211.

պիղոնի և Բիթլիսի վիլայեթների արևելյան մասերը և Դիարբեքիի, Խարբերդի ու Սեբաստիայի վիլայեթների չնչին մասերը, իսկ Յրանսիային՝ Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիի վիլայեթների մեծագույն մասերը, ինչպես նաև Բիթլիսի վիլայեթի արևմտյան մասը և Կիլիկիան նրան հարակից շրջաններով<sup>148</sup>։

Ստեղծված իրավիճակում Սազոնովը նպատակահարմար էր գտնում միայն կատարել տարածքային փոխանակություն Յրանսիայի հետ, ինչն իր կարծիքով Ռուսաստանի համար կլինեք «չարյաց փոքրագույնը», քանզի ուժերի նման հարաբերակցությունը թույլ էջր տալիս Ռուսաստանին ուղղակիորեն պահանջել որևէ տարածք միացնել իրեն։ Այս առումով Ռուսաստանն իր համար ավելի առաջնահերթ էր համարում Ուրմիայի շրջանի և Բիթլիսի անցուղիներին տիրանալը, քան թե ունենալ Սեբաստիա-Խարբերդ-Կեսարիա հայաբնակ եռանկյունին։ Սեբաստիա-Կեսարիա-Խարբերդ հայաբնակ եռանկյունու փոխանակման իմաստը քրդերով բնակեցված Հաքիարիի շրջանի հետ կայանում էր նրանում, որ Ռուսաստանը հարավում ֆրանսիական գոտու փոխարեն ցանկանում էր սահման ունենալ արաբական պետության հետ, անգամ եթե այն լինեք ֆրանսիական ազդեցության ոլորտում։

1916 թ. ապրիլի 13-ին կայացավ ռուս-ֆրանսիական համաձայնությունը և Յրանսիան համաձայնվեց Ռուսաստանի առաջարկած տարածքների փոխանակման հետ, ինչին հաջորդեցին անգլո-ֆրանսիական համաձայնագրերը մայիսի 9-ին և 16-ին<sup>149</sup>։ Այս ամենից հետո, բնականաբար, պետք է տեղի ունենար նաև ռուս-անգլիական համաձայնագրի ստորագրումը, որից հետո շղթան կփակվեր և խնդիրը կհամարվեր լուծված։ 1916 թ. մայիսի 30-ին Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆը հեռագրով դիմում էր Սազոնովին, որտեղ ասում էր, որ Անգլիայի արտգործնախարար Գրեյը մայիսի 23-ին իրեն նոտա է ուղարկել, որտեղ նշում էր, որ անգլիական կառավարությունը միանում է ռուս-ֆրանսիական համաձայնագրին։

Ինչպես ռուս-ֆրանսիական ու ռուս-անգլիական նոտաների փոխանակումները, այնպես էլ 1916 թ. մայիսի 9-16-ի (երբ Անգլիայի արտաքին գործերի նախարար Գրեյը և Լոնդոնում Յրանսիական դեսպան Կամբոնը փոխանակվեցին նույնանման նոտաներով) անգլո-ֆրանսական համաձայնագիրն ամբողջությամբ վերցրած կազմում են 1916 թ. անգլո-ֆրանս-ռուսական բանակցությունների արդյունքում ձեռք բեր-

ված Ասիական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բաժանման համաձայնագիրը։

Սայքս-Պիկոյի գաղտնի բանակցությունները և ձեռք բերված պայմանավորվածությունները կանխորոշեցին պատերազմական գործողությունների հետագա ընթացքը Կովկասյան ռազմաճակատում։ Այս համաձայնագրով դաշնակիցները փաստորեն կանգնեցրին ռուսական զորքերի հետագա առաջխաղացումը Արևմտյան Հայաստանում, քանզի համաձայնագրով, բացի նեղուցների ու Կ.Պոլսի հատվածից, մյուս բոլոր տեղերում շատ փոքր շերտ էր ավելացվում ռուսական զորքերի կողմից արդեն իսկ զբաղված տարածքներին։ Այս պայմաններում ռուսների հետագա առաջխաղացումը դառնում էր անիմաստ, քանի որ զբաղված նոր տարածքները պետք է հանձնվեին Յրանսիային։ Թերևս սրանով նաև պետք է բացատրել այն փաստը, որ 1916 թ. երկրորդ կեսին ռուսական Կովկասյան բանակի կողմից այս ռազմաճակատում այլևս էական տեղաշարժեր և առաջխաղացումներ չարձանագրվեցին։ Օսմանյան կայսրության և մասնավորապես Արևմտյան Հայաստանի հարցը արդեն համարվում էր վճռված։

Ասիական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բաժանման համաձայնագիրը և մասնավորապես տերությունների միջև Արևմտյան Հայաստանի գաղտնի բաժանման ծրագիրը մեծ տերությունները փորձում էին ներկայացնել իբրև իրենց կողմից նախկինում իրականացված մարդասիրական միջամտությունների տրամաբանական շարունակություն։ Սկզբում Պիկոյի, իսկ հետո էլ նաև Սազոնովի կողմից բերվում էր այն փաստարկը, որ ավելի լավ է Արևմտյան Հայաստանը բաժանված լինի քաղաքակիրթ տերությունների՝ Յրանսիայի և Ռուսաստանի միջև, քան շարունակի մնալ բարբարոս թուրքերի տիրապետության տակ, որոնք բնաջնջում էին Հայ բնակչությանը<sup>150</sup>։ Ու քանի որ մինչ բաժանման բանակցությունները, Անտանտի տերությունները դեռ 1915 թ. մայիսի 24-ին ընդունել էին Հայերի զանգվածային կոտորածները դատապարտող և թուրքական կառավարությանը պատասխանատվության կանչելու մասին համատեղ հռչակագիր, ուստի այդ լույսի ներքո Արևմտյան Հայաստանի օտարումը Օսմանյան կայսրությունից կարող էր դիտվել իբրև քաղաքական պատասխանատվության իրացում ցեղասպանություն իրականացրած պետության նկատմամբ։

<sup>148</sup> Ахопян С. М., Западная Армения в планах империалистических держав, с. 211.

<sup>149</sup> Киракосян Дж., Западная Армения в годы Первой мировой войны, Ер. 1971, с. 394.

<sup>150</sup> Տե՛ս «Հայաստանի Ավտոնոմիան» և Անտանտան։ Վավերագրեր իմպերալիստական պատերազմի շրջանից, Ա. Հովհաննիսյանի խմբ., Եր., 1920, էջ 121։

Թվում էր, թե այս տրամաբանությունը ցեղասպանված Հայ բնակչությունն իր պատմական Հայրենիքով դուրս էր բերվում հանցագործ պետության իշխանությունից և փոխանցվում ավելի քաղաքակիրթ տերությունների՝ Ֆրանսիայի և Ռուսաստանի խնամակալության տակ: Սակայն, ինչպես միանգամայն իրավացիորեն նշում է 1914 թ. Հայկական բարենորոգումների նախնական ծրագրի հեղինակ Ա. Մանդելշտամը, Ասիական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բաժանման գաղտնի Համաձայնագիրը նահանջ էր տերությունների մինչպատերազմյան մարդասիրական միջատությունների քաղաքականությունից, քանզի Թուրքական լծից ժողովուրդներին ազատագրելու սկզբունքը տերությունների կողմից քողարկված ձևով փոխակերպվում էր «ազատագրվող» ժողովուրդների բնակության տարածքների բռնակցումով<sup>151</sup>:

Օսմանյան կայսրության տարածքների, այդ թվում Արևմտյան Հայաստանի, բաժանման Անտանտի տերությունների գաղտնի Համաձայնագիրը կյանքի էր կոչվելու պատերազմի հաղթական ավարտից հետո, իսկ մինչ այդ ցարական կառավարությանը հաջորդած Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը, առաջնորդվելով Հաագայի 1907 թ. հոկտեմբերի 18-ի «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների» կոնվենցիայի 42 և 43 հոդվածներով, 1917 թ. ապրիլի 26-ին ընդունեց «Պատերազմի իրավունքով զրավված Թուրքահայաստանի շրջանների կառավարման մասին» որոշումը:

Համաձայն Հաագայի կոնվենցիայի 42-րդ հոդվածի, տարածքը համարվում է զրավված, եթե այն իսկապես գտնվում է հակառակորդ բանակի վերահսկողության ներքո և զրավումը տարածվում է միայն այն շրջանների վրա, որտեղ այդ իշխանությունը հաստատվել է և զրավողն ի վիճակի է իրականացնել իր գործունեությունը: Իսկ 43-րդ հոդվածով սահմանվում էր, որ օրինական կառավարությունից տարածքը զրաված հակառակորդի ձեռքը իշխանության փաստացի անցնելուց հետո վերջինս պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցները, որքանով դա հնարավոր է, որպեսզի վերականգնվի հասարակական կարգուկանոնը, հարգվեն գոյություն ունեցող օրենքները, եթե այդ գործում չեն հանդիպի անհաղթահարելի դժվարությունների<sup>152</sup>:

Հիմք ընդունելով այդ հոդվածների պահանջները, ժամանակավոր կառավարությունն այդ տարածքները դուրս էր բերում կովկասյան իշ-

խանությունների և կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների ենթակայությունից և փոխանցում կառավարության անմիջական ենթակայության տակ, մինչև որ վերջնական խաղաղության պայմանագրով կորոշվի Թուրքահայաստանի ճակատագիրը<sup>153</sup>:

Այսպիսով, Ռուսաստանը, հիմնվելով միջազգային կոնվենցիայի վրա, օրինական տեսք էր տալիս իր կողմից վերահսկվող Արևմտյան Հայաստանի տարածքների կառավարմանը, ի տարբերություն նախկին ցարական կառավարության, որն այդ տարածքներին վերաբերվում էր որպես իր տարածքին միացված սովորական նահանգների:

Ամփոփելով, նշենք, որ պատերազմի ավարտից հետո Ասիական Թուրքիայի բաժանման Համաձայնագիրը մասամբ իրականություն դարձավ միայն Անգլիայի և Ֆրանսիայի համար՝ արաբական տարածքների մասով: Ինչ վերաբերվում է Արևմտյան Հայաստանին, ապա հեղափոխական ցնցումների մեջ գտնվող խորհրդայնացած Ռուսաստանն ինքն իրեն մեկուսացրեց պատերազմի արդյունքներից օգտվելու գործընթացից, իսկ տվյալ պայմաններում Ֆրանսիան բավարարվեց Կիլիկիայի ժամանակավոր կառավարումով: Այդուհանդերձ, տվյալ Համաձայնագրի գաղտնի պայմանավորվածությունները, ինչպես կտեսնենք, հետագայում բացասաբար անդրադարձան Արևմտյան Հայաստանի ճակատագրի վրա:

## 2.8. Օսմանյան կայսրության կողմից Հայերի իրավունքների խախտման փորձերը Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերով

1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում մի կողմից Քառյակ միության երկրների և մյուս կողմից Խորհրդային Ռուսաստանի միջև ստորագրվեց սեպարատ հաշտության պայմանագիրը: Պայմանագրի 4-րդ հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր դուրս բերել իր գործերը Արևմտյան Հայաստանի զրավված տարածքներից և ապահովել այդ տարածքների վերադարձը Օսմանյան կայսրությանը: Բացի այդ, ռուսական զորքերը պետք է դուրս բերվեին նաև Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից, սակայն դրանք չպիտի անցնեին Օսմանյան կայսրությանը, այլ հնարավորություն էր տրվելու այդ մարզերի բնակչու-

<sup>151</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 185.

<sup>152</sup> Международное право. Ведение военных действий..., с. 31.

<sup>153</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, с. 298.

յանը դրացի պետությունների, մանավանդ Օսմանյան կայսրության համաձայնությամբ հաստատել նոր կարգ»<sup>154</sup>: Բրեստի հաշտության պայմանագրին հարակից կնքված ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի 2-րդ հոդվածով վերականգնվում էին մինչև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը եղած սահմանները, իսկ նույն պայմանագրի 1-ին հոդվածի 5-րդ կետով Ռուսաստանը պարտավորվում էր զորացրել և արձակել թուրքահպատակներից և ռուսահպատակներից կազմված «հայկական չեթեները»<sup>155</sup>: Խոսքը հայկական կամավորական ջոկատների մասին էր, որոնք մեծ ծառայություններ էին մատուցել ռուսական Կովկասյան բանակին Առաջին աշխարհամարտի ընթացքում, նպաստելով նրա առաջխաղացմանը Օսմանյան կայսրության խորքերը:

Սակայն հետագայում Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև որոշ տարածայնություններ առաջացան այս պայմանագրերի դրույթների մեկնաբանության հետ կապված: Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը 1918 թ. սեպտեմբերի 20-ին թուրքական կողմին հղած բողոքի նոտայում նշում էր, որ հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածում «մանավանդ Օսմանյան կայսրության համաձայնությամբ հաստատել նոր կարգ» ասելով, խորհրդային կողմը նկատի է ունեցել, թե հիշյալ մարզերի ճակատագիրը, նրանց միջազգային իրավական դրույթունը պետք է որոշվեր այդ մարզերի բնակչության կամքի արտահայտությամբ<sup>156</sup>: Բնակչությունը, որի կամքի ազատ արտահայտությամբ պետք է սահմանվեր նոր կարգ, կանխապես ահաբեկված էր և դրված այնպիսի պայմանների մեջ, երբ երեք մարզերի բնակչության վերապահված իրավունքը դառնում էր բացահայտ ծաղրանք նրանց նկատմամբ: Թուրքական ռազմական ուժերը չհամակերպվելով պայմանագրային որոշումների հետ, խախտելով սահմանված ժամկետները և առանց ռուսական իշխանությունների համաձայնության ներխուժել էին Կարսի, Արդահանի և Բաթումի նահանգները, որտեղ ամենավայրագ ձևով դատաստան էին տեսել տեղի բնակչության հետ: Հիմք ընդունելով թուրքական կանոնավոր զորքերի կողմից Անդրկովկասի տարածքների զավթելու Բրեստի պայմանագրի դրույթների խախտումները, Չիչերինը հայտնում էր, որ խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը համարում էր վերացված<sup>157</sup>: Այսինքն,

կարող ենք արձանագրել, որ Բրեստի պայմանագիրը ստորագրող երկրներից մեկը՝ Խորհրդային Ռուսաստանը, դեռ մինչև Մուղղոսի պինդադարը արդեն իսկ չեղյալ էր համարել Բրեստի պայմանագրի հատկապես Օսմանյան կայսրությանը վերաբերող 4-րդ հոդվածի դրույթները:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումից հետո Անդրկովկասյան Հանրապետության կառավարությունը պատերազմող երկրների արտաքին գործերի նախարարներին բողոքի նոտա հղեց այդ պայմանագրի ստորագրման դեմ, որով չէին ընդունվում պայմանագրի Անդրկովկասի տարածքներին վերաբերող հոդվածները: Բողոքի նոտայում ասվում էր, որ ցանկացած պայմանագիր, որը վերաբերում է Անդրկովկասին և նրա սահմաններին, որը ստորագրվել է առանց նրա համաձայնության, չի կարող պարտադիր ուժ ունենալ<sup>158</sup>: Այս հայատարարության հիմքում ընկած էր այն հանգամանքը, որ դեռ 1917 թ. նոյեմբերի 28-ին ստեղծվել էր Անդրկովկասյան կոմիսարիատը և սկսվել էր Ռուսաստանից այս տարածքի ինքնորոշվելու գործընթացը: Դրա հիման վրա էլ Անդրկովկասյան Հանրապետությունը գտնում էր, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն առնվազն Բաթումի, Կարսի և Արդահանի Օսմանյան կայսրությանը զիջելու մասով անօրինական էր:

Բողոքի այս նոտայից հետո թուրքերը Խորհրդային Ռուսաստանից իրեն անկախ հռչակած Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետության հետ նախաձեռնեցին Տրապիզոնի բանակցությունները: Միամտություն կլինի կարծել, թե Տրապիզոնի բանակցություններում թուրքերը միայն նպատակ էին հետապնդում Անդրկովկասի Հանրապետությանը պարտադրել Բրեստի պայմանները, ակնհայտ է, որ այս բանակցություններում նրանք ունեին ավելի հեռահար նպատակներ և փորձում էին զարգացնել Բրեստում ձեռք բերված հաջողությունները և ինչու չէ, հասնել նոր տարածքային ձեռքբերումների: Պատահական չէր ուստի, որ Բրեստի պայմանները չընդունելու դեպքում նրանք սպառնում էին նաև խախտել 1877–1878 թթ. ռուս-թուրքական սահմանը և ներխուժել Անդրկովկասի խորքերը:

Այսպիսով Օսմանյան կայսրությունը բանակցությունների մեջ էր մտել Ռուսաստանի տարածքում ստեղծված, սակայն դեռևս միջազգայնորեն չճանաչված պետական կազմավորման հետ, ինչն իրավական առումով կարող էր դիտվել որպես ուտնձգություն Ռուսաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ, որի հետ Քառյակ դաշինքի տերությունները

<sup>154</sup> Հայաստանը ... փաստաթղթերում..., էջ 426:

<sup>155</sup> Նույն տեղում, էջ 432:

<sup>156</sup> Նույն տեղում, էջ 439:

<sup>157</sup> Նույն տեղում, էջ 440–441:

<sup>158</sup> Генощид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 205.

րը, այդ թվում՝ Օսմանյան կայսրությունը, արդեն իսկ կնքել էին Հաշտության պայմանագիր: Տրապիզոնի բանակցությունները Անդրկովկասի Հանրապետության Հետ սկսելով, թուրքական կողմը փաստորեն Հարցականի տակ էր դնում Բրեստի պայմանագրի օրինականությունը առկա իր և Ռուսաստանի միջև ձեռք բերված պայմանավորվածությունների մասով:

Անշուշտ, թուրքերը գիտակցում էին այս ամենի հնարավոր հետևանքները, ուստի բանակցությունների ընթացքում անընդհատ պնտում էին, թե Անդրկովկասը իրավաբանորեն շարունակում է մնալ Ռուսաստանի կազմում, ուստի պարտավոր է կատարել Բրեստի պայմանագրի դրույթները: Մյուս կողմից, թուրքերն ընդունում էին այն սկզբունքը, որ երկու պետությունների միջև ստորագրված պայմանագիրը չի կարող տարածվել երրորդ պետության վրա, սակայն այս կապակցությամբ նշում էին, որ այդ սկզբունքից օգտվելու համար Անդրկովկասյան Հանրապետությունը պետք է քայլեր ձեռնարկի մյուս պետությունների կողմից ճանաչվելու համար և որպես նման քայլ առաջարկվում էին դա անել Բրեստի պայմանագրի դրույթները կատարելու միջոցով: Սակայն ի պատասխան դրա անդրկովկասյան պատվիրակությունը միանգամայն իրավացիորեն հակադարձեց, թե բանակցությունները նախաձեռնվել են թուրքական կողմից, ինչով էլ վերջինս փաստացի ճանաչել է Անդրկովկասի Հանրապետության կարգավիճակը<sup>159</sup>:

Ի վերջո թուրքական արշավանքի ու սպառնալիքների հետևանքով 1918 թ. հունիսի 4-ին Հայաստանի և Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց Բաթումի պայմանագիրը, որով Հայաստանին 10 հազար քառ. կմ. կարածք թողնելու գնով թուրքերը ճանաչում էին վերջինիս ինքնիշխանությունը: Այսպիսով, Բրեստի պայմանագրով կատարված տարածքային զիջումներից բացի, Բաթումի պայմանագրով թուրքերը պարտադրում էին իրենց զիջել ընդհանուր առմամբ ևս 25 հազար քառ.կմ. տարածք:

Ակնհայտ է, որ տվյալ պայմանագիրը կնքվել է ուժի ազդեցության պայմաններում և խախտում է ինքնորոշման սկզբունքը: Պայմանագրի 14-րդ հոդվածում ընդգծված է, որ տվյալ պայմանագիրը պետք է վավերացվի և վավերացված օրինակները պետք է փոխանակվեն Կ. Պոլսում մեկ ամսվա ընթացքում կամ ավելի կարճ ժամանակամիջոցում: Այն (իմա՝ պայմանագիրը) գործողության մեջ պետք է դրվի այդ փոխանակ-

ման օրվանից<sup>160</sup>: Սակայն այն չի վավերացվել պայմանագիրը ստորագրող պետությունների կողմից, ուստի չի մտել օրինական ուժի մեջ:

Հատկանշական է, որ Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիան չճանաչեց Բաթումի պայմանագրի օրինականությունը, մտավախություն ունենալով, որ Ռուսաստանն իրեն կմեղադրի Բրեստի պայմանագիրը խախտելու մեջ, քանզի պատերազմի ավարտական փուլում նրան հարկավոր չէին նոր խնդիրներ Անդրկովկասում: Սակայն Գերմանիայի այս զգուշավորությունը դեր չկատարեց, քանզի 1918 թ. նոյեմբերի 5-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Հայտարարեց Գերմանիայի Հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին, իսկ նոյեմբերի 13-ին չեղյալ Հայտարարեց Բրեստ Լիտովսկի պայմանագիրը:

## 2.9. Հայկական Հարցում Օսմանյան կայսրության պարտավորությունները Մուղղոսի զինադադարով

1918 թ. Համաշխարհային պատերազմը մտել էր իր ավարտական փուլը: Աստիճանաբար պարզ էր դառնում, որ մոտ է Անտանտի դաշնակից երկրների Հաղթանակը Բալկանյան, Միջագետքի և Սիրիա-պաղեստինյան ճակատներում և ակնհայտ՝ Քառյակ միության երկրների պարտությունը: 1918 թ. վերջին Օսմանյան կայսրությունը ստիպված եղավ Հաշտություն խնդրել դաշնակից պետություններից: Թուրքական ռազմաճակատում ունենալով զգալի զինված ուժեր և հետևելով իր երկրի սեփական շահերին Փոքր Ասիայում՝ Անգլիան որոշեց նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը:

Անտանտի ու Օսմանյան կայսրության միջև զինադադարը ստորագրվեց 1918 թ. հոկտեմբերի 30-ին, Լեմնոս կղզու Մուղղոս նավահանգստում կանգնած անգլիական «Ազամեմոն» հածանավի վրա: Զինադադարի պայմանագրի որոշ դրույթներ ուղղակիորեն և անուղղակիորեն առնչվում էին հայության իրավունքների պաշտպանության հարցերին:

Սկզբունքորեն կարևոր էր, որ զինադադարի 4-րդ հոդվածում դաշնակիցների բոլոր ռազմագերիների ազատ արձակումից զատ, հատուկ նշվում էր, որ բոլոր հայ գերիներն ու բանտարկյալները նույնպես

<sup>159</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 207.

<sup>160</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 537:

պետք է համաքվեին Կ.Պոլսում և առանց որևէ պայմանների հանձնվեն դաշնակիցներին<sup>161</sup>:

Փաստաթղթի 11-րդ հոդվածի համաձայն թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Անդրկովկասից, ընդ որում, մնացած զորքերը նույնպես պետք է հեռացվեին, եթե տեղերում իրադրությունը ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեին նման պահանջ<sup>162</sup>: Ելնելով այս հոդվածի պահանջից, 1918 թ. դեկտեմբերի սկզբին թուրքական զորքերը հեռացան Անդրկովկասից՝ բացառությամբ Կարսի շրջանից, որը նրանք ազատեցին 1919 թ. ապրիլին<sup>163</sup>: Արդյունքում վերականգնվեց 1914 թ. սահմանը և Հայաստանի Հանրապետության տարածքը կազմեց 55 հազար քառ.կմ<sup>164</sup>:

16-րդ հոդվածով պահանջվում էր թուրքական զորքերի դուրսբերումը Կիլիկիայից, իսկ 24-րդ հոդվածում շեշտվում էր, որ հայկական վիլայեթներից մեկում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունք<sup>165</sup>: Թվում էր, թե այս հոդվածը փայլուն իրավական հիմք էր արևմտահայերի իրավունքների պաշտպանության համար, սակայն մյուս կողմից Մուղրոսի զինադադարի 5-րդ հոդվածով հայկական տարածքներում «կարգուկանոն պահպանելու» պատրվակով դրանք թողնվում էին թուրքական չզորացրված զորքերի վերահսկողության տակ, իսկ այդ նահանգների վերջնական ճակատագիրը պետք է լուծվեր իսաղաղության կոնֆերանսում<sup>166</sup>: Այս դրույթն ուղղակիորեն հակասում է 24-րդ հոդվածին, որը կիրառման առումով իմաստազրկվում էր, քանի որ այդպիսով չեզոքացվում էր Արևմտյան Հայաստանի շրջաններում դեռևս ողջ մնացած հայության չնչին մնացորդներին պաշտպանելու և փրկելու նվազագույն հնարավորությունները: Այսպիսով 24-րդ հոդվածը ստանում էր ավելի շուտ սիմվոլիկ նշանակություն, ծառայում էր որպես այդ տարածքներում հայերի զանգվածային սպանությունների կատարման համար թուրքերի պատասխանատվության մասին հիշեցում:

Ամենակարևորը թերևս այն էր, որ Մուղրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչում իր պարտությունը Առաջին աշխարհամարտում և տվյալ փաստաթղթով վերացվում էին այն պայմանավոր-

<sup>161</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 538:

<sup>162</sup> Նույն տեղում:

<sup>163</sup> Նույն տեղում, էջ 771:

<sup>164</sup> Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Եր., 2006, էջ 21:

<sup>165</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 539:

<sup>166</sup> Նույն տեղում, էջ 538:

վածությունները, որոնք տեղ էին գտել նախ Բրեստի, իսկ հետո էլ նաև Բաթումի պայմանագրերում:

Եթե Անտանտի տերությունները Հայոց ցեղասպանության ընթացքում իրենց անգործությունը կարող էին ինչ-որ ձևով արդարացնել նրանով, որ անկարող էին միջամտել և կանխել հայերի զանգվածային կոտորածները, քանզի անուժ էին թելադրելու մի երկրի, որի դեմ պատերազմի մեջ էին, ապա պատերազմի հաղթական ավարտից հետո, երբ արդեն իրենք էին դրություն տերը, նրանց անտարբերությունը արևմտահայության օրինական իրավունքների պաշտպանության հարցում այլևս ոչ մի արդարացում չէր կարող ունենալ:

## 2.10. Հայերի ցեղասպանության համար Օսմանյան կայսրության պատասխանատվությունը Սևրի պայմանագրով

Պետք է նշել, որ թե Սևրի պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի ընդունումից անմիջապես հետո, և թե հետագա տասնամյակների ընթացքում՝ ընդհուպ մինչև մեր օրերը, Հայ պատմագիտական ու հասարակական-քաղաքական միտքը լուրջ ուշադրություն է արժանացրել դրանք: Բնականաբար, այս փաստաթղթերին տարբեր ժամանակներում, ելնելով քաղաքական իրադրությունից ու գաղափարախոսական դոգմաներից, տրվել են հակասական ու իրարամերժ գնահատականներ: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ միայն վերջերս է տրվում գույժ փաստաթղթերի միջազգային-իրավական գնահատականը, մինչդեռ, մեր խորին համոզմամբ, դրանց իրական արժեքը կայանում է հենց վերջինիս մեջ և ուրախալի է, որ այդ բացը արդեն սկսել է լրացվել:

Միևնույն ժամանակ նշենք, որ այս հարցերին անընդհատ ուշադրություն են դարձրել նաև թուրքերը, փորձելով ներկայացնել Սևրի պայմանագիրը և Վիլսոնի իրավարար վճիռը չեզոքացնող փաստարկներ:

Սևրի պայմանագիրը, լինելով վերջինը Առաջին աշխարհամարտում հաղթանակած ու պարտված տերությունների միջև կնքված պայմանագրերի շարքում, բնականաբար, իր մեջ ներառել է այն բոլոր դրական ու առաջադիմական դրույթները, որոնք մինչ այդ տեղ էին գտել Գերմանիայի հետ կնքված Վերսալի, Ավստրիայի հետ՝ Սեն-ժերմենի, Հունգարիայի հետ՝ Տրիանոնի և Բուլղարիայի հետ՝ Նեյի պայմանագրերում: Այս իմաստով Սևրի պայմանագիրը պատերազմական հանցագոր-

ծուխյունների համար պատասխանատվություն սահմանելու առումով իր մեջ ներառեց նախորդ պայմանագրերի կարևորագույն հոդվածները:

Հայ պատմագիտական միտքը Սևրի պայմանագիրը հիմնականում դիտարկել է Հայաստանին ուղղակիորեն վերաբերող 88–93-րդ հոդվածների շրջանակներում, մինչդեռ այդ պայմանագրում կան նաև Հայաստանին ու Հայ ժողովրդին անուղղակիորեն վերաբերող, բայց չափազանց կարևոր հոդվածներ, ուստի, մեր, կարծիքով, հարկավոր է այդ պայմանագիրը դիտարկել ամբողջության մեջ:

Հայաստանին անմիջականորեն վերաբերող հոդվածների առնչությամբ նպատակահարմար ենք համարում առանձնացնել ականավոր պատմաբան և այդ իրադարձությունների ժամանակակից Նիկողայոս Ադոնցի հոդվածում տեղ գտած արժեքավոր դիտարկումներն ու մեկնաբանությունները, որոնք թեև հրապարակվել են Լոնդոնում 1920 թ. նոյեմբերի 20-ին, սակայն շատ արժեքավոր են նաև մեր օրերում: Ադոնցը դրական էր համարում, որ պայմանագրի 88-րդ հոդվածով փաստացի ճանաչվում էր Հայաստանի անկախությունը, իսկ 90-րդ հոդվածով հաստեղծվում էին ապագա Հայ-թուրքական սահմանի սահմանագծման շրջանակները, որը վստահվել էր ԱՄՆ-ի նախագահին, սակայն, ըստ պատմաբանի, գերադասելի կլիներ, որ հատկորեն մատնանշվեր, որ ամենից առաջ թուրքիան պետք է ճանաչի խնդրո առարկա հայկական վիլայեթների գիջումը<sup>167</sup>: Անշուշտ, Ադոնցը տեղյակ էր, որ Սևրի պայմանագրի 90-րդ հոդվածով թուրքիան պարտավորվել էր ճանաչել ապագա Հայ-թուրքական սահմանը և «իրավարար որոշման օրից հրաժարվելու էր հանձնված տարածքների նկատմամբ իր բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից»<sup>168</sup>: Սակայն, պայմանագրի տեքստից ելնելով, Ադոնցն, ըստ էության, ընդգծում էր Սևրի պայմանագրի ամենակարևոր թերություններից մեկն այն էր, որ չկար երաշխիքային հոդված, որով այդ փաստաթուղթը ստորագրող հաղթանակած տերություններն իրենց վրա պարտավորություն կվերցնեին ապահովելու հայկական վիլայեթների անարգել փոխանցումը Հայաստանի Հանրապետությանը:

Մեծ տերությունները, թերևս, նման երաշխիք էին համարում այն, որ դեռ 1920 թ. ապրիլի 26-ին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը ԱՄՆ-ի նախագահին Հայ-թուրքական սահմանի սահմանագծման հարցում իրավարար դառնալու առաջարկը զուգորդել էր Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկով: Զույգ

առաջարկների տրամաբանությունն այն էր, որ այն երկրի նախագահը, որն իր վրա է վերցնում Հայ-թուրքական սահմանի հաստեղծման որոշումը, նա էլ պետք է ապահովի Հայաստանի անվտանգությունը՝ միացված տարածքներով հանդերձ, ինչը դրսևորվելու էր մանդատի ստանձման ճանապարհով: Այսպիսով Սան-Ռեմոյի կոնֆերանսում Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը փորձում էր ազատվել այս տարածքի անվտանգությունն ապահովելու պարտավորությունից, այդ խնդիրը փոխանցելով ԱՄՆ-ին: Այս առաջարկը, սակայն, արվում էր այն ժամանակ, երբ արդեն որոշակիորեն հայտնի էր ԱՄՆ-ի վերաբերմունքը տվյալ հարցի նկատմամբ:

Դեռևս 1919 թ. աշնանը ԱՄՆ նախագահի հանձնարարությամբ գեներալ Հարրոդի առաքելությունը, տեղում ուսումնասիրելով իրավիճակը և բանակցելով անգամ քեմալականների հետ, ԱՄՆ կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու հարցում եկել էր այն եզրակացության, որ միայն Հայաստանի մանդատ ստանձնելը չափազանց ծախսատար է: Արդյունքում հանգում էին այն եզրահանգմանը, որ եթե ԱՄՆ, այնուամենայնիվ, որոշել է այդ տարածքում ստանձնել կառավարման մանդատ, ապա այն պետք է տարածվի ամբողջ թուրքիայի, Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի վրա<sup>169</sup>: Անշուշտ, ամերիկյան այս տեսակետը տրամադորեն հակասում էր եվրոպական տերությունների շահերին, նրանք պարզապես չէին կարող թույլ տալ ԱՄՆ-ի այդչափ հզորացումը տարածաշրջանում: Ուստի այդ առաջարկն անելիս Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդն արդեն նախապես գիտեր, որ ԱՄՆ-ը միայն Հայաստանի մանդատը չի ստանձնելու:

Եվ իսկապես, 1920 հունիսի 1-ին ԱՄՆ-ի Սենատը 52 «դեմ», 23 «կողմ» ձայների հարաբերակցությամբ մերժեց Հայաստանի մանդատի ստանձնումը, որից հետո Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը պարտավոր էր մտածել նոր երաշխիքի մասին, ինչը կարող էր դրսևորվել Սևրի պայմանագրում հատուկ երաշխիքային հոդվածի կամ հոդվածների նախատեսումով: Ոչ ոք և ոչինչ չէր կարող խանգարել նրանց նման հոդված կամ հոդվածներ գետնով պայմանագրի մեջ, խնդիրը պարզապես ցանկության մեջ էր, որը նրանք չցուցաբերեցին: Այս հանգամանքն էլ ավելի կարևոր էր, եթե հաշվի առնենք եվրոպական դիվանագիտության ավանդական դարձած խարդավանքներն ու թուրքիայում ստեղծված նոր իրավիճակը, երբ փաստացի իշխանությունը անցնում էր

<sup>167</sup> Արմեն Ե., Հայկական հարցի լուծման շուրջ, Եր., 1989, էջ 16:

<sup>168</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 676:

<sup>169</sup> Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), Ер., 1995. с. 10–11.

քեմալականների ձեռքը, որոնք հրաժարվում էին ճանաչել Թուրքիայի օրինական իշխանության կողմից ստորագրած Աևրի պայմանագիրը և հատկապես տարածքային զիջումները:

Վերսալյան համակարգն ամբողջացրած Աևրի հաշտության պայմանագիրը՝ կնքված 1920 թ. օգոստոսի 10-ին միանգամայն օրինական էր, քանի որ կնքող կողմերն իրենց երկրների օրինական և ճանաչված իշխանություններն էին: Պայմանագրի շուրջ ընթացել են երկարատև բանակցություններ և վերջապես 1920 թ. հուլիսի 22-ին Կ. Պոլսում սուլթանի խորհուրդը լրիվ կազմով քվեարկեց խաղաղության պայմանագիրը ստորագրելու օգտին և օգոստոսի 10-ին Թուրքիան պաշտոնապես ստորագրեց Աևրի պայմանագիրը<sup>170</sup>: Այսինքն, թեև կայսրության տարածքը գրեթե ամբողջությամբ վերահսկվում էր քեմալականների կողմից, բայց, այդուհանդերձ, պայմանագիրը Թուրքական կողմից ստորագրվեց միջազգային հանրության կողմից ճանաչված սուլթանի օրինական իշխանությունը ներկայացնող պատվիրակության կողմից:

Պայմանագիրը ստորագրել են մի կողմից Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան, որոնք պայմանագրում նշված են որպես Գլխավոր դաշնակից տերություններ, Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Հեջասը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա - Խորվաթա - Սլովենական պետությունը և Չեխոսլովակիան, որոնք վերոհիշյալ Գլխավոր տերությունների հետ կազմավորում էին դաշնակից տերություններ, և մյուս կողմից՝ Թուրքիան:

Աևրի պայմանագիրը բաղկացած է 13 մասից և 344 հոդվածներից: Պայմանագրում Հայաստանին անմիջականորեն վերաբերող 88-ից 93-րդ հոդվածներից բացի առկա են պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության տարածքում կատարված հանցագործությունների համար Թուրքիայի նկատմամբ պատժամիջոցներ սահմանող 226-րդ, 228-րդ և 230-րդ հոդվածներ:

Պետք է նշել, որ պատժամիջոցների հոդվածների ամրագրումը ոչ միայն Աևրի, այլ նաև դրան նախորդած Վերսալի, Սեն-ժերմենի, Տրիանոնի, Նեյի պայմանագրերում պայմանավորված էր Փարիզի կոնֆերանսում դեռ 1919 թ. հունվարի 25-ից կազմավորված «Պատերազմ սանձազերծելու պատասխանատվության և պատիժների սահմանման» հանձնաժողովի գործունեությամբ: Հանձնաժողովը կազմված էր տարբեր երկրներ ներկայացնող 15 ակնավոր իրավաբան-միջազգայնագետներից, որոնք համաշխարհային պատերազմի տարիներին կատարված հան-

ցագործություններից առանձնացրեցին ոչ միայն Հաագայի կոնվենցիան խախտող հանցագործություններ, այլ, բացի դրանցից, մասնավորապես Օսմանյան կայսրության հետ կապված ընդգծեցին սեփական բնակչության նկատմամբ իրականացված հանցագործությունը՝ այլ ազգային խմբին պատկանող մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը: Այս առիթով 1919 թ. մարտի 14-ին հունական պատվիրակությունը հանձնաժողովի իր ներկայացուցիչ Նիկոլաս Պոլիտիսի միջոցով հանձնաժողովին ներկայացրեց հայկական հուշագիրը<sup>171</sup>:

Աևրի պայմանագրի 226-րդ հոդվածով Օսմանյան կառավարությունը ճանաչում էր դաշնակից պետությունների ազատությունը՝ դատական գործ հարուցելու իրենց ռազմական դատարանների առջև պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող արարքներ գործած անձանց դեմ: Օրենքներով նախատեսված պատիժներ պետք է կիրառվեին մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ՝ պետք է անկախ բոլոր դատավարություններից կամ դատական գործերից, որոնք հարուցված էին Թուրքիայի կամ նրա դաշնակիցների դատական ատյանների կողմից<sup>172</sup>:

Սա նշանակում էր, որ դաշնակից տերություններն իրենց իրավունք էին վերապահում դատել պատերազմական հանցագործներին, անկախ այն բանից, թե Թուրքիան կամ նրա դաշնակից Գերմանիան և Ավստրո-Հունգարիան կդատեն իրենց դատարաններում այդ հանցագործներին թե ոչ: Այս հոդվածից երևում է, որ Անտանտի տերությունները թերահավատորեն էին վերաբերվում նախկին հակառակորդների դատական համակարգին, միանգամայն իրավացիորեն կասկածելով, որ նման դատավարությունները վեր են ածվելու իսկական ֆարսի: Այս հոդվածի տրամաբանությունը թերևս բխում էր երիտթուրք պարագլուխների դատավարությունից, որոնցից հիմնականներին հաջողվեց խուսափել «Թուրքական արդարադատությունից»:

Այնուհետև հոդված 226-ում խոսվում էր պատերազմական հանցագործներին հանձնելու մասին. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հանձնել դաշնակից տերություններին, կամ նրանցից որևէ մեկին, որը կղիմի նրան այդ պահանջով, բոլոր այն անձանց, ովքեր կմեղադրվեն պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող որևէ արարք գործելու մեջ, կմատնանշվեն անվանաբար, թե ըստ աստի-

<sup>170</sup> Барсегов Ю., Геноцид армян-преступление по международному праву, с. 184.

<sup>171</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 258.

<sup>172</sup> Барсегов Ю., Геноцид армян-преступление по международному праву, с. 184.



ճանի, կատարած պարտականության կամ զբաղեցրած պաշտոնի, որոնք շնորհվել են այդ անձանց օսմանյան իշխանությունների կողմից»<sup>173</sup>:

Սակայն Հանուն ճշմարտության պետք է նշել, որ դաշնակից տեղությունները Հետևողական չգտնվեցին այս հոդվածի դրույթները կատարելու գործում:

228-րդ հոդվածով Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր մեղաազրվող փաստերին լրիվ ծանոթանալու նպատակով դատաքննությանն ապահովել ցանկացած բնույթի փաստաթղթերով և տեղեկություններով՝ մեղավորներին որոնելու և պատասխանատվությունների չափը ճշգրիտ որոշելու համար<sup>174</sup>:

Սևրի դաշնագիրն այսպիսով իրավական հիմք էր ստեղծում օսմանյան պետության կողմից իր հպատակ այլ քաղաքացիների դեմ գործած ոճիրների դատական հետապնդման համար: Սակայն այն շարադրվել է այն ժամանակ, երբ 1918–1919 թթ., անգլիացիները ձախողվեցին օսմանյան կառավարությունից այնպիսի փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու հարցում, որոնք նրանց հնարավորություն կտային դատական գործեր հարուցել ենթադրյալ մարդասպանների դեմ<sup>175</sup>:

Ակնհայտ է, որ Սևրի պայմանագրի 226 և 228 հոդվածները բխում են Հաագայի 1899 թ և 1907 թ. խմբագրված «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների դրույթներից և կրկնում են պատերազմական հանցագործներին պատժելու մասին Վերսալի և այլ պայմանագրերում տեղ գտած հոդվածները:

Ստեղծված իրավիճակում թուրքիան շտապ սկսեց երիտթուրք պարագլուխների սեփական դատավարությունը, քանզի մտավախություն ուներ, որ հետագայում կարող էր ստեղծվել միջազգային տրիբունալ, որի մասին շատ էր խոսվում պատերազմի ավարտից հետո, որը պետք է դատեր պատերազմական հանցագործներին: Այդ տրիբունալում ակնհայտ կդառնար Օսմանյան կայսրության դերակատարումը Հայերի զանգվածային բնաջնջման գործում, դրանից բխող հետևանքներով թուրքական պետության համար:

Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածի համաձայն թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տեղությունների իրավունքը քրեական պատասխանատվության կանչել ոչ միայն այն անձանց, ովքեր

մեղադրվում էին պատերազմի օրենքների և սովորույթների դեմ կատարված հանցագործությունների մեջ, այլ և պարտավորվում էր նաև Հանձնել դաշնակից տեղություններին նրանց կողմից կոտորածների մեջ մեղադրվող անձանց, ովքեր պատերազմի ընթացքում կատարում էին հանցագործություններ այն տարածքում, որը 1914 թ. օգոստոսի 1-ի դրությամբ Հանդիսանում էր Օսմանյան կայսրության տարածքի մի մասը<sup>176</sup>:

Հատկանշական է, որ 1948 թ. մայիսի 28-ի գեկույցում ՄԱԿ-ի «Պատերազմական հանցագործությունների» հանձնաժողովը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Հատկապես Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածին և մեկնաբանել է այնպես, որ դրանով Հաղթանակած տեղությունները նպատակ էին հետապնդում ի կատար ածել 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տեղությունների Համատեղ Հուշակագրի պարտավորությունն առ այն, որ պատասխանատվության կանչվեն մեղավորները մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար, այսինքն՝ այն հանցագործությունների, որոնք թուրքական տարածքում կատարվում էին օսմանյան հպատակություն ունեցող ազգությամբ ոչ թուրք անձանց, այսինքն՝ Հայ կամ հույն հպատակների նկատմամբ, ինչը հանձնաժողովի կարծիքով նախադեպ է ծառայել Նյու-Երբերգի և Տոկիոյի տրիբունալների կանոնադրությունների համապատասխանաբար 6c և 5c հոդվածների համար, այն է՝ մարդկության դեմ կատարված հանցագործություններ<sup>177</sup>:

Այսպիսով, ի տարբերություն 226 և 228 հոդվածների 230 հոդվածը վերաբերում էր ոչ թե պատերազմական հանցագործություններին, այլ 1915 թ. մայիսի 24-ի դաշնակից տեղությունների համատեղ Հայտարարության հետևանքն էր, քանզի դաշնակիցները դեռ այն ժամանակ խոստացել էին պատասխանատվության կանչել Հայերի զանգվածային սպանությունների մեջ մեղադրվողներին:

230-րդ հոդվածի այս դրույթը չափազանց կարևոր էր նաև այն իմաստով, որ թուրքիան չէր կարող խուսափել Միջազգային անապատներում Հայերի զանգվածային կոտորածներում մեղադրվող անձանց հանձնելուց այն պատճառաբանությամբ, թե չի կարող հանձնել այն անձանց, որոնք հանցագործություններ են կատարել այն տարածքներում, որոնք այլևս իրեն չեն պատկանում:

<sup>173</sup> Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային ասպանների առջև, էջ 10:

<sup>174</sup> Նույն տեղում:

<sup>175</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>176</sup> Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում..., էջ 11:

<sup>177</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 651.

Նույն Հողվածով դաշնակից տերութիւններն իրենց իրավունք էին վերապահում նշել այն դատարանը, որը պետք է դատեր մեղադրվող անձանց, իսկ օսմանյան կառավարութիւնը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը: Ընդ որում, նշվում էր միջազգային Հարաբերութիւնների պատմութեան մեջ առաջին անգամ հատուկ միջազգային քրեական դատարանի ստեղծման Հնարավորութեան մասին: Այն դեպքում, եթե Ազգերի լիգան պահանջվող ժամանակ կստեղծեր նշված գազանութիւնները դատապարտող իրավասու դատարան, դաշնակից տերութիւնները նշված մեղադրյալներին կփոխանցէին այդ դատարանին, իսկ թուրքական կառավարութիւնը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը<sup>178</sup>:

Նշված դրույթները հետագայում իրենց արտացոլումը գտան ՄԱԿի «Ցեղասպանութեան կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի Հողվածներում՝ կապված այս ծանր Հանցագործութեան մեջ մեղադրվող անձանց Հանձնելու և միջազգային տրիբունալ ստեղծելու գաղափարների հետ: Այս նկատառումներից պարզորոշ նկատվում է, որ միջազգային սովորութեան իրավունքի նորմերն աստիճանաբար արտացոլվում են նաև միջազգային պայմանագրերում և միջազգային սովորութեան նորմերից գատ դառնում նաև միջազգային պայմանագրային իրավունքի նորմեր:

Սևրի պայմանագրի առաջադիմական բնույթը դրսևորվեց նաև նրանով, որ վերջինիս Հողվածներով սահմանվում էր նաև նյութական պատասխանատվութիւն ցեղասպանութիւն իրականացնելու ճանապարհով Օսմանյան կայսրութեան հայ ազգաբնակչութեան ունեզրկման համար: Այսպես՝ Սևրի պայմանագրի 144 Հողվածը Թուրքիային պարտավորեցնում է ոչ միայն ուժը կորցրած ճանաչել Օսմանյան կառավարութեան «Լքյալ գույքի» մասին 1915 թվականի օրենքն ու դրա լրացումները, որոնցով օրինականացվել էր ցեղասպանութեան ենթարկված արևմտահայութեան զանգվածային ունեզրկման քաղաքականութիւնը, այլև արգելում է նման օրենքների ընդունումն ապագայում<sup>179</sup>: Այս Հողվածի նշանակութիւնը չափազանց կարևոր է ցեղասպանութեան զրհ դարձած Հայ ազգաբնակչութեան իրավունքներն իր իսկ սեփականութեան նկատմամբ վերականգնելու տեսակետից: Տվյալ Հողվածում սահմանվում էին նաև կոնկրետ մեխանիզմներ, որոնցով վերականգնվելու

էին արևմտահայութեան սեփականութեան իրավունքները իրենց ունեցվածքի նկատմամբ:

Հողվածի համաձայն թուրքական կառավարութիւնը պարտավորվում էր հնարավորութեան սահմաններում նպաստել, որպեսզի կայսրութեան այլազգի այն քաղաքացիները, որոնք աքսորվել կամ 1914 թ. Հունվարի 1-ից հետո գազանութիւնների Հանդեպ ունեցած վախից դրված գողթել էին, վերադառնային իրենց բնակավայրեր<sup>180</sup>:

Օսմանյան կառավարութիւնն ընդունում էր, որ կայսրութեան հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գույքերը Հայտնաբերվելու դեպքում, ում ձեռքում էլ դրանք լինեն, պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն օրինական տերերին՝ արևմտահայերին: Ընդ որում, վերադարձվող գույքերը պետք է ազատված լինեն որևէ պարտքերից, որոնցով նրանք կարող էին ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից և վերադարձվելու էին առանց նոր սեփականատերերին և օգտագործողներին որևէ հատուցման<sup>181</sup>:

Բացի արևմտահայութեան սեփականութեան իրավունքների վերականգնման դրույթներ սահմանելուց, Հողվածը տվյալ գործընթացը վերահսկող մեխանիզմներ էլ էր նախատեսում: Օսմանյան կառավարութիւնը համաձայնում էր, որ Ազգերի լիգայի խորհրդի կողմից ստեղծվեն միջնորդ Հանձնաժողովներ՝ թուրքական կառավարութեան և տուժած համայնքի մեկական ներկայացուցիչների և Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակված նախագահի կազմով, սեփականութեան հետ կապված հարցերը և վեճերը քննելու և լուծելու համար: Այդ Հանձնաժողովները օժտված են լինելու լայն լիազորութիւններով, մասնավորապես իրավասու են հրամաններ տալ

ա/ գույքի վերանորոգման և վերականգնողական աշխատանքների կատարելու հետ կապված;

բ/ վայրագութիւնների կամ տեղահանութիւնների մեղավորներին մեկուսացնելու և այդ անձանց գույքի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու հարցերում;

գ/ 1914 թ. Հունվարի 1-ից հետո տուժած համայնքի մահացած կամ անհետացած անդամներին պատկանող գույքերի և ամեն տեսակ սեփականութեան վերադարձնելու հարցերով;

<sup>178</sup> Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 32–33.

<sup>179</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 678:

<sup>180</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 679:

<sup>181</sup> Նույն տեղում:

դ./ 1914 թ. հունվարի 1-ից հետո անշարժ գույքի վաճառման կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքների հաստատման ակտերի չեղյալ հայտարարելու հարցերով:

Ընդ որում, այն դեպքերում, երբ հանձնաժողովը չեղյալ կհամարի նոր սեփականատերերի իրավունքները գույքի նկատմամբ, այդ նոր տերերին փոխհատուցելու պարտականությունը պետք է դրվի թուրքական կառավարության վրա և դա առիթ չի կարող հանդիսանալ այդ գույքի օրինական տերերի իրավունքների վերականգնումը ուղացնելու համար: Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել հանձնաժողովի որոշումների կատարմանը, իսկ հանձնաժողովի որոշումները անբեկանելի են և դրանց չի կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների կողմից ընդունված ոչ մի որոշում<sup>182</sup>:

Այս հոդվածով փաստորեն հայ բնակչության կրած նյութական կորուստների վերականգնման և դրանց հետևանքների հաղթահարման առումով բավականին իրատեսական և արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ էին առաջ քաշվում: Այս ամենը չի կորցրել իր արդիականությունը և լիարժեք կարող է դրվել Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների վերացման հիմքում:

Սևրի պայմանագրի 144 հոդվածին լրացնելու էր գալիս 288-րդ հոդվածը, որով նախատեսվում էր, որ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակությունը *ipso facto* ձեռք բերած նախկին թուրքահպատակների թուրքիայում մնացած ունեցվածքը, իրավունքներն ու շահերը ներկա կամ մեկ այլ պայմանագրով թուրքիայից անջատված տարածքներում պետք է վերադարձվեն նրանց իրենց ներկա վիճակով<sup>183</sup>: Սա նշանակում էր, որ թուրքիայի կողմից արևմտահայերին հպատակությունից զրկելը, կամ նրանց կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը թուրքական իշխանությունների համար չէր կարող հիմք հանդիսանալ նրանց ունեցվածքից, իրավունքներից կամ շահերից զրկելու համար:

Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման առումով Հենց Սևրի պայմանագրում առաջին անգամ միջազգային մակարդակով բարձրագույն և անբեկան հարցը, նախատեսվում էր ստեղծել առանձին պետություն՝ Քրդստան: Այս իմաստով Ադոնցը հիմնավորված ձևով մտա-

հոգվում էր այն փաստով, որ Դերսիմի և Խարբերդի սանջակները, որոնք իրականում և՛ աշխարհագրական, և՛ էթնիկ առումներով կազմում էին Հայկական բարձրավանդակի անբաժան մասը, վերապահվում էին Քրդստանին<sup>184</sup>: Այսպիսով, ապագա քրդական պետությունը ստեղծվում էր մասամբ նաև Հայկական տարածքների հաշվին: Նման որոշման հիմք Ադոնցը տեսնում էր դեռևս պատերազմի ընթացքում 1916 թ. կնքված Ֆրանս-ուսական գաղտնի համաձայնագիրը, որին նախորդել էր Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական գաղտնի համաձայնությունը, որոնցով Արևմտյան Հայաստանը մասնատվում էր ճիշտ և ճիշտ Խարբերդի գծի երկայնքով<sup>185</sup>: Տվյալ պարագայում այդ գաղտնի համաձայնագրի կողմ Ռուսաստանի՝ իբրև հակակշիռ պետության, այս գործընթացից ինքնամեկուսացման պայմաններում Հայկական պատվիրակություններին չէր մնում ոչինչ, քան համակերպվել ոչ միայն այդ հատվածի, այլև Կիլիկիայի կորստի հետ, միխթարվելով նրանով, որ պատմական Հայրենիքի մի գզալի հատված միացվում էր Հայաստանին:

Ի դեպ, քրդական հարցը, Քրդստանի ստեղծումը և Հայ-քրդական հարաբերությունների հետ կապված խնդիրները խիստ արդիական են նաև մեր օրերում: Ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների պայմաններում, երբ կրկին ազդեցիկ տերությունները սկսում են օգտագործել քրդական խաղաքարը, բոլորը հասկանում են, որ միջազգային իրավունքի տեսակետից Սևրի պայմանագիրը միակ փաստաթուղթն է, որը պետականության իրավական հիմքեր է նախատեսել քրդերի համար: Այս տեսակետից նույնպես հնարավոր է համարվում Սևրի պայմանագրի վերականգնանացումը, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է Հայ-քրդական հարաբերությունների և, մասնավորապես, տարածքների ու սահմանների հստակեցման հարցերի քննարկմանը: Անշուշտ, կարելի է միանալ Ադոնցի վրդովմունքին, որ որոշ Հայկական տարածքներ Սևրի պայմանագրով նախատեսվում էր հանձնել քրդերին, որոնք անմիջական մասնակցություն էին ունեցել Հայոց ցեղասպանության իրականացման գործում, սակայն կարծում ենք, որ հնարավոր բարդություններից խուսափելու նպատակով միակ խելամուտ ելքը Հայ-քրդական հարաբերությունների բոլոր հիմնախնդիրները Սևրի պայմանագրերի շրջանակներում կարգավորելն է:

<sup>182</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 680:

<sup>183</sup> Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, p. 66. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>

<sup>184</sup> Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, էջ 19:

<sup>185</sup> Նույն տեղում:

Սևրի պայմանագիրը ստորագրվեց այն ժամանակ, երբ օսմանյան կառավարությունը վերջին շնչում էր: Հատկանշական փաստ է, որ թուրքական պետությունը սկսել էր Սևրի պայմանագրի վավերացման գործընթացը: 1920 թ. դեկտեմբերի 23-ին թուրքական խորհրդարանի վերին պալատը՝ Սենատը, իսկ 1921 թ. Հունվարի 30-ին ստորին պալատը Համաձայնություն տվեցին Սևրի պայմանագիրը վավերացնելուն<sup>186</sup>: Սակայն արտաքին ու ներքին գործոնները Հնարավորություն չտվեցին, որ այդ վավերացման սկսված գործընթացն ավարտին հասցվի և Օսմանյան կայսրությունը վավերացման փաստաթղթերը փոխանցի հաղթանակած տերություններին, ինչից հետո Սևրը կհամարվեր արդեն դե-յուրե ուժի մեջ մտած փաստաթուղթ: Մի կողմից գլուխ բարձրացրած քեմալականությունը, վերածվելով քաղաքական և ռազմական գործոնի, աստիճանաբար իր ձեռքն էր վերցնում երկրի իշխանությունը, մյուս կողմից քեմալա-բոլշևիկյան մերձեցումը և քեմալականներին սիրաշահելու հարցում խորհրդային Ռուսաստանի հետ մրցակցության մեջ մտած եվրոպական տերությունների գործունեությունը, ուղղակի կանխեցին Հենց թուրքական պետության կողմից սկիզբ դրված Սևրի պայմանագրի վավերացման գործընթացը:

Սակայն, այդուհանդերձ, դաշնագիրը չվավերացնելը ամբողջությամբ գերծ չի պահում ստորագրողներին իրենց ստանձնած իրավական պարտավորություններից, և միայն չափազանց լուրջ հանգամանքներն ու հիմնավորումները կարող են արդարացնել պայմանագիրը ստորագրած պետության այն վավերացնելու հրաժարումը, ինչը կարող է վնաս հասցնել պայմանագրի մյուս կողմերի իրավունքներին<sup>187</sup>: Տվյալ դեպքում Սևրի պայմանագրի չվավերացնելը վնաս հասցրեց պայմանագրի կողմ հանդիսացող Հայաստանի իրավունքներին:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 14-րդ հոդվածը հստակեցնում է, թե որ դեպքերում է պետության համար պայմանագրի պարտադիր լինելն արտահայտվում վավերացմամբ: Տվյալ հոդվածի 4-րդ կետի համաձայն պետության համար պայմանագրի պարտադիր լինելն արտահայտվում է վավերացմամբ, եթե պայմանագիրը ստորագրելու պետության մտադրությունը բխում է նրա ներկայացուցչի իրավասությունից կամ արտահայտվել է քանակցությունների ժամանակ<sup>188</sup>: Այսինքն, վավերացման մերժումը

կարելի է, օրինակ, հիմնավորել նրանով, որ պայմանագիրը ստորագրող որևէ պետության ներկայացուցիչ գերազանցել է իր իրավասությունները, կամ խախտել է պետության կողմից իրեն տրված ցուցումները: Սակայն, ինչպես արդեն գիտենք, դեռևս 1920 թ-ի Հուլիսի 22-ին սուլթանի խորհուրդը Կ.Պոլսում ամբողջ կազմով համաձայնություն էր տվել ստորագրելու Սևրի պայմանագիրը և, հետևաբար, լիազորել էր իր ներկայացուցիչներին ստորագրելու այդ փաստաթուղթը: Այսպիսով, թուրքական պատվիրակները բացարձակապես չեն գերազանցել իրենց իրավասությունները և կատարել են օրինական իշխանության կամքը: Նույնը կարելի է ասել Սևրի պայմանագիրը ստորագրած մյուս կառավարություններին մասին: Այսինքն, այս հիմնավորմամբ Սևրի պայմանագրի վավերացումից թուրքական պետության հրաժարվելը չի կարող արդարացվել, իսկ այն, որ տվյալ պահին կայսրության տարածքի մեծ մասը վերահսկվում էր քեմալականների կողմից ավելի շուտ քաղաքական, այլ ոչ թե իրավական փաստարկ է:

Ավելին, նույն կոնվենցիայի 18-րդ հոդվածը պայմանագիրը ստորագրող պետությունների վրա ստորագրումից մինչև վավերացում ընկած ժամանակամիջոցում դնում է հստակ պարտավորություններ: Համաձայն այս հոդվածի պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են ազդել պայմանագրի առարկայի և նպատակի վրա, եթե

1. վավերացման պայմանով ստորագրել է պայմանագիրը մինչև այն պահը, երբ կհայտարարի տվյալ պայմանագրի մասնակից չդառնալու իր հստակ մտադրության մասին;

2. պայմանագրի իր համար պարտադիր լինելու համաձայնություն է արտահայտել մինչև դրա ուժի մեջ մտնելը պայմանով, որ դա չափազանց չի ձգձգվի<sup>189</sup>:

Այս սկզբունքների խախտում պետք է համարել այն, որ թուրքերը 1921 թ. փետրվարին Փրանսիայի և Հոկտեմբերին Իտալիայի հետ, իսկ հետագայում 1923 թ. Լոզանում կնքեցին պայմանագրեր, որոնցով փաստորեն ձգտում էին չեղարացնել Սևրի պայմանագրի առարկան և նպատակը<sup>190</sup>: Վստահաբար նույնը կարելի է ասել նաև 1921 թ. մարտին կնքված քեմալա-բոլշևիկյան մոսկովյան գործարքի մասին:

1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 25-րդ հոդվածը նախատեսում է նաև դեպքեր, երբ պայմանագիրն ամբողջությամբ կամ դրա մի մասը

<sup>186</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 59:

<sup>187</sup> Տե՛ս Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 85:

<sup>188</sup> Международное право в документах, сост. сборника Н. Т. Блатова, М., 1982, с. 74.

<sup>189</sup> Международное право в документах, с. 75.

<sup>190</sup> Տե՛ս Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 87:

կարող է ժամանակավոր կիրառութեան մեջ դրվել մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը, անգամ եթե դա արտահայտվելու է Հետագա վավերացմամբ: Նշված հոդվածով դա հնարավոր է համարվում, եթե բանակցություններում մասնակցած պետությունները միմյանց միջև այդ մասին արևել ձևով պայմանավորվածություն են ձևաբերել<sup>191</sup>:

Պետք է նշել, որ տվյալ կոնվենցիայի ընդունումից առաջ էլ պայմանագրի չվավերացված վիճակում գործածություն մեջ մտնելու նախադեպեր եղել են: Օրինակ, 1935 թ. Ֆրանսիան և Իտալիան պայմանագիր էին ստորագրել աֆրիկյան որոշ շահերի առնչությամբ: Երեք տարի Հետո Իտալիան անվավեր ճանաչեց պայմանագիրը՝ վավերացված չլինելու պատճառաբանությամբ (պայմանագրի մեջ ֆիքսված էր այն դրույթը, որ այն գործածություն մեջ կմտնի վավերացումների փոխանակումից Հետո միայն): Ֆրանսիան պատասխանեց, որ թեև չվավերացված, բայց պայմանագիրը մասնակի գործադրվել է իր կողմից և ընդգծվում էին բարի կամքից բխող Իտալիայի պարտավորությունները<sup>192</sup>:

Հատկանշական է, որ Սևրի պայմանագիրը նույնպես մասամբ գործածվեց այն ստորագրողների կողմից՝ արաբական հողերի Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր դաշնագրով, փաստորեն դա գործադրվեց, վավերացրած չլինելով և հաջորդ դաշնագրից՝ Լոզանի ստորագրումից առաջ<sup>193</sup>:

Ինչպես հայտնի է, Սևրի պայմանագրով նախատեսվում էր Թուրքական պետությանը քաղաքական պատասխանատվության ենթարկել, նրան զրկելով Հայաստանի, Քրդստանի, Սիրիայի, Լիբանանի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի և ոչ Թուրք ժողովուրդներով բնակեցված այլ տարածքների նկատմամբ տիրապետման իրավունքից<sup>194</sup>: Քաղաքական առումով մեծ տերություններն այս տարածքների բաժանման հարցն իրենց միջև լուծել էին Սևրի պայմանագրի ստորագրումից առաջ, երբ դեռ պատերազմի ժամանակ 1916 թվականին ստորագրվել էր Ասիական Թուրքիայի տարածքների բաժանման գաղտնի համաձայնագիրը և պատերազմից Հետո 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյի համաժողովի որոշումներով վերահաստատվեց նրանց քաղաքական կամքն այդ տարածքներն օտարելու վերաբերյալ: Ու թեև այդ տարածքները փաստացի վերահսկվում էին անգլիական ու ֆրանսիական զորքերի կողմից, իրավական

յան անբաժան մասը, և Արաբական թերակղզու և Հայուսիսային Աֆրիկայի տարածքների օտարումը պետք է ձևակերպվեր վերջինիս հետ կնքվելիք խաղաղության պայմանագրով: Եվ բնական է, որ Սևրի պայմանագրի հիմքում դրվեցին Ասիական Թուրքիայի տարածքների բաժանման գաղտնի համաձայնագրի դրույթներն ու Սան-Ռեմոյի համաժողովի որոշումները:

Այսպես, Սևրի պայմանագրի 94-րդ հոդվածի համաձայն Սիրիան և Միջագետքը՝ ժամանակավորապես ճանաչվում էին անկախ պետություններ՝ պայմանով, որ դրանց կառավարումը պետք է իրականացվեր մանդատատար պետության խորհրդով և օժանդակությամբ, մինչև այն ժամանակը, երբ նրանք ի վիճակի կլինեն ինքնակառավարման: 95-րդ հոդվածով Պաղեստինի կառավարումը նույնպես հանձնվում էր ստորագրող պետությունների կողմից ընտրված մանդատատարին, որը պետք է կենսագործեր բրիտանական կառավարության 1917 թ. նոյեմբերի 2-ի հռչակագրի՝ դրույթները Պաղեստինում հրեաների համար ազգային օջախ ստեղծելու հետ<sup>195</sup>:

Պայմանագրի 113-րդ հոդվածով Թուրքիան կորցնում էր իր իրավունքները նաև Սուդանի նկատմամբ, իսկ 121-րդ հոդվածով հրաժարվում էր իր իրավունքներից և առանձնաշնորհումներին:

Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու տիրույթներից և 98–100-րդ հոդվածներով պարտավորվում էր ճանաչել Հեջասը՝ որպես ազատ և անկախ պետություն, ինչպես դա արդեն արել էին Դաշնակից պետությունները: Պայմանագրի 101-րդ հոդվածով Թուրքիան հրաժարվում էր Եգիպտոսի նկատմամբ իր իրավունքներից և ճանաչում Եգիպտոսի նկատմամբ 1914 թ. դեկտեմբերի 18-ից հաստատված անգլիական պրոտեկտորատը, իսկ 118–120-րդ հոդվածներով ճանաչում էր Ֆրանսիայի պրոտեկտորատը Մարոկկոյի և Թունիսի նկատմամբ:

\* Դրանք ներառում էին Սիրիայի, Լիբանանի և Իրաքի ժամանակակից տարածքները:

\*\* Խոսքը «Բալֆորի եռչակագիր» անվան տակ հայտնի Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆորի լորդ Ռոտշիլդին ուղղված նամակի մասին է, որով Պաղեստինում նախատեսվում էր հրեաների համար ազգային օջախ ստեղծումը:

<sup>195</sup> See Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, p. 26. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>

\*\*\* Թագավորություն, որն առաջացավ ժամանակակից Սաուդյան Արաբիայի տարածքում, հետագայում ընդարձակվելով, դարձավ այդ պետության ստեղծման հիմքը:

<sup>191</sup> Международное право в документах, с. 78.

<sup>192</sup> Պարիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 134:

<sup>193</sup> Նույն տեղում, էջ 132:

<sup>194</sup> Барсегов Ю., Геноцид армян-преступление по международному праву, с. 183.

Բացի մանդատային կառավարման իրավունքով օտարվածներից, պայմանագրում կային նաև եվրոպական տերություններին ուղղակիորեն փոխանցվող տարածքների մասին հոդվածներ: Այսպես, 115-րդ հոդվածով Թուրքիան ճանաչում էր 1914 թ. նոյեմբերի 5-ի Մեծ Բրիտանիայի կողմից Կիպրոսի անեքսիայի ակտը, իսկ 122-րդ հոդվածով՝ Իտալիայի իրավունքներն ու տիրույթը Էգեյան ծովի կղզիների վրա<sup>196</sup>:

Վերջապես պայմանագրի 62–64-րդ հոդվածներով Թուրքիայից առանձնանում էր Քրդստանը, որի սահմանները որոշվելու էին անգլոֆրանս-իտալական հանձնաժողովի կողմից, ինչից հետո, եթե Ազգերի լիգայի Խորհուրդը կհամարի, որ այդ տարածքի բնակչությունը ունակ է ինքնակառավարման, Քրդստանին կտրամադրվի ինքնավարություն, վերջինիս սահմանները համտեղ որոշվելու էին Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի կողմից<sup>197</sup>:

Սակայն, Սևրի պայմանագրի կողմ հանդիսացող ազդեցիկ եվրոպական տերությունները, առաջին հերթին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, ելնելով իրենց շահերից, միմյանց միջև պայմանավորվածություն ձեռք բերելով, սկսեցին ընտրողաբար կիրառել չվավերացված և դեռևս ուժի մեջ չմտած Սևրի պայմանագրի հոդվածները, կապված արաբական տարածքների Օսմանյան կայսրությունից օտարելու հետ: Պայմանագրի չվավերացված լինելու պայմաններում նրա հոդվածների հիման վրա մինչև Լոզանի պայմանագրի ստորագրումը փաստորեն ավարտվեց Օսմանյան կայսրության տրոհման և մանդատների ու պրոտեկտորատների կիրառմամբ անկախ պետությունների (Սիրիա, Լիբանան, Իրաք, Սաուդյան Արաբիա և այլն) ստեղծման գործընթացը, որը, ցավոք, շրջանցեց Հայաստանն ու Քրդստանը:

Այսպիսով, պայմանագրի կողմ հանդիսացող եվրոպական տերությունները, կիրառելով նրա որոշակի հոդվածների դրույթներ, առանց վավերացման փաստորեն մասնակի գործադրություն մեջ են դրել Սևրի պայմանագիրը:

Թուրքերը մշտապես շահարկում են Սևրի պայմանագրի օրինականության և ուժի մեջ լինելու հարցը: Այս առումով Սևրի պայմանագրի վերանայման փորձ պետք է համարել 1921 թ. Լոնդոնի խորհրդաժողովը: 1921 թ. հունվարին Փարիզում Անտանտի Գլխավոր խորհրդի նիստում Ֆրանսիան հանդես եկավ Սևրի պայմանագիրը վերանայելու առաջարկով:

Նույն թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Լոնդոնում կայացած Անտանտի տերությունների և պատերազմում պարտված Գերմանիայի և Օսմանյան կայսրության մասնակցության կայացած խորհրդաժողովում Ֆրանսիայի և Իտալիայի առաջարկով քննարկվեց Սևրի հայտության պայմանագրի վերանայման հարցը: Ինչպես հայտնի է, այդ խորհրդաժողովում փորձ կատարվեց Սևրի դաշնագրով նախատեսված Հայաստանի և Հայ ժողովրդի օրինական իրավունքներն արտահայտող դրույթները փոխարինել «Հայկական ազգային օջախի» անորոշ գաղափարով, որը սակայն մերժվեց Հենց Թուրքերի կողմից: Լոնդոնի խորհրդաժողովում այս գաղափարի մերժումով Հենց իրենք՝ Թուրքերը, ըստ էության, առաջինը մերժեցին նաև Սևրի պայմանագրի վերանայման հարցը: Սևրի պայմանագիրը Լոնդոնում կարող էր փոխարինվել միայն նոր փաստաթղթի ընդունումով, որի առաջաբանում պետք է հատուկ ընդգծվեր, որ սույն պայմանագիրը վերանայում կամ փոփոխություններ է մտցնում նախկինում ստորագրված Սևրի պայմանագրում: Այսպիսով, թեև Սևրը ստորագրած տերությունները Լոնդոնում հայտարարել էին այդ պայմանագիրը վերանայելու իրենց մտադրության մասին, այդուհանդերձ, որևէ փաստաթուղթ չստորագրվեց, ինչը նշանակում է, որ խորհրդաժողովն իր նպատակին չհասավ, և Սևրի պայմանագրի վերանայման այդ փորձը փաստորեն ձախողվեց:

Սևրի պայմանագրի ուժի մեջ լինելու հարցը մտահոգիչ է Թուրքերի համար նաև մեր օրերում: Այստեղ է, որ հարց է առաջանում, որ եթե Թուրքիան համարում է Սևրի պայմանագիրը ուժը կորցրած, ապա ինչու հաջորդ Ալեքսանդրոպոլի, Մոսկվաի, Կարսի, պայմանագրերի՝ տեքստերում, ինչպես կտեսնենք, իր կողմից մտցվում էին Սևրի պայմանագիրը չեղյալ համարելու հոդվածներ: Այս միտումը շարունակվում է մինչև այսօր, ինչի վկայությունն է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար առաջ քաշված Սևրի պայմանագրից և տարածքային պահանջներից հրաժարվելու Թուրքական նախապայմանը, ինչպես նաև Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար հայտնի արձանագրություններում ընդգծվում է Կարսի պայմանագրի ճանաչումը, ենթատեքստում ունենալով Սևրի պայմանագրի չեղծացումը:

<sup>196</sup> St'u Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, p. 27–29. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>

<sup>197</sup> St'u նույն տեղում, p. 21.

**2.11. Հայերի ցեղասպանության համար Օսմանյան կայսրության քաղաքական պատասխանատվությունը Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով և նրա հարաբերակցությունը Սևրի պայմանագրի հետ**

Պետք է նշել, որ թե՛ Սևրի պայմանագիրը և թե՛ Վիլսոնի իրավարար վճիռը չեն վեցին հանկարծ ու միանգամից: Հայ ժողովրդի շահերի ու իրավունքների պաշտպանության տեսակետից չափազանց կարևոր այդ փաստաթղթերի ստեղծմանը նախորդել է բավական տևական ու բարդ նախապատրաստական աշխատանք, որն էլ հասունացրեց դրանց ընդունումը:

Դեռ 1917 թ. դեկտեմբերի 23-ին Լոյոլ Ջորջը, իսկ 1918 թ. հունվարի 8-ին Վուդրո Վիլսոնն իր հայտնի «14 կետերով» Թուրքիայի իրավունքները ճանաչվում էին միայն նախկին Օսմանյան կայսրության այն մասերի վրա, որոնք բնակեցված էին թուրքերով, այլ ազգություններով բնակեցված տարածքները պետք է ազատագրվեին նրա տիրապետությունից<sup>198</sup>: Իսկապես դժվար է պատկերացնել մի երկիր, որտեղ լինեին այդքան շատ ճնշված և ստրկացված ազգություններ, որքան Թուրքիայում, ուստի պատերազմի ավարտից հետո ազգերի ինքնորոշման իրավունքը պետք է գործադրվեր առաջին հերթին հենց այդ երկրում: Հայ ժողովրդի հետ կապված ինքնորոշման իրավունքի իրացումը պետք է կատարվեր Թուրքիային քաղաքական պատասխանատվության ենթարկելու ճանապարհով՝ նրան հայկական տարածքների վրա իր իշխանությունը տարածելուց զրկելով, ինչի արդյունքում արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությանը միացվելու էր պատմական Հայրենիքի որոշ մասը:

Արդեն Առաջին աշխարհամարտից հետո ԱՄՆ նախագահ Վիլսոնի հուշազրույթում, որը 1919 թ. օգոստոսի 22-ին Կոստանդնուպոլսում ԱՄՆ գերագույն կոմիսար Բրիտանոլի կողմից հանձնվեց Օսմանյան կայսրության կառավարությանը, Թուրքիայից Հայաստանի տարանջատման հարցը ուղղակիորեն փոխկապակցվում էր Հայերի զանգվածային սպանությունների քաղաքականության հետ<sup>199</sup>:

Թուրքական պետության Հայաստանի նկատմամբ գերիշխանության դադարեցման քաղաքական ու իրավական հիմքերի հարցը դարձել

էր ԱՄՆ նախագահի կողմից հատուկ ստեղծված Քինգի-Քրեյնի հանձնաժողովի քննարկման առարկա: Հանձնաժողովի 1919 թ. օգոստոսի 28-ին ներկայացրած զեկուլյի մեջ հստակորեն ձևակերպված էր ամերիկյան մոտեցումն այս հարցում: Փաստաթղթում Հայաստանի անջատման հիմքեր էին ներկայացվում հետևյալ փաստարկները՝

1. Թուրքերի ուրիշներին կառավարելու ապացուցված անկարողությունը;

2. կրկնվող ջարդերը իբրև կանխամտածված քաղաքականություն որդեգրելը;

3. իրագործված ջարդերի համար կարեկցանքի գրեթե ամբողջովին բացակայությունը կամ ձգտումը հրաժարվել կատարված հանցագործություններից, ավելի շուտ նրանց կողմից դրանք արդարացնելու փորձերը;

4. Հայերի նկատմամբ նրանց ունեցած ակնհայտ ծայրահեղ թշնամական վերաբերմունքը և ջարդերի մշտական սպառնալիքը;

5. Հայերին պաշտպանելու ուղղված 1878 թ. պայմանագրի հոդվածների կատարյալ ձախողումը;

6. բավարար ապացույցների առկայությունը, որ այս երկու ցեղերը չեն կարող միասին ապրել խաղաղ ու նորմալ:

Այս ամենը ստիպում էր հանձնաժողովականներին հանգել հետևյալ եզրահանգումներին՝

1. Թուրքական կառավարման փորձը չպետք է կրկնվի;

2. ավելի ճիշտ է, որ Հայերն ու թուրքերն ունենան առանձին պետություններ;

3. ամենատարրական արդարությունը պահանջում է առնվազն Թուրքիայից այն տարածքի առանձնացումը, որտեղ Հայերը կարող են կենտրոնանալ, ստիպված չլինելով ապրել թուրքական տիրապետության տակ;

4. ոչինչ բացի նշվածից չի կարող Հայերին տալ անվտանգության բավարար երաշխիքներ, ոչինչ բացի նշվածից չի հանգստացնի աշխարհի խիղճը այս հարցում;

5. ելնելով Հայերի, թուրքերի, ինչպես նաև ողջ աշխարհի ու խաղաղության շահերից, անհրաժեշտ է պնդել առանձին հայկական պետության ստեղծման վրա»<sup>200</sup>:

<sup>198</sup> Աղոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, էջ 78:

<sup>199</sup> Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, с. 6.

<sup>200</sup> Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, с. 6-7.

Հանձնաժողովի թե փաստարկները և թե առավել ևս եզրահանգումները ոչ այլ ինչ են, քան Վուդրո Վիլսոնի Հայ-թուրքական սահմանագծման Հարցում ապագա իրավարարության անհրաժեշտ ու բավարար Հիմնավորումներ: Ավելորդ է նշել, որ այս Հիմնավորումները չափազանց արդիական են նաև մեր օրերում՝ Հայոց ցեղասպանության ժխտողականության թուրքական քաղաքականությանն արժանի պատասխան տալու իմաստով:

Հատկանշական է, որ ամերիկյան այս մտտեցումը Հետազայում որդեգրվում է նաև Դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի կողմից, երբ 1919 թ. Հունվարի 30-ին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, ինչպես նաև ԱՄՆ-ը իրենց Համատեղ բանաձևում նշում են, որ Հպատակ ժողովուրդների նկատմամբ թուրքական իշխանության պատմական չարաչառումներից և Հատկապես նախորդող տարիներին Հայերի սարսափելի կոտորածներից ելնելով, դաշնակից ու միավորված տերությունները Համաձայնության եկան այն Հարցում, որ Հայաստանը պետք է ամբողջովին անջատված լինի թուրքական կայսրությունից<sup>201</sup>: Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը մերժեց 1919 թ. Հունիսի 17-ի նոր սուլթանական կառավարության Հուշագրում ներկայացված բոլոր այն փաստարկները, որոնցով փորձ էր կատարվում գերծ պահել թուրքական պետությունը Հայերի ոչնչացման Համար պատասխանատվությունից և ամեն ինչ Հանգեցնել երիտթուրքական կառավարության անդամների քրեական պատասխանատվությանը, նպատակ ունենալով իր տիրապետության տակ պահել Հայաստանի տարածքը: Խորհուրդը Հատկորեն ձևակերպեց թուրքական պետության իշխանությունը միայն թուրքերի նկատմամբ սահմանափակելու անհրաժեշտության մասին իր եզրակացությունը և, դրանից ելնելով, թուրքական կայսրության տարբեր ազգությունների և ժողովուրդների ճակատագրերը որոշել այդ ժողովուրդների շահերին ու ցանկություններին Համապատասխան<sup>202</sup>:

Ի պատասխան թուրքերի բերած այսպես կոչված Հակափաստարկների ԱՄՆ-ի կողմից Հետևում է ավելի կտրուկ արձագանք: ԱՄՆ-ի պետքարտուղար Ռ.Լասինգը Փարիզի խաղաղության բանակցություններին ԱՄՆ-ի պատվիրակությանը Հասցեագրված 1919 թ. օգոստոսի 16-ի Հեռագրում նշում է, որ «ԱՄՆ-ի նախագահը ցանկանում է նախագուշացնել թուրքական իշխանություններին, որ եթե նրանք անհավատարմ

արդյունավետ միջոցներ չձեռնարկեն, որպեսզի կանխեն այն կոտորածներն ու գազանությունները, որոնք իրականացվում են թուրքերի, քրդերի և այլ մահմեդականների կողմից Հայերի նկատմամբ կովկասում և այլ վայրերում, ապա նրանք կզրկվեն ցանկացած աջակցությունից այն Հարցերում, որոնք վերաբերում են ինքնիշխանության պահպանմանը և Օսմանյան կայսրության թուրքական Հատվածի վրա, ինչը նախատեսված էր նախագահի խաղաղության պայմանների XII կետով և որ նման որոշումը կարող է Հանգեցնել թուրքական կայսրության ամբողջական վերացմանը և խաղաղության Հաստատման պայմանների լիակատար փոփոխությանը»<sup>203</sup>:

Վուդրո Վիլսոնին իրավարարի դեր ստանձնելու առաջարկը դաշնակիցների Գերագույն խորհրդի կողմից արվել է 1920 թ. ապրիլի 25-ին, իսկ մայիսի 17-ին նախագահը Հայտնում է, որ Համաձայն է գործել որպես իրավարար: Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին Հայ-թուրքական սահմանագծման Հարցում իրավարար դառնալու առաջարկի մասին Հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին տեղեկացնում է Ազգերի լիգային, իսկ մայիսի 11-ին՝ խաղաղ կարգավորման պայմանները փոխանցվում են թուրքական պատվիրակությանը<sup>204</sup>: Այսպիսով, արբիտրաժի գործընթացը սկսվել էր դեռ մինչև Ալերի պայմանագրի կնքումը, Հետևաբար այն միանգամայն ինքնուրույն միջազգային-իրավական փաստաթուղթ է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի, իբրև դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի անդամների մի կողմից և Վուդրո Վիլսոնի, իբրև ԱՄՆ-ի նախագահի, մյուս կողմից<sup>205</sup>:

Վուդրո Վիլսոնին Հայաստանի սահմանի Հստակեցման Հարցում իրավարարի կարգավիճակ առաջարկելն, անշուշտ, ունեւր իր Հիմնավորումները, որոնք պայմանավորված էին միջազգային արբիտրի ընտրության Համար պարտադիր Հանդիսացող արդարության ու անաչառության սկզբունքներով: Ելնելով այն Հանգամանքներից, որ ԱՄՆ-ը չէր պատերազմել Օսմանյան կայսրության Հետ և Հարաբերությունների մեջ է եղել ոչ միայն Օսմանյան կայսրության պաշտոնական կառավարության, այլև թուրք ազգայնականների Հետ, ԱՄՆ-ի նախագահի թեկնածությունը դիտվում էր իբրև առավել Հարմար Հայաստանի և Թուր-

<sup>201</sup> Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, с. 7-8.

<sup>202</sup> Նույն տեղում, с. 8.

<sup>203</sup> Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики, с. 27.

<sup>204</sup> Նույնի, Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, с. 15.

<sup>205</sup> Նույնի, Геноцид армян-преступление по международному праву, с. 182.



քիայի սահմանի հստակեցման իրավարարի դերում<sup>206</sup>: Այսպիսով ապահովվում էր իրավարարի չեզոքությունը և անշահախնդրության սկզբունքը վեճի կողմերի նկատմամբ, ինչն, ըստ Հաագայի 1899 թ. և 1907 թ. «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի, վեճերը արբիտրաժի միջոցով լուծելու պարտադիր պայմաններից մեկն էր:

Որպես այս արբիտրաժի հիմնավորում կարելի է բերել նաև 1920 թ. Հուլիսի 17-ին դաշնակից տերությունների Ֆրանսիայի վարչապետ Միլերանի կողմից ստորագրված պատասխան նոտան թուրքական պատվիրակության նույն ամսին ուղղված բողոքի նոտային: Պատասխան նոտայում մասնավորապես ասված է. «Թուրքական կառավարությունը չի կատարել իր ոչ թուրք հպատակներին թալանից, բռնություններից ու սպանություններից պաշտպանելու պարտականությունը: Ավելին, բազմաթիվ ապացույցներ վկայում են այն մասին, որ կառավարությունն ինքն իր վրա է վերցրել ամենագազանաբարո հարձակումների ղեկավարման ու կազմակերպման պատասխանատվությունն այն բնակչության նկատմամբ, որին պետք է պաշտպանություն ցուցաբերեր: Այդ իսկ պատճառով դաշնակից տերությունները չեն կարող փոփոխություններ մտցնել այն դրույթներում, որոնք նախատեսում են ստեղծել անկախ Հայաստան»<sup>207</sup>:

Վուդրո Վիլսոնին իրավարարությունը Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը վաղորոք սահմանափակում էր կոնկրետ տարածքներով: Հայ-թուրքական սահմանագծում իրակայացնելիս իրավարարը պետք է սահմանափակվեր Վանի, Բիթլիսի, Էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթներով, վերջինով ապահովվելու էր Հայաստանի ելքը դեպի Սև ծով, առանց որի իրավարարությունը կլիներ թերի, և տերություններն իրենց վրա պարտավորություն էին վերցնում ձեռնարկել հնարավոր միջոցներ, որպեսզի ԱՄՆ-ի նախագահը կարողանա դեպի ծով ելք նախատեսել Հայաստանի համար<sup>208</sup>:

Տարածքային այս սահմանափակման պնդումը կապված էր նրա հետ, որ Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը դեռ մինչև Սան-Ռեմոյի կոնֆերանսը տեղյակ էր ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի տեսակետներին, որ Հայաստանին պետք է Կիլիկիայով ելք ապահովվի նաև

դեպի Միջերկրական ծով<sup>209</sup>: Այս տեսակետը ԱՄՆ-ի կողմից հնչեցվեց նաև Սան-Ռեմոյի կոնֆերանսում, աակայն Անգլիան ու Ֆրանսիան մնացին անդրդվելի, նրանք շարունակում էին պնդել իրենց տեսակետը, որը կարծում ենք, պայմանավորված էր ոչ թե «պատմությամբ և արդարությամբ», ինչպես ներկայացնում էին այդ տերությունների ներկայացուցիչները, այլ դեռ պատերազմի ընթացքում Սալբու-Պիկոյի գաղտնի պայմանագրով ձեռք բերված պայմանավորվածությամբ, որոնց համաձայն էրզրումը, Վանը, Բիթլիսը և Տրապիզոնի մի մասը փոխանցվելու էին Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանի մյուս վիլայեթները, ինչպես նաև Կիլիկիան՝ Ֆրանսիային: Ակնհայտ է, որ Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքորոշման հիմքում շարունակում էր մնալ Ասիական թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բաժանման համաձայնագիրը մի տարբերությամբ, որ այժմ նշված տարածքները անցնելու էին ոչ թե Ռուսաստանին, այլ միացվելու էին Հայաստանի Հանրապետությանը: Այսպիսով Սեբաստիան, Խարբերդը և Դիրաբեքիլը, հիմնականում Անգլիայի և Ֆրանսիայի պնդմամբ, դուրս էին բերվում իրավարարի հայ-թուրքական սահմանագծման իրավասություններից այն դեպքում, երբ Մուղրոսի զինադադարով և 1914 թ. Հունվարի 26-ի ռուս-թուրքական պայմանագրով ամբողջ Արևմտյան Հայաստանի վրա էր սահմանափակվում թուրքական իշխանությունը:

Թուրքական վարկածի համաձայն Վիլսոնի իրավարար վճռի հիմքը կազմում է չվավերացված Սևրի պայմանագիրը, ուստի, դրանից ելնելով էլ, այդ իրավարար վճիռը չունի իրավական ուժ: Պատասխանելով այս տեսակետին նշենք, որ Վիլսոնի արբիտրաժային որոշումը կապ ունի Սևրի պայմանագրի հետ այնքանով, որքանով, որ վերջինս 89-րդ հոդվածով ԱՄՆ-ը նախագահին արբիտրի դեր ստանձնելու խնդրանքով նախկինում դիմած Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդի չորս տերություններին՝ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Իտալիային և Ճապոնիային, որոնք Սևրի պայմանագրում նշված են իբրև Դիվանը դաշնակից տերություններ, միացել էին տասը նոր երկրներ՝ Բելգիան, Հունաստանը, Հեջսարը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա-Խորվաթա-Սլովենական պետությունը, Չեխոսլովակիան և վեճի կողմ հանդիսացող՝ Հայաստանը և Թուրքիան<sup>210</sup>: Այսպիսով, Սևրի պայմանագիրը իրավարար վճռի համար ընդամենը լրացուցիչ իրավական հիմք էր հան-

<sup>206</sup> Барсегов Ю., Геноцид армян-преступление по международному праву, с. 181.

<sup>207</sup> Նույն տեղում, с. 183.

<sup>208</sup> Նույնի. Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, с. 14.

<sup>209</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 238.

<sup>210</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 673:

դիսանում է հավելումն դրանից առաջ ԱՄՆ նախագահին ուղղված միջազգային իրավարարութեան առաջարկին, սակայն անկախ դրանից էլ իրավարարութեան գործընթացն արդեն ընթացքի մեջ էր: Ավելին, Հենց Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի համաձայն անդամ պետություններն իրավարար վճռի ընդունումը չեն պայմանավորել որևէ հանգամանքով, այլ պարտավորվել են վճիռն ընդունել անմիջապես, իսկ վեճի կողմ հանդիսացող Թուրքիան 90-րդ հոդվածով լրացուցիչ կերպով վերահաստատել է այս դիրքորոշումը, հրաժարվելով Հայաստանին փոխանցվելիք տարածքների նկատմամբ իր իրավունքներին<sup>211</sup>:

Վիլսոնը իրավարար վճիռը ստորագրեց 1920 թ. նոյեմբերի 22-ին՝ Հայաստանի խորհրդայնացումից ընդամենը 10 օր առաջ: Արդեն խորհրդայնացումից հետո, դեկտեմբերի 6-ին ԱՄՆ-ի նախագահի կայացրած իրավարար վճիռը պաշտոնապես Փարիզում փոխանցվեց Դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին<sup>212</sup>: Վճռի պաշտոնական և ամբողջական անվանումն է. «ԱՄՆ նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»: ԱՄՆ-ը նախագահն իբրև իրավարար իր իրավասութեան շրջանակներում և ելնելով Դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի նախատեսած տարածքային սահմանափակումից, հայ-թուրքական սահմանագծում իրականացնելիս նախկինում Օսմանյան կայսրության տարածք համարվող Վանի, Բիթլիսի, էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա հաստատում էր հայ ժողովրդի տիրոջ ու իրավունքները, ապահովելով նաև ելք դեպի Սև ծով: Իրավարար վճռով Հայաստանին փոխանցվելիք տարածքը կազմելու էր = 103.599 քառ. կմ, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի շուրջ 40%-ը:

Հենց իրավարար վճռի վերնագրում «հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման» դրույթի ամրագրումը չափազանց կարևոր է: Այս ձևակերպումը կարելի է համարել վճռի կայացման պահին տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումների, մասնավորապես՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, դրան հաջորդած Հայաստանի խորհրդայնացման, ինչպես նաև քեմալականների կողմից իրավարար վճռով Հայաստանին փոխանցվելիք տարածքների կատարյալ վերահսկման ուղղակի արտացոլումը իրավարար վճռի մեջ: Այսպիսով, անգամ վճռի վերնագրի տրամաբանությունից բխում էր ոչ

միայն քեմալականների ուղղման ուժերի դուրսբերումը Հայաստանին փոխանցվելիք չորս նահանգների տարածքներից, այլև այդ ուժերի ետքաշումը անգամ իրավարար վճռով նախատեսված հայ-թուրքական նոր սահմանից դեպի Թուրքիայի խորքերը:

Սակայն, եթե ԱՄՆ-ը նախագահը փորձում էր ելք առաջարկել իրավարար վճռի դրույթները կյանքի կոչելու համար, քանզի Հենց Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդն էր իր վրա պարտավորություն վերցրել քայլեր ձեռնարկել, որ իրավարարը կարողանա անգամ ելք ապահովել Հայաստանի համար, ապա անգլիական դիվանագիտությունը վերընշված զարգացումները մատնանշելով քաղաքական ճնշում էր գործադրում իրավարարի վրա, փորձելով համոզել վերջինիս ձեռնպահ մնալ վճռի նախատեսված հրապարակումից, ինչից հետո, ըստ միջազգային իրավունքի գործող նորմերի, այն մտնելու էր ուժի մեջ:

Որպես փաստարկ անգլիական դիվանագիտությունն օգտագործում էր այն, որ Հայաստանն արդեն խորհրդայնացված է և անիմաստ է վճռի հրապարակումը, ինչն այդ տարածքների նկատմամբ իրավունքներ էր տալիս Խորհրդային Հայաստանին և կարող էր լրջորեն վնասել քեմալականների հետ նախատեսվելիք գործարքին: Անգլիացիներն առաջարկում էին սառեցնել ԱՄՆ-ը նախագահի հայ-թուրքական սահմանագծման վճռի հրապարակումը մինչև որ անգլիական կողմը դեսպանի միջոցով պետքարտուղարության այդ հարցի հետ կապված կներկայացնի որոշ պարզաբանումներ: Սակայն նրանց հաջողվեց միայն կարճ ժամանակով հետաձգել վճռի հրապարակումը<sup>213</sup>:

Չնայած տարածաշրջանում տեղի ունեցած արմատական փոփոխություններին, Վուդրո Վիլսոնը հավատարիմ մնաց միջազգային իրավարարի իր սկզբունքներին, և 1920 թ. դեկտեմբերի 17-ին հրապարակումից հետո վճիռը մտավ ուժի մեջ:

Թեև հայ-թուրքական սահմանագծման հարցով նախաձեռնված և իրականացված իրավարարությունը սկսվել էր հաղթանակած տերուրությունների քաղաքական որոշման ու կամքի հիման վրա, այդուհանդերձ այն ոչ միայն չի հակասել, այլև կատարվել է սովյալ պահին գործող միջազգային իրավական նորմերին համապատասխան: Այսպես, Հաագայի 1899 թ. «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի 54-րդ և 1907 թ. խմբագրված նույն կոնվենցիայի 81-րդ հոդվածներում՝ «եթե իրավարար վճիռը կայացել է ըստ կարգի և դրա մասին

<sup>211</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 676:

<sup>212</sup> Պապյան Ա., Հայոց պահանջատիրոջ իրավական հիմքերը, էջ 75:

<sup>213</sup> Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, с. 17.

իրազեկ են պահպել կողմերի գործակալները, ապա խնդրո առարկա վեճը լուծվում է մեկընդմիջտ և ենթակա չէ բեկանման»<sup>214</sup>: Ակնհայտ է, որ սովյալ պարագայում որևէ պայմանագրի, սովյալ դեպքում Սևրի, ստորագրված կամ վավերացված լինել-չլինելը չի կարող ազդել իրավարար վճռի վրա:

Արբիտրաժի ոգու համաձայն արբիտրի որոշումը կողմերը ընդունում են իբրև պարտադիր, և, բնականաբար, այն վավերացման ենթակա չէ: Արբիտրաժային որոշումն առաջացնում է համապատասխան իրավական հետևանքներ նրա մասնակիցների համար: Դիմելով արբիտրաժի, կողմերը համաձայնվել են, որ արբիտրի որոշումը, որը վերաբերում է իրենց, կլինի վերջնական և, համապատասխանաբար, պարտավորվել են հարգել այն<sup>215</sup>:

Վուդրո Վիլսոնի Հայ-Թուրքական սահմանագծման իրավարար վճիռն, ըստ էության, իրենից ներկայացնում է միջազգային-իրավական փաստաթուղթ, որով Օսմանյան կայսրության իրավահաջորդ Հանդիսացող Թուրքիան ենթարկվում էր քաղաքական պատասխանատվության Հայոց ցեղասպանության համար: Այս փաստաթղթով Թուրքիան զրկվում էր իր այն նախկին տարածքի նկատմամբ գերիշխանությունից: Իրավարար վճռի տրամաբանությամբ միայն այդ տարածքի վրա նախկին զոհի նկատմամբ Թուրքերի իշխանության բացառումն ու իրենց պատմական Հայրենիքի մի մասի նկատմամբ ցեղասպանության զոհ Հանդիսացող արևմտահայերի իրավունքների վերականգնումը կարող է հիմք դառնալ նրանց վերադարձի ու բնականոն կենսագործունեության համար:

Վիլսոնի իրավարար վճիռը միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն արդիական փաստաթուղթ է, որը կարող է լուրջ կռվան Հանդիսանալ Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների վերացման համար:

## 2.12. Քեմալական Թուրքիայի կողմից Հայերի ցեղասպանության համար պատասխանատվությունից խուսափելու փորձերն Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով և դրանց միջազգային իրավական գնահատականը

Նախքան Ալեքսանդրապոլի պայմանագրին անցնելը, անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի համաձայն պայմանագիրը համարվում է անվավեր, եթե ստորագման պահին խախտում է միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներից (jus cogens) որևէ մեկին: Պատերազմական գործողությունների հետևանքով պետությունը պարտադրված «խաղաղութան պայմանագրով» նրա տարածքների յուրացումը հակասում է միջազգային իրավունքի նորմերին և խախտում է ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը: «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն Ալեքսանդրապոլի պայմանագիրը անօրինական է, քանի որ ստորագրվել է ուժի սպառնալիքի պայմաններում<sup>216</sup>:

Բացի այդ, Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվեց 1920 թ-ի դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, այն բանից հետո, երբ դրանից առաջ դեկտեմբերի 2-ին Դրոն և Համբարձում Տերտերյանը ՌԽՖՍՄ ներկայացուցիչ Բորիս Լեգրանի հետ արդեն ստորագրել էին Երևանի պայմանագիրը, որով իշխանությունը հանձնել էին Հայհեղկոմին: Տվյալ դեպքում Ալեքսանդրապոլի պայմանագիրը Հայկական կողմից ստորագրեցին արդեն լիազորությունները վայր դրած կառավարության ներկայացուցիչները, որոնք այլևս իրավասու չէին դա անելու, ուստի նրանք գերազանցել են իրենց իրավասությունները, հետևաբար նաև այս պատճառով այդ պայմանագիրը չի կարող իրավական ուժ ունենալ:

Ալեքսանդրապոլի ապօրինի պայմանագրով Թուրքերը նախ փորձում էին նոր տարածքներ կտրել Հայաստանից (ընդհանուր առմամբ ևս 20.7 Հազար քառ. կմ.): Երկրորդ հոդվածը շատ էր հիշեցնում օրինականության առումով նույնպես աչքի չընկնող Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածը, կապված Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում Թուրքերի վերահսկողությամբ անցկացվելիք հանրաքվեի միջոցով հաստատվելու էին նոր կարգեր և Ռուսաստանը չպետք է միջամ-

<sup>214</sup> [http://www.pca-cpa.org/showpage.asp?pag\\_ =1187](http://www.pca-cpa.org/showpage.asp?pag_ =1187)

<sup>215</sup> Барсегов Ю., Геноцид армян-преступление по международному праву, с. 182.

<sup>216</sup> Международное право в документах, с. 86.

տեր այդ գործընթացներին: Ալեքսանդրոպոլի պայմանագրի երկրորդ հոդվածով նույն այդ սկզբունքով, օգտագործելով «Հանրաքվեներ» անցկացնելու իրենց փորձը, թուրքերն իրենց ժամանակավոր հսկողութունն էին հաստատելու Նախիջևանի, Շարուրի և Շահթախտի շրջանների վրա, որպեսզի հանրաքվեի միջոցով այդ շրջաններում հաստատվեր նոր վարչակարգ, իսկ այս դեպքում արդեն Հայաստանն էր պարտավորվում չմիջամտել այդ վարչակարգի հաստատման գործընթացին, անկախ այն բանից, թե այն որ կողմը կթեքվեր<sup>217</sup>: Պայմանագրի 9-րդ հոդվածով թուրքերը Հայաստանին պարտադրում էին հրաժարվել Աևրի պայմանագրով իրեն վերապահված իրավունքներից, իսկ 7-րդ հոդվածով թուրքական կողմը փորձում էր ազատվել ինչպես բնաջնջված, այնպես էլ արտաքսված Հայերի ունեցվածքի հատուցումից, ինչի հետ կապված դեռ Փարիզի հաշտության վեհաժողովին ներկայացվել էր Պողոս Նուբարի Հայտնի հուշագիրը՝ Համապատասխան պահանջով: Թուրքերի կողմից նման կետերի ամրագրումը Ալեքսանդրոպոլի փաստաթղթում խոսում է այն մասին, որ թեև նրանք չէին վավերացրել Աևրի պայմանագիրը, այդուհանդերձ, գիտակցելով դրա օրինականությունը, փորձում էին հաջորդ փաստաթղթերով այն չեզոքացնել և այդպիսով խուսափել դրա ուժի մեջ մտնելուց:

Ալեքսանդրոպոլի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն պայմանագիրը պետք է վավերացվեր մեկ ամսվա ընթացքում, սակայն այն ընդհանրապես չի վավերացվել<sup>218</sup>: Այսինքն, ապօրինի լինելուց զատ, Ալեքսանդրոպոլի պայմանագիրը անգամ ուժի մեջ էլ չի մտել, ինչպես նախատեսված էր փաստաթղթի համապատասխան հոդվածով: Խորհրդային Հայաստանի կառավարությունն առաջին իսկ օրից վճռականորեն հայտարարեց, որ չի ճանաչում Ալեքսանդրոպոլի ապօրինի պայմանագիրը և պահանջեց վերանայել այն:

Հակառակ արմատավարված կարծիքի, պետք է նշել, որ Մոսկվայի խորհրդա-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը փաստորեն ստորագրվել է ոչ թե 1921 թ. մարտի 16-ին, այլ 18-ին, սակայն փաստաթղթում այն թվագրված է մարտի 16-ով: Պայմանագրի ամսաթվի հետ կատարված այս կեղծիքն, անշուշտ, ունի իր պատճառները: Ինչպես Հայտնի է, Մոսկվայի խորհրդաժողովին զուգահեռ Լոնդոնում ընթանում էր մեկ այլ միջազգային խորհրդաժողով, որին մասնակցում էին թե՛ քեմալականների և թե՛ Խորհրդային Ռուսաս-

տանի պատվիրակությունները: Լոնդոնյան կոնֆերանսում Խորհրդային Ռուսաստանն իր լիազոր ներկայացուցիչ Կրասինի առջև խնդր էր դրել դիվանագիտական հարաբերություններ հաստատել Անգլիայի հետ: Սակայն Մոսկվայում լավ գիտեին, որ անգլիական վերնախավում կան ազդեցիկ գործիչներ ի դեմս Չերչիլի և Քերզոնի, որոնք Ռուսաստանի հետ հարաբերությունների հաստատման հարցում առաջ էին քաշում նախապայմաններ, որոնց թվում պնդում էին, որ վերջինս վերանայի իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, մասնավորապես Հայ-թուրքական հակամարտության հարցում իր որդեգրած թուրքամետ մոտեցումները: Այնուամենայնիվ, 1921 թ. մարտի 16-ին Կրասինին Լոնդոնում հաջողվում է անգլիացիների հետ կնքել առևտրային պայմանագիր<sup>219</sup>: Դա Խորհրդային Ռուսաստանի de facto ճանաչումն էր Անգլիայի կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չեղավ անգլիացիների հետ կնքված պայմանագրից առաջ թուրքերի հետ ավելի շուտ պայմանավորվել, Չիչերինը քաջ գիտակցում էր, որ խորհրդա-անգլիական պայմանագրից հետո, մարտի 18-ին թուրքերի հետ կնքվելիք պայմանագիրը կարող էր հանգեցնել անգլիացիների հետ դեռևս չհաստատված հարաբերությունների տապալմանը: Իրավիճակը փրկելու նպատակով ընտրվեց «Թուրքերի հետ ավելի վաղ ստորագրված պայմանագրով» անգլիացիներին փաստի առաջ կանգնեցնելու կեղծիքի մեթոդը, թե իբր խորհրդա-թուրքական պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 18-ին, այլ 16-ին՝ խորհրդա-անգլիական պայմանագրից ավելի շուտ:

Այդ մասին է վկայում Չիչերինի մարտի 17-ի գեկուցումը Լենինին այն մասին, որ թուրքերի հետ պայմանագիրը կստորագրվի հաջորդ օրը, սակայն պայմանագրի ամսաթիվ կնշվի մարտի 16-ը, երբ իրենք իբր դեռ չգիտեին Անգլիայի հետ Կրասինի ստորագրած պայմանագրի մասին<sup>220</sup>: Կեղծիքը ապահովագրելու համար Չիչերինը նաև Կրասինին հեռագիր է ուղարկում, որտեղ ցուցում է տալիս նրան անգլիացիների հետ խնդիրներ առաջանալու դեպքում պնդել, որ խորհրդա-թուրքական պայմանագիրը ստորագրվել է խորհրդա-անգլիական պայմանագրից առաջ նույն օրը և Մոսկվայում չէին պատկերացնում, որ Լոնդոնում բանակցություններն այդքան արագ կավարտվեին: Հեռագրի վերջում, իբրև կատարվածի արդարացում, ասվում էր, թե ի վերջո Անգլիան չի կարող Խորհրդային Ռուսաստանից պահանջել չեղյալ համարել թուրքիային

<sup>217</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 684:

<sup>218</sup> Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 107:

<sup>219</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 427.

<sup>220</sup> Նույն տեղում, с. 428.

Կարսի և Արդահանի գիշումը, ինչը կհանգեցնի նրա հետ պատերազմի<sup>221</sup>: Ակնհայտ է, որ Մոսկվայի պայմանագրի ամսաթվի կեղծելու փաստն ի սկզբանե ստվեր է գցում դրա օրինականության վրա:

Միանգամից նշենք, որ Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է սովյալ պահին և այսօր էլ գործող միջազգային իրավունքի հիմնական նորմերի ու սկզբունքների կոպիտ խախտումներով: Մասնավորապես այդ պայմանագրի ստորագրման պահին վաղուց ուժի մեջ էին մտել դեռևս Հաագային ինտերնացիոնալ կոնֆերանսի ընթացքում ի թիվս 13 ալ կոնվենցիաների 1907 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին» և «Պայմանագրային պարտավորությունների կատարման հարցում ուժի կիրառման սահմանափակման մասին» կոնվենցիաները, որոնցում շեշտադրվում էին այն սկզբունքները, որ պետությունների անվտանգության ու ժողովրդների բարեկեցության հիմքում պետք է դրվեն իրավունքի ու արդարության սկզբունքները, իսկ պետությունները չպետք է դիմեն ռազմական ուժի այլ պետությունների նկատմամբ պայմանագրային պարտավորությունները կատարել տալու նպատակով<sup>222</sup>: Հետագայում, արդեն Առաջին աշխարհամարտի ավարտից հետո նշված սկզբունքները ավելի հստակորեն տեղ գտան Ազգերի լիգայի Կանոնադրության մեջ, որտեղ ամրագրվում էին ազգերի միջև հարաբերություններում ստանձնած պարտավորությունները հարգելու և կատարելու, ինչպես նաև պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը չխախտելու սկզբունքները: Նշված սկզբունքները խախտելու դեպքում Ազգերի լիգայի կանոնադրության համաձայն կազմակերպությունը իրավասու էր անգամ դիմելու պատժամիջոցների, ընդհուպ մինչև ռազմական ուժի կիրառման՝ իրավունքը, արդարությունն ու խաղաղությունը վերականգնելու համար<sup>223</sup>: Նշված միջազգային փաստաթղթերը շարունակեցին միջազգային պայմանագրային իրավունքի կոդիֆիկացիայի (համակարգման) գործընթացը, և պետք է արձանագրել, որ թե՛ Մոսկվայի, և թե՛ առավել ևս Կարսի պայմանագրերում ակնհայտորեն նկատվում են արդեն իսկ այդ պահին միջազգային իրա-

վունքի անբաժան մասը կազմող պայմանագրային պարտավորությունները կատարել տալու նպատակով ուժի կիրառման բացառման ու պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը չխախտելու նորմերի ու սկզբունքների կոպիտ խախտումները:

Միջազգային պայմանագրերի սովորությալին իրավունքն ամբողջականացնող հիմնական միջազգային փաստաթուղթ համարվում է Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիան, որն ամբողջականացրեց միջազգային իրավունքի պայմանագրային ուղղության կոդիֆիկացիան, և ներկայումս ցանկացած երկկողմ կամ բազմակողմ պայմանագրի օրինականության հարցը ճշտգրտվում է հենց սովյալ փաստաթղթի դրույթներով: Այս իմաստով ծագում է Վիեննայի կոնվենցիայի հետագարձ ուժի և Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի նկատմամբ նրա կիրառելիության հարցը: Կոնվենցիայի 4-րդ հոդվածով այն կիրառելի է միայն կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո պետությունների կողմից ստորագրված պայմանագրերի նկատմամբ, սակայն նույն հոդվածով նաև սահմանվում է, որ կոնվենցիայի հետագարձ ուժի բացառման դրույթը չպետք է վնաս հասցնի կոնվենցիայում շարադրված միջազգային իրավական նորմերի գործադրմանը, որոնք կիրառելի են պայմանագրերի նկատմամբ ընդհանրապես<sup>224</sup>: Այս հոդվածով փաստորեն արձանագրվում է Վիեննայի կոնվենցիայի կոդիֆիկացնող բնույթը, այսինքն՝ կոնվենցիայում նոր չի հայտնագործվել, այլ ընդամենը ամփոփվել են մինչ այդ միջազգային պայմանագրերի սովորությալին իրավունքին վերաբերող նորմեր:

Մոսկվայի պայմանագրով Հայաստանի տարածքներից Կարսը, Արդահանը, Սուրմալուն հանձնվում էին Թուրքիային: Ի դեպ, հատկանշական է, որ Թուրքերն այս տարածքների նկատմամբ իրենց իրավունքները շարունակում էին վկայակոչել ռազմական գրավման պայմաններում անցկացրած հանրաքվեի արդյունքների հիման վրա<sup>225</sup>: Ուղղակի անհեթանակություն էր, որ այս տարածքների նկատմամբ քեմալականներն իրենց «իրավունքները հիմնավորում էին» Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսվող հանրաքվեով, իսկ բոլշևիկները համակերպվում էին դրա հետ, թեև դեռ երկու տարի առաջ, 1918 թ. սեպտեմբերի 20-ին չեղյալ էին համարել սովյալ պայմանագիրը:

<sup>221</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 428.

<sup>222</sup> Sh'u Международное право. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001.

<sup>223</sup> Sh'u Версальский мирный договор. Полный перевод с французского под редакцией Ю. В. Ключникова и А. Сабанина. М.: Издание Литиздата НКВД, 1925, с. 7-15.

<sup>224</sup> Международное право в документах, с. 71.

<sup>225</sup> Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, էջ 231:

Մոսկվայի պայմանագրի երրորդ հոդվածով Նախիջևանը հանձնվում էր Ադրբեջանի խնամակալությանը, պայմանով, որ վերջինս այն չի զիջի երրորդ պետությանը<sup>226</sup> (այսինքն՝ Հայաստանին): Այս դրույթները միջազգային իրավունքի *jus cogens* (իմպերատիվ), այսինքն՝ պարտադիր ու անբեկանելի նորմի խախտում են: Համաձայն Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի, պայմանագիրը կարող է պարտադիր լինել միայն այն ստորագրող կողմերի համար, իսկ 35-րդ հոդվածով այլ կողմերի միջև ստորագրված պայմանագիրը կարող է պարտավորություն առաջացնել երրորդ կողմի համար միայն այն դեպքում, երբ այն որոշակիորեն գրավոր ձևով ստանձնել է այդ պարտավորությունը<sup>227</sup>:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը 1917 թ. հոկտեմբերի 26-ի «Խաղաղության մասին» դեկրետով առանց հստակ ու կամավոր համաձայնության փոքր ժողովուրդների մեծ ժողովուրդներին կամ պետություններին միացնելը և տիրապետելը անկախ դրա կատարման ժամկետից զնահատում էր իբրև այդ ժողովուրդների տարածքի բռնակցում: Իսկ 1918 թ. հունվարի 15-ի «Խորհրդային կառավարության ազգային քաղաքականությանը հավանություն տալու» խորհուրդների համառուստանյան երրորդ համագումարի որոշումով արձանագրվում էր, որ խորհրդային իշխանությունները Ռուսական կայսրության կազմում բռնությամբ պահվող ժողովուրդների ազգային հարցերում միանշանակ պետք է առաջնորդվի ազգերի ինքնորոշման սկզբունքով<sup>228</sup>: Այսպիսով Խորհրդային Ռուսաստանը փաստորեն հրաժարվել էր Ռուսաստանյան կայսրության տարածքներից՝ իբրև ժառանգությունից, ինչի արդյունքում անկախություն ստացան Ֆինլանդիան և Ուկրաինան: Ռուսական կայսրության նախկին տարածք հանդիսացող Արևելյան Հայաստանում հռչակվել էր անկախ, ինքնիշխան պետություն, որը որևէ փաստաթղթով չէր ընդունել Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը՝ Թուրքիայի հետ իր հարաբերություններում և հետևաբար՝ չէր տվել իր գրավոր համաձայնությունը, կամ չէր լիազորել Մոսկվայի պայմանագիրը ստորագրող կողմերին որոշելու իր տարածքների ճակատագիրը<sup>229</sup>: Համաձայն Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածի *jus cogens* իմպերատիվ սկզբունքնե-

րի խախտումով կնքված պայմանագրերն առ ոչինչ են և չեն կարող ունենալ իրավական ուժ<sup>230</sup>:

Այսպիսով, Մոսկվայի պայմանագիրը ստորագրվեց առանց Հայաստանի մասնակցության, իսկ որևէ պայմանագիր կարող է պարտավորություն ղեկել միայն այն ստորագրող կողմերի, այլ ոչ թե երրորդ կողմի վրա: Հայաստանն այդ պայմանագրի կողմ չէր, հետևաբար՝ հայկական հողերի հանձնումը չի կարող համարվել պարտավորություն Հայաստանի համար, եթե անգամ անտեսենք այն հանգամանքը, որ տվյալ պայմանագրով խախտվել է ազգերի ինքնորոշման իրավունքը<sup>231</sup>: Հայաստանը պայմանագիրը ստորագրելու պահին թեև խորհրդային, սակայն ինքնիշխան պետություն էր: Նույնիսկ փետրվարյան ապստամբության ժամանակ Հայաստանը ժամանակավորապես ընդհանրապես դուրս էր եկել Խորհրդային Ռուսաստանի ազդեցության տակից: Ի դեպ, հենց այս պատրվակով Ալեքսանդր Բեկզադյանի պատվիրակությանը թույլ չտվեցին մասնակցել ոչ բանակցություններին, ոչ էլ պայմանագրի ստորագրմանը, նշելով, թե ինքը ներկայացնում է մի կառավարություն, որը տապալվել է Հայաստանում, ուստի նա իրավասու չէ Հայաստանի անունից մասնակցել պայմանագրի կնքմանը: Կարծում ենք, որ եթե անգամ Հայաստանում ապստամբություն չլիներ էլ, բոլշևիկներն ու քեմալականները այլ պատրվակ կգտնեին հայկական պատվիրակությանն այդ պահին իրենց գործարքից հեռու պահելու համար:

Հատկանշական է, որ Խորհրդային Ռուսաստանը Մոսկվայի պայմանագիրը ստորագրել է նաև իր ներպետական իրավական ակտերի խախտումով: Ինչպես հայտնի է, իր առաջին արտաքին քաղաքական փատաթղթում «Խաղաղության մասին դեկրետում» խորհրդային կառավարությունը սկզբունքորեն դատապարտել էր անեքսիան, այն բնութագրելով ոչ միայն որպես օտարի տարածքի բռնագրավում, այլև իբրև որևէ ազգի ազատորեն արտահայտված կամքին հակառակ, բռնությամբ նրան որևէ պետության կազմի մեջ պահելու միջոցով՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի ոտնահարում: Հետևաբար, ստորագրելով Մոսկվայի պայմանագիրը և Թուրքիայի սեփականությունը ճանաչելով Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հակառակ իր հռչակած սկզբունքների ճանաչում և վավերացնում էր

<sup>226</sup> Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 500–501:

<sup>227</sup> Международное право в документах, с. 81.

<sup>228</sup> Stix Декреты Советской власти. Том I. 25 октября 1917 г. – 16 марта 1918 г. М., 1957.

<sup>229</sup> Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 212:

<sup>230</sup> Международное право в документах, с. 87.

<sup>231</sup> Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 106:

Թուրքական անեքսիայի արդյունքը<sup>232</sup>: Էլ չենք խոսում 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին դեկրետի» մասին, որով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև անկախության հռչակում:

Պետք է արձանագրել, որ Մոսկվայի պայմանագրի կոնկրետ հոդվածներն ուղղակի Հակասության մեջ են մեկը մյուսի հետ: Այսպես, միջազգային իրավունքում առկա ուժի սպառնալիքի կամ հարկադրանքի տակ ստորագրված պայմանագրերի անընդունելիության պարտադիր սկզբունքն ամրագրված է Մոսկվայի պայմանագրի հենց 1-ին հոդվածով<sup>233</sup>: Ու թեև կողմերը քողարկված կերպով նկատի են ունեցել միայն Սևրի պայմանագիրը, սակայն տվյալ հոդվածում խոսքը ոչ թե կոնկրետ, այլ ընդհանրապես բոլոր պայմանագրերի մասին է:

Սակայն, այս նորմի ամրագրումը չխանգարեց, որ 15-րդ հոդվածով Ռուսաստանը Թուրքիայի հանդեպ պարտավորություններն ստանձնի՝ քայլեր ձեռնարկելու անդրկողմասյան հանրապետությունների նկատմամբ, որպեսզի նրանք Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր կարգով ճանաչեն Մոսկվայի պայմանագրի անմիջականորեն իրենց վերաբերող հոդվածները<sup>234</sup>: Դա նշանակում էր, որ Ռուսաստանը պարտավորվում էր ճնշման և ահաբեկման միջոցով ստիպել մասնավորապես Հայաստանին ճանաչել Թուրքիայի հետ կնքված իր ապօրինի գործարքը, ինչը միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում է: Այսպիսով՝ քիչ անց Կարսում ստորագրված փաստաթղթի հիմքը կազմող Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային իրավունքի կոպիտ խախտումներով և այն չի կարող ճանաչվել որպես իրավական ուժ ունեցող պայմանագիր:

Խորհրդային Ռուսաստանը չհապաղեց կատարել Թուրքիային տված իր խոստումը, նրա նախաձեռնությունները նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրվեց փաստաթուղթ մի կողմից Թուրքիայի, իսկ մյուս կողմից Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի միջև: Այն, որ Ռուսաստանը մինչև այդ արդեն սկսել էր կատարել Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը և ճնշում էր գործադրում Հայաստանի վրա, որ պայմանագիր կնքի Թուրքիայի հետ, ակնհայտորեն խոսում է այն մասին, որ այն արդեն

իսկ վավերացվել և ուժի մեջ էր մտցվել նրա կողմից: Այսպիսով, Կարսի պայմանագիրը հանդիսանում էր Մոսկվայի պայմանագրի հետևանքը և կրում էր զուտ ձևական բնույթ, որով Ռուսաստանը և Թուրքիան փորձում էին իրավական տեսք տալ իրենց ապօրինի գործարքին<sup>235</sup>: «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն. «Պայմանագիրն առ ոչինչ է, եթե նրա ստորագրումը հանդիսանում է ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք՝ ի խախտումն միջազգային իրավունքի այն սկզբունքների, որոնք արտացոլվել են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ»<sup>236</sup>:

Կարսի պայմանագիրը ստորագրվեց Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ ի դեմս Լատվիայում Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի Յակով Գանեցկու<sup>237</sup>: Ռուսաստանի մասնակցությունը տվյալ պարագայում բացատրվում էր Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով, ի կատարումն որի Ռուսաստանի ներկայացուցչից 15-րդ հոդվածով է Կարսի պայմանագրի ստորագրմանը: Գանեցկու միջոցով մասնակցել է Կարսի պայմանագրի ստորագրումը Հայաստանի ներկայացուցիչների Ա. Մուսվյանի և Պ. Մակինցյանի գործողությունները, որպեսզի չձախողվի Մոսկվայի գործարքը: Սակայն այս հանգամանքը նույնպես համարվում է միջազգային իրավունքի սկզբունքների կոպիտ խախտում: Նույն՝ Վիեննայի կոնվենցիայի 51-րդ հոդվածով սահմանվում է, որ այն դեպքում, երբ պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, այդ համաձայնությունը չի կարող իրավական ուժ ունենալ<sup>238</sup>:

Հայ ներկայացուցիչները բոլշևիկյան քարոզչության ազդեցության տակ Կարսի պայմանագիրը ստորագրելու ժամանակ թերևս համոզված էին, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը «չարյաց փոքրագույն» են Հայաստանի ու Հայ ժողովրդի համար, և որ դա Խորհրդային Ռուսաստանի միջնորդությամբ փրկության միակ հնարավորությունն է, քանզի դաշնակցական կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրոպոլի պայմանագրով արդեն տարածքային մեծ զիջումներ էր կատարել Թուրքերին<sup>239</sup>: Ասվածի ապացույցը թերևս նաև այն է, որ Կարսի պայմանագրի 1-ին հոդվածով չեղյալ էին համարվում մինչ այդ ստո-

<sup>232</sup> Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, էջ 236:

<sup>233</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 500:

<sup>234</sup> Նույն տեղում, էջ 504:

<sup>235</sup> Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 107:

<sup>236</sup> Международное право в документах, с. 86.

<sup>237</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 518:

<sup>238</sup> Международное право в документах, с. 86.

<sup>239</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 770:

րագրված երկկողմ պայմանագրերը<sup>240</sup>, ինչի տակ պետք է հասկանալ նախևառաջ Ալեքսանդրոպոլի պայմանագիրը:

Այս առիթով պետք է նշել սակայն, որ Ալեքսանդրոպոլի պայմանագիրն առանց այդ էլ չուներ և չէր կարող ունենալ իրավական ուժ հետևապես պատճառներով

1. պայմանագիրը հայկական կողմից ստորագրել են արդեն տապալված դաշնակցական կառավարության ներկայացուցիչները, որոնք իրավասու չէին այն ստորագրել,

2. պայմանագիրը ստորագրվել է ուժի սպառնալիքի գործադրման պայմաններում,

3. Համաձայն Ալեքսանդրոպոլի պայմանագրի 15-րդ հոդվածի՝ պայմանագիրը պետք է վավերացվեր մեկ ամսվա ընթացքում, սակայն այն ընդհանրապես չի վավերացվել:

Բացի այդ, չպետք է մոռանալ, որ այդ Ալեքսանդրոպոլի պայմանագիրը նույնպես բոլշևիկա-քեմալական խաղերի և Հայաստանի վրա իրականացված երկկողմ ճնշումների հետևանք էր: Մոսկվայի Համաժողովից մինչև Կարսի Համաժողով ընկած ժամանակամիջոցում Ալեքսանդրոպոլի պայմանագրի փաստարկով հայկական կողմին ապակողմնորոշելը նույնպես միջազգային իրավունքի նորմերի խախտում էր: Վիեննայի կոնվենցիայի 49-րդ հոդվածի համաձայն պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցիչ խաբուսթյան կամ ապակողմնորոշման միջոցով<sup>241</sup>:

Կարսի փաստաթուղթը բառացի կրկնում ու վերարտադրում էր Մոսկվայի պայմանագրի հոդվածները և այդ ճանապարհով «օրինակա-նացնում էր» Մոսկվայի բոլշևիկա-քեմալական գործարքը: Հատկանշա-կան է, որ Թուրքիայի հետ փոխադարձ պայմանավորվածությամբ Կար-սի պայմանագրի կողմ չհանդիսացող Խորհրդային Ռուսաստանը ավելի շուտ վավերացրեց տվյալ պայմանագիրը (1922 թ. մարտի 16)<sup>\*</sup>, քան

<sup>240</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 518:

<sup>241</sup> Международное право в документах, с. 86.

\* Ռուսաստանն ընդհանրապես չպետք է վավերացնի Կարսի փաստաթուղթը, քան-զի այն տվյալ պայմանագրի կողմ չէր հանդիսանում: Նրա կողմից այս պայմանագրի հենց մոսկովյան գործարքի նույն օրը վավերացնելը նպատակ էր հետապնդում մեկ անգամ ևս ցույց տալ թուրքերին, որ իրենք հավատարիմ են կայացած գործարքին, մյուս կողմից էլ ճնշում գործադրել մասնավորապես Խորհրդային Հայաստանի վրա, որ վերջինս արագացնի իրեն պարտադրված փաստաթղթի վավերացումը:

կողմ հանդիսացող Խորհրդային Հայաստանը (1922 թ. մարտի 20)<sup>242</sup>: Այս կերպ օր առաջ Ռուսաստանը ջանում էր վերահաստատել իր հավա-տարմությունը Թուրքիայի հետ Մոսկվայում կայացած գործարքին:

Թվարկված կուպիտ խախտումների հանրազումարը գալիս է հաս-տատելու, որ միջազգային իրավունքի տեսակետից Կարսում ստորագր-ված փաստաթուղթը չի կարող համարվել առանձին պայմանագիր, այլ լավագույն դեպքում՝ Մոսկվայի անօրինական գործարքի հավելված:

Քանի որ Կարսում ստորագրված դե-յուրե անօրինական փաստաթղթի հիման վրա սահմանագծվեց Հայ-թուրքական սահմանը, ուստի հարկ ենք համարում միջազգային իրավունքի տեսակետից քննության առնել դրա հոդվածներն ու դրույթները: Փաստաթղթի 1-ին իսկ հոդվածում բացի մինչ այդ պայմանավորվող կողմերի միջև ստորագրված փաստաթղթերից, ուժը կորցրած են համարվում նաև երրորդ երկրների կողմից կնքված պայմանագրերը, որոնք վերաբերում են Անդրկովկասյան հանրապետու-թյուններին<sup>243</sup>: Սույն հոդվածի հատուկ ձևակերպումներից անմիջապես հասկացվում է, որ փորձ էր կատարվում չեզոքացնել Աևրի պայմանագիրը: Առավել ևս, որ նույն հոդվածը բացառություն էր անում միայն 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի համար, քանզի այդ անօրինական գործարքն էր կազմում Կարսում պարտադրված փաստաթղթի հիմքը: Սա-կայն առաջին հոդվածին տրամաբանորեն հակասում է Կարսի փաստաթղ-թի 2-րդ հոդվածը, որով «Թուրքիան համաձայնվում էր չճանաչել որևէ միջազգային պայմանագիր կամ ակտ, որը վերաբերում է Հայաստանին, Ադրբեյջանին ու Վրաստանին և ճանաչված չէ այդ երկրների կառավա-րությունների կողմից, որոնք այսօր ներկայացնում են Հայաստանի, Ադր-բեյջանի և Վրաստանի խորհուրդներին»<sup>244</sup>:

Խորհրդային Հայաստանը Մոսկվայի պայմանագիրը ճանաչել է միայն Կարսի պայմանագրի ստորագրումով, այսինքն՝ մինչ այդ պահը Հայաստանը չի ճանաչել Մոսկվայի պայմանագիրը: Խորհրդային Հա-յաստանի կառավարութունը նույնիսկ բողոք է ներկայացրել Ռուսաս-տանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության է լուծել իր տարածքային հարցերը: Հայաստանի արտգործոցն ու պատվիրա-կության ղեկավար Ա. Բեկզադյանը 1921 թ. ապրիլի 15-ին այդ կապակ-ցությամբ հայտարարություն է ուղղել Ռուսաստանի արտգործոցն

<sup>242</sup> Խաչատրյան Կ., ՀԽՍՀ սահմանների հարցը 1921թ. խորհրդա-թուրքական հա-րաբերությունների ոլորտում (Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները), «Լրաբեր հա-սարակական գիտությունների», Սր., 2010, N 1-2, էջ 55:

<sup>243</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 518:

<sup>244</sup> Նույն տեղում, էջ 519:



Ձիչերինին: Իսկ մայիսի 19-ին ՀԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Բեկզադյանի հաշվետվությունը ուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, հավանություն է տվել պատվիրակության քաղաքական գծին<sup>245</sup>:

Այսպիսով, Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի տրամաբանությունից բխում էր, որ Թուրքիան պետք է անվավեր ճանաչեր նաև Մոսկվայի պայմանագիրը, ուստի և անօրինաչափ էր Կարսի փաստաթղթի 1-ին հոդվածով Մոսկվայի պայմանագրի համար բացառություն անելը: Ավելին, Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածը կրկնում էր Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածը, որով պայմանավորվող կողմերը համաձայնվում են չճանաչել ոչ մի պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին հարկադրել են այն ընդունել<sup>246</sup>: Մինչդեռ, Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը հարկադրանքի ամենավառ դրսևորումն է Անդրկովկասյան հանրապետությունների ու մասնավորապես՝ Հայաստանի նկատմամբ: Ուստի Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի վերը նշված դրույթը լիովին չեզոքացնում է ոչ միայն վերջինիս հիմքը կազմող Մոսկվայի պայմանագիրը, այլև իմաստազրկում հենց Կարսում ստորագրված փաստաթուղթը: Հոդվածների միջև առկա այս հակասությունները խոսում են այն մասին, որ գործարքի նախաձեռնողները՝ քեմալականներն ու բոլշևիկները ո՛չ Մոսկվայում և ո՛չ էլ առավել ևս՝ Կարսում առանձնապես ջանք չեն գործադրել ոչ միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները և ոչ էլ անգամ տրամաբանության տարրական կանոնները պահպանելու հարցում: Նրանք ձգտել են ժամ առաջ «օրինականացնել» Մոսկվայում կայացած գործարքը՝ Կարսում Հայաստանի ներկայացուցչի ստորագրությունը դրա տակ դնելու միջոցով:

Պետք է նշել նաև, որ Թուրքիան չի կատարել Կարսի փաստաթղթով իր ստանձնած որոշակի պարտավորությունները: Այսպես՝ համաձայն 14-րդ հոդվածի, պայմանավորվող կողմերը պարտավորվում էին Կարսի փաստաթղթի ստորագրման օրից հաշված 6 ամսվա ընթացքում կնքել 1918–1920 թթ. պատերազմի հետևանքով գաղթածներին վերաբերող հատուկ համաձայնագիր<sup>247</sup>: Իսկ 19-րդ հոդվածով Կարսի փաստաթղթի ստորագրման օրից հաշված 3 ամսվա ընթացքում Անդրկովկասյան հանրապետությունների հետ պետք է կնքվեին հյուպատոսական կոնվեն-

<sup>245</sup> Հակոբյան Հ., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 215:

<sup>246</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 519:

<sup>247</sup> Նույն տեղում, էջ 522:

ցիաներ<sup>248</sup>: Ընդ որում, փաստաթղթի 20-րդ հոդվածը նշված պարտավորությունները ուժի մեջ էր մտցնում ոչ թե վավերագրերի փոխանակման պահից, այլ անմիջապես փաստաթղթի ստորագրման պահից<sup>249</sup>: Այսպիսով, Թուրքիան, ըստ նշված հոդվածների, մինչև 1922 թ. հունվարի 13-ը Անդրկովկասյան հանրապետությունների ու մասնավորապես Հայաստանի հետ պետք է կնքեր հյուպատոսական կոնվենցիա, իսկ մինչև ապրիլի 13-ը՝ գաղթականներին վերաբերող հատուկ համաձայնագիր: Ավելորդ է նշել, որ նման համաձայնագրեր չեն ստորագրվել, մինչդեռ հյուպատոսական համաձայնագրի առկայությունն այսօր Հայաստանի Հանրապետությունը գոնե իրավական հնարավորություն կտար հյուպատոսության միջոցով պաշտպանել Թուրքիայում գտնվող իր քաղաքացիների օրինական շահերն ու իրավունքները: Էլ չենք խոսում գաղթականների համաձայնագրի մասին, որը բացարձակապես ձեռնադրել էր Թուրքիային, քանզի ծագելու էին հայ գաղթականների իրավունքների վերականգնման ու հատուցման բազում հարցեր, որոնք չէին բխում քեմալականների շահերից: Քեմալականներն արդեն իսկ «լուծել էին» իրենց գերինդիրը. Մոսկվայի գործարքը օրինական տեսք էր ստացել Կարսում դրա տակ Հայաստանի ներկայացուցչի ստորագրությունը դնելով, քեմալականների ու բոլշևիկների համար այդ մանրուքներն այլևս նշանակություն չունեին:

Բացի իր պարտավորությունները չկատարելուց, Թուրքիան նաև խախտել է Կարսի փաստաթղթի որոշակի հոդվածներ ու դրույթներ: Այսպես՝ համաձայն 10-րդ հոդվածի, որը Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածի կրկնությունն է, կողմերը պարտավորվել են իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կամ նրա տարածքի մի մասի կառավարման դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև իրենց տարածքում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարել մյուս երկրի դեմ<sup>250</sup>: Ակնհայտ է, որ բոլշևիկների ու քեմալականների համար փոխշահավետ այս դրույթը ուղղված էր Խորհրդային Հայաստանում հայ ավանդական կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության վերականգնման հնարավորությունը բացառելուն: Պետք է նշել, սակայն, որ Թուրքիան իր տարածքում ոչ միայն թույլ է տվել հակահայկական կառույցների առաջացումը, ի

<sup>248</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 522:

<sup>249</sup> Նույն տեղում:

<sup>250</sup> Նույն տեղում, էջ 521:

ղեմա «Գորշ գայլերի» և այլ ազգայնական ու իսլամիստական կազմակերպությունների, այլև մինչ օրս հովանավորում է դրանց: Ավելին՝ թուրքական պետությունն ի ղեմա իր բարձրաստիճան պաշտոնյաների, վարում է ակնհայտ հակահայկական քարոզչություն:

Կարսի փաստաթղթի 17-րդ հոդվածով կողմերը պարտավորվել են «առանց որևէ կասեցումների ապահովել մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումը»<sup>251</sup>: Մինչդեռ, թուրքիան 1993-ից մինչ օրս իրականացնում է Հայաստանի շրջափակումը՝ միակողմանիորեն փակելով սահմանը, ինչով խախտում է Կարսի փաստաթղթի համապատասխան հոդվածը: Ավելին, համաձայն Կարսի փաստաթղթի 2-րդ հավելվածի, Արաքսի գոտու հատվածում թուրքիան պարտավորվել է Ալեքսանդրոպոլ-Երևան երկաթուղու երկաթուղուց 8 և 4 վերստ հեռավորության վրա գտնվող գծերով սահմանված գոտիներում չպահել կանոնավոր գործքեր<sup>252</sup>: Մինչդեռ քաջ Հայտնի է, որ 1942—43 թթ. թուրքական գործքերը Հայ-թուրքական սահմանի մոտ սպասում էին Ստալինգրադի ճակատամարտի ելքին՝ Հայաստան ներխուժելու նպատակով, իսկ 1993 թ. թուրքիան չբավարարվեց միայն Հայաստանի շրջափակումով, այլ կատարեց երկրորդ հակօրինական քայլը՝ դիմեց «ուժի ցուցադրության», սահմանի մոտ տեղակայելով թուրքական կանոնավոր գործքեր:

Այժմ տեսնենք, թե վերը նշված փաստարկներով հանդերձ, ժամանակակից միջազգային իրավունքն ինչ հնարավորություններ է ընձեռում Հայաստանի Հանրապետությանը:

Հիմք ընդունելով Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 49-րդ հոդվածը, ըստ որի պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչի խաբեության կամ ապակողմնորոշման միջոցով, 51-րդ հոդվածը, ըստ որի պայմանագիրն առ ոչինչ է այն դեպքում, երբ պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, 52-րդ հոդվածը, ըստ որի պայմանագիրն առ ոչինչ է, եթե նրա ստորագրումը հանդիսանում է ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք, Կարսի փաստաթուղթը կարող է համարվել առ ոչինչ: Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 69-րդ հոդվածի 1-ին կետով առ ոչինչ համարվող պայմանագրերը իրավական ուժ չունեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի

համաձայն, եթե պայմանագիրն առ ոչինչ է համարվում կոնվենցիայի 49, 50, 51 կամ 52 հոդվածների հիմքերով, ապա նշված գործողություններում պատասխանատու կողմը որևէ պահանջի իրավունք չունի մյուս կողմի նկատմամբ<sup>253</sup>: Սա նշանակում է, որ նշված գործողություններն ապացուցվելու դեպքում թուրքիան ոչ մի պահանջ չի կարող ներկայացնել Հայաստանին՝ Կարսի փաստաթղթով ստանձնած պարտավորությունների հետ կապված: Տվյալ պարագայում Հայաստանը պարտավոր կլինի այդ մասին պաշտոնապես գրավոր տեղեկացնել պայմանագրի մյուս մասնակիցներին՝ թուրքիային, Վրաստանին, Ադրբեյջանին և Ռուսաստանին: Ընդ որում, գրավոր փաստաթղթում պետք է նշված լինեն ոչ միայն նման քայլի հիմքերը, այլև առաջարկություններ ներկայացվեն պայմանագրի հետագայի վերաբերյալ<sup>254</sup>: Կարսի փաստաթղթի մասնակիցները պետք է եռամսյա ժամկետում պատասխանեն Հայաստանի գրավոր ուղերձին, իսկ կողմերի միջև ծագած հակասությունների դեպքում հարցը լուծումը պետք է հանձնվի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին:

Սակայն, այս հարցում Վիեննայի կոնվենցիայի դրույթներով առաջնորդվելով և դրանց հիման վրա Կարսի փաստաթղթի առ ոչինչ Հայտարարումն անուղղակիորեն կնշանակի, որ մինչ այդ քայլն անելը մենք փաստորեն ընդունել ենք դրա օրինականությունը: Ուստի Հայաստանի Հանրապետությունն այս հարցում կարող է *Tabula rasa* (մաքուր թղթի) սկզբունքից ելնելով և առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, համաձայն որի Հայաստանի Հանրապետության համար միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում և դառնում ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս միայն նրա կողմից վավերացվելուց հետո<sup>255</sup>, ինչը նշանակում է, որ ՀՀ կողմից չվավերացված Կարսի փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության համար իրավական ուժ չունի:

Ինչ վերաբերում է պայմանագրային իրավունքում ընդունված վաղեմության ժամկետի՝ էստոպելի սկզբունքին, ապա այս հարցը կարգավորվում է Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածով, որտեղ նշվում է, որ պայմանագիրը չեղյալ համարելու կամ վերանայելու պահանջի ժամկետները համարվում են բացթողնված այն դեպքում, երբ պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լուելայն համաձայնվել

<sup>253</sup> Международное право в документах, с. 92.

<sup>254</sup> Նույն տեղում, с. 91.

<sup>255</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 2005 թ. նոյեմբերի 27-ին, հոդված 6, էջ 9—10:

<sup>251</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 523:

<sup>252</sup> Նույն տեղում, էջ 526:

է կատարված փաստի հետ: Իսկ երբ կողմը որոշակի գործողությունների միջոցով հայտարարություններ, բողոքի նոտաներ և այլն, հայտնում է իր անհամաձայնությունը, ապա տվյալ փաստաթղթի նկատմամբ չի կարող կիրառվել վաղեմության պահանջի սկզբունքը<sup>256</sup>: Մոսկվայի ու Կարսի փաստաթղթերի հետ կապված վաղեմության ժամկետի պահանջը չի կարող կիրառվել, քանի որ Խորհրդային Հայաստանը դեռ 1921 թ. ապրիլի 15-ին է բողոք ներկայացրել Կարսի փաստաթղթի հիմքը կազմող Մոսկվայի անօրինական գործարքի դեմ, իսկ հետագայում, 1945 թվականի հուլիսի 22-ին Պոտսդամի կոնֆերանսի կառավարությունների ղեկավարների վեցերորդ նիստի ժամանակ ԽՍՀՄ-ը Խորհրդային Հայաստանի ու Վրաստանի անունից տարածքային հարց է բարձրացրել Թուրքիայի առաջ, պահանջելով վերադարձնել Կարսն ու Արդահանը<sup>257</sup>, ինչը պետք է համարել Կարսի փաստաթղթի վիճարկում:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ Կարսում ստորագրված փաստաթղթի և հատկապես դրա Հայաստանի կողմից անվերապահորեն ընդունելու հարցը բավականին արդիական էր նաև հայ-թուրքական վերջին արձանագրություններում: Մասնավորապես «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» արձանագրության մեջ նշվում էր, որ ստորագրող կողմերը վերահաստատում են երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով<sup>258</sup>: Արձանագրության տեքստում սահմանի փոխադարձ ճանաչման ոչ թե հաստատելու, այլ վերահաստատելու հանգամանքի ընդգծումը մեխանիկորեն առաջ է քաշում հենց Կարսի փաստաթղթի վերջնական ճանաչումը, քանզի «փաստացի գոյություն ունեցող հայ-թուրքական սահմանի հարցը կարգավորող» այլ փաստաթուղթ ուղղակի չկա:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանի համար Կարսի փաստաթղթի հետևանքների չեզոքացնելու որևէ քայլ կատարելուն պետք է նախորդի լուրջ նախապատրաստական աշխատանք, հաշվի առնելով նաև աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումները: Գաղտնիք չէ, որ միջազգային իրավական նորմերն ու սկզբունքներն ազդեցիկ տե-

րությունները ծառայեցնում են իրենց շահերն իրացնելու և նպատակներին հասնելու համար՝ երբեմն նաև խախտելով, կամ իրենց ձեռնադրելով մեկնաբանելով դրանք: Ու եթե նույնիսկ նրանք միջազգային հարաբերություններում իրենց կատարած գործողությունները ձգտում հիմնավորել միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով, ապա Հայաստանի Հանրապետությունն առավել ևս չպետք է իրեն շոյալու թույլ տա՝ հրաժարվելով պաշտպանել ոչ միայն իր, այլև ողջ հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքները այն հնարավորություններով, որոնք ընձեռում է միջազգային իրավունքը, մասնավոր, որ մեր հարևանները վաղուց այդ իրավունքը խեղաթյուրված ձևով օգտագործում են մեր դեմ:

### 2.13. Ոչ մահամեղական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Թուրքիայի պարտավորությունները Լոզանի պայմանագրով և վերջինիս հարաբերակցությունը Սևրի պայմանագրի և իրավար վճռի հետ

Մոսկվայի ու Կարսի անօրինական պայմանագրերով բոլշևիկյան Ռուսաստանի օգնությամբ Սևրի պայմանագիրը տապալելու փորձերից հետո, Թուրքերը ցանկանում էին նախկին Անտանտի տերությունների հետ ստորագրվելիք պայմանագրով այդ հարցում վերջակետ դնել, որը նախատեսվում էր կնքել Լոզանի խորհրդածողովում: Պետք է նշել, որ Թուրքերի և բոլշևիկների միջև 1921 թ. կնքված Մոսկվայի պայմանագիրը, իսկ հետո էլ Կարսի փաստաթղթում այդ պայմանավորվածությունների տակ արդեն Խորհրդային Հայաստանի ստորագրության առկայությունը ձեռքերի որոշակի ազատություն տվեց եվրոպական տերություններին, որոնք համարում էին, որ արդեն որոշ «արդարացումներ» ունեին Սևրի դաշնագրի ու մասնավոր Վիլսոնի իրավարար վճռի պահանջների վրա աչք փակելու, ինչպես նաև բոլշևիկների հետ Թուրքերին զիջումներ կատարելու մրցավազքի մեջ մտնելու համար:

Ի տարբերությունը Սևրի պայմանագիրը փոփոխելու Լոնդոնի՝ ճախողված խորհրդածողովի, 1922–23 թթ. Լոզանի միջազգային կոնֆերանսում հավաքված տերությունները պաշտոնապես չհայտարարեցին Սևրի պայմանագրի վերանայման իրենց մտադրության մասին: Ակնհայտ էր, որ ի տարբերություն Լոնդոնի խորհրդածողովի, այստեղ հավաքվել էին լրիվ այլ՝ հույն-թուրքական պատերազմի արդյունքների ամփոփման, նոր Թուրքական իշխանություններին Օսմանյան կայսրությունից նա-

<sup>256</sup> Международное право в документах. с. 85.

<sup>257</sup> Դաշնակից երեք տերությունների ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2), Եր., 1989, էջ 168:

<sup>258</sup> Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ 19–20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 440:

խորդ պայմանագրով արդեն իսկ օտարված տարածքների փաստը և օսմանյան պարտքերի վճարումը պարտադրելու և դրա դիմաց նրանց կարգավիճակը հստակեցնելու հարցերի համար:

Այս հարցերի հետ մեկտեղ Լոնդոնի համաժողովի իններցիայով փորձ կատարվեց Հայկական հարցը կրկին «լուծել» Հայկական օջախի ճախողված գաղափարի վերակենդանացման միջոցով: Առաջարկվում էին երեք հնարավոր տարբերակներ. ա) Հայկական ազգային օջախի ստեղծում, բ) Հայաստանի ընդարձակում՝ նրան կցելով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի ծով ելքով, գ) Հայկական ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում: Այս առաջարկները, սակայն, մերժվեցին Թուրքական պատվիրակության կողմից պատճառաբանելով, որ Թուրքիայի ո՛չ արևելյան նահանգներում, ո՛չ էլ Կիլիկիայում չկա որևէ տարածք, որի բնակչություն մեծ մասը թուրքեր չլինեն<sup>259</sup>: Այսպիսով, ինչպես Լոնդոնի խորհրդաժողովում, այնպես էլ Լոզանում, թուրքերը, մերժելով Հայկական հարցի լուծման «Հայկական օջախի» ստեղծման տարբերակը, մեխանիկորեն մերժում էին նաև Աևրի պայմանագրի համապատասխան դրույթների վերանայումը, քանզի, ինչպես հայտնի է, դրանցով Հայկական հարցին լրիվ այլ լուծում էր տրվել: Մինչդեռ միևնույն խնդրին նոր լուծում տալով միայն կարելի էր վերանայել նախորդ պայմանագրի դրույթները:

Այժմ անդրադառնանք 1923 թ-ի Հուլիսի 24-ին մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի և մյուս կողմից Թուրքիայի միջև կնքված Լոզանի պայմանագրի որոշ դրույթներին:

Լոզանի պայմանագրի 2-րդ հոդվածով հստակեցվում էին Թուրքիայի սահմանները Բուլղարիայի և Հունաստանի, իսկ 3-րդ հոդվածով՝ Սիրիայի և Իրաքի հետ<sup>260</sup>: Պայմանագրի 16-րդ հոդվածի առաջին պարբերությամբ Թուրքիան հրաժարվում է բոլոր այն տարածքների նկատմամբ իր իրավունքներից, որոնք գտնվում են տվյալ պայմանագրով գծված սահմաններից դուրս<sup>261</sup>: Փաստորեն սահմանների հետ կապված Լոզանի պայմանագրով հստակեցվում էին Թուրքիայի միայն արևմտյան և հարավային սահմանները և ոչ մի խոսք չկար արևելյան, մասնավորապես Հայաստանի հետ սահմանների մասին:

Թուրքական այն «բացատրությունները», թե Լոզանում արևելյան սահմանների ու մասնավորապես Հայաստանի հետ սահմանի հարցը չքննարկվեց, քանի որ այդ հարցն արդեն իսկ լուծված էր Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով չի դիմանում քննադատության մեջ այն պարզ պատճառով, որ եվրոպական տերությունների գաղափարական ու քաղաքական հակառակորդ հանդիսացող Խորհրդային Ռուսաստանի հետ կատարված երկկողմ գործարքը չէր կարող պարտադիր լինել Լոզանի խորհրդաժողովին հավաքված տերությունների համար:

Իբրև ասվածի ասպարեց հատկանշական է այն փաստը, որ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը Լոզանի վեհաժողովում թույլ տվեցին մասնակցել միայն սեւոյան նեղուցների հարցերին նվիրված բանակցություններին: Մյուս բոլոր հարցերում տերությունները թուրքերի հետ վարում էին առանձին բանակցություններ: Մոսկվայում և Կարսում բոլշևիկներից ստանալով իրենց ուզածը, թուրքերն արդեն կորցրել էին հետաքրքրությունը խորհրդային «դաշնակցի» նկատմամբ և նույնպես շահագրգռված չէին, որ եվրոպական տերությունների հետ իրենց բանակցություններին մասնակից լինեին Ռուսաստանի ներկայացուցիչները: Նույնիսկ այդ առհամարանքի պայմաններում խորհրդային պատվիրակությունը անիքնասիրաբար վեհաժողովի մասնակիցներին 1922 թ. դեկտեմբերի 30-ին Հղեց Թուրքիայի տարածքային ամբողջության պաշտպանության վերաբերյալ հուշագրի, որը, սակայն, չարժանացավ համաժողովի մասնակիցների ուշադրությանը<sup>262</sup>:

Արևելյան սահմանների հետ կապված թուրքական պնդումներին պատասխան է տրվում, թերևս, Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ, որում նշվում է, որ տվյալ հոդվածի դրույթները չեն տարածվում բարիդրացիական հարաբերություններից բխող այն հատուկ պայմանավորվածությունների վրա, որոնք ձեռք են բերվել կամ կարող են ձեռք բերվել Թուրքիայի և նրա սահմանակից երկրներից որևէ մեկի միջև<sup>263</sup>: Առաջին հայացքից այս անորոշ թվացող ձևակերպումներից կարելի է եզրակացնել, որ տվյալ պայմանագրով չհստակեցվող արևելյան սահմանների հարցը լուծվել կամ լուծվելու է ոչ թե ինչ-որ պայմանագրերի կամ համաձայնագրերի, այլ «հատուկ պայմանավորվածությունների» միջոցով: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Հաագայի 1899 և 1907 թթ. «Միջազգային վեճերի խաղաղ կարգավոր-

<sup>259</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 752:

<sup>260</sup> [http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty\\_of\\_Lausanne](http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne)

<sup>261</sup> Նույն տեղում:

<sup>262</sup> Sh'u Gorokhov И., Замятин Л., Земсков И., Г. В. Чичерин – дипломат ленинской школы, М., 1973, с. 179–183.

<sup>263</sup> [http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty\\_of\\_Lausanne](http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne)

ման մասին» կոնվենցիայով իրավարարության համաձայնվելու դեպքում վեճի կողմերը պայմանավորվածություն են ձևաք բերում ընդունել իրավարարի ցանկացած վճիռ, ապա կոնկրետ թուրքիայի և նրա հարևան Հայաստանի միջև միակ «հատուկ պայմանավորվածություն» հանդիսանում է ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հայ-թուրքական սահմանը սահմանազոծող իրավարար վճիռը<sup>264</sup>: Այսինսով, Լոզանի պայմանագրում այս պարբերության առկայությունն անուղղակիորեն վերահաստատում է թե՛ Սևրի պայմանագրի և թե՛ Վիլսոնի իրավարար վճռի հայ-թուրքական սահմանին վերաբերող դրույթները:

Լոզանի պայմանագրով թուրքիան նոր, հերթական պարտավորություններն էր ստանձնում իր ոչ մահմեդական բնակչության իրավունքների պաշտպանության հետ կապված: Այս առումով պետք է նշել, որ Լոզանի պայմանագրի 37–44-րդ հոդվածներով սահմանված ոչ մահմեդական հպատակների իրավունքների պաշտպանության դրույթները գրեթե բառացիորեն կրկնում էին Բեռլինի պայմանագրի 62-րդ հոդվածի պահանջները, ինչն ինքնին նշանակում էր, որ տերությունները արձանագրում էին Օսմանյան կայսրության կողմից այդ դրույթների չկատարումը և նույն պահանջները առաջադրում էին թուրքիայի նոր իշխանություններին:

Պայմանագրի 37-րդ հոդվածով թուրքիան ընդունում էր, որ 38–44-րդ հոդվածներում ամրագրված պայմանավորվածությունները ճանաչվում են իբրև հիմնական օրենքներ և որևէ օրենք, կանոնակարգ կամ պաշտոնական գործողություն չի կարող հակասել կամ խոչընդոտել այդ պայմանավորվածություններին կամ գերակա լինել դրանց նկատմամբ<sup>265</sup>: Այս հոդվածով թուրքիան փաստորեն անբեկանելի պարտավորություններ էր ստանձնում միջազգային հանրության առջև և ոչ մահմեդական հպատակների իրավունքներին վերաբերող իր ներպետական օրենսդրությունը փաստորեն պետք է համապատասխանեցներ Լոզանի պայմանագրի 38–44-րդ հոդվածներին:

38-րդ հոդվածում ասվում էր, որ թուրքական կառավարությունը պարտավորվում է երաշխավորել թուրքիայի բոլոր բնակիչների կյանքի և գույքի լրիվ և ամբողջական պաշտպանությունը, առանց սեռի, ազգության, լեզվի, ցեղի կամ կրոնի խտրականության<sup>266</sup>: 39-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններով 38-րդ հոդվածի պահանջը մասնավորեցվում էր ոչ մահմեդական թուրքահպատակ փոքրամաս-

նությունների մահմեդականների հետ հավասար քաղաքացիական և քաղաքական իրավունքների հետ կապված<sup>267</sup>:

40-րդ հոդվածի համաձայն ոչ մահմեդական փոքրամասնությունները պետք է հավասար իրավունք ունենային իրենց միջոցներով հիմնադրելու և ղեկավարելու բարեսիրական, կրոնական կամ ընկերային հաստատություններ: Նույն հոդվածով նրանք ստանում էին նաև իրենց կրոնն ու լեզուն ազատորեն գործածելու իրավունքը<sup>268</sup>:

41-րդ հոդվածով նախատեսվում էր, որ այն քաղաքներում և գյուղերում, որտեղ ոչ մահմեդական քաղաքացիները զգալի թիվ են կազմում, թուրքական կառավարությունը պետք է նպաստավոր պայմաններ ստեղծեր՝ նախալրթական դպրոցներ բացելու համար, որպեսզի թուրքահպատակները մայրենի լեզվով դաստիարակվեն իրենց զավակներին<sup>269</sup>:

Կարևոր է նշել, որ Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածով թուրքական իշխանությունները պարտավորվում էին ապահովել ոչ մահմեդական փոքրամասնությունների եկեղեցիների, սինագոգների, գերեզմանատների և կրոնական այլ հաստատությունների պաշտպանությունը և պահպանությունը: Այսինքն համաձայն այս հոդվածի հայկական եկեղեցիները ոչ միայն չպետք է քանդվեին, այլև վերականգնվեին<sup>270</sup>:

Իսկ 44-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում էր ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների հարցերով վեճերը դատական կարգով լուծելու հնարավորությունը: Լոզանի պայմանագրի մասնակից պետություններից մեկի պահանջով հարցը կարող էր տեղափոխվել Արդարադատության միջազգային մշտական ատյան, որի վճիռը պետք է լիներ վերջնական<sup>271</sup>: Այսինքն, գործնականում Լոզանի պայմանագրի անդամ պետություններից յուրաքանչյուրն այսօր էլ թուրքիայի ոչ մահմեդական բնակչության իրավունքների ոտնահարման հարցերով կարող է դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան:

44-րդ հոդվածում նաև նշվում էր, որ ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող վերընշված հոդվածները հանդիսանում են թուրքիայի միջազգային պարտավորությունը դաշնակից տերությունների առջև և դրանց կատարման հսկողությունը դրվում էր Ազգերի լիգայի խորհրդի անդամների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի,

<sup>264</sup> Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը, էջ 38:

<sup>265</sup> [http://www.lib.byu.edu/index.php/Treaty\\_of\\_Lausanne](http://www.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne)

<sup>266</sup> Թորիկեան Ե., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 186:

<sup>267</sup> Թորիկեան Ե., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 186:

<sup>268</sup> Նույն տեղում:

<sup>269</sup> Նույն տեղում:

<sup>270</sup> Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը, էջ 38:

<sup>271</sup> [http://www.lib.byu.edu/index.php/Treaty\\_of\\_Lausanne](http://www.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne)

իտալիայի և Ճապոնիայի վրա: Ընդ որում, հսկողություն իրականացնելը ոչ միայն այդ երկրների իրավունքն էր, այլև պարտականությունը:

Ինչ վերաբերում է Լոզանի պայմանագրում Սևրի պայմանագիրը փոխարինվելու թուրքական փաստարկին, ապա պետք է նշել, որ Սևրի պայմանագիրը փոխված կամ փոխարինված չէ Լոզանի պայմանագրով հետևյալ պատճառներով՝

1. Լոզանի պայմանագրում ոչ մի հիշատակում չկա Սևրի մասին և ոչ մի դրույթ չկա Հայաստանի կամ հայերի մասին: Սևրի պայմանագրի գլխավոր դրույթներից մեկը Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և նրա սահմանների ճշգրտումը բացակայում են Լոզանի պայմանագրում: Սա նշանակում է, որ երկու պայմանագրերի առարկաները լրիվ տարբեր են, ուստի Սևրի պայմանագրի փոփոխման կամ փոխարինման մասին խոսք լինել չի կարող:

2. Սևրի պայմանագրի մեջ ընդհանրապես նախատեսված չէ փոփոխություն կամ հավելում կատարելու հնարավորություն կամ հոդված:

3. Սևրի պայմանագիրը փոփոխելու, կամ այն նորով փոխարինելու մտադրության մասին այն ստորագրած պետությունների կողմից չի հայտարարվել Լոզանի խորհրդածոցովում, ինչը Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 41-րդ հոդվածի պահանջն է<sup>272</sup>: Բացի այդ, միջազգային պայմանագրերի իրավունքի հանրահայտ և հաստատված կանոն է, որ պայմանագիրը ստորագրող պետություններն իրավունք ունեն մասնակցելու նրա փոփոխության ուղղությամբ տարվող բանակցություններին և մշակմանը, որը սահմանված է Վիեննայի կոնվենցիայի 40-րդ հոդվածով<sup>273</sup>: Մինչդեռ Հայաստանը, իբրև Սևրի պայմանագիրը ստորագրող պետություններից մեկը, ավելի ստույգ՝ նրա իրավահաջորդ ինքնուրույն Հայաստանը նույնիսկ հրավիրված չէր մասնակցելու Լոզանի խորհրդածոցովին: Այսպիսով, երկու պայմանագրերին ծնունդ տվող կողմերը նույնը չեն: Ավելին, դաշնագրի կողմ եղած պետություններից մեկը հետագայում առանձին նույնպես իրավունք ունի դառնալու փոփոխված պայմանագրի կողմ, ուստի գոնե հետո Հայաստանը պետք է հրավիրվեր Լոզանի պայմա-

<sup>272</sup> Международное право в документах, с. 83.

<sup>273</sup> Նույն տեղում, с. 82.

\* Պողոս Նուբարիցի հետո Գաբրիել Նորատունկյանի գլխավորած արևմտահայերի ազգային պատվիրակությանը թույլ տրվեց խոսել միայն Լոզանի համաժողովի ենթահանձնախմբում, որը չէր ներկայացնում խորհրդային Հայաստանը:

նագրին միանալու իբրև նախորդ պայմանագրի մասնակից, եթե դրված էր Սևրը Լոզանով փոխարինելու հարցը:

Այդ խորհրդածոցովին Հայաստանի բացակայությունը հիմք է տալիս խոսելու միանգամայն նոր և Սևրի հետ առնչություն չունեցող Լոզանի պայմանագրի մասին, քանի որ փոխվել են պայմանագրի կողմերը, սուբյեկտները, ուստի և Լոզանի պայմանագիրը անզոր և անվավեր է այն չափով, որ չափով որ կարող է փոփոխության ենթարկվել Սևրի պայմանագրում ամրագրված Հայաստանի իրավունքները<sup>274</sup>:

Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն պայմանագրի կողմերը կարող են համաձայնության գալ փոխելու համաձայնագիրը միայն իրենց միջև, եթե խնդրո առարկա փոփոխությունը չի խախտում ստորագրող մյուս կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքները<sup>275</sup>:

Սևրի և Լոզանի պայմանագրերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Լոզանի պայմանագրում պահպանվել են Սևրի պայմանագրի դրույթները կապված թուրքական կայսրությունից անջատվող արաբական երկրների հետ այն նույն՝ հպատակ ժողովուրդների նկատմամբ իշխանության չարաչափման սկզբունքով, որով պետք է անջատվեր նաև Հայաստանը: Հիմնական տարբերությունը կայանում էր նրանում, որ Լոզանի պայմանագիրը չէր կրկնում Սևրով նախատեսված հայերի ցեղասպանության համար պատասխանատվություն սահմանող հոդվածների դրույթները: Սակայն այդ հարցերի չարծարծվելը Լոզանի պայմանագրում չի կարող նշանակել, որ դրանք վերացել կամ փոխարինվել են: Անգամ թուրք պատմաբաններն ընդունում են, որ Լոզանի համաձայնագրում հայերի ջարդերի և Հայաստանի իրավունքների հիշատակման բացակայությունը թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյուլի և Քերզոնի միջև ձեռք բերված գաղտնի պայմանավորվածության հետևանքն էր<sup>276</sup>:

Հատկանշական է, որ Լոզանի համաձայնագիրը կնքելուց անմիջապես առաջ, 1923 թ-ի ապրիլի 15-ին Թուրքիայում օրենք ընդունվեց «լքյալ ունեցվածքի» մասին, որով հայերի ամբողջ ունեցվածքը բռնազրավվում էր, անկախ նրանից, թե ինչ շարժառիթներով ու ինչ հանգամանքներով էին նրանք թողել երկիրը: Ժխտվում էր սեփականության ի-

<sup>274</sup> Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 88-89:

<sup>275</sup> Международное право в документах, с. 83.

<sup>276</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. т. 2, ч. 2, с. 508.

րենց իրավունքների պաշտպանության հնարավորությունը նույնիսկ երաշխավորագրերի միջոցով: Հայերին տրված բոլոր լիազորագրերը հայտարարվեցին անվավեր<sup>277</sup>:

Ոչ մահմեդական փոքրամասնությունների մասին Լոզանի պայմանագրի դրույթները չկիրառելու և Ազգերի լիգայի միջամտության հնարավորությունը բացառելու նպատակով Թուրքիայի կառավարությունը վճռեց փախստական հայերին զրկել թուրքական քաղաքացիությունից: Թուրքիան տասնամյակներ շարունակ խախտել է Լոզանի պայմանագրի ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում նաև հայերի իրավունքների պաշտպանության հոդվածները, ինչի դրսևորում պետք է համարել 1929–1930 թթ. կոտորածները վերապրած 30–40.000 հայերի հարկադիր արտաքսումը դեպի Սիրիա և Թուրքիայի հայկական համայնքի կալվածքների ապօրինի բռնագրավում<sup>278</sup>: Այս հարցում իրենց մեղավորությունն ունեն Լոզանի պայմանագիրը ստորագրած մյուս պետությունները, որոնք թույլ տվեցին Թուրքիային խախտել իր վրա դրված պարտավորությունները:

1926 թ. Փարիզում լույս տեսած «Միջազգային հանրությունը և մեծ տերությունները Հայկական հարցի առջև» իր գրքում 1914 թ. հայկական բարենորոգումների ռուս-թուրքական պայմանագրի նախնական տարբերակի հեղինակ, իրավաբան միջազգայնագետ Ա. Մանդելշտամը միանգամայն իրավացիորեն նշում է, որ տերությունները պետք է դիմեն որոշակի ճնշումների թուրքական իշխանությունների նկատմամբ, որպեսզի պարտադրեին նրանց կատարել ոչ մահմեդականների և մասնավորապես հայերի իրավունքների պաշտպանության հետ կապված պարտավորությունները: Մանդելշտամը նման ճնշման տարբերակներ էր առաջարկում Թուրքիային տնտեսական շրջափակման ենթարկելու սպառնալիքը կամ իբրև պետություն այն չճանաչելու Ազգերի լիգայի որոշումը, որը, նրա կարծիքով, բավական էր քեմալականներին ծնկի բերելու համար<sup>279</sup>: Մանդելշտամի այս դատողություններն արդիական են նաև մեր օրերում արդեն կապված Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականության քաղաքականության կանխման հետ:

Լոզանի պայմանագրով ոչ մահմեդական բնակչության ու մասնավորապես հայերի իրավունքների պաշտպանության Թուրքիայի ստանձ-

նած լրացուցիչ պարտավորություններն իրենց ուժը չեն կորցրել: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը կարող է կոչ անել Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրներին, որ ստիպեն Թուրքիան կատարել ոչ մահմեդականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող 38–44-րդ հոդվածներով իր ստանձնած պարտավորությունները, որոնք տասնամյակների ընթացքում խախտել են նրա կողմից: Հիմք ընդունելով 1969 Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 26-րդ հոդվածում ամրագրված հանրահայտ *Pacta sunt servanda* սկզբունքի կոպիտ խախտումները Թուրքիայի կողմից, որը պարտադիր է համարում պայմանագիրը ստորագրող յուրաքանչյուր մասնակցի համար ստանձնած պարտավորությունների բարեխղճորեն կատարելը<sup>280</sup>, այդ երկրները կարող են սպառնալ, որ կառաջնորդվեն նույն կոնվենցիայի 60-րդ հոդվածով, որը նման դեպքերում հնարավորություն է տալիս դադարեցնել պայմանագիրը մասամբ կամ ամբողջությամբ՝ իրավախախտ պետության՝ Թուրքիայի համար դրանից բխող բոլոր հնարավոր հետևանքներով:

Բացի դրանից, այդ պետությունները կարող են առաջնորդվել հենց Լոզանի պայմանագրի 44-րդ հոդվածի 4-րդ մասով և, ոչ մահմեդականների իրավունքը խախատումը Թուրքիայի հետ համարելով վեճ, դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարանին, որը Արդարադատության միջազգային մշտական ատյանի լուծարումից հետո համարվում է վերջինիս ժառանգորդը: Նման գործընթաց սկսելու համար, ըստ նույն հոդվածի դրույթների, բավարար է անգամ պայմանագրի անդամ պետություններից մեկի պահանջը, իսկ Թուրքիան, ստորագրելով ու վավերացնելով Լոզանի պայմանագիրը, համաձայնվել է, որ միջազգային դատական ատյանի վճիռը իր համար լինելու է վերջնական:

<sup>277</sup> Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, էջ 14:

<sup>278</sup> Թորիլյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 138:

<sup>279</sup> Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչությունը, Լու Անճելյա, 1989, էջ 58:

<sup>280</sup> Международное право в документах, с. 78.

### ԳԼՈՒԽ III

## ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՆԼԻՐՅԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔԵՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Երիտթուրք պարագլուխների դատավարությունն իրենից Հետաքրքրություն է ներկայացնում այնքանով, որքանով այդ դատական գործի մեղադրական եզրակացությունների և դատավճռի մեջ պարունակվում են Օսմանյան կայսրության Հայ բնակչության նկատմամբ իրականացրած զանգվածային կոտորածների այնպիսի մեղադրանքներ, որոնք լիովին համապատասխանում են 1948 թ. ՄԱԿ-ի «Ցեղապանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում սահմանված այդ հանցագործության հանցակազմի հատկանիշներին: Այս հարցն իրենից ներկայացնում է ոչ միայն պատմական, այլև իրավական ու քաղաքական նշանակություն: Այն հանգամանքը, որ երիտթուրքերի հանցագործությունները քննարկվել են հենց թուրքական դատարանում, որը նրանց մեղավոր է ճանաչել նաև Հայ բնակչության զանգվածային սպանության մեջ, խոսում է այն մասին, որ սովյալ հանցագործությունը ժամանակին դատապարտել է հենց ինքը՝ Թուրքիան, ճիշտ է, դա չորակելով իրրե ցեղասպանություն: Այժմ Թուրքիան փորձում է անտեսել 1919–1920 թթ. թուրքական դատարաններում Հայերի տեղահանությունների և կոտորածների մեղադրանքով կատարված դատավարությունների արդյունքները, երբ պատմության մեջ առաջին անգամ սեփական պետության բնակչության մի մասին ազգային հատկանիշի հիման վրա զանգվածաբար ոչնչացնելու համար կառավարության անդամները տեղական դատարաններում ներպետական օրենսդրության հիման վրա ենթարկվեցին պատասխանատվության<sup>281</sup>:

Երիտթուրքերի դատավարության նյութերն ու արձանագրությունները մեզ են հասել և թարգմանվել «Թաքվիմ-ի վեքայի» պաշտոնաթեր-

թից, որի 1919 թ. համապատասխան համարների հավելվածների ծանոթագրությունների մեջ հատակ նշված է, որ հարցաքննությունները արձանագրվել են նույնությամբ և ոճական որոշ ձևակերպումներից բացի ոչ մի ուղղում չի կատարվել<sup>282</sup>: Ի դեպ, «Թաքվիմ-ի վեքայի» այդ համարները տպագրվել են խիստ սահմանափակ տպաքանակով: Փաստորեն մի կողմից նոր վարչակարգը իրրե թե ապահովում էր խոսքի ազատությունը և ռազմական հանցագործների դատավարության հրապարակայնությունը, սակայն մյուս կողմից, նվազեցնելով թերթի տպաքանակը, փորձում էր թույլ չտալ այդ տեղեկատվության լայն տարածումը: «Թաքվիմ-ի վեքայի» հավելվածներում տպագրվել են երիտթուրքերի դատավարության ոչ բոլոր նյութերը, որոնք ընդհանուր առմամբ կազմել են 293 թղթապանակ<sup>283</sup>: Երիտթուրքերի դատավարության նյութերի մյուս մասն էլ հրատարակվել է արդեն ընդդիմադիր համարվող «Ալեմ-դար» թերթում, որոնք նույնպես բարեբախտաբար մեզ են հասել և թարգմանվել<sup>284</sup>: Այս նյութերը լիովին բավարար են Հայ բնակչության հանդեպ գործադրված հրեշավոր ծրագրի ու քաղաքականության հուշությունն ամբողջությամբ հասկանալու համար: Դրանք ուղղակի անհնար է կասկածի տակ դնել, քանզի ժամանակի պաշտոնական և ոչ պաշտոնական օսմանյան մամուլում օսմաներենով հրատարակվել են այդ դատավարությունների պաշտոնական փաստաթղթերը՝ նիստերի արձանագրությունները, վկաների ու ամբաստանյալների ցուցմունքները, մեղադրական եզրակացությունները և դատավճիռները, որոնք չափազանց կարևոր և անժխտելի վավերագրեր են, որոնցից ակնհայտ է դառնում Հայոց ցեղասպանության ողջ եղելությունը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում: Այս վավերագրերը ամենահիմնավոր փաստարկներից մեկն են թուրքերի կեղծարարության դեմ, որոնք ոչ միայն փարատում են Արամ Անտոնյանի կողմից հրապարակված Թալեաթի գաղտնի հեռագրերի հետ կապված կասկածները, այլև դրանց են ավելացնում նույն բովանդակությամբ բազմաթիվ այլ գաղտնի և հույժ գաղտնի փաստաթղթեր ու գաղտնագրեր:

<sup>282</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափագյանի, Եր., 1988., էջ 184:

<sup>283</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 28:

<sup>284</sup> Տես Անույան Մ., Երիտթուրքերի 1919–1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Եր., 2011:

<sup>281</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 37.



Այնուամենայնիվ ինչ՞ու թուրքական պետությունը զենաց նախկին թուրքական կառավարության անդամների պատասխանատվության կանչելու քայլին, նրանց մեղավոր ճանաչելով բոլոր ներկայացված Հանցագործություններում: Ակնհայտ է, որ այդ կերպ թուրքական իշխանությունները փորձում էին կանխարգելել այդ Հանցագործներին դատելու Հնարավորությունը ստեղծելիք միջազգային տրիբունալում, ուստի կամավոր զենացին նրանց դատապարտելու քայլին սեփական ռազմական տրիբունալներում:

Դատաքննությունը սկսվեց 1919 թ. ապրիլի 28-ին և դատարանի կարգավիճակի մի շարք փոփոխություններից հետո ավարտվեց 1919 թ. Հուլիսի 5-ին, երբ կայացվեցին Հիմնական և մյուս դատավճիռները<sup>285</sup>: Հետպատերազմյան Թուրքիայում տիրող տրամադրություններից պարզ երևում էր, որ իրականում ոչ ոք չէր ցանկանում մահապատժի ենթարկել երիտթուրք պարագլուխներին, քանզի, անգամ երկրից դուրս գտնվելով, նրանք շարունակում էին ազդել գործընթացների վրա: Մուսթաֆա Քեմալի Հետագա քայլերն ապացուցեցին դա:

1919 թ. երիտթուրքերի դատավարությունը նախաձեռնելիս մեծ վեճեր Դամադ Ծերիզ փաշան փաստորեն նպատակ ուներ ռազմական Հանցագործությունների մեղքը բարդել բացառապես «Միություն և առաջադիմություն» կուսակցության վրա, փորձելով այդպիսով պատասխանատվությունից զերծ պահել թուրք ազգին և առավել ևս Օսմանյան կայսրությունը<sup>286</sup>: Սակայն ակնհայտ էր նաև, որ մինչև բուն դատավարության սկսելը Հայերի ցեղասպանության Հիմնական կազմակերպիչներին թույլ էին տվել հեռանալ Գերմանիա<sup>287</sup>: Այս քայլի պատճառը առավել քան պարզ էր, քանզի էնվերի, Թալեաթի, Ջեմալի, Նազըմի և մյուսների միայն Հարցաքննության ընթացքում կբացահայտվեին այնպիսի փաստեր, որոնք միանշանակ կհանգեցնեին թուրքական պետության պատասխանատվությանը, ուստի Թուրքիայի Համար այս վտանգավոր մեղադրյալներն անհապաղ պետք է Հեռացվեին երկրից և ոչ մի դեպքում չպետք է մասնակցեին դատավարությանը:

<sup>285</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, "Геноцид – преступление против человечества. Материалы I-ого Московского Международного Симпозиума", М., 1997, с. 42.

<sup>286</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 16:

<sup>287</sup> Նույն տեղում, էջ 13:

Անկասկած, Թուրքիայի նոր վարչակարգը նշված երիտթուրք պարագլուխներին տվել էր ոչ միայն կյանքի, այլև թալանված ունեցվածքին տիրանալու հստակ երաշխիքներ, առանց որոնց նրանք չէին հեռանա երկրից, քանզի կար Անտանտի դաշնակիցների արդարադատության ձեռքն ընկնելու վտանգը: Երիտթուրքերի իրական Հաղթաթուղթը այս Հարցում պետք է Համարել այն, որ դուրսը Նազըմը իր հետ երկրից դուրս էր բերել կուսակցական արխիվը<sup>288</sup>, որտեղ վարկաբեկիչ նյութեր էին պարունակվում ոչ միայն նախկին, այլև ներկա թուրք բարձրաստիճան պաշտոնյաների մասին և դրանց Հրապարակումը կլինեի ոչ միայն տվյալ անձանց, այլև Թուրքիայի վերջը: Հետագայում Հենց դատաքննության նյութերից պարզ դարձավ, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնին և «Թեջիլաթը մահաուսեին» (Հատուկ կազմակերպությանը) վերաբերող կարևոր գրությունները մեծ մասամբ ոչնչացվել էին: Դրանում Հիմնականում մեղավոր է ճանաչվում դուրսը Նազըմը, որը կոմիտեի գործարքներն ու կատարած Հանցագործությունները թաքցնելու նպատակով փախցրել էր կուսակցության արխիվը<sup>289</sup>: Բնականաբար, դատավարության ընթացքում շրջանցվում էր այն Հարցը, թե ինչպես գլխավոր Հանցագործներից մեկին՝ դուրսը Նազըմին Հաջողվեց փախչել երկրից, իր հետ տանելով պետական գաղտնիքներ պարունակող փաստաթղթեր:

Թուրքիայում արդարադատության սաբոտաժն իրականացվում էր պետական բարձր մակարդակով: Ռազմական, ներքին գործերի և արդարադատության նախարարություններում և այլ գերատեսչություններում թաքցվում և ոչնչացվում էին փաստաթղթեր, գաղտնի և Հույժ գաղտնի Համարվող գաղտնագրեր, տեղական իշխանություններին արգելվում էր իրականացնել դատական կարգադրությունները, մեղադրյալներին օգնում էին թաքնվել արդարադատությունից և մեկնել երկրից և այլն<sup>290</sup>, իսկ 1919 թ. մայիսին անգլիական Հրամանատարությունը 77 մեղադրյալների անսպասելիորեն աքսորեց Մալթա կղզի<sup>291</sup>:

1919 թ. մայիսին տեղի ունեցած վեց նիստերի ընթացքում Հիմնականում Հարցաքննության են ենթարկվում երիտթուրքական կուսակ-

<sup>288</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 13:

<sup>289</sup> Նույն տեղում, էջ 183:

<sup>290</sup> Барцеров Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 43.

<sup>291</sup> Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Եր., 2006, էջ 21:

ցության կենտկոմի անդամները, մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և մի քանի նախարարներ:

Ողջ դատավարութեան ժամանակ մեղադրյալները գտնվում էին այնպիսի բարենպաստ պայմաններում, որ նույնիսկ բանտում հրավիրվում էին նախկին կառավարութեան նիստեր, որպեսզի մշակեն պաշտպանութեան ռազմավարութունը դատավարութեան ընթացքում<sup>292</sup>: Մշակված ռազմավարութեան համաձայն նախ անհրաժեշտ համարվեց ռազմական տրիբունալի իրավասութունը կասկածի տակ դնելու միջոցով որքան հնարավոր է ձգել ժամանակը՝ սպասելով երկրի ներքաղաքական վիճակի փոփոխութեան: Բացի այդ, հարկավոր էր ողջ մեղքը բարդել արդեն Թուրքիայից բացակայող երիտթուրք նախարարների ու պարագլուխների՝ Թալեաթի, էնվերի, Ջեմալի ու դոկտոր Նազըմի վրա, քանզի բոլորն էլ քաջ գիտակցում էին, որ նրանց նկատմամբ հնարավոր չի լինելու իրականացնել անգամ ամենախիստ վճիռը, սակայն այդ կերպ փորձում էին խուսափել պատասխանատվութունից կամ ջանում էին, որ գոնե իրենք չենթարկվեն նման բարձր պատժաչափերի: Այս ռազմավարութունը, որը կարծես համաձայնեցվել էր նաև ռազմական տրիբունալի հետ, հաջողութեամբ իրագործվեց դատավարութեան ողջ ընթացքում:

4. Պոլսում ԱՄՆ-ի դերագույն կոմիսար Լյուիս Հեկը 1919 թ. փետրվարի 7-ի իր հեռագրում նշում է, որ երիտթուրքերի դատավարութունը կատարվում է թուրքերին բնորոշ դանդաղկոտութեամբ, և դատարանի պահվածքը վկայում է այն մասին, որ խիստ և արագ դատավճիռներ կայացնելու տրամադրվածութուն չկա<sup>293</sup>:

Մեղադրյալներին պաշտպանելու համար ներգրավված էին 16 փաստաբաններ, որոշ մեղադրյալներ անգամ ունեին երկուսից ավելի փաստաբաններ: Պաշտպանական կողմը, հղում կատարեց օսմանյան սահմանադրութեան 31-րդ հոդվածի վրա, որը նախարարների պատասխանատվութեան կանչելը համարում էր Գերագույն դատարանի իրավասութեան հարց, ուստի ռազմական դատարանը, ըստ պաշտպանների, իրավասու չէր դատելու երիտթուրքերին<sup>294</sup>: Այնուհետև պաշտպանական կողմը հայտարարեց, որ հանցագործութունները, որոնցում ամբաստանվում են մեղադրյալները, չեն հանդիսանում սովորական հանցագործութուններ, այլ ավելի շուտ կապված են տեղահանութեան օրենքի կիրառման

հետ, որն ընդունվել էր կառավարութեան կողմից և հաստատվել սուլթանական հրամանագրով<sup>295</sup>: Փաստորեն պաշտպանական կողմն ընդունում էր, որ հանցագործութունը սովորական չէ, ավելին, նրանք խոստովանում էին, որ մեղադրանքը հիմնականում կապված է տեղահանութեան օրենքի կիրառման, այն է՝ տեղահանութեան տակ հայ ժողովրդի զանգվածային սպանութեան կազմակերպման հետ: Ու քանի որ, ըստ դատապաշտպանների, տեղահանութունը հանդիսանում էր հայերի ցեղասպանութեան քաղաքականութեան եղանակներից մեկը, ապա ամբաստանյալներին ներկայացված մեղադրանքները կապված էին վերջիններիս կողմից իրենց պաշտոնական պարտականութունների կատարման հետ: Հետևաբար մեղադրյալների նկատմամբ, ըստ պաշտպանների, պետք է կիրառվեր ոչ թե օսմանյան սահմանադրութեան 33-րդ, այլ 92-րդ հոդվածը, որի համաձայն տվյալ գործը պետք է հանձնվեր Գերագույն դատարանի իրավասութեանը<sup>296</sup>: Իրականում պաշտպանական կողմը փորձում էր «ապացուցել» մեղադրյալների անմեղութունը, հենվելով «պետութեան մեղքի» տեսութեան վրա: Պաշտպանները գտնում էին, որ եթե անգամ մեղադրյալների նկատմամբ կիրառվում էր 33-րդ հոդվածը, որով տվյալ գործը չէր փոխանցվում Գերագույն դատարանին, ապա այդ դեպքում էլ այն պետք է քննվեր քրեական դատարանի, այլ ոչ թե հատուկ ռազմական տրիբունալի կողմից: Այս դրույթից պարզ երևում է, որ պաշտպանական կողմը ամեն կերպ փորձում էր ձգձգել դատաքննութունը՝ վարույթը այլ դատարան տեղափոխելու պատրվակով:

Պաշտպանական կողմն իր առարկութուններում նաև պնդում էր այն տեսակետը, որ դատարանը չունի իրավասութուն որոշելու, թե սահմանադրութեան հոդվածներից որն է կիրառելի տվյալ դեպքում, քանզի հիմնական օրենքի 117 հոդվածով սահմանադրութեան վերջնական մեկնաբանման իրավունքը վերապահած էր Սենատին<sup>297</sup>:

Պաշտպանական կողմի բոլոր փորձերը դուրս բերել դատավարութունը ռազմական տրիբունալի իրավասութունից անհաջողութեամբ ավարտվեցին: Պաշտպանական կողմի միջնորդութուններին նախ արձադանքեց դատախազ Մուստաֆա Նազմի փաշան, որը նշեց, թե եթե դատաքննութեան ընթացքում հաստատվի հանցանքի բացառապես

<sup>292</sup> Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, էջ 21:

<sup>293</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 43.

<sup>294</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի գաղափարության փաստաթղթերի, էջ 16:

<sup>295</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 40.

<sup>296</sup> Նույն տեղում:

<sup>297</sup> Նույն տեղում:

պաշտոնավարութեան հետ կապ ունենալը, ապա միայն այդ ժամանակ տվյալ կետին ուշադրութեամբ կհարձակվի<sup>298</sup>: Դատարանն իր հերթին մերժեց պաշտպանական կողմի այն հակափաստարկը, թե հանցագործությունները հանդիսանում են օրենքի կիրառման հետևանք, քանզի, ըստ դատարանի, եթե անգամ նկատի առնվի այն, որ տեղահանությունը զուգորդվել է կոտորածով, այդուհանդերձ, սպանությունը չի դադարում այդպիսին լինելուց, և միայն գանգվածային սպանությունների հետ գործադիր իշխանության առնչություն ունենալը հաստատվելու դեպքում դատարանը կարող է հաշվի նստել պաշտպանական կողմի այդ փաստարկի հետ<sup>299</sup>: Այսպիսով, ռազմական դատարանը, դեռ դատավարությունը չսկսած և փաստերն ու մանրամասնությունները չուսումնասիրած, հենվելով բացառապես մեղադրական եզրակացության վրա, նախապես առաջնորդվում էր զանգվածային սպանություններին իշխանությունների մասնակցությունը բացառելու կանխավարկածով: Սակայն արդեն դատավարության ընթացքում ներկայացվեցին բավարար ապացույցներ, որ կոտորածը հանդիսացել է պետության ողջ տարածքում մեղադրյալների վարած քաղաքականության և կայացրած որոշումների հետևանքը, բայց դատարանի ձևակերպմամբ դա մեղադրյալները արել էին ոչ իբրև նախարարներ, այլ իբրև գաղտնի կազմակերպության անդամներ:

Դատարանը նաև նշեց, որ պաշտպանական կողմի տվյալ փաստարկը կապ չուների մեղադրական եզրակացությունում նշված ամբաստանյալների՝ «սպանությունների և անձնական անօրինական հարստացման» քննության հետ<sup>300</sup>:

Այսպիսով, պետք է փաստենք, որ մեղադրանքն ի սկզբանե կանխամտածված ձևով կազմվել էր մեղադրյալների գուտ անձնական կամ երիտթուրքական կուսակցության մեղքը հիմնավորելու, այլ ոչ թե նրանց, իբրև բարձրաստիճան պետական պաշտոնյաների, կատարած հանցագործությունների սկզբունքով, ինչը միանշանակ հանգեցնելու էր նաև թուրքական պետության անցանկալի պատասխանատվությանը, որից և ջանասիրաբար խուսափում էր թուրքական ռազմական տրիբունալը: Կազմված մեղադրանքի հիման վրա թուրքական դատարանը մերժեց «պետության գործողության վրա» հղման իրավաչափությունը,

<sup>298</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 53:

<sup>299</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 41.

<sup>300</sup> Նույն տեղում:

նշելով, որ կոտորածը, եթե նույնիսկ այն դիտարկել որպես տեղահանությանը բնորոշ երևույթ, իրենից ներկայացնում է սպանություն և, հետևաբար, այն առանձին և ինքնուրույն արարք է:

Դատախազ Մուսաֆա Նազմի փաշան իր հերթին տվեց պարզաբանում, թե մեղադրական եզրակացության մեջ թվարկված հանցագործությունները կատարվել են ոչ թե կառավարության, այլ կուսակցության կենտրոնական կոմիտեի անունից ու նրա լիազուսմար նիստերի որոշումներից հենվելով<sup>301</sup>: Այս պարզաբանման հիման վրա դատարանը նշեց, որ հղումը պետության գործողության վրա կարող է քննարկվել միայն այն պայմանով, եթե լինեին ապացույցներ, որ կոտորածը ոչ թե կանխամտածված է, այլ ընդամենը պաշտոնական պարտականությունների կատարման անխուսափելի արդյունք<sup>302</sup>: Դատարանը, ղեկավարվելով սուլթանական կառավարության ընդհանուր քաղաքական գծով, եզրակացնում է, որ եղած ապացույցները հաստատում են, որ կոտորածը այն քաղաքականության ու կայացրած որոշումների մի մասն էր, որն իրագործվել է մեղադրյալների, իբրև գաղտնի, դավադիր կազմակերպության անդամների կողմից, այլ ոչ թե նախարարի և ողջ կառավարության պաշտոնական պարտականությունների շրջանակներում<sup>303</sup>:

Հարց է ծագում, ո՞ր կառավարությունն է իր «պաշտոնական պարտականությունների շրջանակում» ներառում նման նպատակներ: Ակրն-Հայտ է, որ տեսականորեն անգամ Հնարավոր չէ պատկերացնել որևէ կառավարություն, որը պաշտոնապես առաջնորդվում է նման սկզբունքներով: Այսինքն՝ Օսմանյան կայսրությունում ձևավորվել էր ճիշտ այն համակարգի նախատիպը, որը հետագայում առկա էր Ֆաշիստական Գերմանիայում՝ Ողջակիզման իրականացման տարիներին ի դեմս նացիոնալ-սոցիալիստական կուսակցության և նրա մարդատյաց գաղափարխոսության, որոնց նույնականացումը Երրորդ ռայխի հետ ապացուցվեց Նյուրնբերգյան դատավարության ընթացքում:

Ուրեմն, այս հիմնավորումները չէին դիմանում ոչ մի քննադատության, քանզի ակնհայտ էր, որ այդ գաղտնի կազմակերպության անդամները կառավարության նույն նախարարներն էին, և տվյալ գաղտնի կազմակերպությունը փաստորեն սերտաճել էր իշխանության հետ, ըստ էության, դառնալով Օսմանյան կայսրության իրական իշխանություն:

<sup>301</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 16:

<sup>302</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 40.

<sup>303</sup> Նույն տեղում:

Պատահական չէ, որ Օսմանյան կայսրության պատերազմական շրջանի կառավարությունը ժամանակի դիվանագիտական փաստաթղթերում միանշանակ անվանվում էր Հենց «երիտթուրքական կառավարություն», ինչը լավագույնս ընգծում է երիտթուրքական կուսակցության օսմանյան իշխանության Հետ սերտաճման պատմական փաստը: Ըստ այդմ, անհնար է տարանջատել դրանք իրարից, այլ պետք է փաստել այս երկուսի նույնականացումը (իրենտիֆիկացիան), ի վերջո երիտթուրքական կառավարության անդամը և ողջ կառավարությունը, անկախ այն բանից, թե որ կազմակերպությանն էր անդամակցում, տվյալ իշխանության միջոցով ներկայացնում էր թուրքական պետությունը, ուստի և նրա կատարած ցանկացած գործողություն իրավամբ պետք է գնահատվի իբրև պետական իշխանության ներկայացուցչի գործողություն, որի համար պատասխանատու է ոչ միայն տվյալ անձը, այլև այն իշխանությունը և պետությունը, որին նա ներկայացնում է, տվյալ դեպքում Օսմանյան կայսրությունը: Հակառակ պարագայում տվյալ անձը չպետք է զբաղեցնի նման բարձրաստիճան պաշտոն և ներկայացնի պետությունը: Սակայն պատերազմական թուրքիայում, երիտթուրքական կուսակցության իշխանության Հետ սերտաճելու պայմաններում նման բարձրաստիճան պաշտոնյաները ոչ միայն պաշտոնաթող չէին արվում, այլ Հակառակը, կուսակցական պատկանելությունը և գաղտնի կազմակերպության անդամությունը անհրաժեշտ ու որոշիչ հանգամանք էր պետական բարձրաստիճան պաշտոն զբաղեցնելու և յուրային համարվելու համար:

Վերը նշվածից միանշանակ բխում է, որ Հնարավոր չէ մեղադրել որևէ հարցում երիտթուրքական կառավարությանը, առանց թուրքական իշխանություններին և համապատասխանաբար նաև թուրքական պետությանը մեղադրելու և հակառակը: Եվ եթե անգամ մի պահ ենթադրենք, որ թուրքիան որպես պետություն չէր ցանկացել, որ կայսրության հայ բնակչության Հետ լիներ այն, ինչ կատարվեց, ապա թուրքական պետությունը միևնույն է մեղավոր է այն հարցում, որ թույլ է տվել երիտթուրքերի սերտաճումը պետական իշխանության Հետ և, Հետևապես, միևնույն է պատասխանատու էր այդ իշխանության կատարած քայլերի համար: Թուրքական կառավարության ներսում, որքան էլ Հետո դատավարության ժամանակ փորձեին արդարանալ որոշ անձինք, չի դրսևորվել ակնհայտ հակազդեցություն երիտթուրքերի քաղաքականությանը, ինչը խոսում է այն մասին, որ կառավարության բոլոր անդամները, եթե նույնիսկ չեն կիսել երիտթուրքերի գործելաճը, ապա բացարձակապես չեն ընդդիմացել այդ քաղաքական կուրսին, իսկ դա

նշանակում է, որ համաձայնվել են կատարվածի հետ: Ամբողջ ժողովրդի զանգվածային ոչնչացման մասին իմանալը և այն կանխարգելելուն ուղղված քայլեր չձեռնարկելը և անգործությունը ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի համաձայն, միևնույն է, պատժելի է և կարող է դիտվել իբրև ցեղասպանության հանցակցություն: Թուրքական պատմագրությունը դեռևս չի բերել երիտթուրքերի քաղաքականությանը կառավարության ներսում հակադրվելու փորձ, կամ գոնե կառավարության անդամի հրաժարականի փաստ՝ ի նշան բողոքի, ինչը կրկին խոսում է երիտթուրքերի և թուրքական իշխանության նույնականության մասին:

Բացի այդ, դատարանն անհիմն կերպով փորձում է իրարից տարանջատել «կանխամտածվածության» և «պաշտոնական պարտականությունների կատարման» եզրույթները, ապրիորի գտնելով, որ դրանք չեն կարող մեկտեղվել, ինչի «անխուսափելի արդյունքը» կարող էր լինել հայ բնակչության զանգվածային ոչնչացումը կայսրության տարածքում ու մասնավորապես իր պատմական հայրենիքում: Մինչդեռ պատմական փաստերն ուղղակիորեն վկայում են, որ իշխանության գալուց Հետո երիտթուրքական կուսակցության հայերին ոչնչացնելու կանխամտածված ծրագրերը, ինչն ընդունեց նաև ռազմական տրիբունալը, վաղուց արդեն վեր էին ածվել Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության պետական ծրագրի և սկսվել էին կենսագործվել պետական ողջ ռեսուրսների գործադրմամբ: Նշենք նաև, որ առանց իշխանության գալու և առանց պետական իշխանության ռեսուրսների օգտագործման երիտթուրքական կուսակցությունն ի վիճակի չէր լինի իրագործել այդ ծրագրերը, միայն պետական իշխանությունն ու լծակները նրանց ընձեռեցին նման Հնարավորություն: Բնականաբար, այս ակնհայտ և թուրքական պետության համար վտանգավոր փաստարկներն անտեսվում էին թուրքական արդարադատության կողմից:

Այսպիսով, նման ոչ պատշաճ պարզաբանումներով փորձ էր կատարվում պատասխանատվությունը բացառապես բարդել արդեն իրավաբանորեն գոյություն չունեցող կուսակցության վրա և այն հեռացնել նախկին կառավարությունից և Հետևաբար նաև պետությունից: Դատարանի կողմից պատշաճ պարզաբանումը տվյալ դեպքում պետք է լիներ այն, որ նախկին երիտթուրք նախարարները և այլ բարձրաստիճան թուրք պաշտոնյաները պետք է դատվեին ոչ թե գերագույն դատարանում, այլ Հենց ռազմական տրիբունալում այն պարզ պատճառով, որ նրանք հանդիսանում էին պատերազմական հանցագործներ, ճիշտ այնպես, ինչպես

Երկրորդ աշխարհամարտի նացիստ հանցագործներին Նյու-Երբերգում դատում էր միջազգային ռազմական տրիբունալը:

Այնուհետև դատարանը մասնավոր որոշման մեջ ուշադրություն դարձրեց այն բանի վրա, որ ղեկավարող դերը կատարված հանցագործություններում պատկանում է «Իթթիհադ» կուսակցությանը և «անհատական հանցագործությունները» կատարվել են նրա ղեկավարող դերի առկայության պայմաններում<sup>304</sup>:

Թուրքական ռազմական դատարանը գտնվում էր պարագուսալ վիճակում, մի կողմից այն ջանում էր կատարված զանգվածային հանցագործությունները ներկայացնել և քննել իբրև սովորական անհատական հանցագործություններ, սակայն մյուս կողմից կատարված սպանությունների ու բռնությունների զանգվածային բնույթին այնքան ակնհայտ էր, որ հնարավոր չէր դա դիտարկել բացառապես անհատական հանցագործությունների տեսքով, ուստի դատարանը ստիպված ընդունում էր դրանց կազմակերպվածություն փաստը, որը վերագրվում էր բացառապես երիտթուրքական կուսակցությանը: Սակայն, անգամ այս ձևակերպմամբ սա չափազանց կարևոր որոշում էր այն իմաստով, որ Օսմանյան կայսրությունում գոյություն ունեին և գործում էին նաև այլ կուսակցություններ, սակայն նրանցից և ոչ մեկը չէր մեղադրվում զանգվածային հանցագործություններում ղեկավարող դեր ունենալու մեջ այն պարզ պատճառով, որ միայն երիտթուրքական կուսակցությունը, տիրապետելով պետական ողջ իշխանությանը և օգտագործելով նրա ռեսուրսները, իրականացրեց հայ բնակչության զանգվածային բնաջնջումը և ունեզրկումը: Սակայն, բնականաբար, թուրքական դատարանը չէր ցանկանում կատարել հաջորդ, Թուրքիայի համար վտանգավոր այն եզրահանգումը, որի համաձայն երիտթուրքական կուսակցությունը պետք է նույնացվեր թուրքական իշխանության և հետևաբար նաև պետության հետ, դրանից բխող բոլոր հետևանքներով:

Դատարանը մերժեց նաև պաշտպանական կողմի առարկությունները սահմանադրության և ռազմական տրիբունալի իրավասության հետ կապված: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմական իրավունքը ուժի մեջ էր դրվել հենց «Իթթիհադ» կուսակցության վարչակարգի կողմից և շարունակում էր ուժի մեջ մնալ, ուստի ոչ սահմանադրության 32 և ոչ էլ 33-րդ հոդվածները, ըստ դատարանի, չէին կարող

կիրառվել, ինչի վրա պնդում էր պաշտպանական կողմը<sup>305</sup>: Դատարանը մատնանշում էր օսմանյան սահմանադրության 113-րդ հոդվածը, որը վերաբերում էր պատերազմական իրավունքի ուժի մեջ մտնելուն, որից հետո նախատեսվում էր քաղաքացիական իրավունքների գործողության ժամանակավոր կասեցում: Դատարանը մեկ անգամ ևս ընդգծեց մեղադրական եզրակացության ձևակերպումը՝ «քանի դեռ գործում է ռազմական իրավունքը, քաղաքացիական իրավունքները լուրմ են», և հետևաբար ռազմական դատարանները դառնում են միակ պատժիչ մեխանիզմները երկրում:

Հատկանշական է, որ այս դեպքում ռազմական տրիբունալը, կրկին առաջնորդվելով երկակի չափանիշներով, հիմք էր ընդունում նախկինում երիտթուրքական կառավարության անդամների, իսկ տվյալ պահին՝ մեղադրյալների, կայացրած որոշումը, կապված պատերազմական դրության հայտարարելու հետ, այդպիսով ճանաչելով նրանց գործողությունն իբրև պետական իշխանության ներկայացուցիչների կողմից կատարած քայլ և հիմնվում էր դրա վրա, սակայն մյուս՝ հայերի կոտորածների դեպքում, նրանց դիտարկում է որպես մասնավոր անձանց, լավագույն դեպքում՝ կուսակցության կամ գաղտնի կազմակերպության անդամների: Սա նույնպես ապացուցում է, որ Իթթիհադի և թուրքական պետության քաղաքականության տարանջատումն իրականացվում էր ընտրողաբար՝ ըստ նպատակահարմարության:

Դատարանը մերժեց նաև մեղադրյալների այն հայտարարությունը, որ օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնաժողովը, որը ստեղծվել էր երիտթուրքերի կատարած հանցագործությունների քննության համար, հանդես է եկել Գերագույն դատարանին այս գործը փոխանցելու նախաձեռնությամբ այն հիմնավորմամբ, որ տվյալ պահին խորհրդարանը ցրված է սուլթանի կողմից և հետևաբար խորհրդարանի քվեարկությունը և որոշումը փաստորեն կորցրել էր իր ուժը<sup>306</sup>: Այս ձևակերպումը առնվազն տարօրինակ է, քանզի խորհրդարանի ցրված լինելուց տրամաբանորեն չի կարող բխել նրա կայացրած որոշումների ուժը կորցրած լինելը: Նույն հաջողությամբ ռազմական տրիբունալն իր գործունեությունը հիմնավորում էր արդեն իշխանությունից հեռացված երիտթուրքական կառավարության կողմից ուժի մեջ դրված՝ պատերազմական

<sup>304</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 41.

<sup>305</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 40.

<sup>306</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 41.

իրավունքով, որը, եթե դատենք նույն տրամաբանությամբ, երիտթուրքերի տապալումից հետո պետք է դադարեցվի և հետևաբար չէր կարող ստեղծվել նման դատական ատյան: Այս ամենը խոսում է այն մասին, որ թուրքական արդարադատությունը կամայական մեկնաբանություններ էր տալիս օսմանյան օրենսդրությանը՝ թուրքական պետությանը կատարված հանցագործությունների պատասխանատվությունից զերծ պահելու միակ ձգտումից ելնելով:

Եվ վերջապես դատարանը նշում էր, որ սուլթանի կողմից հրապարակված հատուկ կայսրական հրամանագիրն ունի դեկրետ-օրենքի ուժ, որը դատարանին տալիս է անհրաժեշտ լիազորություններ և իրավասություն մեղադրյալների մեղքի քննության և նրանց դատապարտման համար<sup>307</sup>: Այսպիսով, դատավարության սկզբնամասում ծագած բանավեճը ռազմական տրիբունալի իրավասության հետ կապված զուտ իրավաբանական չէր, այլ ուներ ավելի խորքային իմաստ: Մեղադրյալների փաստաբանները որդեգրել էին այնպիսի մի մարտավարություն, որ հնարավորինս ձգձգվի դատաքննությունը, որպեսզի հնարավոր լինի ժամանակ շահել: Իսկ երբ դա չհաջողվեց, պաշտպանական կողմը փորձեց իր պաշտպանյալների «անմեղությունն ապացուցել» կամ գոնե մեղմացնել նրանց մեղքի չափը պաշտոնական ծառայողական պարտականությունները կատարելու հանգամանքով, օգտագործելով «պետական ակտի» հայեցակարգը, համաձայն որի տեղահանությունը հանդիսանում էր ոչ թե երիտթուրք գործիչների անձնական նախաձեռնությունը, այլ թուրքական պետության պետական անհրաժեշտությունից բխող գործողություն, ինչի մասին վկայում է և սուլթանի կողմից հաստատված տեղահանության մասին օրենքը: Նման մեկնաբանության պարագայում կատարված հանցագործությունների պատասխանատվությունը տեղափոխվելու էր նաև թուրքական պետության վրա: Անշուշտ, մեղադրական կողմը չէր կարող թույլ տալ նման բան, քանզի նախապես տրամադրվել էր պատասխանատվությունը բացառապես վերագրել երիտթուրքական կուսակցությանը:

Մեղադրական եզրակացության մեջ նշվում է, որ ավելորդ է հիշատակել սահմանադրության 92-րդ հոդվածը, քանզի «նախարարի կամ նախարարների խորհրդի անդամի պաշտոնավարության հետևանքով» կատարված հանցագործությունը վերաբերում է քաղաքական հանցագործությանը, իսկ սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն նա-

խարարի սովորական հանցագործություն կատարելու կամ դրան մասնակցելու դեպքում նրան ոչ մի արտոնությունից օգտվելու իրավունք չի վերապահվում<sup>308</sup>: Փաստորեն մեղադրող կողմը հակված էր Հայ բնակչության զանգվածային սպանության կազմակերպումը որակելու որպես սովորական հանցագործություն, այնինչ հետագայում դատավճռում երիտթուրքերի կատարած հանցագործությունները միանշանակ որակվում են իբրև քաղաքական: Այսպես, դատաքննության ընթացքում, որի հիմնական հարցը Հայերի զանգվածային կոտորածներն էին, լուրջ հիմքեր առաջացան այն բանի համար, որ մեղադրող կողմը առաջարկեց ընդարձակել մեղադրանքների դաշտը և դրանց մեջ ներառել «կառավարության տապալման» և ամբաստանյալների կողմից օսմանյան պետության բոլոր կառավարման կառույցներում իշխանության չորրորդ ճյուղի ստեղծման մեղադրանքը<sup>309</sup>: Սա ակնհայտ հորինված ձևակերպում է, քանզի «կառավարության տապալում» նշանակում է պետական իշխանության զավթում, ուստի խոսքը պետք է լինի ոչ թե իշխանության ներսում ի դեմս Իթթիհադի կամ «Հատուկ կազմակերպության» իշխանության այսպես կոչված հանցագործ չորրորդ ճյուղի ստեղծման, այլ ողջ պետական իշխանության բռնազավթման ու տիրապետման մասին: Սակայն, այս հորինված ձևակերպմամբ մեղադրող կողմը կրկին փորձում էր թույլ չտալ պատասխանատվության տարածումը իշխանության զավթումից հետո իրենից արդեն պետական իշխանություն ներկայացնող երիտթուրքական կառավարության վրա:

Մեղադրական եզրակացության ուղղված տարբերակն իր մեջ ներառում էր այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են՝ կոտորած, ունեցվածքի յուրացում, դիակների և տների հրկիզում, բռնաբարություններ, կտտանքներ և հալածանքներ: Հետագայում ավելացվեց լրացում, որ հանցագործությունները կատարվում էին «հատուկ կազմակերպված ձևով», երբ տեղահանվողները հավաքվում էին խմբերով և հետո ոչնչացվում: Մեղադրական եզրակացության նոր տարբերակում հստակ ընդգծվում էր այն փաստը, որ տեղահանությունը պայմանավորված չէր ոչ ռազմական անհրաժեշտությամբ և ոչ էլ կարգապահական հանգամանքներով: Նշվում էր, որ տեղահանությունը կանխամտածված էր և այդ մասին որոշումը կայացվել էր Իթթիհադ կուսակ-

<sup>307</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 41.

<sup>308</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 48:

<sup>309</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 42.

ցության կենտրոնական կոմիտեում և դրա ողբերգական հետևանքները զգացվեցին Օսմանյան կասրության գրեթե բոլոր անկյուններում<sup>310</sup>:

Թուրք կեղծարարներին լավագույնս կարելի է պատասխանել հենց թուրքական դատարանի փաստաթղթերով: Առաջին և հաջորդ մեղադրական եզրակացություններում բերված ծածկագիր հեռագրերը, նամակները, վկայում են տեղահանությունների կանխամտածված և հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով կազմակերպված լինելու մասին, և, բացի այդ, հստակ նշվում է, որ դրանք չեն ունեցել սահմանափակ կամ տեղական բնույթ: Մեղադրող կողմն ընդգծում էր, որ հանցագործության մտադրության առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել, բերելով բնակչության զանգվածային տեղահանության կամ անհավատարիմ համայնքին պատժելու արդարացումները, առավել ևս, որ, ինչպես նշվում էր մեղադրական եզրակացություններից մեկում, տեղահանությունը ռազմական անհրաժեշտությամբ կամ կարգուկանոն հաստատելու գործողության միջոց չի եղել, ինչպես դա ներկայացնում են թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները: Ինչպես արձանագրում է մեղադրական եզրակացությունը, երիտթուրքերի ընդունած համընդհանուր ծրագրի իրագործման նպատակն է եղել «վերջնականապես լուծել չլուծված խնդիրները», ակնհայտ է, որ դրանցից առաջին տեղն էր զբաղեցնում Հայկական հարցը<sup>311</sup>: Գլխավոր դատախազի մեղադրական եզրակացության մեջ ընդգծվում էր, որ Հայերի տեղահանությունը կոտորածի պատրվակ էր, և որ դա հաստատված փաստ է, ինչն այնքան ակնհայտ է, որքան այն, որ երկուսին գումարած երկուս հավասար է չորս<sup>312</sup>: Մշակված ծրագրի կանխամտածված լինելու հանգամանքը դատաքննության ընթացքում հաստատվեց նաև գեներալ Վեհիբի վկայություններով:

Մեղադրական եզրակացության մեջ նաև նշվում էր, որ Հայերի ոչնչացման ծրագրի քողարկման նպատակով ղեկավարությունը որոշումների կատարումը ապահովում էր գաղտնի բանավոր ու գրավոր հրամաններով ու կարգադրություններով, որոնք ենթակա էին ոչնչացման<sup>313</sup>: Սա լավագույն պատասխանն է բոլոր այն թուրք հեղինակներին, որոնք փորձում են կեղծ ու շինծու որակել Թալեաթ փաշայի գաղտնի

հեռագրերը: Փաստորեն հենց թուրքական արդարադատությունն էր ընդունում նման գաղտնագրված կարգադրությունների առկայությունը, դրանք համարելով երիտթուրքերի գործելաոճը բնութագրող կարևոր հանգամանք:

1919 թ. հունիսի 19-ի մեղադրական եզրակացության մեջ մատնանշվում էր նաև, որ շրջանային պատասխանատու քարտուղարներն իրենց գործունեության ընթացքում, կուսակցության կենտկոմի և կառավարության կողմից ստացված բանավոր և գրավոր գաղտնի հրամանների համաձայն, անօրինական ձևով միջամտել են կառավարության գործերին և մասնակցել Թալեաթ փաշայի և նրա գործընկերների կատարած հանցագործություններին<sup>314</sup>: Տվյալ դատողությունները խիստ հակասական են, քանզի մի կողմից նշվում է պատասխանատու քարտուղարների կառավարության գործերին անօրինական ձևով միջամտելու մասին, իսկ մյուս կողմից ընդգծվում, որ նրանք կատարում էին բացի կուսակցականից նաև կառավարության հրահանգները և այդպիսով փաստորեն մասնակցում էին ներքին գործերի նախարար Հանդիսացող Թալեաթ փաշայի և նրա գործընկեր-նախարարների հանցագործություններին, որոնք, ըստ մեղադրական եզրակացության, «նպատակ էին դրել շեղել պետությունն իր օրինական ուղուց»<sup>315</sup>:

Մեղադրական եզրակացության համեմայնդեպս տվյալ հատվածից պարզորոշ երևում է, որ հանցագործությունները կատարվում էին ամենաբարձր պետական մակարդակով և եթե անգամ դա դիտարկվում է «պետությունն իր օրինական ուղուց շեղելու» տեսանկյունից, ապա միևնույն է տվյալ պետությունը պետք է պատասխանատվություն կրի այդ «շեղումը» թույլ տալու համար, ինչը կարող է հանդիսանալ նրա օրինական ուղու վրա վերադառնալու միակ ճիշտ ճանապարհը:

Բացի բուն դատավճռից թուրքական ռազմական տրիբունալը հատուկ որոշում է կայացրել փախուստի մեջ գտնվող հանցագործների վերաբերյալ, որում փաստորեն խոստովանվում է, որ երիտթուրքական կուսակցությունն իր ձեռքն էր վերցրել երկրի ողջ իշխանությունը<sup>316</sup>: Դրա հիման վրա նույնպես կարելի է պնդել, որ երկիրը պատասխանատու է երիտթուրքական կուսակցության կատարած հանցագործությունն-

<sup>310</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 43:

<sup>311</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 39.

<sup>312</sup> Նույն տեղում:

<sup>313</sup> Նույն տեղում:

<sup>314</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 22, 135:

<sup>315</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>316</sup> Նույն տեղում, էջ 113:

ների համար, որոնց թույլ է տվել իրենց ձեռքը վերցնել ողջ իշխանութ-  
յունը:

1919 թ. հուլիսի 5-ին ռազմական դատարանը հրապարակեց հինգ  
կետից բաղկացած դատավճիռ, որոնցից առաջինով ամբաստանյալները  
մեղավոր էին ճանաչվում հայերի զանգվածային կոտորածներ կազմա-  
կերպելու մեջ: Դատավճռում նշվում էր, որ երիտթուրքերը պնդում են,  
թե կոտորածների մասին իբր թե տեղեկացել են դրանց գործադրվելուց  
հետո, սակայն դատարանը նախ նշեց, որ նրանք տեղեկացել են այդ մա-  
սին ոչ թե հետո, այլ հենց կոտորածների ընթացքում և մեղադրեց  
նրանց, որ այդ մասին իրազեկ դառնալուց հետո էլ նրանք ոչ մի միջոց  
չեն ձեռնարկել դրանք կանխելու համար<sup>317</sup>: Այսպես, շեյխ ուլ-խլամ  
Մուսա Քյազիմ էֆենդին, որը որպես կրոնական առաջնորդ կարող էր  
մեծ ազդեցություն ունենալ այդ վայրագությունները խափանելու հար-  
ցում, ոչ մի էական քայլի չդիմեց: Նա թեև փորձեց արդարանայ դատա-  
րանում, որ ինքը պատասխանատու չէ կառավարության անդամների  
գործադրած հանցագործ արարքների համար, որ մեղավոր է ներքին  
գործերի նախարարությունը, սակայն նա խոստովանեց, որ իսլամը և  
կուսակցությունը համաձուլյ մի ամբողջականություն են և կուսակ-  
ցության որոշումները ենթակա էին անհապաղ իրականացման, որ կու-  
սակցությունից դուրս գալը նշանակում էր հրաժարվել իսլամի կրո-  
նից<sup>318</sup>: Հոգևոր առաջնորդի ցուցմունքները առավել քան բնորոշիչ են, և  
ճիշտ այնպես, ինչպես ավելի բարձր համարվող իսլամն էր միաձուլվել  
երիտթուրքական կուսակցության հետ և կազմել մեկ ամբողջականութ-  
յուն, նույնությամբ կատարվել էր նաև կուսակցության և պետական իշ-  
խանության հետ:

Բացի հայերի կոտորածներից դատարանը երիտթուրքերին մեղադ-  
րում էր նրանում, որ անցած ժամանակի, այսինքն աշխարհամարտի ըն-  
թացքում, նրանց կատարած քաղաքական հանցավոր սխալների  
հետևանքով կայսրության բազմաթիվ երկրամասեր տարբեր պատրվակ-  
ներով «ձեռքից գնացին»<sup>319</sup>: Դատարանը մեղադրում էր երիտթուրքերին  
նրանում, որ պատերազմ հայտարարելու խնդրում նրանք անհրաժեշտ  
չեն համարել տվյալ հարցը գոնե քննարկել պատգամավորների մեջլիս-  
ում, մինչդեռ վեհապետերն անգամ տարակուսել են նման հարցում

<sup>317</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստա-  
թղթերի, էջ 122:

<sup>318</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>319</sup> Նույն տեղում, էջ 119:

անմիջական վճիռ և հրաման արձակել<sup>320</sup>: Կարծում ենք, որ սա նույն-  
պես շատ խոսուն փաստարկ է, որը կրկին վկայում է պետական ողջ իշ-  
խանությունների սպառնալու, ռուստի և պետության պա-  
տասխանատվության մասին՝ նրանց կատարած հանցագործությունների  
համար:

Դատարանը մեղավոր ճանաչեց երիտթուրք պարագլուխներին  
առաջին աստիճանի զանգվածային սպանությունների մեջ և մահվան  
վճիռ կայացրեց Թալեաթի, էնվերի, Ջեմալի և դոկտոր Նազրմի նկատ-  
մամբ (բոլորին հեռակա կարգով): Թալեաթի, էնվերի, Ջեմալի և դոկտոր  
Նազրմի նկատմամբ կիրառվել է թուրքական քրեական օրենսգրքի 45-րդ  
հոդվածի առաջին կետը, համաձայն որի «սահմանադրության մեջ ամ-  
րագրված կառավարման ձևն ու էությունը, կամ վսեմ սուլթանապե-  
տությունում գոյություն ունեցող կարգերի բուռի կերպով փոխելու կամ  
հեղաշրջելու նախաձեռնություն մեջ գտնվող անձնավորությունների  
գործունեությունը հաստատվելու դեպքում սահմանվում է մահապա-  
տիժ»<sup>321</sup>: Ինչպես տեսնում ենք, երիտթուրք պարագլուխներին մահա-  
պատժի են դատապարտել ոչ միայն հայերի զանգվածային կոտորածներ  
կազմակերպելու, այլև պետական իշխանությունը բռնազավթելու հա-  
մար, ինչն ամենածանր պետական ու քաղաքական հանցագործությունն  
էր համարվում թուրքական պետության մեջ, ռուստի իշխանության զավ-  
թած լինելու պայմաններում երիտթուրքերի կատարած բոլոր հանցա-  
գործությունների և մասնավորապես հայերի զանգվածային սպանու-  
թյունների համար նրանց հետ միասին պատասխանատու է նաև թուրքա-  
կան պետությունը, դրանից բխող բոլոր հետևանքներով:

Մյուս մեղադրյալները դատապարտվեցին տարբեր ժամկետների  
ազատազրկման, որոնց թվում էին կայսրության հոգևոր առաջնորդ  
Մուսա Քյազիմը, էկոնոմիկայի նախարարը, որոնք դատապարտվեցին  
15 տարվա տաժանակիր աշխատանքների<sup>322</sup>:

1919 թ. հուլիսի 5-ի նախարարների կաբինետի անդամների դա-  
տավճիռը մեծ հետաքրքրություն է իրենից ներկայացնում նաև այն  
իմաստով, որ մեղադրյալներն ի թիվս այլ հանցագործությունների մե-  
ղավոր էին ճանաչվում նաև Ռուսաստանի հետ պատերազմ սանձազեր-  
ծելու և այդ նպատակով «Հատուկ կազմակերպություն» ստեղծելու մեջ,

<sup>320</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստա-  
թղթերի, էջ 120:

<sup>321</sup> Նույն տեղում, էջ 126:

<sup>322</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в ге-  
ноциде армян, с. 45:



որը հանձնարարութիւնն էր ստացել սադրիչ գործողութիւններ կատարել կովկասյան ժողովուրդների շրջանում՝ նրանց հրահրելով Ռուսաստանի դեմ ապստամբութիւն բարձրացնելու<sup>323</sup>: Հենց այս համատեքստում պետք է դիտել նաև երիտթուրքերի այն համառ պնդումները, որ հայերը նույնպես միանային մահմեդականներին ու վրացիներին և ապստամբութիւն բարձրացնեն՝ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու նպատակով: Այս փաստերն ուղիղ կապ ունեն հայերի ցեղասպանութեան հարցի հետ, քանզի փաստում են երիտթուրքերի կողմից հայերի տեղահանութեան իբրև «պաշտպանական գործողութեան» ողջ կեղծավորութիւնը<sup>324</sup>: Ռուսաստանի դեմ ագրեսիվ պատերազմ սկսելու մեղադրանքը նույնպես պերճախոս վկայութիւնն է այն բանի, որ միայն պետական իշխանութիւնն ենրկայացնող ուժը, որպիսին հանդիսանում էր երիտթուրքական կուսակցութիւնը, կարող էր թուրքական պետութեան անունից պատերազմ հայտարարել այլ երկրին, տվյալ դեպքում՝ Ռուսաստանին, ինչու և նրանց մեղավոր էր ճանաչում դատական ատյանը:

Թուրքական ռազմական տրիբունալի դատավճիռը ուժի մեջ մտավ 1919 թ. հուլիսի 13-ին՝ Օսմանյան կայսրութեան սուլթան Վահեդդինի կողմից այն վավերացնելուց հետո<sup>325</sup>:

Փաստորեն այս դատավարութիւնը վեր էր ածվել լավ բեմականացված ներկայացման, քանզի դրա նպատակն էր ընդամենը հանգստացնել միջազգային հանրութեանը, որն արդեն քաջատեղյակ էր հայերի զանգվածային սպանութիւնների մասին և հետևում էր զարգացող իրադարձութիւններին և, բացի այդ, ցույց տալ հաղթանակած Անտանտի տեղութիւններին, որ «նոր թուրքիան» ինքն է պատժում պատերազմական հանցագործներին:

Ուրեմն իրականութեանը ամենևին էլ չի համապատասխանում թուրքական այն պնդումը, թե երիտթուրքերի դատավարութիւնը թուրքիան կազմակերպեց Անտանտի, կամ Անգլիայի ճնշման տակ, որի գործերը գտնվում էին Կոստանդնուպոլսում: Բացի այդ, երիտթուրք պարագլուխների դատավարութիւնը թուրքական պատմագրութիւնը ներկայացնում է նաև իբրև իթթիհադականների և իթթիլաֆականների

<sup>323</sup> Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 43.

<sup>324</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 41.

<sup>325</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 191:

միջև գոյութիւնն ունեցող միջկուսակցական ռիսկալութեան արդյունք<sup>326</sup>:

Բազմաթիւ պատմական փաստերն ի հայտ են բերում թուրքական պատմագրութեան նաև այս տեսակետի բացարձակապես կեղծ լինելը: Սակայն առավել հրեշավոր է «թուրք հետազոտողների» այն պնդումը, թե իբր՝ նման արտաքին ճնշման ազդեցութեամբ, երիտթուրքերի դատավարութիւնը վեր էր ածվել վերջիններիս նկատմամբ քաղաքական հետապնդման: Իրականում հատուկենտ մարդիկ իրենց կատարած ծանր հանցագործութիւնների համար հատուցեցին իրենց կյանքով: Իրականութիւնն այն էր, որ թուրքիան ձեռնարկեց այդ դատավարութիւնը բացառապես ելնելով այն բանից, որ խուսափի միջազգային տրիբունալից, որը նախատեսվում էր ստեղծվել Օսմանյան կայսրութիւնում պատերազմի ընթացքում կատարված զանգվածային հանցագործութիւններին հետ կապված: Այսպիսով թուրքիան կանխարգելում էր միջազգային տրիբունալի ստեղծումը, որի ընթացքում կբացահայտվեին ոչ միայն կոնկրետ անձանց, այլև թուրքական պետութեան պատասխանատվութիւնը, դրանից բխող միջազգային իրավական հետևանքներով նոր թուրքիայի համար: Համաձայնվելով դատել թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին թուրքական դատարանում, թուրքերը կարող էին ավելի մեղմ դատավճիռների հույս ունենալ, սակայն գլխավոր պատճառը կայանում էր նրանում, որ կառավարութիւնը մտադիր էր այդ կերպ պատասխանատվութիւնից ազատել թուրքական պետութեանը, սահմանափակվելով պատասխանատվութիւնը միայն կառավարող կուսակցութեան և կառավարութեան ներկայացուցիչներով<sup>327</sup>:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ թե մեղադրական եզրակացութեան, և թե թուրքական ռազմական տրիբունալի դատավճիռի մեջ նացիստական հանցագործներին դատապարտած Նյուրնբերգյան դատավարութեան հետ բազում նմանութիւններ են նկատվում, ինչը խոսում է այս երկու դատավարութիւններով միևնույն հանցագործութիւնների՝ պատերազմական հանցագործութիւններ և մարդկայնութեան դեմ կատարված հանցագործութեան, իմա՝ ցեղասպանութեան, դատապարտելու մասին, այն տարբերութեամբ միայն, որ եթե երկրորդը միջազգային դատական ատյան էր և ավելի օբյեկտիվ ու հետևողական էր մեղավորնե-

<sup>326</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 26:

<sup>327</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 37.

րին պատժելու հարցում, ապա թուրքական ռազմական տրիբունալը ավելի շատ ցուցադրական էր և ուղղված էր թուրքիայի հեղինակութունը փրկելուն՝ ոմանց քավութեան նոխազ դարձնելով և պատասխանատվությունը թուրքական պետությունից հեռացնելով:

Փաստորեն, թուրքական նոր կառավարությունը, զիտակցելով երիտթուրքական կառավարության կողմից կատարված հանցագործությունների իրավական ու քաղաքական հետևանքների ողջ ծանրությունը, և, հասկանալով, որ թուրքերի կոլեկտիվ պատասխանատվությունը, որը դրսևորվելու էր թուրքական պետության քաղաքական պատասխանատվությամբ և հանգեցնելու էր նրա զոհի՝ Հայ բնակչության նկատմամբ Օսմանյան կայսրության նախկին տարածքներում, ավելի ստույգ Արևմտյան Հայաստանում, թուրքական իշխանության դադարեցմանը, քաղաքականությունն ուղղեց նախկին երիտթուրքական կառավարության գործողություններից օտարվելուն: Դրանից ելնելով, նոր իշխանությունները պատրաստակամություն էին հայտնում ճանաչել նախկին երիտթուրքական կառավարության մեղավորությունը միայն այն տեսքով և այն չափով, որոնք անհրաժեշտ էին տեղի ունեցած հանցագործությունները դատապարտելու պատրանք ստեղծելու, ինչպես նաև պատասխանատվությունը թուրքական պետությունից հեռացնելու, բայց միևնույն ժամանակ այդ հանցագործության պտուղներին՝ Հայերի ունեցվածքին ու պատմական հայրենիքին տեր դառնալու համար<sup>328</sup>:

Այդ նպատակով նոր թուրքական կառավարությունը, սկսելով դատավարությունները, միևնույն ժամանակ միջոցներ ձեռնարկեց հանցագործության ծավալները փոքրացնելու, նրա բնույթը թաքցնելու մի կողմից և մյուս կողմից, որպեսզի կայացրած դատավճիռները (հատկապես մահվան) ի կատար չածվեն և մնան թղթի վրա<sup>329</sup>: Չնայած նրան, որ դատավարության ընթացքում ամբաստանյալների կատարած հանցանքները լիովին հաստատվեցին և ճանաչվում էր մեղադրյալների մեղքը կոնկրետ հանցագործություններում, այդուհանդերձ, նրանց նկատմամբ կայացված դատավճիռները և կիրառված պատժաչափերը համապատասխան չէին նրանց հանցանքներին: Բարձրագույն պատժաչափը՝ մահապատիժը, որպես կանոն, կայացվում էր հեռակա կարգով (in absentia), քանզի տվյալ հանցագործներն արդեն բացակայում էին երկրից: Այդ մասին է վկայում նաև Կ. Պոլսում բրիտանական գերագույն

կոմիսարի պարտականությունները կատարող կոնսուլ-ժովակալ Վեբը, որը նշում էր, որ դատավճիռները ներկա և բացակա դատապարտյալների նկատմամբ կայացվում էին այնպես, որ նրանց կյանքից զրկելու իրական հնարավորությունը հասցվի նվազագույնի<sup>330</sup>:

Դատավորները չցուցաբերեցին անհրաժեշտ հետևողականություն դատավճիռների հարցում: Նրանցից շատերը, կապված լինելով երիտթուրքերի հետ, հաճախ հակված էին չխորանալու կատարված փաստերի մեջ և չկայացնելու խիստ որոշումներ: Դատաքննության ընթացքում թույլ են տրվել լուրջ թերացումներ: Օրինակ, չըջանային պատասխանատու քարտուղարների դատավարությունը տեղի է ունեցել 1919 թ. հունիսին, մինչդեռ դատավճիռը ձգձգվել է մինչև 1920 թ. հունվար: Պատճառն այն էր, որ եթե հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների նկատմամբ մահվան դատավճիռ կայացնելը կատարվում էր բավականին արագ ու անկաշկանդ, ապա ներկա գտնվող հանցագործների հանդեպ պատիժ սահմանելու հարցում հանդես էր բերվում ավելորդ դանդաղություն<sup>331</sup>:

Նույնանման իրավիճակ ստեղծվեց նաև գերմանացի ռազմական հանցագործների դատապարտման հարցում, երբ հաղթանակած տերուկությունները հետևողական չգտնվեցին Վերսալի պայմանագրի 227 և 228-րդ հոդվածների կիրառման հարցում, որոնցով նախատեսվում էր ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կողմից նշանակված դատավորներից կազմված միջազգային տրիբունալում դատել կայզեր Վիլհելմ II-ին և նրա հետևորդներին պատերազմ վարելու օրենքների և սովորույթների խախտման համար և Գերմանիայի վրա պարտավորություն էր դրվում տերուկություններին հանձնել ռազմական հանցագործներին<sup>332</sup>: Սակայն Հոլանդիան հրաժարվեց տերուկություններին հանձնել իր տարածքում ապաստանած գերմանական կայզերին, իսկ տերուկություններն էլ առանձնապես չէին պնդում իրենց պահանջի վրա:

Գերմանական կառավարությունն իր հերթին հրաժարվեց տերուկություններին հանձնել նրանց կողմից պահանջված սկզբում 890, իսկ հետագայում 43 անձանց, որոնց թվում էին նախկին կայսերական կանցլեր Բեթման-Հոլվեգը, ֆելդմարշալ Հինդենբուրգը, գեներալներ Լյուդեն-դորֆը և Մակենզեն, 12 ծովակալներ և այլ բարձրաստիճան պաշտոնյա-

<sup>330</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 42.

<sup>331</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 25:

<sup>332</sup> Манинчук Ю. В., Последствия международного правонарушения, Киев, 1987, с. 84.

<sup>328</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 38:

<sup>329</sup> Նույն տեղում:

ներ: Գերմանական կառավարությունը Հասավ նրան, որ Հաղթանակած տերությունները Համաձայնություն տվեցին, որ պատերազմական Հանցագործների գործը քննվի Լայպցիգի գերագույն դատարանի կողմից, պայմանով, որ Անգլիան և Ֆրանսիան այնտեղ էին գործուղելու իրենց ներկայացուցիչներին: Գերմանացի դատավորները նույն դանդաղոտություն միայն 1921 թ. մայիսին սկսեցին առաջին գործի լսումը: Ծիշտ այնպես, ինչպես թուրքական ռազմական տրիբունալում, գերմանական գերագույն դատարանն էլ խուսափում էր կառավարության անդամներին կամ բարձրաստիճան հրամանատարական կազմի ներկայացուցիչներին պատժելուց, իսկ մյուս պատերազմական Հանցագործների նկատմամբ կիրառվում էին չափազանց մեղմ պատիժներ: Այսպես, անգլիացի և ֆրանսիացի ռազմագերիների նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած, զնդակահարած կամ նրանց մեղքով Համաճարագի Հետևանքով մահացած, վերավորներ տեղափոխող անգլիական ոչ ռազմական նավեր խորտակելու, վերահսկվող տարածքներում բնակչության թալանով զբաղվելու մեջ մեղադրվող գերմանացի նախկին սպաները կամ արդարացիում էին, կամ դատապարտվում բավականին կարճատև ազատազրկման<sup>333</sup>: Բանը Հասավ նրան, որ Անգլիան և Ֆրանսիան ի նշան բողոքի Հետ կանչեցին իրենց ներկայացուցիչներին, ինչով փաստորեն մեկ անգամ ևս ցուցաբերեցին իրենց անգործությունն ու անվճարականությունը, ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելով Լայպցիգի դատարանի «գործունեություն» համար:

Այսպիսով, երիտթուրքերի և Լայպցիգի դատավարությունների միջև նմանությունները բավական ակնառու են, բարեբախտաբար երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված Նյուրնբերգյան միջազգային ռազմական տրիբունալում Հաջողվեց իրականացնել անաչառ դատավարություն և արժանի պատիժներ սահմանել պատերազմական, ինչպես նաև մարդկության դեմ կատարված Հանցագործություններում մեղադրվող Հանցագործների նկատմամբ:

Այդուհանդերձ, երիտթուրքերի դատավարությանը հետաքրքիր գնահատականներ հետագայում տվեցին Հենց իրենք՝ թուրքերը: Յոզղատի գործի դատավարության ավարտից հետո երիտթուրքական կուսակցության տեղի քարտուղարը Հայտարարեց, որ կայացրած «դատավճիռն իրենից ներկայացնում է կառավարության և դատարանի ինք-

նասպանությունը, քանզի դա թուրք ցեղի դատավճիռն է»<sup>334</sup>: Անկարա-յում ստեղծված քեմալական կառավարության վարչապետը նույնպես տալիս էր այն գնահատականը, որ դատավճիռն իրենից ներկայացնում է «սեփական կառավարության մեղքի ճանաչումն ու Հավաստումը»<sup>335</sup>: Փաստորեն անգամ այս մեղմ վճիռները նրանք գնահատում էին իբրև չափազանց խիստ երիտթուրքերի համար և չնայած նրան, որ երիտթուրքերի Հայերի ցեղասպանության հետ կապված շատ գործերի քննությունը արդեն ավարտված էր և սպասվում էին նոր դատավարություններ, քեմալականները նախաձեռնեցին լրիվ Հակառակ մի գործընթաց: 1921 թ. Հունվարի 3-ին քեմալական իշխանությունները որոշում կայացրեցին ռազմական տրիբունալները փոխարինել սեփական անկախության դատարանով մասնավորապես այն Հանցագործությունների հետ կապված, որոնք լսվել էին Անկարայի վիլայեթում՝ Յոզղատում: Իսկ 1922 թ. ապրիլի 25-ին քեմալականները ստիպեցին վերջին կառավարության վերջին մեծ վեզիրին ռազմական տրիբունալներն ընդհանրապես Հայտապարել ոչ իրավասու «ազգայնականներին», այսինքն՝ երիտթուրքերին, դատելու համար: Այս քայլերի վերջնակետը Հանդիսացավ այն, որ 1923 թ. մարտի 31-ին ընդհանուր համաներում Հայտարարվեց բոլոր նրանց համար, ովքեր դատապարտվել էին ոչ միայն ռազմական, այլև քաղաքացիական դատարանների կողմից<sup>336</sup>: Լուծարելով ռազմական տրիբունալները և կարճելով բոլոր քրեական գործերը, որոնք կապված էին Հայերի տեղահանությունների և կոտորածների հետ, քեմալականները Հենց իրենք Հաստատեցին, որ Հանդես են գալիս ոչ միայն որպես Հանցագործների պաշտպաններ, այլև՝ նրանց ցեղասպան քաղաքականության շարունակողներ:

Քեմալականների նման քայլերի Հաջորդականության շարժառիթը կայանում էր նրանում, որ նախ դատավարությունների շարունակությունը կարող էր բերել նոր բացահայտումների, որի հետևանքով ակնհայտ կդառնար քեմալականների կապը երիտթուրքերի հետ, քանզի շատ նախկին իթթիհադականներ արդեն ղեկավարում էին քեմալական շարժումը և պատասխանատվությունը կարող էր տեղափոխվել նաև այդ նոր թուրքական շարժման վրա: Բացի այդ, քեմալականների այս քայլերը միանշանակ խոսում էին այն մասին, որ նրանք ոչ միայն մտադրված

<sup>333</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Молож А. И.**, Немечкий военный разбой в Европе, Л., 1945.

<sup>334</sup> Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 44.

<sup>335</sup> Նույն տեղում:

<sup>336</sup> Նույն տեղում:

չէին դատապարտել նախորդ վարչակարգի քաղաքականությունը Հայերի նկատմամբ, այլև լիովին կիսում ու պաշտպանում էին այն, իսկ նրանց հետագա ներխուժումը և գործելակերպն արդեն Արևելյան Հայաստանում բացահայտորեն ապացուցեց երիտթուրքերի հետ քեմալականների ժառանգական կապը:

Սակայն չնայած թուրքական կառավարության և դատարանների ջանքերին հեռու պահել պատասխանատվությունից թուրքական պետությունը, այնուամենայնիվ, դատավարությունների նյութերը օգնում են պարզել տեղի ունեցածի իրական պատկերը: Այն հանգամանքը, որ երիտթուրքերի հետ կապված տարբեր գործերով ռազմական տրիբունալները գալիս էին միևնույն եզրակացություն, խոսում է այն մասին, որ այդ հանցագործությունները բոլորը մեկ ընդհանուր մեծ ռեպրեզենտացիայի հանգույցներն են:

Թուրքական արդարադատության բոլոր ակնհայտ թերություններով, բացթողումներով, կողմնապահությամբ ու արհեստական սխալներով հանդերձ պետք է նշել, որ երիտթուրքերի դատավարությունը ունի չափազանց կարևոր նշանակություն Հայոց ցեղասպանության պատմաիրավական հիմնավորման և հետևանքների հաղթահարման տեսանկյունից, քանզի սա քաղաքական դատավարություն էր, որով մեղավոր էին ճանաչվում թուրքական իշխանության բարձրաստիճան պաշտոնյաները, այդ թվում նաև Հայերի զանգվածային սպանությունների մեջ: Ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ նման մեղադրանքի հաստատումը թուրքական դատարանում նշանակում էր նոր թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության անուղղակի ճանաչում: Թերևս սա էր նաև պատճառը, որ հետագայում քեմալականները փորձեցին չեզոքացնել ռազմական տրիբունալների վճիռները:

Սակայն չնայած ռազմական տրիբունալների վճիռները չեզոքացման քեմալականների փորձեցրին, դրանք, այնուամենայնիվ, թուրքիայի սահմաններից դուրս իրավական հիմք հանդիսացան մեկ այլ մասնավոր դատավարության համար, որն անմիջական առնչություն ուներ Հայոց ցեղասպանության հետ: Խոսքը մասնավորապես Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանի դատավարության մասին է՝ կապված 1921 թ. մարտի 15-ին Շարլոտենբուրգում երիտթուրք պարագլուխներից Թալեաթ փաշայի սպանության հետ: Բոլորի համար ակնհայտ էր, որ Թեհլիրյանն էր սպանել Թալեաթին և ձեռքակալվել էր հանցանքի վայրում, և ինքն էլ չէր ժխտում, որ սպանել է վերջինիս: Այդուհանդերձ տվյալ դատավարությունն արդարացիորեն պատմության մեջ ավելի շատ հայտնի է ոչ թե իբրև Թեհլիրյանի, այլ Թալեաթ փաշայի դատավարություն, քանզի

ողջ դատավարության ընթացքը և վճիռը ավելի շատ վերաբերում էր ոչ այնքան Թալեաթի սպանությանը, որքան Հայոց ցեղասպանությանը:

Դատավարության ընթացքում, որն ընթացավ 1921 թ. հունիսի 2-ից 3-ը, դատախազը մեղադրական ճառի մեջ Թեհլիրյանին մեղադրում էր կանխամտածված սպանություն կատարելու մեջ, այդ սպանությունը գնահատելով իբրև քաղաքական ատելության և վրեժի դրսևորում<sup>337</sup>: Ընդհանրապես տվյալ դատավարությունը գերմանական արդարադատությունն ի սկզբանե տվեց քաղաքական բնույթ, քանզի բոլորի համար ակնհայտ էր, որ կատարվածը քաղաքական սպանություն էր: Դատախազը ամեն կերպ փորձում էր արդարացնել Թալեաթին և երիտթուրքերի կառավարությունը, որն իբր հստակ նպատակ չէր ունեցել ոչնչացնել Հայերին, այլ ձգտել էր կայսրության ամրապնդմանը, ինչից ելնելով էլ արձակել էր տեղահանության հրաման, ինչը հանգեցրել է ծանր հետևանքների<sup>338</sup>: Տվյալ բացատրություններն ու մեկնաբանությունները մեղադրական ճառի մեջ բոլորովին էլ պատահական չէին տեղ գտել, քանզի տվյալ սպանության շարժառիթը հանդիսանում էին Հայերի զանգվածային սպանությունները Օսմանյան կայսրությունում, որի գլխավոր մեղավորներից մեկը ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան էր և հենց այդ սպանությունների զոհ էր դարձել նաև Թեհլիրյանի գերդաստանը:

Անդրադարձները պատմական անցյալի դեպքերին դատախազը որակեց դատական գործի հետ կապ չունեցող բաներ, ավելին՝ նա պնդեց, է, որ իր վրա անգամ չի ազդում այն, որ Թալեաթ փաշայի նկատմամբ Կ. Պոլսում մահվան դատավճիռ է կայացվել<sup>339</sup>: Չափազանց կարևոր է, որ դատախազը ինքը փաստում է Թալեաթի վերաբերյալ թուրքիայում կայացրած մահվան դատավճիռը, սակայն անհասկանալի է այն, որ, կարևոր չհամարելով պատմական անցյալի դեպքերը տվյալ սպանության հետ կապված, դատախազը ինքը բավական մանրամասն կանգ է առնում Առաջին աշխարհամարտի իրադարձությունների, մասնավորապես երիտթուրքերի կառավարության հանցագործությունների և նրա անդամներից մի քանիսի, այդ թվում Թալեաթի նկատմամբ կայացրած մահվան դատավճիռի վրա:

Թեհլիրյանի փաստաբան Վերտաուերը, իր պաշտպանական ճառում, անդրադառնալով պատմական իրադարձությունների վերաբերյալ

<sup>337</sup> Судебный процесс Талаата пашы, под редакцией С. Степаняна, Ер., 2007, с. 177.

<sup>338</sup> Նույն տեղում, с. 178.

<sup>339</sup> Նույն տեղում, с. 180.

դատախազի դատողություններին, կրկին բոլորին հիշեցնում է, որ Թալեաթին իր երկրում դատապարտել են մահվան հայերի զանգվածային սպանությունները կազմակերպելու համար: Պաշտպանը նշում է, որ եթե գերմանական դատարանը չի ցանկանում ճանաչել այլ երկրի դատարանի վճիռը, ապա այդ դեպքում այն իրավունք չունի պահանջելու, որ մյուսները ճանաչեն իր դատավճիռները: Ընդ որում, Վերտաուերն ընդգծում է, որ Թալեաթին մահապատժի դատավճիռ է կայացրել ոչ թե Թուրքիայի սովորական դատարանը, այլ ռազմական տրիբունալը՝ պատերազմական Հանցագործությունների համար, որոնց մասին տվյալ դատավարության ընթացքում բոլորն առիթ ունեցան լսել վկաների ցուցմունքներից և համոզվել, որ ռազմական տրիբունալը կայացրել է արդարացի դատավճիռ Թալեաթի և նրա Հանցակիցների նկատմամբ<sup>340</sup>:

Վերտաուերի մեկնաբանությունները չափազանց կարևոր են այն իմաստով, որ նախ շեշտվում է տվյալ Հանցագործության ու դատավարության օրգանական պատճառահետևանքային կապը Հայոց ցեղասպանության ու երիտթուրքերի դատավարության և մասնավորապես թուրքական ռազմական տրիբունալի դատավճռի միջև, ինչի հիման վրա կատարվում է այն պնդումը, որ գերմանական դատարանը անպայման պետք է ընդունի և Հաշվի առնի թուրքական ռազմական տրիբունալի մահվան դատավճիռը մասնավորապես Թալեաթի նկատմամբ, մանավանդ, որ բոլորը վկաների ցուցմունքներից հետո համոզվեցին այդ վճռի արդար ու հիմնավոր լինելու հարցում: Վերտաուերը անհիմն էր համարում նաև դատախազի այն պնդումը, թե թուրքական ռազմական տրիբունալը իբր վճիռներ է կայացրել անգլիական ռազմական վերի թնդանոթների ազդեցության ներքո: Շեշտվում էր Թալեաթի ու նրա Հանցակիցների կատարած Հանցագործությունների հատուկ տեսակը այն ժամանակվա միջազգային իրավունքի տեսանկյունից՝ պատերազմական Հանցագործություններ, ինչը միանշանակ նշանակում էր, որ գործող միջազգային իրավական նորմերով նման Հանցագործություն կատարած անձը Հանցագործ է, ոչ միայն իր պետության տարածքում, այլև նրա սահմաններից դուրս, այդ թվում նաև Գերմանիայում: Այսպիսով, Վերտաուերը փորձում էր դատարանին ներկայացնել, որ տվյալ դեպքում գործ ունեն պատերազմական Հանցագործի ֆիզիկական ոչնչացման հետ, որը խուսափել էր արդարադատությունից, քանզի պետք է մահապատժի ենթարկվեր կայացված արդարացի վճռի համաձայն:

Վերտաուերը պնդում է, որ հենց այդ մահապատժի դատավճիռն է եղել պատճառը, որ Թալեաթը փախել է իր երկրից և չէր վերադառնում Հայրենիք՝ կեղծ փաստաթղթերով գտնվելով Գերմանիայում: Փաստաբանը նշում է, որ գերմանական կառավարությունը թույլ չէր տա իր Հայրենիքից փախած Հանցագործին կեղծ փաստաթղթերով թաքնվել Գերմանիայում, եթե Հայտնաբերվեր այդ կեղծիքը, նկատի ունենալով այն, որ նման անձանցից մեկը՝ էնվեր փաշան դրանից առաջ փախել էր Գերմանիայից<sup>341</sup>:

Պաշտպանը նշում է, որ թուրքական ռազմական տրիբունալի օրինական ուժի մեջ մտած դատավճռով Թալեաթ փաշան, էնվերի, Ջեմալի և Նազմի հետ միասին ճանաչվել է մեղավոր Հայերի կոտորածների և անմեղներին պատժելու ծանր Հանցագործության մեջ և մեղադրել իրեն նրանում, որ վիրավորում է այդ դատապարտյալներին, նրանց Հանցագործներ անվանելով, մարդկանց, ովքեր օրենքի հիման վրա մեղավոր են ճանաչվել ծանրագույն Հանցագործությունների մեջ, հակասում է գերմանական օրենսդրությանը և նշանակում է չիմանալ այդ օրենսդրությունը<sup>342</sup>:

Այս դատողություններն ակնհայտորեն ուղղված էին դատախազին, որն ամեն կերպ փորձում էր ներկայացնել, որ սպանվել է Գերմանիայի Հավատարիմ դաշնակիցներից մեկն՝ ի դեմս Թալեաթի: Սրան պաշտպան Վերտաուերը անդրադարձեց, որ պատերազմական Հանցագործ Թալեաթը չի կարող համարվել Գերմանիայի դաշնակիցը, Հնարավոր է նա եղել է նախկին պրուսական կամ գերմանական ռազմական կառավարության դաշնակիցը, որոնք չեն հարցրել գեմանացի ժողովրդի կարծիքը՝ էնվերի ու Թալեաթի նմանների հետ դաշինք կնքելիս<sup>343</sup>:

Այսպիսով, պաշտպանների ռազմավարությունը կառուցված էր այն հիմքի վրա, որ Հանցագործության կատարումը չժխտող Թեհլիրյանը այն կատարել է ոչ թե աֆեկտի պայմաններում, այլ Հայտնաբերել ու ի կատար է ածել նաև Հայերի զանգվածային սպանությունների համար միջազգային Հանցագործի օրինական ուժի մեջ մտած մահվան դատավճիռը, որը խուսափում էր արդարադատությունից, կեխժ փաստաթղթերով բնակվելով Բեռլինում:

Թեհլիրյանի դատավարությունը այս տեսակետից ոչ այնքան զուտ իրավական, որքան քաղաքական ու բարոյական նշանակություն ունեցող

<sup>340</sup> Судебный процесс Галаата пашин, с. 213.

<sup>341</sup> Судебный процесс Галаата пашин, с. 214–215.

<sup>342</sup> Նույն տեղում, с. 235.

<sup>343</sup> Նույն տեղում, с. 219, 237.

Թե՛ Հայերի և Թե՛ Թուրքերի Համար, քանզի գերմանական դատարանը վճռում էր Հայերի զանգվածային սպանությունների նկատմամբ վերաբերմունքի հարցը: Ավելին՝ սա ոչ թե Թեհլիրյանի, այլ Հենց Թալեաթի դատավարությունն էր, որի ընթացքում անուղղակիորեն քննարկվում էր նաև Օսմանյան կայսրության ու նրա իրավահաջորդ Թուրքիայի պատասխանատվության հարցը Հայերի զանգվածային սպանությունների համար: Հատկանշական է, որ տվյալ հարցը քննարկում էր Օսմանյան կայսրության նախկին դաշնակից Գերմանիայի դատարանը, ուստի Թուրքերի Համար անաչառության հարցը ամենևին քննարկման առարկա չպետք է հանդիսանար:

1921 թ. Հունիսի 3-ին երդվյալների որոշման համաձայն Սողոմոն Թեհլիրյանը մեղավոր չէր ճանաչվում այն բանում, որ սպանել է Թալեաթ փաշային: Ատենակալների որոշման հիման վրա գերմանական դատարանը վճռեց արդարացնել Թեհլիրյանին և դատավարության հետ կապված բոլոր ծախսերը փոխանցել պետական գանձարանի Հաշվին<sup>344</sup>: Այսպիսով, դատավարության ողջ ընթացքից և դատարանի վճռից ելնելով, կարելի է պնդել, որ գերմանական դատարանը, հիմնվելով երիտթուրքերի դատավարության թուրքական ռազմական տրիբունալի դատավճիռների վրա, արդարացրեց Հայերի զանգվածային սպանությունների կազմակերպիչներից մեկին՝ Թալեաթ փաշային Ֆիզիկապես ոչնչացնողին՝ Սողոմոն Թեհլիրյանին, որը չէր ծխտում, որ ինքն էր կատարել այդ արարքը: Հակառակ պարագայում գերմանական դատարանը պետք է առաջնորդվեր այն ժամանակվա Գերմանիայի քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով, որի համաձայն կանխամտածված սպանություն կատարած անձը ենթակա էր մահապատժի: Նույն օրենսգրքի 213-րդ հոդվածով դատարանը կարող էր Հաշվի առնել մեղմացուցիչ հանգամանքները, որ սպանվածը սպանողի և նրա հարազատների հետ դաժանորեն է վերաբերվել, ինչով և հարկադրել է նրան տվյալ վայրում հանցագործության կատարելուն, ինչի դեպքում մարդասպանը ազատազրկվելու էր ոչ պակաս, քան վեց ամիս ժամկետով<sup>345</sup>: Սակայն Թեհլիրյանի նկատմամբ չկիրառվեցին գերմանական քրեական օրենսգրքի այս հոդվածները, քանզի երդվյալները և դատարանը գիտակցեցին այս գործի էությունն ու նշանակությունը:

Գերմանական դատարանի այս վճռով, չնայած քեմալականների ջանքերին, փաստորեն կատարվեց երիտթուրքերի դատավարության վճիռների միջազգայնացման առաջին քայլը:

Այս փաստը մտահոգիչ էր Թուրքերի Համար ինչպես վճռի կայացման պահին, այնպես էլ մեր օրերում: Հատկանշական է, որ նախկին դաշնակից Գերմանիայից դժգոհ Թուրքերը երկրորդ աշխարհամարտի ընթացքում 1943 թ. դիմեցին հիտլերյան իշխանություններին Թալեաթի աճյունը վերադարձնելու խնդրանքով և, ստանալով համաձայնությունը, վերաթաղեցին այն Թուրքիայում<sup>346</sup>: Պետական մակարդակով կատարված այս գործողությունը և Թալեաթի հետագա հերոսացումը նույնպես ակնհայտորեն վկայում է նոր Թուրքիայի կողմից Օսմանյան կայսրության քաղաքականության շարունակականության մասին: Այս քայլի շարունակությունը եղավ նաև այն, որ վերջերս Թուրքերը փորձեցին վիճարկել Սողոմոն Թեհլիրյանի դատավճիռը: Բեռլին գործուղվեց Թուրքիայի արդարադատության նախարարը, որը իբրև տվյալ դատավարության վճռի անհիմն լինելու փաստարկ բերեց այն, որ դատավարությունը ավարտվել է ընդամենը երկու օրում և այդ ընթացքում հնարավոր չէր անաչառ ու օբյեկտիվ վճիռ կայացնել այս կարևոր գործում: Դատավարության երկօրյա ընթացքն իսկապես հարցերի տեղիք է տալիս, սակայն պետք է նշել, որ Հենց դատարանը չցանկացավ լսել մյուս վկաների ցուցմունքները, որոնք Բեռլին էին եկել պատմելու Թալեաթի ու նրա հանցակիցների բազմաթիվ այլ ծանր հանցագործությունների մասին, համարելով, որ արդեն բավարար ապացույցներ ունի վճիռ կայացնելու համար: Կարծում ենք, որ այդ ցուցմունքների չլսելու պատճառը կայանում էր ոչ այնքան ապացույցների բավարար լինելու մեջ, արքան նրանում, որ այդ ցուցմունքների ժամանակ կարող էր նաև բացահայտվել Գերմանիայի իբրև Օսմանյան կայսրության դաշնակցի հանցակցությունը Հայերի զանգվածային սպանությունների մեջ, երբ վերջինս կարող էր գոնե փորձեր կատարել կանխելու կամ մեղմելու կատարվող Հայերի սպանող, բայց ոչ մի գործնական քայլ չձեռնարկեց այդ ուղղությամբ: Թերևս, Հաշվի առնելով այս հանգամանքները, անհրաժեշտ համարվեց թույլ չտալ դատավարության երկարաձգումը, դրանից բխող հնարավոր անցանկալի հետևանքներից խուսափելու համար: Այնպես որ տվյալ դատավարության արագ ընթացքի պատճառները Թուրքերը պետք է փնտրեն ոչ թե կայացրած վճռի անաչառության ու օբյեկտիվության, այլ նախկին դաշնակից Կայսերական Գերմանիայի

<sup>344</sup> Судебный процесс Талаата пашин, с. 241.

<sup>345</sup> Նույն տեղում с. 62.

<sup>346</sup> Բարդակյան Գ. Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Եր., 1991, էջ 46:

Թուրքական պետության Հետ Հայերի ցեղասպանության Հանցակցութ-  
յան փաստերի բացահայտումից խուսափելու մեջ:

Այսպիսով, Թալեաթ փաշայի դատավարությունը լիարժեք կարելի է  
դիտարկել իբրև երիտթուրքերի դատավարության շարունակություն և  
Թուրքական ռազմական տրիբունալների կայացրած վճիռների միջազ-  
գայնացման առաջին լուրջ քայլ:

Ամփոփելով վերընշվածը, կարող ենք Հանգել Հետևյալ եզրահան-  
գումներին՝

1. Երիտթուրքերի, ինչպես նաև գերմանացի Հանցագործների դա-  
տավարությունը Լայպցիգում Հստակ ցույց տվեց, որ պատերազմական  
Հանցագործների դատավարությունը ազգային դատարանների կողմից  
այն վերածում է ավելի շատ ցուցադրական մի գործընթացի, և նման  
դատավարություններն ավելի անաչառ ու օբյեկտիվ կարող են իրակա-  
նացնել միայն միջազգային դատական ատյանները: Ազգային դատա-  
րաններում նման դատավարությունների իմիտացիաներով Թուրքիան և  
Գերմանիան փաստորեն կանխարգելեցին միջազգային տրիբունալում  
այդ Հանցագործությունների քննության Հանարավորություն:

2. Քննալական իշխանությունների կողմից Թուրքական ռազմա-  
կան տրիբունալների անգամ մեղմ վճիռների ռեվիզիան և Հանցագործ-  
ների անհիմն Համաներումը նույնպես Հիմք է տալիս պնդելու, որ այս  
Հանցագործության քննությունը պետք է վստահվի միջազգային դա-  
տական ատյանին:

3. Թուրքական ռազմական տրիբունալի դատավարության նյութե-  
րից Հստակ երևում է, որ երիտթուրքերի կատարած Հանցագործություն-  
ները Թուրքական պետության և իշխանության Հստակ ծրագրված քա-  
ղաքականություն է եղել, որի Համար պատասխանատվություն պետք է  
կրեին ոչ միայն կոնկրետ Ֆիզիկական անձինք, այլև Թուրքական պե-  
տությունը, սակայն դատավճռում անգամ ակնարկ չկա Թուրքական պե-  
տության մեղավորության մասին:

4. Դատավճռում Հայերի զանգվածային կոտորածների մեղադրան-  
քը, որն այսօր միջազգային իրավական նորմերով միանշանակ որակ-  
վում է իբրև ցեղասպանություն, մղվել է Հետին պլան, և երիտթուրքե-  
րին Հիմնականում դատապարտում էին այլ Հանցագործությունների  
Համար և այլ մեղադրանքներով, չնայած որ դատավարության նյութերի  
մեջ առատ փաստեր կան Հայերի զանգվածային սպանությունների մա-  
սին:

5. Երիտթուրքերի դատավարության միջազգայնացման առաջին  
քայլն արդեն իսկ կատարված է գերմանական դատարանի կողմից, որը

երիտթուրքերի դատավարության վճռով նաև Հայերի զանգվածային  
սպանությունների Համար մահվան դատապարտված Թալեաթ փաշայի  
նկատմամբ մահվան դատավճիռը Հիմք ընդունեց նրան ոչնչացնողին՝  
Սողոմոն Թեհլիրյանին, անմեղ ճանաչելու Համար: Թեհլիրյանի արդա-  
րացման վճիռն, ըստ էության, նշանակում էր, որ Թալեաթ փաշայի  
սպանությունը գերմանական դատարանը Համարել է ոչ թե սովորական  
մարդասպանության, այլ Հայերի ցեղասպանության Համար արդարացի  
մահվան վճիռից խուսափող միջազգային Հանցագործի Հայտնաբերման  
ու օրինական ուժի մեջ մտած դատավճռի ի կատար ածելու գործ:

6. Երիտթուրքերի դատավարության նյութերն անպայմանորեն  
պետք է օգտագործվեն Հայոց ցեղասպանության Հետևանքների Հաղ-  
թահարման գործընթացում:

## ԳԼՈՒԽ IV

### ՄԱԿ-Ի 1948 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ Զ-Ի ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՑԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի մշակման ու ընդունման տարիները համընկան «սառը պատերազմի» սկզբնավորման և երկու հակադիր ճամբարների ձևավորման հետ և միանգամայն բնական է, որ այդ բարդ աշխարհաքաղաքական իրադրությունն իր ազդեցությունն էր ունենալու փաստաթղթի մշակման գործընթացի, առավել ևս՝ վերջնական տեքստի վրա:

«Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) ստեղծման սկիզբն ազդարարվեց 1946 թ. դեկտեմբերի 11-ին: Այդ օրը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում ընդունվեցին միանգամից երկու բանաձևեր: Դրանցից 95(1)-ը հաստատում էր միջազգային իրավունքի այն սկզբունքները, որոնք ամրագրվել էին Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության ու վճիռների մեջ<sup>347</sup>: Իսկ 96(1)-ով սահմանվում էր, որ ցեղասպանության հանցագործության գլխավոր մեղավորները ենթակա են պատժի, անկախ այն բանից, թե այդ հանցագործությունը կատարվել է կրոնական, ռասայական, քաղաքական կամ որևէ այլ շարժառիթներով և այն իրականացնողները հանդիսանում են մասնավոր անձինք, թե պետական պաշտոնյաներ կամ գործիչներ<sup>348</sup>: Փաստորեն, ապագա Կոնվենցիային ծնունդ տվող այս բանաձևն արդեն իսկ չեզոքացնում էր ցանկացած հիմնավորում կամ շարժառիթ, որը կարող էր ծառայել իբրև ցեղասպանության իրականացման մեջ մեղադրվող անձանց արդարացման կամ նրանց պատիժը մեղմաց-

նող հանգամանքներ փնտրելու հնարավորություն<sup>349</sup>: Ելնելով այս բանաձևից, Գլխավոր Ասամբլեան հանձնարարեց ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդին ուսումնասիրել Ցեղասպանության մասին կոնվենցիայի նախագիծը կազմելու հարցը: Այս առաջարկն արվեց ԽՍՀՄ ներկայացուցչի կողմից՝ ելնելով այն կանխադրությունից, որ ռասայական, ազգային և կրոնական խմբերի պաշտպանության հարցերը զտնվում են ՄԱԿ-ի այդ ենթակառուցյի իրավասության շրջանակներում:

Բանաձևի ընդունումից հետո Տնտեսական և սոցիալական խորհուրդը Կոնվենցիայի տեքստի կազմման աշխատանքների մեջ ներգրավեց միջազգային իրավունքի հայտնի մասնագետների, որոնք մինչ այդ արդեն իսկ լուրջ աշխատանքներ էին կատարել այդ ուղղությամբ: Առ այդ՝ Կոնվենցիայի նախագծի մշակման աշխատանքներում ներգրավվեցին միջազգային իրավունքի երեք հեղինակավոր մասնագետներ՝ պրոֆեսոր Ռաֆայել Լեմկինը, ռումինացի Վեսպասիան Պելլան և ֆրանսիացի պրոֆեսոր Դոնադյե դը Վաբրը, որոնք փաստորեն դարձան Կոնվենցիայի հիմնադիր-հայրերը: Նրանց ընտրությունը բոլորովին էլ պատահական չէր, քանզի թվարկված անձինք մինչ այդ երկար տարիներ հետազոտություններ էին կատարել միջազգային քրեական իրավունքի բնագավառում և նրանց տեսական գիտելիքները կարող էին չափազանց օգտակար լինել միջազգային քրեական հանցագործություն համարվող ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիա ստեղծելու գործում:

Միջազգային իրավունքի ֆրանսիացի պրոֆեսոր Դոնադյե դը Վաբրը միջազգային հանցագործությունների համար պետությունների քրեական պատասխանատվության հայեցակարգի հայտնի պաշտպաններից էր և գտնում էր, որ միջազգային իրավախախտումների կանխարգելման գրավականը հանդիսանում է իրավախախտ պետության նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու սպառնալիքը: Նրա կարծիքով պետությունների քրեական պատասխանատվության իրագործման պայմանը պետք է լինի միջազգային կազմակերպության (Ազգերի լիգայի) տրամադրության տակ իրական ուժի առկայությունը: Դը Վաբրը դեռևս 1924 թ. հանդես էր եկել միջազգային քրեական դատարանի ստեղծման առաջարկով:

Ռումինացի իրավաբան, միջազգայնագետ Վեսպասիան Պելլային հիրավի կարելի է համարել միջազգային իրավունքում քրեական պա-

<sup>347</sup> Резолюции, принятые Генеральной Асамблеей на Второй части Первой сессии с 23 октября по 15 декабря 1946 г. Лейк-Соксес, Нью-Йорк: ООН, 1947, с. 139-140.

<sup>348</sup> Նույն տեղում, с. 140.

<sup>349</sup> Дадрян В., Геноцид армян как проблема международного уголовного права, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Եր., 2006, N 13, էջ 5:



տասխանատվության ճանաչման ուղղության հիմնադիրը: Նա 1925 թ. գրեց իր «Պետությունների կոլեկտիվ պատասխանատվությունը և ապագայի քրեական իրավունքը» աշխատությունը, որտեղ պետությունն անվանում էր «իրավունքի գործող սուբյեկտ», որը չի կարող խուսա տալ այն օրենքի պահանջներից, որոնք ներկայացվում են առանձին անձանց և չի կարող կատարել այն հանցագործությունները, որոնցում մեղադրում է վերջիններիս<sup>350</sup>: Հեղինակն ընդգծում էր, որ պետությունը կյանքի է կոչում ժողովրդի կամքը և եթե վերջինս հանդիսանում է հանցագործ, ապա պատասխանատվությունն ընկնում է ամբողջ պետության և համապատասխանաբար նաև ժողովրդի վրա:

1933 թ. Պալերմոյում կայացած քրեական իրավունքի միջազգային վեհաժողովում Վեսպասիան Պելլան հանդես եկավ զեկոլյցով, առաջարկելով անպաշտպան բնակչության, քաղաքացիների խմբերի կամ համայնքի դեմ ուղղված հարձակումները և բարբարոսական գործողությունները որակել որպես հանցագործություն, որը ենթակա է միջազգային տրիբունալի ընդլատության<sup>351</sup>:

Միջազգային քրեական իրավունքի մասնագետների շարքում առանձնանում է պրոֆեսոր Ռ. Լեմկինը, որը մյուսների համեմատ ավելի շատ էր մասնագիտացել այդ ոլորտի կոնկրետ հանցագործության ուղղությամբ: Հոլոքոստից դեռ տարիներ առաջ՝ 1933 թ. Մադրիդում կայացած միջազգային քրեական իրավունքի կանոնակարգման կոնֆերանսին ներկայացրած զեկոլյցում Լեմկինը նկարագրում էր մի «անանուն հանցագործություն», որի տակ նկատի ուներ գլխավորապես այն, ինչ հայտնի էր որպես «Հայկական կոտորածներ»<sup>352</sup>: Մադրիդյան զեկոլյցում պրոֆեսորը «անանուն հանցագործության» դրսևորում էր համարում նաև մշակութային վանդալիզմը: Չեկոլյցի վերջում Լեմկինն առաջարկում էր ընդունել հատուկ միջազգային կոնվենցիա՝ տվյալ հանցագործությունը կանխարգելելու և պատժելու համար:

1944 թ. լույս տեսած «Առանցքի ղեկավարումը բռնազավթված եվրոպայում» աշխատության մեջ Ռ. Լեմկինը 1933 թ. ներկայացրած իր նախորդ Հայեցակարգի համեմատ բավականին սահմանափակեց ցեղասպանության հանցագործության օբյեկտների շրջանակը՝ ռասայական, էթնիկ, կրոնական կամ սոցիալական խմբեր հասկացությունները միայն

«ազգային կամ էթնիկ» խմբերով: Սակայն, 1946 թ. Նյու-Երբրոքյան դատավարության ընթացքում, որին նա մասնակցում էր իբրև ամերիկյան կողմի մեղադրողի խորհրդատուներից մեկը, նա կրկին վերադարձավ իր նախորդ տեսակետին և ապագա կոնվենցիայում առաջարկում էր ցեղասպանության հանցագործության օբյեկտներ դիտել ոչ միայն «ազգերը կամ էթնիկ խմբերը», այլև «բնակչության առանձին շերտերը կամ զանգվածները»<sup>353</sup>:

1935 թ. Վ. Պելլան, զարգացնելով Ռ. Լեմկինի նախաձեռնությունը, ներկայացրեց միջազգային հանցագործությունների համար պատասխանատվություն սահմանող փաստաթղթի նախագիծ, առաջարկելով նաև ստեղծել միջազգային դատարան, որը կվերականգնի մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը՝ պետությունների կողմից իրականացվող հանցագործություններից<sup>354</sup>: «Միջազգային քրեական օրենսգրքի հիմնադրույթները» Յրդ. Հոդվածում Պելլան նշում էր, որ բացի պետությունների պատասխանատվությունից առկա է նաև Ֆիզիկական անձանց պատասխանատվություն այն գործողությունների համար, որոնցով խախտվում է միջազգային հանրային կարգը կամ միջազգային իրավունքը: Նա փաստորեն առաջ էր մղում ֆիզիկական անձանց և պետությունների զուգահեռ պատասխանատվության զաղափարը, քանզի միջազգային հանցագործության համար դրանցից յուրաքանչյուրը պետք է պատասխան տա իր մասով: Ֆիզիկական անձինք պետության թիկունքում չեն կարող թաքնվել պատասխանատվությունից, իսկ պետությունն էլ չպետք է պետական հանցանքի համար «բավության նոխագ» դարձնի լոկ պետական այրերին՝ նրանց հանձնելով արդարադատության և խուսափի պետական պատասխանատվությունից:

Կոնվենցիայի մասնագետ հեղինակները փաստաթղթի նախագիծը վրա աշխատեցին շուրջ կես տարի, և 1947 թ. Հուլիսի 7-ին ՄԱԿ-ի քարտուղարությունը ցեղասպանության մասին Կոնվենցիայի նախագիծն ուղարկեց կազմակերպության բոլոր անդամ-պետություններին, խնդրելով ներկայացնել առաջարկներ այդ փաստաթղթի վերաբերյալ: Պետությունները, սակայն, չէին շտապում ուղարկել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, ինչը ստիպում է ՄԱԿ-ի ղեկավարությունը կրկին անդրադառնալ այդ հարցին: 1947 թ. նոյեմբերի 21-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունում է 180 (II) բանաձևը, որով վերահաս-

<sup>350</sup> Ромашкин П. С., Преступления против мира и человечества, М., 1967, с. 169.

<sup>351</sup> Оганян П., Геноцид армянского народа и защита прав человека, Ер., 2004, с. 28.

<sup>352</sup> Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Եր., 2002. էջ 11:

<sup>353</sup> Андрюхин М. И., Геноцид – тяжчайшее преступление против человечества, М., 1961, с. 90.

<sup>354</sup> Ромашкин П. С., Преступления против мира и человечества, с. 172.

տատվում էր 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96 (I) բանաձևը: Նոր բանաձևում ընդգծվում էր, որ ՄԱԿ-ի անդամ-պետությունների ճնշող մեծամասնությունը դեռևս չեն առաջարկել իրենց մոտեցումները ցեղասպանությունը կոնվենցիայի նախագծի վերաբերյալ, որը ներկայացվել է քարտուղարության կողմից և Գլխավոր քարտուղարի կողմից 1947 թ. Հուլիսի 7-ին ուղարկվել կառավարություններին: Ելնելով Հարցի հրատապությունից, Գլխավոր Ասամբլեան Հանձնարարում էր Տնտեսական և սոցիալական խորհրդին այլևս չսպասել նոր ստացվող առաջարկներին և եղածների հիման վրա կազմել Կոնվենցիայի վերջնական տեքստի նախագիծը՝ այն Գլխավոր Ասամբլեայի երրորդ հերթական նստաշրջանին ներկայացնելու համար<sup>355</sup>:

Հատկանշական է, որ 1947 թ. նոյեմբերի 21-ին Գլխավոր Ասամբլեան ընդունել է նաև 177 (II) բանաձևը, որով որոշվում էր ստեղծել ՄԱԿ-ին կից միջազգային իրավունքի Հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Նյու-Ինգլանդի տրիբունալի կանոնադրության և նրա կողմից ընդունված որոշումների ու սկզբունքների հիման վրա միջազգային իրավունքի նորմերի կատարելագործման գործով: Բացի այդ, Հանձնաժողովին Հանձնարարվում էր զբաղվել նաև «ժողովրդական և մարդկության անվտանգության դեմ կատարված Հանցագործությունների օրենսգրքի» նախագծի ստեղծման աշխատանքներով, որոնք պետք է հիմնվեին վերընշված սկզբունքների վրա<sup>356</sup>: Երկու բանաձևերի նույն օրը ընդունվելը բոլորովին էլ պատահական չէր, քանզի ցեղասպանությունն այն Հանցագործությունն էր, որն ուղղված էր մարդկության դեմ և հետևաբար պետք է տեղ գրավեր նշված օրենսգրքի Հանցագործությունների շարքում: Բնական է ուստի, որ բուն ցեղասպանության Կոնվենցիային վերաբերող բանաձևում Գլխավոր Ասամբլեան առաջարկում էր Տնտեսական և սոցիալական խորհրդին Կոնվենցիայի նախագիծը մշակելու հաշվի առնել 177 (II) բանաձևը, այսինքն, այն իրողությունը, որ ստեղծվել է նեղ մասնագիտացված մարմին, որը զբաղվելու է բոլոր այն Հարցերով, որոնք քննարկվում են նաև ցեղասպանության մասին Կոնվենցիայում: Կարելի է ենթադրել, որ այս Հանգամանքը որոշակիորեն թուլացրեց բոլորի զգոնությունը, քանզի ենթադրվում էր, որ բոլոր

Հնարավոր թերությունները հետազայում կշտկվեին ՄԱԿ-ի միջազգային իրավունքի Հանձնաժողովի կողմից:

Չնայած Հարցի կարևորությունը, նախագծի տեքստի քննարկումը հետաձգվեց և սպասարկվում: Զգաճումների պատճառը, թերևս պետք է տեսնել նրանում, որ ԱՄՆ-ն ընդհանրապես դեմ էր ցեղասպանության վերաբերյալ առանձին կոնվենցիա ընդունելուն: ԱՄՆ-ի պատվիրակությունն առաջարկում էր ցեղասպանության պատժելիության Հարցը լուծել ոչ թե առանձին կոնվենցիայի ստեղծման ճանապարհով, այլ արդեն իսկ գոյություն ունեցող միջազգային իրավական նորմերի կողմից: Կարծիքից, Հարցը փոխանցելով ՄԱԿ-ի միջազգային իրավունքի Հանձնաժողովին: Այս առաջարկով ԱՄՆ-ը փաստորեն ընդգծում էր, որ այդ պահի դրությամբ տվյալ Հանցագործության հետ կապված արդեն իսկ մշակված են Համապատասխան միջազգային իրավական նորմեր, որոնք Հարկավոր է կողմնակցել և այդ կերպ լուծում տալ Հարցին: Սակայն պետք է նշել, որ այս դեպքում կողմնակցի գործընթացը բավական երկար ժամանակ կպահանջեր, մյուս կողմից էլ Կոնվենցիայի ընդունումով տվյալ կողմնակցի փաստորեն կիրականացվելու ավելի արագ, քանզի այդ փաստաթղթի տեքստում ամրագրվելու էին արդեն իսկ միջազգային իրավունքում եղած նորմերը:

Չնայած ԱՄՆ-ի այդ Հակազդեցությանը, Տնտեսական և սոցիալական Հարցերով խորհուրդը 1948 թ. ապրիլին Հաստատեց փաստաթղթի մշակման ad hoc Հանձնաժողովի կազմը, որում ներկայացված էին շահագրգիռ պետությունների ներկայացուցիչները, իսկ օգոստոսի 26-ին բուեն օս Կոնվենցիայի վերջնական տեքստը փոխանցեց Գլխավոր Ասամբլեային:

Կոնվենցիայի տեքստի շուրջ բանավեճերն սկսվեցին ցեղասպանության Հանցագործության սահմանումից սկսած: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից անդամ-պետություններին ներկայացրած մասնագետ-հեղինակների նախնական նախագծում «Ֆիզիկական ցեղասպանություն» էին Համարվում խմբի անդամներին սպանելը կամ նրանց առողջությունը վնաս Հասցնելը, նրանց մարմնական վնասվածքներ Հասցնելու կամ հետևյալ եղանակներով՝

- ա) խմբակային ոչնչացման կամ անհատական մահասպանություններով,
- բ) այնպիսի կենսապայմանների ստեղծումով, որոնք արտահայտվում են բնակարանից, սննդից, հագուստից, հիգիենայի և բժշկական սպասարկումից զրկելու, ծանր աշխատանքների Հարկադրելու կամ ֆիզիկական այնպիսի ծանրաբեռնվածության պահանջման եղանակով, որոնք Հանգեցնում են ուժասպառության կամ մահվան,

<sup>355</sup> Официальный отчет Второй сессии Генеральной Ассамблеи. Резолюции 16 сентября – 29 ноября 1947 г. 123-е Пленарное заседание 21 ноября 1947 года, Лейк-Соксес, Нью-Йорк: ООН, с. 72.

<sup>356</sup> Տե՛ս նույն տեղում, ս. 62.

զ) խեղումներ Հասցնելը կամ այնպիսի կենսաբանական փորձերի կատարումը, որոնք չեն հետապնդում բուժման նպատակ,

դ) գոյություն ունեցող միջոցներից զրկելը, ինչը դրսևորվում է ունեզրկմամբ, թալանով, աշխատանքի արգելքով, տվյալ տարածքի այլ բնակիչների համար հասանելի բնակության վայրից և կենսաապահովումից զրկելով<sup>357</sup>:

Դժվար է նկատել, որ Ռ.Լեմկինի, Ա. Դոնադյե դը Վաբրի և Վ.Պելլայի կողմից մշակված «Ֆիզիկական ցեղասպանություն» դրույթը հստակեցնող բաղադրիչներում առկա են բազմաթիվ հատկանիշներ, որոնք տառացիորեն համընկնում են թե՛ Հայոց ցեղասպանության և թե՛ Ողջակիզման հետ:

Կոնվենցիայի նախագծի քննարկումների ժամանակ հատուկ զեկուցող Ռ.Լեմկինի հետազոտության մեջ Հայերի ցեղասպանության հիշատակումը, որը ցեղասպանությունների համար հանդիսացել էր մոդել և Կոնվենցիայի կատարելագործելու տեսակետից լուրջ փաստական հիմք էր տալիս, խուճապային դիմադրություն առաջացրեց ոչ միայն Թուրքիայի և նրա դաշնակիցների, այլև ԽՍՀՄ-ի մոտ, որոնք մոռանալով իրենց հակասությունները, համերաշխ ձևով միավորվեցին այդ հիշատակման դեմ<sup>358</sup>: Այդ էր պատճառը, որ հետագայում ցեղասպանության օրինակները չէին կոնկրետացվում, այլ դրանց մասին խոսվում էր վերացական կարգով: Ցեղասպանության մասին Կոնվենցիայի նախապատրաստման փաստաթղթերում պարունակվում են նաև այդ գործընթացին մասնակից Կուբայի, Եգիպտոսի, Մեծ Բրիտանիայի, Արգենտինայի ներկայացուցիչների բազում նշումներ առ այն, որ ցեղասպանությունը միջազգային իրավունքին արդեն իսկ ծանոթ հանցագործություն է, որի դեպքերը պատմությունն ի հայտ է բերել դարերի ընթացքում և որը միայն վերջերս է բնորոշվել<sup>359</sup>:

ԽՍՀՄ-ի պատվիրակությունը փորձեց վիճարկել «Ֆիզիկական ցեղասպանության» կոնկրետ դրսևորումների օրինաչափությունը: Մասնավորապես կասկածի տակ դրվեց ունեզրկումը, որը թալանի հետ նույն հարթության վրա էր դրվում: ԽՍՀՄ ներկայացուցիչները պնդում էին,

որ ունեզրկումը հաճախ հանդիսանում է պատիժ՝ կատարված հանցագործության համար, իսկ թալանը հանդիսանում է հանցագործություն, որը պահանջում է պատիժ: Սակայն հեղինակներն այստեղ նկատի ունենին ապօրինի ունեզրկումը, որը ցեղասպանության հանցագործությանը բնորոշ երևույթ էր թե՛ բրիտանացիների կողմից Հայերի, և թե՛ նացիստների կողմից՝ Հրեաների նկատմամբ, ինչն ի վերջո հանգեցնում էր ցեղասպանության զոհերի՝ Հայերի և Հրեաների ոչնչացմանը: ԽՍՀՄ-ը ոչ առանց հիմքի կարծում էր, որ ունեզրկման այս դրույթը կարող է կիրառվել իր և սոցիալիստական ճամբարի իր դաշնակիցների կողմից իրականացված զանգվածային ունեզրկման քաղաքականության նկատմամբ: ԽՍՀՄ-ի պնդմամբ Ֆիզիկական ցեղասպանության հատկանիշներից հանվեցին բ) և դ) կետերը, որի հետևանքով «Ֆիզիկական ցեղասպանության» բավականին կարևոր հատկանիշներ, որոնք բնութագրում էին նաև Հայոց ցեղասպանությունը, դուրս մղվեցին Կոնվենցիայի տեքստից:

Հատկանշական է, որ ցեղասպանության Կոնվենցիայի նախագծի մասնագետ-հեղինակները նախատեսում էին պետության պատասխանատվության դրույթը ցեղասպանության հանցագործության համար: Թվում էր, թե եթե այս հոունով ընթանան աշխատանքները, ապա արդյունքում Կոնվենցիայում ամրագրվելու էին թե՛ պետությունների, և թե՛ ֆիզիկական անձանց պատասխանատվության նորմերը: Սակայն Կոնվենցիայի տեքստի մշակման հետագա աշխատանքներին միջամտեցին ՄԱԿ-ի անդամ-պետությունների ներկայացուցիչները: Եվ զարմանալիորեն, ԱՄՆ-ը ու ԽՍՀՄ-ը, որոնք իրենց դաշնակիցներով համառորեն հակադրվում էին մեկը մյուսի առաջարկներին, միասնաբար հանդես եկան Կոնվենցիայի հեղինակ-մասնագետների նախագծի այն դրույթների դեմ, որոնք նախատեսում էին պետությունների պատասխանատվության տարրեր՝ ցեղասպանության հանցագործության համար: Նրանց միասնական հակազդեցության հետևանքով պետությունների պատասխանատվության դրույթները գրեթե ամբողջությամբ չեզոքացվեցին, բացառությամբ Կոնվենցիայի IX հոդվածում պետությունների պատասխանատվության մասին անորոշ ձևակերպման: Սա թերևս միակ հարցն էր, որի շուրջ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի ու նրանց դաշնակիցների տեսակետները համընկան. մյուս բոլոր հարցերում նրանք ունեցան հակադիր մոտեցումներ:

Պետք է նշել, որ Կոնվենցիայի ընդունման գործընթացի հենց սկզբնական փուլից ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի ու նրանց դաշնակիցների միջև սկսվեց իսկական հակամարտություն: Հակադիր կողմերը տրամագծորեն հակառակ տեսակետներ էին արտահայտում գրեթե բոլոր սկզբունքային

<sup>357</sup> Андрюхин М. И., Геноцид – тяжчайшее преступление против человечества, с. 83.  
<sup>358</sup> Барсегов Ю. Г., Ответственность государства за геноцид в международном праве и международной политике. Геноцид – преступление против человечества. Материалы I Московского международного симпозиума, М., 1997, с. 94.  
<sup>359</sup> Վարդայան Վ., Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, էջ 20:

Հարցերի շուրջ: Պայքարն ընթանում էր այն տրամաբանություններով, որ կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր Կոնվենցիան դարձնել զենք ու միջոց հակառակորդի վրա ներազդելու համար: Ուստի յուրաքանչյուր հողավածի ընդունմանը նախորդել է համառ բանավեճ, որի ընթացքում բախվել են կողմերի ներկայացրած իրավական փաստարկներն ու հիմնավորումները:

ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև տարածայնությունները սկսվեցին 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96(1) բանաձևի ընդունումից անմիջապես հետո: Բանն այն է, որ Կոնվենցիայի մշակման սկիզբն ազդարարող այս փաստաթղթում ցեղասպանության հանցագործության սահմանումը տարածվում էր ոչ միայն ազգային ու ռասայական, այլև քաղաքական խմբերի վրա, ինչին բացարձակապես դեմ էր ԽՍՀՄ-ը: Վերջինս արդեն սկսել էր սոցիալիստական ճամբարի «շինարարությունը» Արևելյան Եվրոպայի երկրներում, որոնք գտնվում էին իր ազդեցության տակ: Նրանցում սկիզբ էր առել կոմունիստական կուսակցությունների միանձնյա իշխանության հաստատման գործընթացը, որի արդյունքում բոլոր այլընտրանքային ուժերը ոչ միայն հեռացվում էին իշխանության ղեկից, այլև ենթարկվում էին հետապնդումների՝ Ֆաշիստական ռեժիմի հետ համագործակցելու շինծու մեղադրանքներով: Նույն պատրվակով հենց ԽՍՀՄ-ում հետապնդումների էին ենթարկվում հազարավոր այլախոհներ, որոնք նույնպես կեղծ մեղադրանքներով լավագույն դեպքում՝ աքսորում էին Սիբիր: Ելնելով այս իրողություններից, ԽՍՀՄ-ը ոչ առանց հիմքի կարծում էր, որ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները այս դրույթը Կոնվենցիայում ամրագրելով հնարավորություն կստանան սոցիալիստական ճամբարի երկրներին և նախևառաջ ԽՍՀՄ-ին մեղադրել նշված քաղաքական խմբերի նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու մեջ: Ավելին, Արևմուտքի տերությունները, առաջ անցնելով, ձգտում էին անգամ նման հանցագործությունների հետ կապված ամրագրել «մարդասիրական միջամտության» իրավունքը, ինչը թույլ կտար տվյալ հանցագործությունը կանխելու պատրվակով միջամտել ինքնիշխան երկրների ներքին գործերին, ճիշտ այնպես, ինչպես դա բազմիցս մինչ Առաջին աշխարհամարտը կիրառվել էր Օսմանյան կայսրության նկատմամբ: ԱՄՆ-ը ու նրա դաշնակիցները կարողացան այս դրույթն ամրագրել ցեղասպանության Կոնվենցիայի ստեղծմանը ծնունդ տված 1946 թ. դեկտեմբերի 11-ի բանաձևում, սակայն պարզ էր, որ ԽՍՀՄ-ն ու նրա դաշնակիցները չէին կարող նման բան թույլ տալ Կոնվենցիայի տեքստում:

Հատկանշական է սակայն, որ քաղաքական շարժառիթներով կատարված ցեղասպանությունը կամ քաղաքական խմբերի նկատմամբ կատարված ցեղասպանության դրույթը, այլ խոսքով ասած «պոլիտիցիդը» չամրագրվեց Կոնվենցիայում ոչ այնքան ԽՍՀՄ-ի ու նրա դաշնակիցների հակազդեցության պատճառով: ԱՄՆ-ը ու նրա դաշնակիցները տվյալ պահին արդեն արժանապատեցվել էին կոմունիստական միանձնյա իշխանության արդեն արժանապատեցվել էր կոմունիստական միահեծան իշխանություններին: Մյուս կողմից էլ ԱՄՆ-ում 1948 թ. սկսվել էր «վհուկների որսը»՝ կոմունիստական կամ սոցիալիստական ուժերի դեմ: Ելնելով ստեղծված իրավիճակից ամերիկյան պատվիրակությունը իրավացիորեն սկսեց կարծել, որ «պոլիտիցիդի» ամրագրումը ԱՄՆ-ի համար կարող է ունենալ «բուժարանագի էֆեկտ» և արդեն սոցիալիստական ճամբարի երկրներն ու առաջին հերթին ԽՍՀՄ-ը Վաշինգտոնին կարող էին մեղադրել «դեմոկրատական քաղաքական խմբերի» նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու մեջ: Ուստի որոշում ընդունվեց հրաժարվել ի սկզբանե այդքան համառորեն պաշտպանվող «պոլիտիցիդի» արձանագրումից: Ուստի հանձնաժողովի նիստերից մեկի ընթացքում Վենեսուելայի, իսկ այնուհետև Ուրուգվայի, Եգիպտոսի ու Իրանի ներկայացուցիչները հանդես եկան Կոնվենցիայի տեքստից «քաղաքական խմբեր» արտահայտությունը դուրս հանելու առաջարկով, ամերիկյան պատվիրակը նույնպես պաշտպանեց նրանց առաջարկը<sup>360</sup>: Այսպիսով ցեղասպանության հանցագործության բաղադրիչ կամ, որոշ առումով՝ նաև այդ հանցագործության տեսակ համարվող «պոլիտիցիդ» եզրը տեղ չգտավ Կոնվենցիայի տեքստում:

ԽՍՀՄ-ի վերջնական դիրքորոշումները հայտնի դարձան 1948 թ. ապրիլին, երբ ԽՍՀՄ-ի պատվիրակությունը տարածեց «Ցեղասպանության դեմ պայքարի կոնվենցիայի հիմնադրույթները» փաստաթուղթը, որը ներկայացվել էր դեռևս հատուկ հանձնաժողովին: Փաստաթղթում ի հակադրություն «պոլիտիցիդի»՝ առաջ էր քաշվում միանգամից երկու

<sup>360</sup> Андрюхин М. И., Геноцид – тяжчайшее преступление против человечества, с. 93.

կարևոր դրույթներ՝ ցեղասպանության քարոզչության Համար պատասխանատվություն սահմանելը և ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք սերմանող կազմակերպությունների գործունեության արգելման պահանջը: ԽՍՀՄ-ն առաջարկում էր Կոնվենցիայի մեջ Հատուկ հոդված նախատեսել, որով քրեական պատասխանատվություն կսահմանվեր ցեղասպանության քարոզչության, այսինքն՝ ազգային ու ռասայական թշնամանք սերմանելու, ռասիստական գաղափարախոսություններ քարոզելու համար, որոնք նպատակ են հետապնդում արգարացնել մեկ ազգի գերիշխանությունը մյուսի նկատմամբ: ԽՍՀՄ-ի առաջարկը հիմնավորվում էր նրանով, որ 1947 թ. նոյեմբերի 3-ին ՄԱԿ-ն արդեն բանաձև էր ընդունել, որով արգելվում էր պատերազմի քարոզչությունը, իսկ ցեղասպանությունն այնպիսի Հանցագործություն է, որը հաճախ զուգորդում է ագրեսիվ պատերազմին: Սակայն ԱՄՆ-ը ու նրա դաշնակիցներն ընդդիմացան այս առաջարկին այն հիմնավորմամբ, որ նման հոդվածի արձանագրումը կնշանակի ոսնձգություն կատարել դեմոկրատական այնպիսի սկզբունքների նկատմամբ, ինչպիսիք են խոսքի և մամուլի ազատությունը: Անշուշտ, այս հիմնավորումը բացարձակապես տեղին չէր, քանզի բոլոր երկրներն էլ իրենց օրենսդրություններում սահմանափակում են խոսքի և մամուլի ազատությունը, երբ խոսքը վերաբերում է հասարակական կամ պետական անվտանգությանը կամ եթե ապացուցվում է, որ արտահայտված միտքը խախտում է այլոց իրավունքները: Ակնհայտ է, որ ցեղասպանության քարոզչությունը Հանդիսանում է այլոց ապրելու իրավունքի խախտման ուղղակի նախադրյալը: Ամերիկյան տեսակետը, սակայն, պաշտպանեցին Ֆրանսիայի, Լիբանանի և Վենեսուելայի ներկայացուցիչները, որոնք պնդեցին, թե Կոնվենցիայում ցեղասպանության քարոզչության համար Հատուկ կետ մտցնելու անհրաժեշտություն չկա, քանի որ արդեն իսկ պատասխանատվություն է նախատեսված ցեղասպանություն սադրելու համար<sup>361</sup>: Այստեղ միտումնավոր կերպով փորձ էր կատարվում նույնականացնել «սադրել» և «քարոզել» հասկացությունները: Ի տարբերություն սադրելու, քարոզելը ավելի ընդարձակ հասկացություն է, և իր մեջ կարող է ներառել նաև ավելի կոնկրետ հասկացություն հանդիսացող սադրանքի դրսևորումը: «Քարոզել» հասկացությունն իր մեջ անպայմանորեն ներառում է ոչ միայն կոնկրետ գործողություն, այլև գաղափարական հիմնավորում: Տվյալ քարոզչությունը հիմնվում է ռասիստական գաղափարախոսության վրա, որը և այլատյացություն է մի հանրության մեջ՝ դրդելով

<sup>361</sup> Андрухин М. И., Геноцид – тяжчайшее преступление против человечества, с. 97.

նրան մեկ այլ ռասայական, ազգային ու կրոնական խմբի նկատմամբ ընդունության գործողությունների, ընդհուպ մինչև զանգվածային սպանությունների: Այս դրույթի ամրագրումը Կոնվենցիայում չափազանց կարևոր նշանակություն կարող էր ունենալ ցեղասպանության Հանցագործությունը կանխարգելելու առումով: Բացի այդ, տվյալ դրույթի ամրագրումը չափազանց կարևոր կարող էր լինել մասնավորապես Հայոց ցեղասպանության դատապարտման տեսակետից, քանզի այդ Հանցագործության հիմքում ընկած էր երիտթուրքերի քարոզած պանթուրքիզմը, որն իրենից ներկայացնում էր ռասիստական գաղափարախոսություն՝ ուղղված բոլոր ոչ թուրք խմբերի դեմ: Սակայն ցավոք, ցեղասպանություն քարոզելու արգելքի մասին դրույթը ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների հակազդեցության պատճառով տեղ չգտավ Կոնվենցիայի տեքստում, ինչը նույնպես պետք է համարել փաստաթղթի թերությունը:

Բացի ցեղասպանության քարոզչության համար պատասխանատվությունից, ԽՍՀՄ-ի նախագծում առկա էր նաև ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածող կազմակերպությունների գործունեության արգելման դրույթը: Եվ կրկին այս դրույթի դեմ դուրս եկան ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցները այն հիմնավորմամբ, որ տվյալ դրույթն, իբր թե՛ հակասում է շատ երկրների սահմանադրություններում ամրագրված ազատություններին: Սակայն թերևս նույն ԱՄՆ-ի ներկայացուցիչներն էլ էին գիտակցում տվյալ փաստարկի անհիմն լինելը, պարզապես տվյալ իրավիճակում հակադիր բեկոնները խնդիր էին դրել հակառակ կողմի ներկայացրած ցանկացած առաջարկ տապալել, քանզի մտավախություն կար, որ առաջարկն արվում է մյուս կողմին վնաս հասցնելու նպատակով: Մասնավորապես մտավախություն կար, որ ԱՄՆ-ում գործող «Կու-կլուքս-կլանի» կարգի կազմակերպությունները կարող էին հիմք ծառայել ԽՍՀՄ-ի համար նման մեղադրանքներ ներկայացնելու համար: Հատկանշական է, որ ԽՍՀՄ-ի կողմից առաջարկված այս դրույթները հիմնվում էին թե՛ Պոտսդամի խորհրդածոցովում հակահիտլերյան կռիվիցիայի միջև ձևով բերված պայմանավորվածությունների և թե՛ Նյու-Երբրգյան դատավարության դատավճիռների վրա, որոնցով արգելվում էր նացիզմի գաղափարախոսությունը և մի շարք նացիստական կազմակերպությունների գործունեությունը: ԽՍՀՄ-ն այսպիսով փորձում էր ընդգծել պատճառահետևանքային կապը նշված իրադարձությունների ու Կոնվենցիայի միջև, սակայն այդ կարճ ժամանակամիջոցում արդեն փոխվել էին աշխարհաքաղաքական իրողությունները, և ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցներն այլևս իրենց պարտավորված չէին համարում Պոտսդամի ու Նյու-Երբրգի որոշումներով և չէին

էլ ցանկանում հիշել դրանց մասին ու առավել ևս՝ թույլ տալ դրանց հիշատակումը Կոնվենցիայի տեքստում: Կոնվենցիայում ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածող կազմակերպությունների գործունեության արգելման դրույթի բացակայությունը պետք է դիտել փաստաթղթի լուրջ թերություններից մեկը, մանավանդ Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համատեքստում:

ԽՍՀՄ-ի առաջարկներից կարելի է մատնանշել նաև ազգային օրենսդրությունում ցեղասպանության համար պատասխանատվության նորմի ամրագրման դրույթը, որի համաձայն անդամ պետությունները պարտավորվում էին իրենց քրեական օրենսդրության մեջ պատասխանատվություն սահմանել ցեղասպանության և ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածելու համար: ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ներկայացուցիչները քայլեր ձեռնարկեցին, եթե ոչ չեղքացնելու, ապա գոնե մեղմելու այդ դրույթը: Հակափաստարկ էր բերվում, որ ցեղասպանության հանցակազմի գործողություններից, օրինակ՝ սպանությունը դատապարտելի է բոլոր պետությունների քրեական օրենսդրություններում, ուստի հարկ չկա Կոնվենցիայով նման պարտավորություն դնել անդամ-պետությունների վրա: Ի պատասխան դրան՝ ԽՍՀՄ ներկայացուցիչը հիշեցրեց, որ ցեղասպանություն հանցագործությունը չի սահմանափակվում միայն սպանությամբ և իր հանցակազմում պարունակում է նաև սպեցիֆիկ գործողություններ: Երկար բանավեճերից հետո խորհրդային առաջարկից դուրս մղվեց ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածելու համար պատասխանատվության սահմանելու դրույթը, իսկ 5-րդ հոդվածը ստացավ ավելի մեղմ և անորոշ ձևակերպում: Հոդվածում խոսվում է միայն պատժի և ոչ թե կանխարգելման միջոցների մասին, քանզի կանխարգելող դրույթները դուրս մղվեցին Կոնվենցիայի տեքստից: Այդուհանդերձ, չնայած իր թերություններին, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ամրագրումը փաստաթղթի վերջնական տեքստում պետք է համարել առաջընթաց քայլ, քանզի պետություններն, այդ թվում՝ Թուրքիան, թեկուզ անորոշ, բայց պարտավորություն էին ստանձնում համապատասխան փոփոխություններ կատարել իրենց օրենսդրություններում, որոնցով կնխատեսվեն ցեղասպանության կամ կոնվենցիայի III հոդվածում նշված հանցագործությունների մեջ մեղավոր անձանց պատժելու արդյունավետ միջոցներ<sup>362</sup>:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների առաջարկություններին, ապա դրանցից պետք է առանձնացնել ցեղասպանության

գործերով իրավասության հիմնախնդիրները: Մասնավորապես առաջ էր քաշվում իրավասու Միջազգային դատարան ստեղծելու գաղափարը, որին էլ Կոնվենցիայի կողմերը պարտավոր էին հանձնել ցեղասպանության մեջ մեղավորող անձանց, եթե ցեղասպանության գործողությունները կատարվել են նրանց կողմից, ովքեր գործել են իբրև պետական մարմինների ներկայացուցիչներ, կամ եթե պետությունն աջակցել է վերջիններիս և միջոցներ չի ձեռնարկել նրանց դեմ:

Պետք է նշել, որ Միջազգային դատարանին ցեղասպանության գործերի փոխանցելու այս դրույթը չափազանց կարևոր է այն իմաստով, որ նրանում անուղղակիորեն մատնանշվում է նաև պետության մեղսակցության ու պատասխանատվության պահ: Կոնվենցիայի նախնական նախագծում անհնար էր համարվում ցեղասպանության գործի քննությունը որևէ այլ դատական ատյանում, քան միջազգային դատարանում այն դեպքերում, երբ ցեղասպանության մեջ մեղավորող անձը գործել է պետական մարմնի անունից, կամ եթե պետությունն աջակցել է նման գործողություններին կամ ձեռք չի առել միջոցներ այդ գործողությունների դեմ: Այսինքն՝ ցեղասպանության ընթացքում պետության գործողությունն ու անգործությունը բավարար հիմք էր, որ տվյալ պետությունը զրկվեր տվյալ հանցագործության մեջ մեղավորող անձին դատելու իրավունքից: Բնական է, որ տվյալ պարագայում կոնկրետ պետությունը, շահագրգռվածություն ունենալով, չէր իրականացնելու օբյեկտիվ դատաքննություն և արժանի պատիժներ չէր սահմանելու մեղավորների համար: Սակայն այս դրույթին դեմ դուրս եկան ԽՍՀՄ-ն ու նրա դաշնակիցները, որոնք գտնում էին, որ դժվար է պատկերացնել, թե որևէ պետություն, որի մարմինները կամ պետական պաշտոնյաները մեղավոր են ցեղասպանության մեջ, նրանց կհանձնի միջազգային դատարանին, քանզի դա կնշանակի տվյալ պետության ինքնամեղադրում: Իսկ եթե մի պետությունը մեղավորում է երկրորդին՝ ցեղասպանություն իրականացնելու մեջ, ապա այդ դեպքում գործը պետք է քննի ոչ թե միջազգային տրիբունալը, այլ ՄԱԿ-ի իրավասու մարմինը՝ Անվտանգության խորհուրդը, որի վրա դրված է զլխավոր պատասխանատվությունը միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման ու վերականգնման գործում: Այսպիսով ԽՍՀՄ-ը բացարձակապես դեմ էր Միջազգային դատարանի ստեղծման գաղափարին՝ գտնելով, որ այդ դատարանի վճիռները ոչ այլ ինչ են, քան միջամտություն պետությունների ներքին գործերին և նրանց ինքնիշխանության ոտնահարում: Սակայն ԽՍՀՄ-ն անտեսում էր այն պարզ իրողությունը, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դատական ատյան չէր, որ գնահատական

<sup>362</sup> Международное право в документах, с. 336.

տար պետությունների գործողություններին, ու մինչև որոշակի միջոցներ ձեռնարկելը, նրան անհրաժեշտ էր իրավասու միջազգային դատական ատյանի՝ տվյալ դեպքում Արդարադատության միջազգային դատարանի որոշումը:

Այնուամենայնիվ, ԽՍՀՄ-ն իր նախազծում պնդում էր, որ ցեղասպանության գործերը պետք է գտնվեն այն պետության ազգային դատարանի իրավասության ներքո, որի տարածքում գրանք կատարվել են: Պետք է նշել, որ այս դրույթը բավականին սահմանափակում էր ցեղասպանության մեջ իրական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Բավական է հիշել միայն երիտթուրքերի դատավարության բեմականացումը Թուրքիայում, երբ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներին հաջողվեց խուսափել իրական պատասխանատվությունից, իսկ դատավարությունն էլ ընդամենը վերածվեց մի շուռի, որպեսզի ցույց տրվի աշխարհին, թե Թուրքիան այլևս նախկինը չէ և շարժվում է դեմոկրատական ճանապարհով:

Հատկանշական է, որ միջազգային դատարանի ստեղծմանը դեմ էր դուրս գալիս մի երկիր՝ ԽՍՀՄ-ը, որն ինքն էր Նյու-Իրենբերգի միջազգային դատարանի ստեղծման գլխավոր նախաձեռնողներից մեկը: Ավելորդ է նշել, որ այդ միջազգային տրիբունալը բավական արդյունավետ աշխատեց և արժանի պատիժներ սահմանեց նացիստների համար, որոնք մեղադրվում էին նաև մարդկայնության դեմ կատարած հանցագործությունների մեջ: Այս անգամ արդեն Հերթը ԽՍՀՄ-ինն էր՝ մոռանալու համար Նյու-Իրենբերգը և չտեսնելու այս գործընթացների պատճառահետևանքային կապը:

ԽՍՀՄ-ն իր այս դիրքորոշումը փորձում էր հիմնավորել նաև նրանով, որ ցեղասպանությունը կոնկրետ հանցագործություն է՝ ուղղված ազգային կամ ռասայական խմբի դեմ, ուստի այդ հանցագործությունը պետք է քննի կոնկրետ ազգային պետությունը: Սակայն ԽՍՀՄ-ի ներկայացուցիչներն անտեսում էին այն փաստը, որ տվյալ հանցագործությունը 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի ընդունումից ի վեր համարվում էր հանցագործություն ուղղված մարդկության դեմ: Հետևաբար՝ այդ կարգի հանցագործությունը այլևս չի կարող լինել ազգային դատարանի ընդդատության գործ: Եթե մի պետության տարածքում իրականացվում է ցեղասպանություն, ապա ակնհայտ է, որ այդ պետության դատարանն ի վիճակի չի լինելու պատժել մեղավորներին, քանզի, ի վերջո, այդ ցեղասպանությունը իրականացվել է կամ տվյալ պետության ուղղակի մասնակցությամբ կամ թույլտվությամբ:

Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի ներկայացուցիչները փորձեցին մեղմել իրենց նախկին դիրքորոշումը, որպեսզի այն ընդունելի դառնա հակադիր կողմի համար: Նոր տարբերակում, մինչև կողմերը բանակցությունների միջոցով կամ որևէ այլ ճանապարհով կատեղծեն միջազգային քրեական դատական մարմին, որն իրավասու կլինի քննելու տվյալ Կոնվենցիայի առարկա հանդիսացող իրավախախտումները, պայմանավորվող կողմերը համաձայնվում էին, որ բոլոր այն դեպքերում, երբ տվյալ Կոնվենցիայի անդամ պետությունների մեծամասնությունը կորոշեր, որ անհրաժեշտ է Կոնվենցիայի VIII հոդվածով նախատեսված միջոցներ ձեռնարկել, փոխադարձ համաձայնությամբ կհիմնեն հատուկ *ad hoc* տրիբունալներ՝ նման բնույթի գործի կամ գործերի համար: Այդ հատուկ տրիբունալները օժտված կլինեն անհրաժեշտ լիազորություններով վկաներ կանչելու, փաստաթղթեր պահանջելու, մեղադրանք ներկայացնելու, դատական քննությունն անցկացնելու և դատավճիռներ կայացնելու համար այն անձանց կամ խմբերի նկատմամբ, որոնց վրա կտարածվեն իրենց իրավասությունները<sup>363</sup>:

Ինչպես տեսնում ենք, մոտ 50 տարի առաջ՝ 1948 թ. արդիական էր *ad hoc* դատարանի գաղափարը, որը հետագայում իրականություն դարձավ 1993 թ. նախկին Հարավսլավիայի և 1994 թ. Ռուսանդայի դատարանների միջոցով, որոնցից հետո միայն Հոտում 1998 թ. ընդունվեց Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը: Փաստորեն ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիայի քննարկումների ժամանակ կարելի է ասել, որ կանխատեսվեց միջազգային քրեական իրավունքի հետագա զարգացման ընթացքը: Համեմատելու համար նշենք, որ *ad hoc* դատարանների համար ամրագրված էին այն լիազորությունները, որոնք ներկայումս ունեն նշված գործող *ad hoc* դատարանները: Սակայն այս ձևաչափը նույնպես ընդունելի չէր ԽՍՀՄ-ի համար և արդյունքում Կոնվենցիայի VI հոդվածում տեղ գտավ մի փոխդիլեմային տարբերակ, որով ընդունվում էր ազգային դատարանների իրավազորությունը ցեղասպանության գործերով, սակայն դրա հետ մեկտեղ ընդունվում էր միջազգային տրիբունալի ստեղծման ու վերջինիս իրավասության հնարավորությունը<sup>364</sup>: Այս հոդվածի գործադրումը՝ հատկապես միջազգային դատարանի ստեղծելու մասով իրագործելու նպատակով, Կոնվենցիայի ընդունման օրը՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին, Գլխավոր Ասամբլեան ընդունեց բանաձև, որով արդեն իսկ ձևավորված միջազգա-

<sup>363</sup> Андрухин М. И., Геноцид – тягчайшее преступление против человечества, с. 105.

<sup>364</sup> Международное право в документах, с. 337.

յին իրավունքի հանձնաժողովին հանձնարարեց քննարկել այնպիսի միջազգային քրեական դատարանի ստեղծման անհրաժեշտությունը ու հնարավորության հարցը, որն իրավասու կլինե՞ր քննելու ցեղասպանության և այլ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց գործերը<sup>365</sup>:

Լուրջ տարածայնություններ կային նաև Կոնվենցիայի հողավանդանի մեկնաբանության, կիրառման ու գործադրման հետ կապված: ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցները առաջարկեցին այդ լիազորությունները դնել Միջազգային դատարանի վրա, իսկ ՄՄԿ-ն, ինչպես միշտ, դա համարեց պետությունների ներքին գործերին միջամտելու փորձ, նշելով, որ Միջազգային դատարանը պետք է նման հարցերում լիազորություն ունենա միայն բոլոր շահագրգիռ պետությունների համաձայնության դեպքում: Բարեբախտաբար խորհրդային այս առաջարկը չընդունվեց և Կոնվենցիայի IX հոդվածում ամրագրվեց այնպես, որ վեճերի դեպքում ցանկացած կողմի պահանջով հարցը հանձնվում է Միջազգային դատարանի քննությանը<sup>366</sup>: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր առաջարկությունը չընդունվեց, իսկ ՄՄԿ-ը, 1949 թ. դեկտեմբերի 16-ին, Կոնվենցիան ստորագրելու ժամանակ վերապահում կատարեց, որ իր համար պարտադիր չի համարում IX հոդվածի դրույթները և հայտարարեց, որ վեճը Միջազգային դատարան կարող է հանձնվել առանձին դեպքերում վիճող բոլոր կողմերի համաձայնությամբ: Նույնանման վերապահում կատարեցին նաև ՈւՍՄԿ-ն, ԲԽՄՂ-ն և Չեխոսլովակիան, իսկ ավելի ուշ Կոնվենցիային միացած Բուլղարիան և Լեհաստանը<sup>367</sup>: Սակայն իսկ ՄՄԿ-ի փլուզումից առաջ նրա կողմից կատարած վերապահումը վերացվեց, և այժմ նրա իրավահանրությունը Ռուսաստանի Դաշնության համար Կոնվենցիան գործում է առանց որևէ վերապահման: Պետք է նշել, որ այս վերապահումով իսկ ՄՄԿ-ը ոչ միայն իրեն էր ապահովագրում Միջազգային դատարանում ցեղասպանության Կոնվենցիայի հետ կապված գլխացավանքներից, այլև մեծ նվեր էր անում Թուրքիայի Հանրապետությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդային Հայաստանը չէր հանդիսանում միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, տեսականորեն նա կարող էր Հայոց ցեղասպանության Կոնվենցիայի վերաբերելիության հարցով դիմել Միջազգային դատարան միայն իսկ ՄՄԿ-ի միջոցով, սակայն վերջինիս վերապահումից ելնելով, Թուրքիան, որն, ի

<sup>365</sup> Официальный отчет Первой части Третьей сессии Генеральной Ассамблеи. Резолюция 21 сентября – 12 декабря 1948 г. Париж: ООН, с. 92.

<sup>366</sup> Международное право в документах, с. 337.

<sup>367</sup> Андрюхин М. И., Геноцид – тягчайшее преступление против человечества, с. 106.

դեպ, առաջիններից մեկը ստորագրեց Կոնվենցիան՝ առանց որևէ վերապահման<sup>368</sup>, կօգտվե՞ր իսկ ՄՄԿ-ի ընձեռած հնարավորությունից և երբեք չէ՞ր տա իր համաձայնությունը, որ տվյալ հարցը քննվի Միջազգային դատարանում, հիմք ընդունելով իսկ ՄՄԿ-ի վերապահումը, որի համաձայն Թուրքիայի համաձայնությունը տվյալ հարցում պարտադիր էր: Այսպիսով, իսկ ՄՄԿ-ի տվյալ վերապահումով խորհրդային Հայաստանն ընդհուպ մինչև իսկ ՄՄԿ-ի փլուզումը փաստորեն զրկված էր անգամ Կոնվենցիայի դրույթների հիման վրա Միջազգային դատարանում Հայոց ցեղասպանության հարցը բարձրացնելու տեսական հնարավորությունից:

Սկզբունքային հիմնահարցերի շարքում կարելի է առանձնացնել նաև ազգային-մշակութային ցեղասպանության մասին դրույթը, որը տեղ էր գտել իսկ ՄՄԿ-ի նախագծում: Նրանում առաջարկվում էր մայրենի լեզվի օգտագործման արգելքն առօրյա կյանքում կամ դպրոցներում, մայրենի լեզվով հրատարակության կամ տպագրված նյութերի տարածման արգելքը, գրադարանների, թանգարանների, դպրոցների, պատմական հուշարձանների, կրոնական կառույցների և այլ մշակութային օջախների ոչնչացումը և դրանցից օգտվելու արգելքը նույնպես որակել իբրև ցեղասպանություն: Ի դեպ, պետք է նշել, որ ազգային-մշակութային ցեղասպանության այս դրույթը լիովին համահունչ էր Ռ. Լեմկինի դեռևս 1933 թ. մադրիդյան զեկուլյցի դրույթներին և կարծես թե չպետք է հանդիպեր որևէ հակադեցություն: Խորհրդային նախագծի այս դրույթը պաշտպանվեց նաև Պակիստանի և մասամբ՝ Վենեսուելայի պատվիրակությունների կողմից: Վենեսուելայի ներկայացուցիչը, համաձայնվելով իսկ ՄՄԿ-ի առաջարկի հետ, ուղղում կատարեց՝ ավելացնելով վերը նշված գործողությունների պարբերական բնույթ ունենալու հանգամանք<sup>369</sup>: Սակայն, այս ձևակերպումը հնարավորություն կտար նման հանցագործություն կատարողներին խուսափել պատասխանատվությունից այն պատրվակով, որ գործողությունները չեն կրել պարբերական բնույթ: Բայց ԱՄՆ-ի պատվիրակությունը, հավանաբար որոշակի սպառնալիքներ կանխատեսելով իր համար՝ կապված ամերիկյան տեղաբնիկների ազգային ու կրոնական հուշարձանների ոչնչացման հետ, կարողացավ մոբիլիզացնել իր կողմնակիցների ձայները և չեղարացնել իսկ ՄՄԿ-ի այս առաջարկը: Մերժումը հիմնավորվում էր նրանով, որ վերը նշված հանցագործությունները շեղում են ցեղասպանության հանցա-

<sup>368</sup> Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 55.

<sup>369</sup> Андрюхин М. И., Геноцид – тягчайшее преступление против человечества, с. 87.



գործութեան բուն Հանցակազմից և դրանք ավելի շուտ վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանութեան ոլորտին:

Այսպիսով, Հայոց ցեղասպանութեան մշակութային հետևանքների վերացման տեսակետից չափազանց կարևոր ազգային-մշակութային ցեղասպանութեան մասին դրույթը, բացառութեամբ մի խմբի երեխաների բռնի մեկ այլ խումբ փոխանցելու կետի, տեղ չի գտել Կոնվենցիայի տեքստում, ինչը պետք է համարել փաստաթղթի գլխավոր թերություններից մեկը:

Լուրջ քննարկման առարկա դարձավ այն Հարցը, թե պայմանավորվող անդամ պետությունները որ մարմնին պետք է դիմեն ցեղասպանության Կոնվենցիայի կամ նրա առանձին դրույթների խախտման դեպքերում: Նախնական տարբերակում ձևակերպումն անորոշ էր, քանզի պետք է դիմեին ՄԱԿ-ի իրավասու մարմնին, սակայն անհայտ էր, թե կոնկրետ որին: ԽՍՀՄ-ն առաջարկում էր կոնկրետացում մտցնել և այդ դեպքում դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, որովհետև այդ մարմնի վրա է դրված խաղաղության և միջազգային անվտանգության պահպանման գլխավոր պարտավորությունը, սակայն այս առաջարկությունը մերժվեց ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից:

Բացի այդ, VIII Հոդվածի Հետ կապված ԽՍՀՄ-ն առաջարկում էր անդամ երկրների Հայեցողական «կարող են դիմել» ձևակերպումը փոխարինել ավելի հստակ «պարտավորվում են դիմել» տարբերակով<sup>370</sup>: Սակայն դա չընդունվեց, քանի որ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները գտնում էին, որ դա ոչ թե անդամ երկրների պարտավորությունն է, այլ իրավունքը և որ կարիք չկա նման դեպքերում դիմել Հենց Անվտանգության խորհրդին: Այս հանգամանքը նույնպես վկայում է այն մասին, որ Կոնվենցիայի կանխարգելիչ բնույթը բավականին թույլ է արտահայտվել նրա տեքստում երկու ճամբարների փոխադարձ հակազդեցության պատճառով:

Այսպիսով, սույն անգիջում պայքարի արդյունքում Կոնվենցիան, ըստ էության, դարձավ երկու հակադիր ճամբարների կամ ավելի ստույգ՝ այդ ճամբարների առանցքների՝ ԽՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի միջև փոխգիշտումային մի փաստաթուղթ: Կոնվենցիայի թերությունները և բացերը, թերևս, պետք է բացատրել այն իրողությամբ, որ այն փոխգիշտում էր երկու գերտերությունների միջև, ինչն, անշուշտ, բացասաբար անդրադաձավ Կոնվենցիայի թե՛ բովանդակության և թե՛ կիրառելիության վրա:

Երկու ճամբարների միջև սկիզբ առած առճակատումը չէր կարող բացասաբար չանդրադառնալ Կոնվենցիայի դրական հատկանիշների վրա, ինչի արդյունքում էլ այն ունի մի շարք էական թերություններ, որոնք բարդացնում են նրա կիրառման հնարավորությունները ցեղասպանության Հանցագործության կանխարգելման և Հանցագործ պետություններին պատասխանատվության կանչելու հարցերում:

Կոնվենցիայի տեքստից դուրս մնացած կարևոր դրույթներից զատ, փաստաթուղթը, մեր կարծիքով, ունի որոշակի այլ թերություններ: Ցեղասպանության Կոնվենցիայի փիլիսոփայությունը ելնում է նախ և առաջ՝ կանխարգելումից: Հանցագործության համար պատիժ սահմանելը չպետք է լինի ինքնանպատակ՝ սոսկ խնդիր դնելով պատժել այն անձանց, ովքեր մեղավոր կճանաչվեն այդ հանցագործությունն իրականացնելու մեջ: Պատժելու իմաստը նաև տվյալ հանցագործության հետևանքների հաղթահարումն է, որը չի կարող ապահովվել լոկ ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելով: Հետևանքների հաղթահարումը հնարավոր է միայն պետության պատասխանատվության հնարավորության մասին ավելի հստակ դրույթի ամրագրումով, ճիշտ այնպես, ինչպես Հայոց ցեղասպանության հետևանքները չվերացվեցին երիտթուրքերի դատավարության, երբ ընդամենը դատապարտվեցին որոշ ֆիզիկական անձինք: Մյուս կողմից, հազիվ թե տուտսիները կամ բոսնիացի մահմեդականները լիովին բավարարված են հատուկ տրիբունալների կայացրած վճիռներով, քանզի գտնում են, որ իրենց նկատմամբ իրագործված ցեղասպանության հետևանքներն այդ հանցագործությունների մի քանի կազմակերպիչների դատապարտումով չեն վերացվել, և նրանք իրավացի են:

Պետության պատասխանատվության դրույթի հակառակորդները պնդում են, թե նման դրույթի միջոցով քրեականացվում են պետության գործողությունները: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի ջանքերով ընդունված միջազգային հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ 2001 թ. դեկտեմբերի 12-ին ՄԱԿ-ի ընդունած 83/56 բանաձևում պետության իրականացրած «միջազգային հանցագործությունը» վերաձևակերպեց «միջազգային հակաիրավական արարք» կամ «ընդհա-

<sup>370</sup> Андриухин М. И., Геноцид – тягчайшее преступление против человечества, с. 108:

նուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտումներ»<sup>371</sup>:

Միանգամայն իրավացի է Յու. Բարսեղովը, որը նշում է, թե ամբողջ ժողովուրդը չի կարող ոչնչացվել անհատների կողմից, այդ հանցագործությունը կարող է կատարել միայն պետությունը, պետական ապարատի՝ կառավարության, իշխանության տեղական մարմինների, բանակի, ոստիկանության, քարոզչական ծառայությունների, գանգաձային լրատվամիջոցների միջոցով: Սակայն ասվածի և Կոնվենցիայի IV հոդվածի միջև, ըստ էության, չկա որևէ հակասություն, քանզի պետությունը սովյալ հանցագործությունը գործում է միջնորդավորված, վերը նշված կառույցների միջոցով, իսկ Կոնվենցիայի IV հոդվածն իր հերթին նույնպես անուղղակիորեն ընդգծում է այդ միջնորդավորվածությունը որոշակի անհատներով, որոնք հանդիսանում են սահմանադրությամբ պատասխանատու կառավարողներ կամ մասնավոր անձինք:

Այս առումով Կոնվենցիայի վերջնական տեքստի մեջ թողնվեց միայն IX հոդվածով նախատեսված ձևակերպումը, որով այս կամ այն պետության նկատմամբ անորոշ պատասխանատվություն էր սահմանվում միայն ցեղասպանության իրականացման կամ III հոդվածով նախատեսված գործողությունների համար: Տվյալ հոդվածի գործողությունների թվում են՝ ցեղասպանությունը իրականացնելու նպատակով կազմակերպված դավադրությունը, ցեղասպանության իրականացման ուղղակի և նպատակային իրականացման փորձը և ցեղասպանությանը հանցակցելը<sup>372</sup>: Սակայն Կոնվենցիայի հեղինակները չեն կողմնակցել ցեղասպանություն իրակացրած պետության պատասխանատվության բովանդակությանն առնչվող՝ միջազգային իրավունքում արդեն իսկ ձևավորված սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև չեն նախանշվել գործնական միջոցներ, որոնք ուղղված կլինեին ցեղասպանության զոհ դարձած ժողովրդի կամ այլ խմբի գոյության իրավունքի վերականգնմանը<sup>373</sup>:

Տեսականորեն ցեղասպանության հանցակազմը սահմանող Կոնվենցիայի III հոդվածում թվարկած գործողություններում կարող են մե-

ղադրվել ու պատասխանատվության կանչվել ոչ միայն անհատները, այլև պետությունները, քանզի նույն փաստաթղթի IX հոդվածը իրավունք է տալիս Կոնվենցիայի անդամ ցանկացած պետության այդ հարցով դիմելու Միջազգային դատարան<sup>374</sup>: Սակայն, ցավոք, Կոնվենցիան չի նախատեսում պետությունը պատասխանատվության ենթարկելու ավելի հստակ ու գործուն մեխանիզմներ:

Կոնվենցիայի IX հոդվածի դրույթների հստակեցման առումով չափազանց կարևոր էր Կոնվենցիայի դրույթների կիրառելիության հարցով Բոսնիա-Հերցեգովինան ընդդեմ Սերբիայի և Չերնոգորիայի գործով ՄԱԿ-ի Միջազգային դատարանի 2007 թ. փետրվարի 27-ի կայացրած որոշումը, որով դատարանը ցեղասպանության հանցագործության համար սահմանում էր թե՛ ֆիզիկական անձանց և թե՛ պետությունների երկակի պատասխանատվություն: Դատարանի որոշմամբ, թեև ցեղասպանության իրագործելու համար պետությունների պատասխանատվությունն ուղղակիորեն չի ֆիքսված կոնվենցիայում, սակայն այդ հանցագործությունը կանխարգելելու պարտավորությունն ուղղակիորեն դրված է նրանց վրա, ինչից ելնելով էլ եզրակացվում էր, որ կանխարգելման պարտավորություն ստանձնելով պետությունները, բնականաբար, ստանձնում են նաև նման միջազգային հանցագործություն չկատարելու պարտավորություն, հետևաբար նաև պատասխանատվություն են կրում այդ պարտավորությունները խախտելու համար: Այս կարևոր պարզաբանումները կատարելուց հետո, Միջազգային դատարանը Սերբիային մեղավոր ճանաչեց 1948 թ. կոնվենցիայի միայն կանխարգելման դրույթների խախտման մեջ և վերջինիս պարտավորեցրեց նախկին Հարավսլավիայի միջազգային տրիբունալին հանձնել գեներալ Մլադիչին<sup>375</sup>:

Այսպիսով, թե ՄԱԿ-ի Միջազգային դատարանի և թե նախկին Հարավսլավիայի ու Ռուանդայի ad hoc տրիբունալների գործունեությունը հաշվի առնելով էլ կարող ենք արձանագրել, որ ցեղասպանության մասին կոնվենցիայի պետության պատասխանատվությանը վերաբերող դրույթները կյանքի կոչվեցին գերազանցապես այն առումով, որ այդ պետությունների կողմից միջազգային տրիբունալին հանձնվեցին ցեղասպանությունների իրագործման մեջ մեղադրվող անձինք, այսինքն, մեծ

<sup>371</sup> Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, էջ 30:

<sup>372</sup> Права человека. Сборник международных договоров, том I (часть вторая). Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 781.

<sup>373</sup> Барсегов Ю. Г., Ответственность государства за геноцид в международном праве и международной политике. Геноцид – преступление против человечества. Материалы I Московского международного симпозиума, М., 1997, с. 97.

<sup>374</sup> Права человека. Сборник международных договоров, с. 782.

<sup>375</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Мезяев А. Б., Решение Международного Суда ООН по делу О применении Конвенции о предотвращении преступления геноцида и наказания за него (Босния и Герцеговина против Сербии и Черногории.) Некоторые вопросы фактов и международного права, «Казанский журнал международного права. № 1. Казань, 2007.

Հաշվով, ամեն ինչ կրկին սահմանափակվեց Ֆիզիկական անձանց պատասխանատվությամբ:

Այս Հանգամանքը թերևս բացատրվում է նրանով, որ միջազգային իրավունքի տեսական ու գործնական առումով ամենաբարդ Հիմնախնդիրներից մեկը պետության պատասխանատվության Հիմնահարցն է: Եթե Ֆիզիկական անձանց նկատմամբ միջազգային քրեական արդարադատության իրագործման Հաջող օրինակ կարելի է Համարել այն պրակտիկան, որը կապված է Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Հրեաների և սլավոնական ժողովուրդների ցեղասպանության Համար նացիստներին Նյուրնբերգյան դատավարության միջոցով պատասխանատվության ենթարկելու Հետ, ապա ցեղասպանության Համար պետությանը պատասխանատվության ենթարկելու դրույթի Հստակեցման տեսակետից կարելի է ասել, որ որոշիչ նշանակություն ունի այն յուրահատուկ պրակտիկան, որը կապված է Հայ ազգային խումբը կազմաքանդելու Համար թուրքական պետության նկատմամբ միջազգային պատասխանատվության Հաստատման Հետ<sup>376</sup>: Խոսքը մասնավորապես Առաջին Համաշխարհայինից Հետո ստեղծված երկու փաստաթղթերի՝ Սևրի պայմանագրի և Վիստնի իրավարար ՎՃԻ մասին է, որոնցով Հանցագործ պետությունը՝ Թուրքիան ենթարկվում էր քաղաքական պատասխանատվության Հայերի ցեղասպանության Համար, ինչը դրսևորվում էր ցեղասպանված զոհ ժողովրդի պատմական Հայրենիքի նկատմամբ վերջինիս իշխանության դադարեցման և այդ տարածքը Հայաստանին փոխանցելու ձևով: Այս փաստաթղթերով ստեղծված ցեղասպանության Համար պետության պատասխանատվության իրագործումը, ցավոք, ՀՀասցվեց իր տրամաբանական Հանգուցայնությամբ: Ու թեև մինչև Կոնվենցիայի ընդունումը ՄԱԿ-ի տարբեր փաստաթղթերում Հիշատակումներ կան այդ փաստաթղթերի, ինչպես նաև 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների Համատեղ Հռչակագրի մասին, որոնք դիտվում են իբրև նախադեպեր Նյուրնբերգի և Տոկիոյի տրիբունալների կանոնադրությունների Համար, այդուհանդերձ, ցեղասպանության Համար պետությունների պատասխանատվության սկզբունքը պատշաճ ձևով տեղ չգտավ Կոնվենցիայի վերջնական տեքստում:

Ակնհայտ է, որ անգամ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց Հետո էլ ՀՀաղովեց կանխարգելի այնպիսի ցեղասպանության օրինակներ, ինչպիսիք են Կամբոջայում կարմիր կիսմերկերի կողմից իրագործված ցեղասպանությունը, իսկ 20-րդ դարավերջն ընդհանրապես աչքի ընկավ

ցեղասպանությունների «չբերթով» սկզբում նախկին Հարավսլավիայի տարածքում, Հետո Ռուանդայում և վերջապես Դարֆուրում: Թեև շարունակում են գործել նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի ad hoc տրիբունալներն ու սկսել է գործել նոր ձևավորված Միջազգային քրեական դատարանը, միևնույն է, դեռևս իրական երաշխիքներ չկան, որ չեն կրկնվի ցեղասպանության նոր օրինակներ:

Ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելով՝ անհնար է կանխարգելել ցեղասպանության Հանցագործությունը կամ վերացնել արդեն իսկ կատարված Հանցագործության Հետևանքները: Խնդիրը նրանում է, որ անգամ ցեղասպանության կազմակերպիչներին ու կատարողներին մահապատժի ենթարկելու դեպքում վերջիններս, օրինակ՝ երիտթուրքերի պարագլուխները, Հետագայում իրենց երկրներում Հերոսացվում են: Թուրքական Հասարակության մեջ շատերն այսօր էլ Համոզված են, որ նրանք կարևոր պատմական առաքելություն են կատարել իրենց ազգի ու պետության Համար ու վերջում իրենց կյանքն են զոհաբերել ազգի Համար՝ Հավերժ Հերոսանալու ձգտումով:

Այդ իսկ պատճառով ցեղասպանության Հանցագործության կանխարգելման իրական լծակ պետք է Համարել պետության պատասխանատվության ավելի Հստակ սահմանումը, որը ենթադրում է այդ պատասխանատվության իրացման Հստակ մեխանիզմներ: Եթե պոտենցիալ ցեղասպան պետության դեկավարները գիտակցեն, որ չեն տիրանալու ցեղասպանության պտուղներին՝ ոչ տարածքի և ոչ էլ զոհերի խմբի անշարժ ու շարժական գույքի և այլ ունեցվածքի տեսքով, դեռ ավելին, կորցնելու են իրենց ինքնիշխանությունը այն տարածքի նկատմամբ, որի բնակչությունը դարձել է ցեղասպանության զոհը, Հազիվ թե նրանց մոտ գայթակղություն առաջանա նման քաղաքականության միջոցով փորձել լուծել ազգային խնդիրները:

Կոնվենցիայի ակնհայտ թերությունների շարքում կարելի է առանձնացնել նաև այն, որ Հողված II-ում ցեղասպանության զոհ խմբերը բավականին սահմանափակ են՝ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական: Այս սահմանումը բավական դժվարություններ է առաջացնում մինչ օրս Կամբոջայի ցեղասպանությանը միջազգային իրավական գնահատական տալու առումով: Պատճառն այն է, որ կարմիր կիսմերկերն, ըստ էության, ցեղասպանությունն իրականացրել են սեփական ժողովրդի սոցիալական կոնկրետ շերտի, Հիմնականում՝ քաղաքային բնակչության և իրենց քաղաքական Հայացքները չկիսող զանգվածների նկատմամբ: Ակնհայտ է, որ այս խմբերը որևէ կերպ չեն Համապատասխանում Կոնվենցիայի II Հողվածում թվարկվածներին: Նույն դժվարության առաջ էր կանգնած Ռուանդայի տրիբունալը, որը քննում էր

<sup>376</sup> Барсегов Ю. Г., Ответственность государства за геноцид в международном праве и международной политике, с. 100.

Հուտու ցեղախմբի կողմից տուտսինների նկատմամբ իրականացված ցեղասպանությունը: Ու թեև դատարանը Հատակ գիտակցում էր, որ, ըստ էության, տուտսինների ու Հուտուների միջև ազգային, էթնիկ, ռասայական ու կրոնական էական տարբերություններ չկան, այնուամենայնիվ, իբրև զոհ ճանաչեց տուտսիններին՝ նրանց որակելով իբրև կայուն և մշտական խումբ<sup>377</sup>:

Այս իմաստով Հատկանշական է, որ որոշ երկրների քրեական օրենսգրքերում ցեղասպանության Հանցագործության օբյեկտների շրջանակը բավականին ընդլայնված է: Օրինակ, Լատվիայի քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածում բացի Կոնվենցիայում թվարկվածներից նշվում են նաև սոցիալական խմբեր և խմբեր, որոնք ունեն որոշակի ընդհանուր Համոզմունքներ<sup>378</sup>, իսկ Լեհաստանի քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասում ցեղասպանության Հանցագործության զոհ-խմբերի շարքում ավելացել են քաղաքական և որոշակի աշխարհահայացք ունեցող խմբերը<sup>379</sup>:

Կոնվենցիայի II հոդվածում ցեղասպանության սուբյեկտիվ կողմի Հետ կապված ընդգծված է որևէ խմբի ոչնչացնելու մտադրության առկայությունը: Առաջին Հայացքից թվում է, որ ցեղասպանություն Հանցագործության Հետևանքների՝ միլիոնավոր մարդկային զոհերի փաստն արդեն իսկ բավարար է, որպեսզի տվյալ Հանցագործության կատարման «մտադրության» Հիմնավորման կարիք այլևս չլինի, քանզի առանց «մտադրության» անհնար է ոչնչացնել որևէ էթնիկ խմբի այդքան ներկայացուցիչներին: Անշուշտ, միջազգային իրավունքում կան այս տեսակետի կողմնակիցներ, որոնք թվում էր նաև Հայազգի անվանի իրավաբան-միջազգայնագետ Յու. Բարսեղովը: Սակայն կան մասնագետներ, որոնք պնդում են, որ «մտադրությունը» պետք է Հիմնավորվի առանց Հղում կատարելու Հանցագործության Հետևանքների վրա և որ ցեղասպանություն կատարելու անհատների կամ պետության «մտադրությունը» առանձին ապացուցման կարիք ունի: Այս դիրքորոշման կողմնակիցները Հիմնվում են ցեղասպանություն իրականացրած անհատների կամ պետության «անմեղության կանխավարկածի» վրա: Ընդ որում, տվյալ դեպքում, «մտադրության» ապացուցման ծանրությունը դրվում է ցեղասպանված ժողովրդի ուսերին, որը զրկվել է իր պատմական Հայ-

րենիքից, նյութական արժեքներից ու քաղաքական ինքնաարտահայտման միջոցներից: Այսպիսով Հարցականի տակ է դրվում նաև ցեղասպանության զոհ Հանդիսացող ժողովրդի իրավունքը դիմելու միջազգային Հանրության օգնությանը՝ Հանցագործ պետությանը պատասխանատվության ենթարկելու և իր իրավունքները վերականգնելու Համար:

Ինդիրը կարող է բարդանալ նաև նրանով, որ մտադրությունը կարող է փոխկապակցվել նույն Հոդվածում առկա «ամբողջության» կամ մասնակի» ձևակերպման Հետ: Այսպիսով կարող է Հարց առաջանալ, եթե ապացուցվում է, որ Հանցագործ պետությունը մտադրություն է ունեցել ոչնչացնել ոչ թե ամբողջ խումբը, այլ ընդամենը մի մասը, օրինակ՝ կոնկրետ տարածքում բնակվող տվյալ խմբի մի Հատվածին, արդյո՞ք դրանից Հետևում է, որ դա ցեղասպանություն է, թե՞ պետք է ապացուցել, որ մտադրություն է եղել ոչնչացնելու ամբողջ խումբը՝ ոչ միայն տվյալ պետության տարածքում, այլև դրա սահմաններից դուրս: Իսկ գուցե անհրաժեշտ է առանձին-առանձին Հիմնավորել կոնկրետ տարածքներում տվյալ խմբի ոչնչացման միտումը, որպեսզի այն որակվի իբրև ցեղասպանություն: Ինչևիցե, նշված ձևակերպումը կարող է Հիմք ծառայել մասնավորապես Հայոց ցեղասպանությունը ժխտողների Համար, որպեսզի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը ոչ միայն երկակի, այլև տարբեր ձևով մեկնաբանությունների ենթարկվի: Տարբեր ձևով մեկնաբանություններից խուսափելու նպատակով ճիշտ կլինի, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածում «մտադրություն ունենալով» ձևակերպումը փոխարինվի «գործողություններ, որոնք ուղղված են» տարբերակով, ճիշտ այնպես, ինչպես Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 357 հոդվածում է<sup>380</sup>:

Ակնհայտ է նաև, որ որոշ երկրներ չեն ճանաչում միջազգային իրավունքի գերակայությունը ազգայինի նկատմամբ, Հատկապես, երբ խոսքը վերաբերում է միջազգային քրեական իրավունքի նորմերին, այդ իսկ պատճառով առաջանում է ազգային օրենսդրությունը միջազգայինին Համապատասխանեցնելու խնդիրը, ինչը Կոնվենցիայի V հոդվածի պահանջն է: Սակայն, չնայած այդ հոդվածի առկայությանը, Կոնվենցիայի անդամ պետություններից ոչ բոլորն են իրականացրել տվյալ պարտավորությունը: Բացի այդ, ոչ բոլոր պետություններն են միացել Կոնվենցիային<sup>381</sup>: Սա նշանակում է, որ մյուս երկրներն անգամ ձևակա-

<sup>377</sup> Տե՛ս Остроносский Я.А. Практика Международного уголовного трибунала по Руанде – преступление геноцида. Материалы симпозиума “Международный курс по МГП для государственных служащих и представителей академических кругов, Москва, 16-19 сентября 2003г., с. 200.

<sup>378</sup> Տե՛ս Уголовный кодекс Латвии, Спб., 2001.

<sup>379</sup> Տե՛ս Уголовный кодекс Польши, Спб., 2001.

<sup>380</sup> Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации, М., 1997.

<sup>381</sup> Մոնտենեգրոն 2006 թ. հոկտեմբերի 23-ին դաքոձավ Կոնվենցիայի 140-րդ պետությունը, սակայն դեռևս ավելի քան 50 երկրներ, այդ թվում՝ Եգիպտոս, Ինդոնեզիան, Նիգերիան և այլն դեռևս չեն միացել Կոնվենցիային: Տե՛ս՝ [www.preventgenocide.org](http://www.preventgenocide.org)

նորեն չեն ստանձնել իրենց ազգային օրենսդրության Համապատասխանեցումը Կոնվենցիայի դրույթներին Համապատասխանեցնելու պարտավորություն: Սակայն անկախ դրանից Կոնվենցիայի նորմերը Համարվում են իբրև միջազգային իրավունքի ունիվերսալ նորմեր և Համապարտադիր են:

Այն երկրում, որտեղ իրագործվել է ցեղասպանություն՝ ազգային խմբերից մեկի նկատմամբ, տվյալ Հանցագործություն կազմակերպիչներին ազգային քրեական դատարանին Հանձնելու Հավանականությունը կարող է ծագել միայն այն դեպքում, եթե տեղի է ունեցել իշխանափոխություն և նոր կառավարությունը, ինչ-ինչ քաղաքական նպատակներից ելնելով, շահագրգռված լինի Հին իշխանությունը պատասխանատվության կանչելու: Այդ գործընթացը կիրառվեց Օսմանյան կայսրությունում՝ Առաջին աշխարհամարտում վերջինիս պարտություն կրելուց հետո, նպատակ Հետապնդելով ոչ այնքան իսկապես պատժել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին, որքան թուրքական պետությունից Հեռացնել ցեղասպանության մեղադրանքը: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե իրական արդարադատության, այլ ընդամենը քաղաքական խուսանաման մասին էր, ինչն իրականացվում էր նույն թուրքական արդարադատության կողմից:

Ինչ վերաբերում է ցեղասպանության կատարման մեջ մեղադրվող մի պետության քաղաքացիներին մյուսին Հանձնելու խնդրին, ապա գործնականում դա կարող է Հնարավոր դառնալ միայն այն դեպքում, երբ մեղադրվող քաղաքացիների երկրի տարածքը օկուպացվի այն երկրի կողմից, որի տարածքում կատարվել է ցեղասպանությունը: Նման իրավիճակը Հազիվ թե կարող է իրականություն դառնալ, սակայն անգամ այդ դեպքում կառավարան արտահանման խնդիրը:

Այս և մի շարք այլ Հարցերի վերաբերյալ որոշ երկրներ Կոնվենցիան ստորագրեցին վերապահումներով և 1951 թ. Հունվարի 12-ին փաստաթղթի ուժի մեջ մտնուց հետո Գլխավոր Ասամբլեան այդ Հարցով դիմեց ՄԱԿ-ի միջազգային դատարանին: Կոնվենցիայի IX հոդվածով փաստաթղթի դրույթների և հոդվածների մեկնաբանության ու կիրառելիության Հարցերը դրված էին հենց այդ ատյանի վրա<sup>382</sup>, ուստի խնդրվում էր պարզաբանումներ տալ Կոնվենցիայի հոդվածների վերաբերյալ պետությունների արված վերապահումների օրինականության և կիրառելիության Հարցում: Միջազգային դատարանը 1951 թ. իր խորհրդատվական եզրակացության մեջ, ընդհանուր առմամբ ճանաչելով պետությունների վերապահումներ անելու իրավունքը, ինչը ցանկացած

պետության ինքնիշխան գործն է, այդուհանդերձ նշում էր, որ դրանք չեն կարող Հակասել Կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավական նորմերի ուժուն ու բովանդակությանը: Ավելին, ընդգծվում էր, որ Կոնվենցիայի Հիմքում ընկած սկզբունքները պետք է ճանաչվեն բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ պայմանագրային ամրագրման<sup>383</sup>: Այսինքն՝ անկախ այն բանից պետությունները մասնակից են ցեղասպանության մասին Կոնվենցիային թե ոչ, տվյալ փաստաթղթում ամրագրված սկզբունքները պարտադիր են բոլոր երկրների Համար:

Կոնվենցիայի բացերից ու թերություններից այսօր էլ փորձում են օգտվել թուրք «իրավաբան միջազգայնագետները»՝ ձգտելով խեղաթյուրել Կոնվենցիայի դրույթները, դրանք ծառայեցնել Հայոց ցեղասպանության ժխտողականության պետական քաղաքականությանը: Այս գործում ժամանակին առավել «Հմտացել էր» Հայ-թուրքական Հաշտեցման Հանձնաժողովի նախկին անդամ Գյուլնուզ Աքթանը: Քննարկելով Կոնվենցիայի կիրառելիությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, թուրք «մասնագետը» հակված չէր Հայ ժողովրդին դիտարկել իբրև «Հանցագործության զոհի», քանզի, նրա կարծիքով, Հայերը Օսմանյան կայսրությունում վեր էին անվել «քաղաքական խմբի» և պայքարում էին անկախության Համար, և քանի որ «քաղաքական խումբը», ըստ Կոնվենցիայի, չի դիտվում ցեղասպանություն Հանցագործության օբյեկտ, ուստի նրանց Հետ կարելի է անել այն ամենը, ինչ որակվում է իբրև ցեղասպանություն, առանց դրա Համար պատասխանատվություն կրելու<sup>384</sup>:

Թուրք «մասնագետի» Հաջորդ աղավաղումները կապված են ցեղասպանության Հանցագործության Հանցակազմում առկա «մտադրություն» դրույթի հետ: Աքթանը «մտադրության» դրույթն ընկալում է տառացիորեն և պահանջում է, որ ներկայացվի պաշտոնական Հայտարարություն կամ փաստաթուղթ, որը կհաստատի, թե Օսմանյան կայսրությունը մտադրություն է ունեցել ոչնչացնելու ամբողջ Հայ ժողովրդին: Պետք է նշել, սակայն, որ ինքը՝ Աքթանը Հետազայում Հակասել է ինքն իրեն և նշել, որ նրանք, ովքեր կատարում են ցեղասպանություն, որպես

<sup>382</sup> Международное право в документах, с. 337.

<sup>383</sup> Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, էջ 24:

<sup>384</sup> Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геополитики, с. 57.

կանոն, չեն հայտարարում սովյալ խումբը ոչնչացնելու մտադրության մասին՝ միաժամանակ շարունակելով պնդել իր տեսակետի վրա<sup>385</sup>։

Անդրադառնալով Աքթանի կողմից միջազգային իրավունքի նորմերի ու մասնավորապես Կոնվենցիայի դրույթների այս աղավաղումներին, Յու. Բարսեղովը ցույց է տվել, որ թուրք մասնագետը ընդամենը փորձել է միջազգային իրավունքի նորմերը հարմարեցնել ժամանակակից թուրքիայի կողմից վարվող Հայոց ցեղասպանության ժխտողականության քաղաքականությանը։

Ամփոփելով նշենք, որ չնայած իր թերութուններին ու բացերին ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիան իր ընդունման պահին լուրջ առաջընթաց էր միջազգային իրավունքում և ներկայումս հանդիսանում է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնական միջազգային իրավական գործիքը։ Ուստի Հայաստանի Հանրապետությունն, իբրև Կոնվենցիայի անդամ պետություն ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի շրջանակներում կարող է՝

1. Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականությունը որակել իբրև հանցակցություն Հայոց ցեղասպանության մեջ, ինչը համապատասխանում է ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիայի III հոդվածի e) կետին։ Եվ այս առումով, Կոնվենցիայի դրույթների մեկնաբանության, կիրառելիության և գործադրման, ինչպես նաև Կոնվենցիայի III հոդվածում նշված գործողությունների համար թուրքիայի Հանրապետության պատասխանատվության հարցերով դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան։

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքիան ժխտում է Հայոց ցեղասպանության փաստը, հիմնվել Կոնվենցիայի IX հոդվածի վրա, Հայոց ցեղասպանության հիմնահարցը ներկայացնել իբրև Հայաստանի Հանրապետության և թուրքիայի Հանրապետության միջև ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիայի շրջանակներում առկա վեճ, և առանց վերջինիս համաձայնության՝ այդ վեճը հանձնել Միջազգային դատարանի քննությանը։

3. Կոնվենցիայի VIII հոդվածի համաձայն՝ դիմել ՄԱԿ-ի համապատասխան մարմնին (օրինակ Անվտանգության խորհրդին), պահանջելով ձեռք առնել կազմակերպության կանոնադրության դրույթներից բխող բոլոր միջոցները՝ հայերի ցեղասպանության ժխտողականությունը կանխելու նպատակով։

<sup>385</sup> Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геополитики, с. 59.

## ԳԼՈՒԽ V

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՔԵՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՅՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

#### 5.1. Միջազգային միջկառավարական կազմակերպություններում Հայոց ցեղասպանության քննարկումներն ու ընդունված բանաձևերը

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում կարևոր և ուրույն նշանակություն ունեն միջազգային միջկառավարական կազմակերպությունների կողմից այդ հանցագործությանը տրված գնահատականները։ Այս առումով պետք է նշել ինչպես Ազգերի լիգայում Հայաստանի մանդատի, անդամակցության ու Հայկական հարցի շուրջ ընթացած քննարկումներն ու դրանց արդյունքում ընդունված բանաձևերը, այնպես էլ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի նորակառուցության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովում (այսուհետ՝ ենթահանձնաժողով) ընդունված երկու զեկուլյցներում Հայոց ցեղասպանության մասին հիշատակում պարունակող պարբերությունների արձանագրումը։ Բացի դրանցից, կարևոր նշանակություն ունի նաև Եվրախորհրդարանի կողմից «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունումը։ Նշված փաստաթղթերում Հայոց ցեղասպանությանը տրված ձևակերպումներն ու գնահատականները հանդիսանում էին դրանց ընդունմանը նախորդած քննարկումների հետևանքը, ուստի նպատակահարմար ենք գտնում ներկայացնել, թե ինչ անզիջում պայքար է նախորդել այդ փաստաթղթերի ընդունմանը և փորձենք հասկանալ, թե ինչ օգտակար դասեր կարող ենք քաղել դրանից՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում։

### 5.1.1. Ազգերի լիգայում Հայկական հարցի շուրջ ընթացած քննարկումներն ու ընդունված բանաձևերը

Միջկառավարական առաջին կառույցը, որն անդրադարձավ Հայկական հարցին, Ազգերի լիգան էր և այս կառույցում Հայաստանի ու Հայկական հարցի հետ կապված բոլոր հարցերը սկզբնական շրջանում բարձրացվում էին Հայաստանի առաջին Հանրապետության Ավետիս Ահարոնյանի գլխավորած պատվիրակության կողմից, սակայն դրանց լուծումը հաղթանակած տերությունները կապում էին Ազգերի լիգայի կամ նրա Հանձնարարությանը որևէ տերության կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու հետ: Իսկ Հայաստանի Հանրապետությունը ձգտում էր օր առաջ անդամակցել Ազգերի լիգային, որպեսզի կարողանար օգտվել այդ հեղինակավոր կառույցի օժանդակությունից ու պաշտպանությունից՝ Թուրքիայի, Ադրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի եռակողմ սպառնալիքներից իր անվտանգությունն ապահովելու հարցում: Դեռ 1920 թ. մայիսի 13-ին Փարիզի Խաղաղության վեհաժողովում ՀՀ պատվիրակության նախագահ Ա.Ահարոնյանն Ազգերի լիգայի Խորհրդի նախագահին ուղղում է հեռագիր, որով արտահայտվում էր Հայաստանի կառավարության ցանկությունը անդամակցելու Ազգերի լիգային: Եթե հաշվի առնենք, որ տվյալ առաջարկն արվում էր այն ժամանակ, երբ Հայաստանի մանդատի հարցը դեռևս լուծում չէր ստացել, ապա կարելի է ենթադրել, որ Հայաստանի իշխանություններն, արդեն որոշ տեղեկություններ ունենալով Սենատում հնչած բացասական կարծիքների մասին, կապված Արևմտյան Հայաստանում ԱՄՆ-ի կողմից խոշոր ներդրումներ կատարելու և մեծաքանակ զորք պահելու անցանկալիության հետ, այս կերպ փորձում էին ներազդել Սենատի դրական պատասխանի վրա:

Ազգերի լիգային, սակայն, կարող էին անդամակցել միայն ինքնիշխանություններ օժտված պետությունները, ուստի Հայաստանի մանդատը որևէ կերպ չէր կարող համատեղվել ինքնիշխան պետության կարգավիճակի հետ: ՀՀ պատվիրակության ղեկավարը չէր կարող չիմանալ, որ ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ընդունելու դեպքում Ազգերի լիգայում Հայաստանը ներկայացնելու էին ԱՄՆ-ի մանդատային իշխանությունները, այլ ոչ թե Հայաստանի կառավարությունը, ճիշտ այն-

\* ԱՄՆ-ի Սենատը Հայաստանի մանդատի ստանձնումը մերժեց 1920թ. հունիսի 1-ին:

պես, ինչպես Ֆրանսիայի մանդատային իշխանություններն էին Սիրիան ու Լիբանանը ներկայացնում Ազգերի լիգայում:

Ամենայն հավանականությամբ Հայաստանն այս քայլով փորձում էր ժամանակ չկորցնել և ապահովագրել իրեն ԱՄՆ-ի բացասական պատասխանի դեպքում, Ազգերի լիգայի առջև անմիջապես դնելով անդամակցության հարցը: Կառույցին անդամակցելու դեպքում Հայաստանը կարող էր լիգայի կանոնադրության 16-րդ հոդվածի հիման վրա իր նկատմամբ հավանական ագրեսիայի դեպքում ապավինել նրա աջակցությանն ու պաշտպանությանը, քանզի տվյալ հոդվածով նախատեսվում էր պատժամիջոցների կիրառումը ագրեսիա կատարած պետության նկատմամբ. Ազգերի լիգայի բոլոր անդամ պետությունները կարող էին խզել այդ երկրի հետ առևտրական ու ֆինանսական հարաբերությունները, ավելին, լիգայի Խորհուրդը կարող էր անդամ պետությունների ցամաքային, ծովային և օդային ուժերից հավաքական զինված ուժեր ստեղծել իր առջև ստանձնած պարտավորությունների նկատմամբ հարգայից վերաբերմունք պահպանելու նպատակով<sup>386</sup>:

Լիգայի Ասամբլեայի առաջին բանաձևը Հայաստանի վերաբերյալ ընդունվեց 1920 թ. սեպտեմբերին, որով Ասամբլեան Խորհրդին հանձնարարում էր ուշադրության տակ առնել դրությունը Հայաստանում և Ասամբլեայի քննարկմանը ներկայացնել առաջարկներ, որոնք կկանխեն հայ ազգի գոյությանը սպառնացող իրական վտանգը և կայուն ու մշտական վիճակ կստեղծեն այդ երկրում<sup>387</sup>: Ավելի ուշ, նոյեմբերի 18-ին Հայաստանի ապագա պաշտպանության պարտականությունը հանձնվում էր Ազգերի լիգայի Խորհրդին<sup>388</sup>: Ազգերի լիգայում Հայաստանի հարցի քննարկումները վերսկսվեցին Գլխավոր քարտուղարի գեկույցից հետո, նոյեմբերի 22-ին, ճիշտ այն օրը, երբ ԱՄՆ-ը նախագահ Վիլսոնը կայացրեց իրավարար վճիռը Հայ-թուրքական սահմանագծման վերաբերյալ: Նոյեմբերի 22-ին Ազգերի լիգայի Ասամբլեայում հնչեցին Ռո-

\* Որևէ երկրի տարածքի մանդատի տրամադրումը մեկ այլ պետության նշանակում էր, որ տվյալ երկրի տարածքի բնակչությունը դեռևս ի վիճակի չէ պաշտպանելու և կառավարելու սեփական տարածքը, ուստի դրա կառավարումն ու պաշտպանությունը հանձնվում էր մանդատարար տերությանն այնքան ժամանակով, մինչև որ մանդատի տակ գտնվող տարածքի բնակչությունն ի վիճակի կլինի իրականացնելու նշված գործառնությունները:

<sup>386</sup> Ազգերի լիգայի կանոնադրությունը տե՛ս Версальский мирный договор. Под редакцией Ю. В. Ключникова и А.Саванина, М., 1925, с. 7-15.

<sup>387</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 733:

<sup>388</sup> Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 301:

բերտ Սեսիլի, Վիվիանիի, Բրանտինգի, Նանսենի և այլոց ելույթները, ինչից հետո միաձայն ընդունվեց դիվանագիտական ձևակերպումներով քողարկված բավականին երկիմաստ և հարցի լուծումը ձգձգող մի բանաձև: Բանաձևի համաձայն Խորհուրդը լիազորվում էր որևէ պետութ-  
յան իրավասութուն տալ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Հայաս-  
տանի ու քեմալականների միջև թշնամական գործողություններին վերջ  
դնելու համար, բացի այդ, ստեղծվելու էր վեց հոգուց բաղկացած  
հանձնաժողով, որն ուսումնասիրելու էր հարցը և զեկույց ներկայացնե-  
ր Ասամբլեային այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ էր ձեռնարկել,  
որպեսզի վերջ դրվեն Հայաստանի ու քեմալականների միջև պատերազ-  
մական գործողություններին<sup>389</sup>: Հատկանշական է, որ բանաձևում  
նույնիսկ չէր հստակեցվում այն պետությունը, որին լիզան տալու էր  
նշված իրավասությունները: Բացի այդ էլ, ոմանք մտահոգություն էին  
արտահայտում, որ քեմալականների հետ բանակցելիս նրանց հնարավոր է  
առաջարկել կամ փող կամ տարածք, և Ազգերի լիգան պետք է կողմնորո-  
շի, թե դրանցից որն է պատրաստ զոհաբերելու հարցը լուծելու համար<sup>390</sup>:

Այս բանաձևով լիգան փաստորեն խուսափում էր Հայաստանի  
անդամակցության հարցի քննարկումից, ինչի դրական լուծումը հան-  
գեցնելու էր կառույցի պարտավորությունների կատարմանը անդամ  
պետության նկատմամբ: Բնական է, որ բանաձևը չէր կարող բավարա-  
րել հայկական կողմին, ուստի դրա ընդունման հաջորդ օրը, նոյեմբերի  
23-ին ՀՀ պատվիրակության ղեկավար Ա.Ահարոնյանը կրկին պնդում է  
Հայաստանի Ազգերի լիգային անդամակցելու խնդրանքը, սակայն այս  
անգամ ներկայացված փաստաթուղթը պարունակում էր նաև որոշ իրա-  
վական պարզաբանումներ: Ահարոնյանը նախ հիշեցնում էր, որ  
պարտված պետությունների հետ կնքված պայմանագրերով բոլոր  
հաղթանակած պետությունները մեխանիկորեն դարձել էին Ազգերի լիգ-  
այի անդամ երկրներ, բացառությամբ Սևրի պայմանագիրը ստորագրած  
Հայաստանի: Բացի այդ, ընդգծվում էր, որ Սևրը ստորագրած պետու-  
թյունները 1920 թ. օգոստոսի 10-ին պայմանագրի 88-րդ հոդվածով արդ-  
են իսկ փաստացի ճանաչել են Հայաստանն իբրև ինքնիշխան ու անկախ  
պետություն: Այդուհանդերձ, Ահարոնյանը դիվանագիտորեն նշում է,  
որ դե-ֆակտո ճանաչումը դե-յուրե չդարձնելու հարցում չի տեսնում  
Ազգերի լիգայի և մեծ տերությունների դիտավորությունը, փորձելով

արդարացնել այդ «սխալը» զուտ տեխնիկական թերութուններով: Ըստ  
Ահարոնյանի, քանի որ սկզբում ստորագրվել էր Վերսալի պայմանա-  
գիրը, որի անդամ երկրների ցանկն էլ մեխանիկորեն դրվել էր Ազգերի  
լիգայի հիմնադիր անդամ պետությունների հիմքում, իսկ Սևրը պարտ-  
ված երկրների հետ կնքված վերջին պայմանագրերն էր, ուստի Հայաս-  
տանը «թյուրիմացաբար» դուրս էր մնացել այդ ցանկից, ուստի առա-  
ջարկվում էր որքան հնարավոր է արագ վերացնել այդ «թյուրիմա-  
ցությունը» և Հայաստանին ճանաչել կառույցի լիիրավ անդամ<sup>391</sup>: Ան-  
շուշտ, Ահարոնյանն ինքն էլ էր քաջ գիտակցում, որ հարցի քննարկման  
ու լուծման ձգձգումների պատճառները ոչ թե տեխնիկական էին, ինչ-  
պես ինքն էր նշում, այլ ավելի խորքային, ինչը հիմնականում կապված  
էր լիգայի կողմից Հայաստանի, իբրև կազմակերպության ապագա ան-  
դամ պետության նկատմամբ, պարտավորություններ ստանձնել չցան-  
կանալու հետ: Հայաստանի անդամակցությունը լիգային կարևոր էր  
նաև այն առումով, որ, դառնալով այդ կառույցի լիիրավ անդամ, Հայ-  
աստանն իր ներկայացուցչի միջոցով մասնակցելու էր Ասամբլեայի նիս-  
տերին և կարող էր ավելի արդյունավետ պաշտպանել ոչ միայն իր, այլև  
արևմտահայության իրավունքները լիգայում, մինչդեռ տխուր ավան-  
դույթի համաձայն Հայկական հարցը շարունակվում էր քննարկվել  
առանց հայերի նաև Ազգերի լիգայում:

Նոյեմբերի 24-ին Ազգերի լիգան կրկին անդրադարձավ Հայաս-  
տանի հարցին, սակայն ոչ թե նրան կառույցի անդամ դարձնելու առու-  
մով, այլ փորձեց գործնական հիմքերի վրա դնել նոյեմբերի 22-ի բա-  
նաձևը: Իբրև տերություն, որին լիազորություններ էին տրվելու զբաղ-  
վելու հայ-քեմալական հարաբերությունների կարգավորմամբ, առաջին  
հերթին որոշվեց դիմել ԱՄՆ-ին, անկախ այն բանից, որ վերջինս հրա-  
ժարվել էր վերցնել Հայաստանի մանդատը<sup>392</sup>: Նման որոշումը բա-  
ցատրվում էր մի շարք հանգամանքներով՝ նախ ԱՄՆ-ի նախագահի  
իրավարարությամբ էր որոշվելու հայ-թուրքական սահմանագծման  
հարցը, բացի այդ էլ, ԱՄՆ-ը ի համեմատ մյուս տերությունների ավելի  
էր պատրաստ այդ հարցով զբաղվելու համար, հաշվի առնելով Առաջին  
աշխարհամարտում նրա ավելի նվազ մասնակցության հանգամանքը:  
Նկատի ունենալով ԱՄՆ-ի հնարավոր բացասական պատասխանը,

<sup>389</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 733:

<sup>390</sup> Барсегов Ю., Армянский вопрос в Лиге наций, Вестник Армянского института международного права и политологии в Москве, N 2, М., 2004, с. 176.

<sup>391</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2., с. 478.

<sup>392</sup> Махмуриян Г. Г., Лига наций, Армянский вопрос и Республика Армения, Ер., 1999, с. 127.



Գլխավոր քարտուղարը միաժամանակ նման առաջարկով դիմում էր Ազգերի լիգայի անդամ պետություններին, որոնք ցանկություն կհայտնեն իրենց վրա վերցնել այդ պարտավորությունը, սակայն ընդգծվում էր, որ այդ տերությունը չպետք է լինի Սևրի պայմանագիրը ստորագրած կողմ<sup>393</sup>: Վերջին բացառությամբ լիգան ընկնում է ձևակերպության հետևից, իբր թե պահպանելով անաչառությունը, սակայն իրականում այդ կերպ արդարացվում էր Սևրի պայմանագիրը ստորագրած տերությունների անգործությունն ու կրտսեր դաշնակցի նկատմամբ ստանձնած պարտավորությունների չկատարումը:

Այս առաջարկներին դեկտեմբերի 1-ին առաջինն արձագանքում է ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը, որը տեղեկացնում է լիգայի խորհրդի նախագահին, որ պատրաստ է իր վրա վերցնել նշված պարտավորությունները և դաշնակից տերությունների բարոյական ու դիվանագիտական աջակցության դեպքում առաջարկում է իր անձնական միջնորդությունը սովյալ Հարցում<sup>394</sup>: Նույնանման արձագանքներ են ստացվում նաև Իսպանիայի վարչապետ Դաթոյի և Բրազիլիայի արտգործնախարար Աժվեդո Մարկեշի կողմից: Ազգերի լիգայի խորհրդի նախագահը վերջիններիս առաջարկում է կապի մեջ մտնել ԱՄՆ-ի նախագահի հետ և փոխհամաձայնեցնել ու համակարգել գործողությունները Հայաստանին ու հայ ժողովրդին օգնելու ուղղությամբ<sup>395</sup>:

Ասկայն, դեկտեմբերի 2-ին ստորագրված Երևանի պայմանագրով Հայաստանը խորհրդայնացվեց, իսկ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը ստորագրված Ալեքսանդրոպոլի պայմանագրով տարածքային զիջումներ էին արվում քեմալականներին: Հայաստանի խորհրդայնացումը բավականին հարմար պատրվակ էր տերությունների համար, որպեսզի նրանք, այդ փաստը չահարկելով, դրանից հետո ոչինչ չձեռնարկեին Հայաստանին կառույցի անդամ դարձնելու և քեմալականների աննեքսիան չեզոքացնելու ուղղությամբ, էլ չենք խոսում իրավարար վճռի դրույթները կյանքի կոչելու մասին: Հիմք ընդունելով այն, որ Հայաստանում կատարվել է հեղաշրջում, ինչի արդյունքում տապալվել են օրինական իշխանությունները և հաստատվել բոլշևիկյան վարչակարգ, Ազգերի լիգայում եղանակ ստեղծող պետությունները վերընշված հարցերն իրենց համար համարում էին արդեն փակված:

<sup>393</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 480.

<sup>394</sup> Махмурия Г. Г., Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 127.

<sup>395</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, док. 486, 487, с. 590-591.

Սակայն, եթե անգամ ընդունենք, որ դեկտեմբերի 2-ին Հայաստանում տեղի էր ունեցել ոչ թե իշխանափոխություն, այլ հեղաշրջում, իսկ խորհրդային Հայաստանը ոչ թե առաջին Հանրապետության իրավաժառանգորդն է, այլ բացարձակապես նոր պետություն, ապա անգամ այդ դեպքում Ազգերի լիգան ուղղակի պարտավոր էր ջանքեր գործադրել օրինական իշխանությունը վերականգնելու մի երկրում, որն առնվազն Ազգերի լիգայի անդամության թեկնածու էր, այլ ոչ թե ձեռքբերել վասնալ մի պետության ու ժողովրդի համար ճակատագրական հարցը լուծելուց, որի հետ կապված ամիսներ շարունակ քննարկումներ էր անցկացրել ու լուծումներ փնտրել:

Սակայն դեկտեմբերի 2-ին տեղի ունեցածը ոչ թե հեղաշրջում, այլ իշխանափոխություն էր, որի արդյունքում մի վարչակարգին փոխարինեց մյուսը, հակառակ պարագայում չէր կնքվի պայմանագիր իշխանությունը փոխանցելու մասին և որոշ դաշնակցականներ չէին ընդգրկվի նոր իշխանությունների կազմում: Ի դեպ, խորհրդային կարգերի հաստատումից հետո էլ Հայաստանը չի հրաժարվել Ազգերի լիգային անդամակցելու իր ցանկությունից և հետ չի վերցրել իր դիմումը<sup>396</sup>, ուստի լիգան անկախ այդ ամենից պետք է շարունակեր Հայաստանի անդամակցության հարցի քննարկումը, քանզի տարածքի կամ վարչակարգի փոփոխությունը չեն ազդում պետության իրավահանրապետության վրա: Հարկ է հիշեցնել, որ տերությունները հետագայում ոչ միայն ճանաչեցին, այլև հարաբերություններ հաստատեցին Թուրքիայում օրինական իշխանությունը տապալած և հեղաշրջում կատարած քեմալական վարչակարգի հետ, նրան համարելով Օսմանյան կայսրության իրավահանրապետության և պահանջելով վճարել վերջինիս պարտքերը: Իսկ Հայաստանի դեպքում կատարված իրադարձությունները իշխանափոխություն, իսկ խորհրդային Հայաստանը առաջին Հանրապետության իրավահանրապետության օրինաչափ մեկնաբանությունը չէր ըստում մեծ տերությունների շահերից, քանզի՝ 1. նրանք չէին ցանկանում գործ ունենալ Հայաստանի այն վարչակարգի հետ, որը գտնվում էր խորհրդային Ռուսաստանի ազդեցության տակ; 2. նրանք չէին պատրաստվում պատերազմել հանուն խորհրդային Հայաստանի և վերադարձնել նրա տարածքներն ու առավել ևս կյանքի կոչել իրավարար վճռով նախատեսված տարածքների փոխանցումը, Քեմալին իրենցից վանելու գնով, որին դեռ հնարավոր էին համարում թեքել իրենց կողմը; 3. նրանք հազիվ իրենց ազատված էին համարում անլուծելի թվացող Հայկական հարցի

<sup>396</sup> Махмурия Г. Г., Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 130.

հետ կապված գլխացավանքից և չէին ցանկանում վերադառնալ այդ հարցի քննարկմանը:

Դժվար չէ նկատել, որ թվարկվածները բացառապես քաղաքական շարժառիթներ են, մինչդեռ, իրավական տեսակետից տվյալ պարագայում խորհրդային Հայաստանը հանդիսանում էր Հայաստանի Հանրապետության իրավահաջորդը և լիովին կարող էր հավակնել այն սահմաններին, որոնք ամրագրվել էին ԱՄՆ-ի նախագահի իրավարար վճռով, իսկ Ազգերի լիգան խորհրդային Հայաստանի Թուրքիայի հետ սահմանային հարցում պարտավոր էր ճանաչել հենց այդ փաստաթուղթը<sup>397</sup>:

Ազգերի լիգայում Հայաստանի կարգավիճակի, սահմանների, անվտանգության ապահովման և այլ հարցերի շուրջ ընթացած բազում քննարկումների ժամանակ հայ-թուրքական սահմանի սահմանադժման հարցում Վիլսոնի դեռևս չկայացրած իրավարար վճիռը որոշ երկրներ պատրվակ էին դարձնում Հայաստանի անդամակցության հարցի լուծման հետաձգման համար: Լիգային որևէ երկրի անդամակցելը նրանք կապում էին նրա սահմանների հստակության, պետական ողջ տարածքի վերահսկման ու կառավարման հետ, ինչը Հայաստանի պարագայում դեռևս անորոշ էր: Հարցի լուծումն անընդհատ ձգձգվում էր, ելնելով այն տարածայնություններից, թե ինչ տարածք է հասկացվում Հայաստանի տակ, այն՝ ինչ վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կողմից, թե նաև Արևմտյան Հայաստանի նահանգների տարածքները, որոնք պետք է նրան միանային իրավարար վճռով: Ի վերջո, նոյեմբերի 29-ին Ազգերի լիգայի անդամակցության հարցերով ենթահանձնաժողովը Ադրբեյջանի, Կոստա-Ռիկայի, Վրաստանի ու Ուկրաինայի հետ մեկտեղ Հայաստանին ընդունում է Ազգերի լիգայի կազմի մեջ, ինչը, սակայն, վերջնականապես պետք է հաստատվեր Ասամբլեայի կողմից: Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքային հարցերին, ապա ենթահանձնաժողովը որպես Հայաստանի սահմանային պահին ֆիքսում էր 1920 թ. մայիսի դրությամբ 70.551 քառ. կմ տարածքը և հաշվի առնում, որ Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները և Տրապիզոնի վիլայեթի մի մասը պետք է փոխանցվեր Հայաստանին, ուստի հնարավոր էր համարում նրա տարածքի մեծացումը մինչև 214.000 քառ.կմ.<sup>398</sup>: Ակնհայտ է, որ Հայաստանի ապագա տարածքի ճշտման հարցում լիգայի ենթա-

հանձնաժողովը փաստորեն հիմք էր ընդունում Վիլսոնի կայացված, բայց դեռևս չհրապարակված իրավարար վճիռը:

Բայց դրանից հետո էլ Ազգերի լիգային Հայաստանի անդամակցելու դեպքում տերութայինները պատրաստ չէին իրենց վրա պարտավորություն վերցնել 60–80.000 բանակ ուղարկել Արևմտյան Հայաստան Քեմալի բանակին դիմակայելու համար, ինչը պատճառաբանվում էր Առաջին աշխարհամարտից հետո եվրոպական տերութայինների բանակների չյուծված ու թուլացած լինելու հանգամանքով: Սակայն իրականում նման ձևով քողարկվում էր եվրոպական տերութայինների չցանկանալը հանուն Հայաստանի Մուստաֆա Քեմալի ուժերի դեմ ռազմական գործողություններ սկսելով, նրան մղել բոլշևիկների գիրկը: Մեծ տերութայիններից յուրաքանչյուրը պատերազմից հետո արդեն ստացել էր այն, ինչ ցանկանում էր և նոր խնդիրներով իրենց ծանրաբեռնելու ցանկություն նրանք ուղղակի չունեին, առավել ևս որ այդ հարցն այլևս դուրս էր իրենց հետաքրքրությունների ոլորտից: Եվրոպական տերութայինների վրա որոշակի ազդեցություն էր ունեցել նաև ԱՄՆ-ի Սենատի Հայաստանի մանդատը ստանձնելու մերժումը, ինչի հետ տերութայինները հույսեր էին կապում, որ ԱՄՆ-ի միջոցով իրենք կազատվեն կրտսեր դաշնակից Հայաստանի հետ կապված պարտավորություններից: Սրան պետք է ավելացնել նաև տարածաշրջանում կատարվող զարգացումները, երբ Հայաստանը փաստորեն ակցյանի մեջ էր առնվել բոլշևիկների ու քեմալականների կողմից: Եվրոպական տերութայինների աչքերում սա հավանական էր դարձնում քեմալա-բոլշևիկյան մերձեցման հեռանկարը, ինչն, անշուշտ, չէր բխում նրանց շահերից: Այդ իսկ պատճառով շուտով տիրապետող է դառնում այն տեսակետը, որ ցանկացած գնով չպետք է թույլ տրվին նման զարգացումները, անգամ եթե դրա համար անհրաժեշտ լիներ մոռանալ հայերին ու Հայաստանին տրված խոստումները և մի կողմ դնել Ազգերի լիգայի հուշակած սկզբունքները:

Հայաստանի խորհրդայնացումից հետո մեծ տերութայինների ներկայացուցիչներն իրենց կառավարություններից ցուցումներ ստացան թույլ չտալ Հայաստանի անդամակցությունը Ազգերի լիգային: Սակայն նրանց այդ որոշմանը հարկավոր էր «իրավական տեսք» տալ, և Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի կառավարությունները մշակեցին համատեղ որոշման մի նախագիծ, համաձայն որի Հայաստանի անդամակցությունը Ազգերի լիգային համարվում էր անցանկալի, քանզի հայկական պետությունն առաջացել է Սևրի պայմանագրի հիման վրա, որը

<sup>397</sup> Барсегов Ю., Армянский вопрос в Лиге наций, с. 183.

<sup>398</sup> Նույն տեղում, с. 182–183.

դեռևս չի վավերացվել<sup>399</sup>: Այս «հիմնավորումները», սակայն, չեն դիմանում քննադատության, քանզի նախ Հայաստանն ինքն էր հանդիսանում Սևրի պայմանագիրը ստորագրող կողմ, ուստի ակնհայտ է, որ այդ պետությունը զոնե փաստացի առաջացել է տվյալ պայմանագրից շատ ավելի վաղ, հակառակ պարագայում նրան պարզապես թույլ չէին տա հաղթած երկրների շարքում ստորագրել պարտված տերություն հանդիսացող Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագիրը: Փաստորեն Սևրի պայմանագիրը Հայաստանի դե յուրե ճանաչման մի ակտ էր ու նրա սահմանների հստակեցման հարցը նշված երկրները միտումնավոր կերպով փոխարինում էին Հայաստանի պետություն լինելու հարցով և դա չախկապում Սևրի պայմանագրի վավերացված չլինելու հետ: Մյուս կողմից, եթե պայմանագիրը ստորագրող կողմերն իրոք ցանկանային ընդգծել, որ պետությունն իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ առաջանում է հենց Սևրի պայմանագրով, ապա նա միանշանակ չպետք է մասնակցեր տվյալ պայմանագրի ստորագրմանը<sup>400</sup>: Եվ, անշուշտ, տերությունները «մոռանում» էին նաև այն կարևոր հանգամանքը, որ Սևրի պայմանագիրը չէր վավերացվում հենց իրենց կողմից ու իրենց ջանքերով:

Երկրորդ հարցը, որը քննարկվում էր երեք տերությունների նախագծում վերաբերում էր Վիլսոնի իրավարար վճռին և հայ-թուրքական սահմանին: Փաստաթղթում մասնավորապես նշվում էր, որ համաձայն իրավարար վճռի հայ-թուրքական սահմաններն այնքան ընդարձակ են, որ ներկա պայմաններում Ազգերի լիգայի տերությունները հազիվ թե համաձայնվեն երաշխավորել կամ պաշտպանել այդ տարածքները<sup>401</sup>: Փաստորեն փաստաթղթի կազմողներն իրենց դատողություններում ընկնում էին հակասության մեջ: Եթե, ինչպես վերևում նշված է, Սևրի պայմանագրի վավերացված չլինելու պատճառով Հայաստան պետություն չէր, հետևաբար չպետք է առաջանար նաև նրա սահմանները պաշտպանելու հարցը: Սակայն տերությունները քաջ գիտեին, որ թուրքիայի հետ Հայաստանի սահմանների ճշգրտման հարցով արդեն իսկ կայացվել էր Վիլսոնի իրավարար վճիռը, հստակեցնելով վերջինիս անցնելիք տարածքները, և փաստաթղթի հեղինակները չէին կարող չըջանցել այդ հարցը: Նրանք հարկադրված ընդունում էին հայ-թուրք-

ական սահմանագծման հարցով Վիլսոնի կայացրած իրավարար վճռի օրինականությունը, և, դրանից ելնելով էլ ստիպված ընդունում էին Հայաստանի սահմանների և նրա տարածքների անվտանգության ապահովման հարցի առկայությունը, սակայն նշում էին այդ հարցի լուծման անհնարինությունը: Այսպիսով, փաստաթղթի նախագծի «ձևակերպումները» ոչ թե իրավական, այլ բացառապես քաղաքական էին, և այս կապակցությամբ պետք է նշել, որ նախկինում էլ Ազգերի լիգան «ղծվաբացել» էր երաշխավորել կամ պաշտպանել այդ սահմանները քեմալականներին:

Կարող ենք նշել միայն, որ բուլղարները լավ նվեր մատուցեցին ոչ միայն քեմալականներին, այլև Ազգերի լիգայում տոն տվող երկրներին, որոնք օգտվելով Հայաստանի խորհրդայնացումից, ուղղակի ձեռքները վրացին Հայաստանի նկատմամբ իրենց պարտավորություններից:

Ի տարբերություն Ազգերի լիգայում եղանակ ստեղծող տերությունների մտածողության, Հայաստանի խորհրդայնացած լինելը չխանգարեց ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին, որը 1921 թ. հունվարի 2-ին պաշտոնապես Ազգերի լիգային է ուղարկում հայ-թուրքական սահմանագծման վերաբերյալ իր կայացրած իրավարար վճիռը<sup>402</sup>:

Հայաստանում 1921 թվականի փետրվարյան ապստամբությունը կրկին Ազգերի լիգայում ակտիվացրեց քննարկումները Հայաստանի շուրջ, լիգայի ինտերնալ փետրվարի 25-ին քարտուղարությունից պահանջում էր հետևել դեպքերի ընթացքին Հայաստանում և տեղյակ պահել ինտերնալ փերջինիս նոր որոշումներ ընդունելու հնարավորություն ընձեռելու համար<sup>403</sup>: Փետրվարյան ապստամբության ձախողումից հետո 1921 թ. սեպտեմբերի 21-ին Ազգերի լիգայի Ասամբլեան ընդունեց նոր բանաձև, որով անհրաժեշտ գտավ, որ թուրքիայի հետ կնքվելիք նոր պայմանագրում հայերի համար ապահովվի թուրքական կառավարումից ամբողջովին անկախ ազգային օջախի ստեղծում<sup>404</sup>: Դժվար չէ նկատել, թե Հայկական հարցի լուծման և Հայաստանի անդամակցություն հարցը Ազգերի լիգայի ընդունած բանաձևերում ինչպես էր աստիճանաբար փոխակերպվում, վերածվելով ընդամենը հայերի համար ազգային օջախ ստեղծելու գաղափարի:

Այսպիսով, Ազգերի լիգան, անզոր գտնվելով ապահովել Հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության հետևանքների

<sup>399</sup> Генцикл армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, док. 482, с. 588.

<sup>400</sup> Барсегов Ю., Армянский вопрос в Лиге наций, с. 189.

<sup>401</sup> Генцикл армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, док. 482, с. 588.

<sup>402</sup> Махмуриян Г. Г., Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 131.

<sup>403</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 734:

<sup>404</sup> Նույն տեղում:

վերացումն ու Հայաստան պետութեան անվտանգութիւնը, հետագայում զբաղվում էր արդեն Հայրենազրկված Հայերի կարգավիճակի ու նրանց խորհրդային Հայաստան տեղափոխելու հարցերով, որոնք սերտորեն կապված էին մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի անվան հետ: Ազգբուն ուղիներին, իսկ հետագայում գաղթականների հարցերով Ազգերի լիգայի գլխավոր Հանձնակատար Նանսենը եռանդուն գործունեութիւն ծավալեց ցեղասպանութեան ենթարկված արևմտահայ գաղթականների կարգավիճակի և այլ հարցերի հստակեցման ուղղութիւնում<sup>405</sup>:

Ազգերի լիգայի միջազգային սեկցիաների խորհրդակցութիւնը Լոզանի պայմանագրի ստորագրումից հետո 1924 թ. հուլիսի 2-ին ընդունած իր բանաձևում արձանագրելով, որ, չնայած Ազգերի լիգայի Հայկական հարցի վերաբերյալ ընդունած բանաձևերի, այն իր լուծումը չի ստացել Լոզանի պայմանագրով, կոչ էր անում բոլոր կառավարութիւններին աջակցել հարյուր հազարավոր գաղթականներին ու որբերին անհրաժեշտ օգնութիւն ցուցաբերելու գործում: Լիգայի Հինգերորդ Հանձնաժողովը առաջարկում էր Ասամբլեային Հանձնարարել դոկտոր Նանսենին ուսումնասիրել Կովկասում Հայ գաղթականների տեղավորման հնարավորութիւնները և այդ նպատակով նրա տրամադրութեան տակ է դնում 50.000 ֆրանկ գումար: Միաժամանակ Ասամբլեային առաջարկվում էր, սպասելով Հայկական ազգային օջախի հաստատմանը, Հայ գաղթականներին ցույց տալ ամեն հնարավոր աջակցութիւն, որպեսզի նրանք պահպանեն ու պաշտպանեն իրենց ազգային գոյութիւնը<sup>406</sup>:

Այս առումով արևմտահայ գաղթականների համար առաջնահերթ խնդիրներից մեկը նրանց կարգավիճակի հարցն էր: Ի տարբերութիւն այլ ժողովուրդների գաղթականների, նրանք գտնվում էին ավելի ծանր իրավական վիճակում, քանզի թուրքական իշխանութիւնները նրանց բռնի վտարել էին իրենց Հայրենիքից և անգամ չէին ճանաչում նույնիսկ նրանց հպատակութեան իրավունքը, իսկ ապաստանած երկրներում էլ նրանք դեռևս չէին ստացել քաղաքացիութիւն: Ուստի նրանք ավելի շատ կարիք ունեին Նանսենի ջանքերով Ազգերի լիգայի կողմից ստեղծված գաղթականների անձնական վկայականների, որոնք Հայտնի էին որպէս «Նանսենյան անձնագիր» և ճանաչվում էին 52 երկրների կառավարութիւնների կողմից:

<sup>405</sup> Махмуриян Г. Г., Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 133.

<sup>406</sup> Արգումանյան Մ. Վ., Նանսենը և Հայաստանը, էջ 97:

1922 թ. արևմտահայերի Ազգային պատվիրակութիւնը Գ. Նորատուենկյանի գլխավորութեամբ մեկնում է Ժնև և դիմում Ազգերի լիգային, որ «Նանսենյան անձնագրեր» տրվեն Միջազգետբում, Միլիտարում, Պաղատիում, Հունաստանում, Կիպրոսում, Բուլղարիայում, Ֆրանսիայում և այլ երկրներում ապաստանած և ծանր վիճակում հայտնված շուրջ 320.000 արևմտահայ գաղթականներին: Նանսենն իր ելույթներում նույնպէս հիմնավորում էր Հայ գաղթականներին Ազգերի լիգայի այդ փաստաթղթերի տրամադրման անհրաժեշտութիւնը և 1924 թ. հունիսի 12-ի որոշմամբ Ազգերի լիգայի խորհուրդը հաստատում է Հայ գաղթականներին ինքնութեան վկայականներ տալու Նանսենի նախաձեռնութիւնը և կոչ է անում անդամ-պետութիւնների կառավարութիւններին դրական լուծել այդ հարցը<sup>407</sup>:

Սրա արդուներում տասնյակ հազարավոր Հայ գաղթականներ ստացան Ազգերի լիգայի «Նանսենյան անձնագրեր», որոնք թեև նրանց տալիս էին որոշ կարգավիճակ, սակայն չէին լուծում նրանց համար կարևոր մյուս՝ ապաստանած երկրներում աշխատանք գտնելու հարցը: Պատահական չէր, ուստի, որ արևմտահայերի Ազգային պատվիրակութիւնը Ազգերի լիգայի խորհուրդում բարձրացնում էր նաև շուրջ 50.000 Հայ գաղթականներին խորհրդային Հայաստան՝ Սարդարապատի դաշտ տեղափոխելու հարցը: Այս հարցով զբաղվելու հանձնարարութիւնը կրկին վստահվեց Նանսենին, որն ակտիվ բանակցութիւններ էր վարում թե՛ խորհրդային Միութեան և թե՛ խորհրդային Հայաստանի ղեկավարութեան հետ, այցելում է Հայաստան՝ պարզելու արևմտահայ գաղթականների Սարդարապատի դաշտում տեղափոխվելու և այնտեղ նրանց հետագա կենսագործունեութեան հնարավորութիւնները: Սակայն Սարդարապատի դաշտի հողերը մշակելու համար անհրաժեշտ էր այնտեղ ոռոգման համակարգ ստեղծել, ինչը լրացուցիչ ֆինանսական ծախսեր էր պահանջում: Ընդհանուր առմամբ արևմտահայերի խորհրդային Հայաստան տեղափոխելու ու այնտեղ նրանց համար ապրելու պայմաններ ստեղծելու համար պահանջվում էր 9 մլն. ռուբլի – մոտ 1 մլն. ֆունտ ստերլինգ գումար<sup>408</sup>: Այս մասին Նանսենը 1925 թ. սեպտեմբերի 10-ին զեկուցում է Ազգերի լիգային կից Աշխատանքի միջազգային բյուրոյի գաղթականական բաժանմունքի խորհրդակցութեան կոմիտեում: Նանսենի ծրագիրը հավանութեան է արժանանում նաև Ազգերի լիգայի Հինգերորդ Հանձնաժողովում և որոշվում է կազմել

<sup>407</sup> Արգումանյան Մ. Վ., Նանսենը և Հայաստանը, էջ 103:

<sup>408</sup> Махмуриян Г. Г., Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 133.

Հատուկ Հանձնախումբ ծրագրի տեխնիկական կողմը կրկին ուսումնասիրելու և փոխառութայն Հարցով Խորհրդային Հայաստանի ու եվրոպական պետությունների կառավարությունների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների հետ բանակցելու համար<sup>409</sup>: Եթե ծրագրի տեխնիկական կողմը որևէ խնդիր չառաջացրեց, ապա Ֆինանսական և Խորհրդային Հայաստանին ծրագրին իրականացնելու համար փոխառություն տրամադրելու հարցերում եվրոպական տերությունները, քաղաքական շարժառիթներից ելնելով, բազմաթիվ արհեստական խոչընդոտներ ստեղծեցին: Հարցը չի լուծվում նույնիսկ այն ժամանակ, երբ ծրագրի ոռոգման համակարգի համար նախատեսված ծախսերը Խորհրդային Հայաստանն ամբողջությամբ վերցնում է իր վրա և պահանջվող գումարը կրճատվում է երեք անգամ: 1927 թ. հունիսի 16-ին Ազգերի լիգայի Խորհրդի նիստում ելույթ ունենալով Նանսենը նշում է, որ ծրագրի իրականացման համար հարկավոր է 300.000 ֆունտ ստերլինգ, որի մեկ երրորդը կհոգան գաղութահայերը և անհրաժեշտ էր, որ գոնե մնացածը հատկացնեին մեծ պետությունները կամ Ազգերի լիգան<sup>410</sup>: Ցավոք, անգամ այս գումարը փոխառությամբ տրամադրելու հարցում դժվարություններ առաջացան: 1928 թ. սեպտեմբերի 17-ին Ազգերի լիգայի Խորհուրդը կրկին անդրադարձավ այս հարցին և պարզվեց, որ պահանջվող գումարից Գերմանիան կարող է փոխատվություն տալ 50.000, Նորվեգիան՝ 2.000, Ռումինիան 1.000 ֆունտ ստերլինգ, Հունաստանը կարող է հոգալ գաղթականների տեղափոխման ծախսերի մեկ քառորդը, Հոլանդիան ու Լյուքսեմբուրգն էլ էին պատրաստակամություն Հայտնել ֆինանսապես նպաստել, սակայն չէին հստակեցրել դրա չափը, իսկ Անգլիան ու Շվեյցարիան էլ մերժեցին օժանդակել ծրագրին: Հետագայում Հոլանդիան նույնպես հրաժարվեց իր մասնակցությունից, դա պատճառաբանելով ավելի մեծ պետությունների չմասնակցությունը<sup>411</sup>:

Ազգերի լիգայի Ասամբլեայի առաջարկով Խորհրդի կողմից նույն թվականի սեպտեմբերին գաղթականների գլխավոր Հանձնակատարին կից ստեղծվեց միջկառավարական խորհրդակցական Հանձնաժողով, որը պետք է մշակեր կոնկրետ միջոցառումներ ու Հայ գաղթականների հարցի հետ կապված բանակցությունների մեջ մտներ տարբեր պետությունների հետ: Սակայն ակնհայտ էր, որ նախ նման Հանձնաժողով պետք է ստեղծվեր ավելի վաղ, բացի այդ էլ, այս Հանձնաժողովը

<sup>409</sup> Արզումանյան Մ. Վ., Նանսենը և Հայաստանը, էջ 207:

<sup>410</sup> Նույն տեղում, էջ 235:

<sup>411</sup> Նույն տեղում, էջ 241–241:

նույնպես անգործունյա գտնվեց: Այս ամենից խոր հիասթափություն ապրած Նանսենը 1929 թ. սեպտեմբերի 21-ին Ազգերի լիգայի Ասամբլեայում իր վերջին ելույթում առաջարկեց վերջ տալ Հայ գաղթականներին Խորհրդային Հայաստանում տեղավորելու հարցի ապարդյուն քննարկումներին և այն Հանել օրակարգից: Նրա պնդմամբ Ազգերի լիգան հարկադրված կայացրեց նման որոշում, միաժամանակ նշելով, որ Գերմանիան, Նորվեգիան, Ռումինիան, Հունաստանը և Լյուքսեմբուրգը ազատվում են այս հարցի հետ կապված իրենց ստանձնած պարտավորություններից և պետք է հետ վերադարձվեին երկու անհատներից դանձված գումարները<sup>412</sup>:

Չնայած այս ամենին, ինքը Նանսենը 1927–1929 թթ. տարբեր երկրներում անց էր կացնում մասնավոր Հանգանակություններ՝ Հայ գաղթականների օգտին, Հանդես էր գալիս դասախոսություններով Եվրոպայում և Ամերիկայի քաղաքներում և նրա հավաքած գումարներով հնարավոր եղավ կազմակերպել շուրջ 7 հազար արևմտահայերի վերաբնակեցումը Խորհրդային Հայաստանում<sup>413</sup>:

Ազգերի Լիգայում Հայկական հարցի լուծման ձգձգումներից միանշանակ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ կազմակերպությունը ոչ թե ցանկանում էր լուծում տալ ծառայած հարցին, այլ ընդամենը գրավել էր սպասողական դիրք, հարցի լուծումը թողնելով ինքնահոսի, սպասելով, որ իրադարձությունների զարգացումը բերի ինչ-որ հանգուցալուծման:

Այդուհանդերձ, Հայկական հարցի շուրջ Ազգերի լիգայում քննարկումներն ու ընդունված բանաձևերը չափազանց կարևոր են Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման տեսակետից: Հայաստանին և Հայկական հարցին նվիրված Ազգերի լիգայի թե՛ քննարկումներում և թե՛ ընդունված բանաձևերում կարմիր թելով անցնում են Սևրի պայմանագրի ու Վիլսոնի իրավարար վճռի դրույթները, որոնք նա անգոր գտնվեց կենսագործել այն ժամանակ ստեղծված բարդ ու փոփոխական իրավիճակում և ազդեցիկ պետությունների շահերի բախման պայմաններում:

Ինչպես Հայտնի է, 1946 թ. ապրիլի 8-ին գումարված Ազգերի լիգայի Գլխավոր Ասամբլեայի վերջին XXI նստաշրջանի 34 անդամ պետությունների ներկայացուցիչների ընդունած բանաձևով Ազգերի լիգան դադարեցնում էր իր գոյությունը և նրա իշխանությունն ու գոր-

<sup>412</sup> Արզումանյան Մ. Վ., Նանսենը և Հայաստանը, էջ 254–255:

<sup>413</sup> Նույն տեղում, էջ 251:

ժառույթները փոխանցվում էին Միավորված Ազգերի Կազմակերպությանը<sup>414</sup>։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ին է փոխանցվել նաև Ազգերի լիգայի գրադարանն ու արխիվը, հարկավոր է վեր հանել Հայկական հարցի շուրջ Ազգերի լիգայի քննարկումների սղադրութունների ու ընդունված բանաձևերի բնագրերն ու դրանք լայն շրջանառության մեջ դնել ՄԱԿ-ի համապատասխան կառույցներում, որպեսզի ՄԱԿ-ը, որպես նրա ժառանգորդ միջազգային միջկառավարական կազմակերպություն շարունակի և ավարտին հասցնի այն, ինչ չհաջողվեց անել նրա նախորդին։ Միաժամանակ գտնում ենք, որ Ազգերի լիգայում Հայկական հարցի շուրջ ընթացած քննարկումներն ու ընդունված բանաձևերը կյանքի չկոչվելու դառը փորձը մեզ համար պետք է լավ դաս լինի, որպեսզի ՄԱԿ-ի կառույցներում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցը բարձրացնելիս գործենք ավելի շրջահայաց ու հաշվենկատ։

#### 5.1.2. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության քննարկումները և ընդունված բանաձևերը

Պետք է նշել, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության հարցը քննարկվել է դեռ 1948 թ., երբ ընթանում էր «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունուման գործընթացը և կարելի է ասել, որ քննարկումների այդ փուլն ավարտվեց հենց կոնվենցիայի ընդունումով<sup>415</sup>։ Սակայն հետագայում ևս ժամանակ առ ժամանակ այդ հարցը կրկին հայտնվել է այդ հեղինակավոր միջկառավարական կառույցի ուշադրության կենտրոնում։ Թեև «սառը պատերազմի» տարիներին ՄԱԿ-ում ուժերի հարաբերակցությունն արևմտյան երկրների օգտին էր, այդուհանդերձ, Գլխավոր Ասամբլեայի բարձր ամբիոնից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին հայտարարություններ են հնչել Կիպրոսի Հանրապետության արտաքին գործերի նախարարի կողմից<sup>416</sup>։

<sup>414</sup> The end of the League of Nations <http://www.unog.org>.

<sup>415</sup> Տե՛ս Գեոցիալ արմյան։ օրտևեթտևեթտա միրօրոց օօօեթտևեթտա, ր. 2, ք. 1, ծօք. 1337, ք. 651.

<sup>416</sup> Տե՛ս նույն տեղում, ծօք. 1338, ք. 652.

Այսպես՝ 1965 թ. հունվարի 25-ին և 27-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի պլենար նիստում երկու անգամ ելույթ է ունեցել Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիպրիանին, որն անդրադառնալով Թուրքիայի արտագործնախարարի կոտորածների հետ կապված արտահայտություններին, ասել է, թե Թուրքիայի ներկայացուցիչը բարոյական իրավունք չունի խոսել կոտորածներից, քանզի հենց տվյալ տարում ողջ աշխարհի հայությունը նշում է 1915 թ. Թուրքիայում մեկ ու կես միլիոն անմեղ հայերի զանգվածային կոտորածների հիսուն ամյա տարելիցը։ Թուրքիայի արտագործնախարարը հակադարձել է դրան և փորձել է այդ բնագավառի հայտնի մասնագետ Ա. Թոյնբիի աշխատություններից հատվածաբար մեղաբերված հղումներով ժխտել հայերի կոտորածների վերաբերյալ մեղադրանքները։ Սակայն հունվարի 27-ի ելույթում Կիպրիանին քննադատել է Թուրքիայի արտագործնախարարի արտահայտությունը, որը հայերի ցեղասպանությունն անվանել է «այսպես կոչված կոտորած»։ Կիպրիանին Թուրք գործընկերոջը խորհուրդ է տվել կարդալ Ա. Տոյնբիի բոլոր աշխատությունները, որտեղ նա կարող է գտնել բազմաթիվ տեղեկություններ հայերի ջարդերի մասին և շատ այլ բաներ, որոնք հազիվ թե նրան դուր կգան<sup>417</sup>։

ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումները վերսկսվեցին 1970-ական թթ. սկզբներից, երբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Ենթահանձնաժողովում նախաձեռնվեցին «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի կատարելագործման ուղղված աշխատանքները։

1971 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հաստատում է «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան կատարելագործելու նպատակով հետազոտություն կատարելու և զեկույց ներկայացնելու առաջարկը։ Ենթահանձնաժողովը նշանակում է տվյալ հարցով հատուկ զեկուցողի՝ Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոլեմ Ռուհաչիանկիկոյին։ 1972 թ., երբ նա առաջին անգամ իր զեկույցը ներկայացրեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Ենթահանձնաժողովի 25-րդ նստաշրջանին, նրանում Հայոց ցեղասպանության մասին հիշատակում չկար։ Այդ մասին ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Կուրտ Վալտհայմին գրած նամակում տեղեկացնում էր Հայ պատմաբան Զավեն Մարլյանը, որը նամակներ է ուղարկում նաև Ենթահանձնաժողովի նախագահ Զորջ Բրանտին և ան-

<sup>417</sup> Գեոցիալ արմյան։ օրտևեթտևեթտա միրօրոց օօօեթտևեթտա, ր. 1, ք. 652.

ձամբ զեկուցողին: Ենթահանձնաժողովի նախագահը պատասխանում է, որ առաջարկը Հաշվի է առնվել և Հայերի ցեղասպանության փաստի հիշատակումը ներառվել է զեկուլցի տեքստում<sup>418</sup>:

1973 թ. սեպտեմբերի 16-ին ժնևում տեղի ունեցած ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովի 26-րդ նստաշրջանում Հատուկ զեկուցող Ն. Ռուհաշիանկիկոն ներկայացնում է իր զեկուցման նոր տարբերակը, որի 30-րդ պարբերությունում պատմական փաստերի շարքում Հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում կատարվածը որակվում է որպես «հանցագործություն, որը համարվում է XX դարի առաջին ցեղասպանությունը»<sup>419</sup>: Ձեկուցումն արժանացավ բարձր գնահատականի և միաձայն ընդունվեց ենթահանձնաժողովի կողմից:

Սահմանված ընթացակարգի համաձայն, զեկուլցը պետք է քննարկվեր և ընդունվեր նաև Մարդու իրավունքների հանձնաժողովում, որի անդամներն, ի տարբերություն ենթահանձնաժողովի, իրենց կառավարությունների ներկայացուցիչներն էին, որոնք արտահայտում էին իրենց կառավարությունների, այլ ոչ թե սեփական դիրքորոշումը, բայց իրավունք չունեին վետո կիրառել Հատուկ զեկուցողի հետազոտության կամ դրա առանձին դրույթների նկատմամբ:

1974 թ. մարտի 6-ին Ռուհաշիանկիկոյի զեկուլցը, 30-րդ պարբերությամբ հանդերձ, ներկայացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանին: Ձեկուլցում Հայոց ցեղասպանության հիշատակումը հանգեցրեց թուրքական կողմի հուժկու հակազդեցության: Թուրքիայի ներկայացուցիչ Օսման Օլչայը պահանջեց զեկուլցը վերադարձնել վերամշակման և տեքստից հանել 30-րդ պարբերությունը<sup>420</sup>: Թուրքական կողմն իր դիրքորոշումը հիմնավորում էր նրանով, թե հին վերքերը փորվելը վտանգավոր է, ինչը կարող է ատելություն առաջացնել, թե պատմական իրադարձությունների ամբողջական պատկերի ճշգրիտ վերականգնումն անհնար է և այլն<sup>421</sup>: Հակառակ հաստատված կարգի, համաձայն որի Հատուկ զեկուլցողների ուսումնասիրություններում ներկայացված դրույթները փոփոխության չէին կա-

<sup>418</sup> Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչությունը, Լոս Անձեյլոս 1989, էջ 142:

<sup>419</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1984-1987 թթ.), կազմող և առաջարանի հեղինակ Լ. Ա. Բարսեղյան, Եր., 1998, էջ 5:

<sup>420</sup> Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչությունը, էջ 142:

<sup>421</sup> Генциал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 694.

րող ենթարկվել, Թուրքիայի ներկայացուցիչը պահանջեց զեկուլցից հանել նաև 28 և 29-րդ պարբերությունները, որոնք վերաբերում էին կրոնական հիմքով ցեղասպանություններին: Թուրքիայի այս պահանջին միացան ԱՄՆ-ի, Պակիստանի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իրաքի, Իրանի, Հնդկաստանի, Ռումինիայի, Էկվադորի, Նիգերիայի պատվիրակները, իսկ ԽՍՀՄ-ի, Խորհրդային Բելառուսի և Մեծ Բրիտանիայի պատվիրակները պահանջեցին դուրս հանել նիստ հրավիրել<sup>422</sup>: Արդյունքում թուրքերը ԱՄՆ-ի աջակցությամբ և ԽՍՀՄ-ի ներկայացուցչի լուռ համաձայնությամբ կարողացան հասնել նրան, որ զեկուլցը վերադարձվեց վերամշակման, ինչի տակ առաջին հերթին հասկացվում էր 30-րդ պարբերության վերացումը<sup>423</sup>:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների վարչության տնօրեն Հոլանդացի Թեո Վան Բովենը, որն անձամբ մասնակցել է բոլոր քննարկումներին, սկզբում որպես Նիդերլանդների ներկայացուցիչ ենթահանձնաժողովում, այնուհետև որպես դրա անդամ, մեկնաբանելով այդ զարգացումները, ափսոսանք հայտնեց, որ թուրքական պետությունն իր արատավոր շահերը պաշտպանելու նպատակով իսկական դիվանագիտական արշավ սկսեց 1974 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի սեփական առաջ, ինչը նպաստեց Հայ ժողովրդի պատմական ճակատագրի նենգափոխմանը<sup>424</sup>:

Փաստորեն Հատուկ զեկուլցողի հետազոտությունում Հայերի ցեղասպանության, իրրև տվյալ հանցագործության բոլոր հաջորդ դեպքերի համար մոդելի, հիշատակումը, որը հիմք էր հանդիսանում ցեղասպանության մասին կոնվենցիայի կատարելագործման համար, առաջացնում էր խուճապ և մերժողականություն ոչ միայն Թուրքիայի, այլև ՆԱՏՕ-ի նրա դաշնակիցների և նույնիսկ հակառակ ճամբարի առաջատար ԽՍՀՄ-ի մոտ, որոնք մոռանալով միմյանց միջև առկա լուրջ հակասությունները, միահամուռ միավորվում էին այդ հիշատակումը չեզոքացնելու գործում:

ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների դիրքորոշումը հիմնավորվում էր նրանով, որ Թուրքիան ԱՄՆ-ից հետո թվաքանակով երկրորդ բանակն ունի ՆԱՏՕ-ում, որ Թուրքիան վերահսկում է խորհրդային նավատորմի ելքը Միջերկրական ծով, հանդիսանում է ԱՄՆ-ի ռազմավարական հենարանը ԽՍՀՄ-ի հետ սահմանին, նրա տարածքում է տեղակայված

<sup>422</sup> Մարդու զ., Ջանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ուղղութեամբ, «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր ԼԲ, Պէյրոս, 2012, էջ 432:

<sup>423</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, էջ 5:

<sup>424</sup> Генциал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 766.

ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի ամենամեծ ռազմակայանը, որտեղից իրականացվում է նաև խորհրդային ռազմավարական միջուկային ուժերի ռադիոէլեկտրոնային և տիեզերական հետախուզությունը և այնտեղից են ստացվում այդ հետախուզության արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիմնական մասը: Այդ էր պատճառը, որ ԱՄՆ-ի ներկայացուցիչն անգամ կասկածի տակ էր դնում հայերի ցեղասպանության փաստը<sup>425</sup>:

Եթե ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի երկրների շարժառիթներն ու փաստարկները սառը պատերազմի պայմաններում ինչ-որ չափով կարելի էր հասկանալ, քանզի նրանք փորձում էին այդ կերպ պաշտպանել իրենց ռազմավարական դաշնակցին, ապա ԽՍՀՄ-ի դիրքորոշումն առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, սակայն այն ևս ուներ իր բացատրությունը: Այդ կերպ ԽՍՀՄ-ը նպատակ էր հետապնդում թույլ չտալ պետությունների պատասխանատվության սկզբունքի ամրագրումը միջազգային իրավունքում, ինչը կարող էր ծանր հետևանքներ ունենալ նաև իր համար, քանզի դեռ ցեղասպանության մասին կոնվենցիայի քննարկման ժամանակ իր հասցեին նույնպես հնչում էին ցեղասպանություն իրականացնելու մեղադրանքներ, կապված քաղաքական այլախոհության հետապնդումների և ազգային փոքրամասնությունների խտրականության հետ:

Հաշվի առնելով այս հուժկու հակազդեցությունը, դեմ արտահայտված երկրների հայկական համայնքներում սկսվում են աշխատանքներ տարվել իրենց իշխանությունների դիրքորոշումների վրա ներազդելու ուղղությամբ: Բացի այդ, հայկական տարբեր համայնքներից նամակներ են հղվում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, որոնց կցվում էին Հայոց ցեղասպանությունը հաստատող փաստագրական նյութեր, պահանջելով զեկուլցում անպայման վերականգնել 30-րդ պարբերությունը:

30-րդ պարբերության շուրջ բանավեճը շարունակվեց 1975 թ. սեպտեմբերին ժնևում: Այս անգամ Ավստրիայի, Դանիայի, Մեծ Բրիտանիայի, Մեքսիկայի, Նիգերիայի, Ֆրանսիայի և Հարավսլավիայի փորձագետները արտահայտվեցին պարբերության պահպանման օգտին, սակայն որոշում ընդունվեց երեք տարով, մինչև 1978 թ. Ենթահանձնաժողովի 33-րդ նստաշրջանը սառեցնել հարցի քննարկումը:

1978 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Ենթահանձնաժողովը կրկին անդրադառնալով 1973 թ. ներկայացված զեկուլցին: Քննարկման ժամանակ հատուկ զեկուլցող Ն.Ռուհաշիանկիկոն հայ-

տարանց, թե նա հայերի ցեղասպանության վկայություններ չի հայտնաբերել և որ միակ ճանաչված դեպքը հրեաների ցեղասպանությունն է երկրորդ աշխարհամարտի տարիներին: Ակնհայտ էր, որ հատուկ զեկուլցողի դիրքորոշման փոփոխությունը պայմանավորված էր այն ճնշումներով, որոնց նա ենթարկվել էր առաջին հերթին թուրքական կողմից: Ն. Ռուհաշիանկիկոյի վրա ճնշումներ գործադրելու փաստը հաստատում է նաև զեպքերի անմիջական մասնակից հոլանդացի Վան Բովենը, որն փաստում էր, որ թուրքական կառավարությունը ազդեցություն է ունեցել առանձին փորձագետների անկախության ու անաչառ դիրքորոշման վրա: Միևնույն ժամանակ նա հույս էր հայտնում, որ շնորհիվ առանձին անհատների, խմբերի և ոչ կառավարական կազմակերպությունների պատմական արդարությունը և աշխարհի խիղճը դեռ չի թաղվել, նույնիսկ որոշ կառավարությունների դիրքորոշումն ավելի է ճշգրտվել, և ՄԱԿ-ում բացվել են նոր հնարավորություններ, որպեսզի ճշմարտությունն ու արդարությունը հաղթանակի<sup>426</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ բազմաթիվ երկրների ներկայացուցիչներ առարկեցին դրա դեմ, գտնելով, որ Կոնվենցիայի կատարելագործումը և դրա արդյունավետության բարձրացումն առանց պատմական փորձը հաշվի առնելու ուղղակի անհնարին է, այնուամենայնիվ, թուրքիան ու նրան սատարող երկրները հասան այն բանին, որ զեկուլցից ամբողջությամբ դուրս բերվեց հիմնահարցի պատմությանը վերաբերող 30-րդ պարբերությունը՝ հայերի ցեղասպանության հիշատակման հետ մեկտեղ: Այսպիսով թուրքիային ժամանակավորապես հաջողվեց զեկուլցից դուրս մղել Հայոց ցեղասպանության հիշատակող պարբերությունը:

Համաձայն սահմանված ընթացակարգի, զեկուլցը 1979 թ. մարտին կրկին ներկայացվեց Մարդու իրավունքների հանձնաժողով, որում հեղինակի կողմից բաց էր թողնվել 30-րդ պարբերությունը, ինչը բողոքի այնպիսի մեծ ալիք բարձրացրեց, որը թերևս սպասելի չէր զեկուլցողի համար:

Ռուանդացի հատուկ զեկուլցողն այլևս չփոփոխեց իր զեկուլցը, և Ենթահանձնաժողովը համաձայն ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 1983 թ. թիվ 33 բանաձևի, նշանակեց մեկ այլ զեկուլցող, հանձնարարելով ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի ուսումնասիրությունը հիմնովին վերանայել և ներ-

<sup>425</sup> Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 529.

<sup>426</sup> Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 766.



կայացնել նոր զեկույց<sup>427</sup>: 1983 թ. մայիսի 27-ին նոր հատուկ զեկուցող նշանակվեց բրիտանական պառլամենտի նախկին պատգամավոր Բենջամին Ուայթբերը, ում հանձնարարվեց զբաղվել «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան կատարելագործելու վերաբերյալ հետազոտության մը և ներկայացնել նոր զեկույց: 1984 թ. օգոստոսի 7-ին նա հայտարարեց, որ նախորդ զեկույցում որոշ բացեր կային քաղաքական ճնշման պատճառներից ելնելով, այդ թվում հայերի ցեղասպանության հարցի հետ կապված<sup>428</sup>: Հատկանշական էր, որ նոր զեկուցողը տեղյակ էր նախորդ զեկուցողի նկատմամբ իրականացված ճնշումների մասին և հենց դա էր համարում նախկին զեկույցի գլխավոր թերությունը:

1985 թ. հուլիսի 2-ին Բ.Ուայթբերը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովին ներկայացրեց նոր զեկույցը՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան կատարելագործելու վերաբերյալ: Հեղինակը նշում էր, որ թեև ցեղասպանություն բառը համեմատաբար վերջերս է առաջացել, սակայն այն վերաբերում է հին հանցագործությանը<sup>429</sup>:

Վերափոխված տարբերակի 24-րդ պարբերությունում նշվում է, որ նացիստական գազանությունները, ցավոք, չեն եղել XX դարի ցեղասպանության եզակի օրինակ: Հեղինակն այդ հանցագործության օրինակների թվին է դասել 1904 թ. գերմանացիների կողմից իրագործված Հերհերների կոտորածները, 1915–1916 թթ. օսմանցիների կողմից հայերի կոտորածները և այլն<sup>430</sup>: Հերհերների 1904 թ. կոտորածի հիշատակումով, հեղինակը փաստորեն ձեռնպահ էր մնում Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանություն անվանելուց, ինչն ամրագրված էր ռուսադարձի զեկուցողի հետազոտության 30-րդ պարբերությունում:

Հեղինակը նաև ստիպված է եղել հայերի կոտորածների հետ կապված զեկույցի տողատակում տալ որոշ պարզաբանումներ՝ «Առնվազն մեկ միլիոն, այսինքն՝ ըստ էության հայ բնակչության կեսից ավելին անկախ կազմակերպությունների ու ակնատեսների հավաստի տվյալներով սպանվել է կամ մահվան քարավաններ է ուղարկվել: Դա հաստատվում է ԱՄՆ, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի արխիվային փաս-

տաթղթերով, ինչպես նաև այն ժամանակ Օսմանյան կայսրությունում ծառայող, այդ թվում՝ նրա դաշնակից Գերմանիայի, դիվանագետների վկայություններով»<sup>431</sup>:

Որպես նշվածի ապացույց զեկուցողը մեջբերում է Գերմանիայի դեսպան Վանգենհայմի 1915 թ. հուլիսի 7-ի հեռագիրը, որում նշված է, որ թուրքական կառավարությունն իրականում նպատակ է հետապնդում ոչնչացնել հայերի տեսակը Օսմանյան կայսրությունում: Զեկույցի հեղինակը եզրակացնում էր, որ թեև հաջորդ թուրքական կառավարությունը կոտորածների համար պատասխանատու որոշ անձանց հանձնեց դատարանին ու նրանց մեղավոր ճանաչեց կատարվածում, թուրքական ներկա պաշտոնական տեսակետը հանգում է նրան, որ ցեղասպանություն չի եղել, թեև եղել են շատ զոհեր և տեղահանություններ, որոնք պայմանավորված էին պատերազմով և որ բոլոր հակառակ պնդումները կեղծիք են»<sup>432</sup>:

Այս անգամ ևս փորձեր կատարվեցին ճշգրտներ գործադրել զեկուցողի վրա, ստիպելով նրան իր զեկույցից հանել հայերի կոտորածների իբրև ցեղասպանության մասին հիշատակումը, սակայն ապարդյուն: Ի տարբերություն ռուսադարձի զեկուցողի, անգլիացի զեկուցողը ցուցաբերեց անկախ հետազոտողին վայել անաչառություն ու սկզբունքայնություն: Ուայթբերն իր պարզաբանումների մեջ գետնեղել էր նաև թուրքական տեսակետը թերևս այն նպատակով, որ 24-րդ պարբերությունից հայերի ցեղասպանության մասին դրույթը դուրս չմղվի տեքստից, ինչպես դա եղավ նախկին զեկույցի հետ: Տողատակում ներկայացնելով 1915 թ. դեպքերի թուրքական վարկածը, Ուայթբերը հենց Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի դեսպան Վանգենհայմի զեկուցազրերի մեջբերումներով չեզոքացնում է այն:

1985 թ. օգոստոսի 5–30-ը ընթացած ենթահանձնաժողովի 38-րդ նստաշրջանում կրկին սկսվեցին Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումները, երբ Բ. Ուայթբերը Հայոց ցեղասպանության մասին հիշատակող 24-րդ պարբերության հանդերձ ներկայացրեց իր զեկույցը: Մահմեդական երկրների՝ Եգիպտոս, Հորդանան, Մարոկկո, Բանգլադեշ և որոշ եվրոպական երկրների մասնագետ-ներկայացուցիչները Հայոց ցեղասպանության հիշատակման պատճառով դեմ արտահայտվեցին 24-րդ

<sup>427</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, էջ 33:

<sup>428</sup> Генциал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 694.

<sup>429</sup> Նույն տեղում, տ. 2, 4, 2, с. 82.

<sup>430</sup> Նույն տեղում, տ. 2, 4, 1, с. 665–666.

<sup>431</sup> Մարդեան Ձ., Չանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ուղղութեամբ, էջ 461–462:

<sup>432</sup> Генциал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 666.

պարբերությունը: Օգոստոսի 19-ին Ենթահանձնաժողովի նիստում ելույթ ունեցան նաև չորս հայեր՝ «Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի» միջազգային հարցերի Հանձնաժողովի ներկայացուցիչ, պրոֆեսոր Շավարշ Թորիկյանը, «Գերություն դեմ մարդու իրավունքների պաշտպանության» կազմակերպության ներկայացուցիչ Հրայր Պալյանը, «Բնիկ ժողովուրդների Համաշխարհային կազմակերպության» ներկայացուցիչ Հարութ Սասունյանը և «Ազգերի և ժողովուրդների միջև եղբայրական միություն» միջազգային շարժման ներկայացուցիչ Ռոբերտո Մալխասյանը, որոնք պատմական փաստերի հիման վրա պաշտպանեցին Հայոց ցեղասպանության փաստի հիշատակումը գեկույցի 24-րդ պարբերությունում:

Թորիկյանը և Սասունյանը իրենց ելույթներում նաև անդրադարձ կատարեցին այն փաստին, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Հանձնաժողովը դեռ 1948 թ. իր նիստերում անդրադարձել է հայերի կոտորածներին: Այդ քննարկումների մասին փաստերը տեղ են գտել Հանձնաժողովի փաստաթղթերում, որոնք հայտնաբերվել ու առաջին անգամ շրջանառության մեջ էին դրվել Զ.Մըսրյանի կողմից<sup>433</sup>: Ի պատասխան Թուրքիայի ներկայացուցիչը կրկնեց թուրքական պաշտոնական վարկածը, Համաձայն որի կատարվածն ընդամենը Հայկական ապստամբության ճնշում է եղել, նրա տեսակետը պաշտպանեց նաև թուրք մասնագետ Թուրքայա Աթալյուր և Պակիստանի ներկայացուցիչը:

Օգոստոսի 20-ին պատասխան ելույթով հանդես եկավ գեկույցի հեղինակ Բ.Ուայթբերը, որը նշեց, որ ութ տարի զբաղվել է հայերի ցեղասպանության ուսումնասիրությամբ, հետազոտել է արխիվային փաստաթղթեր, այդ թվում Օսմանյան կայսրության դաշնակից տերությունների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի արխիվները, որոնք վկայում են հենց ցեղասպանության մասին, որի կազմակերպիչները դատապարտվել են հենց թուրքական ռազմական դատարանների կողմից: Զեկուցողը եզրակացրեց, որ եթե Ենթահանձնաժողովում ելույթ ունեցող մասնագետները չպետք է քաջություն ունենան ասելու ճշմարտությունը, ուրեմն նրանց մասնակցությունը անիմաստ է, քանզի Ենթահանձնաժողովի պարտականությունն է զոհերին պաշտպանել կառավարություններից, այլ ոչ թե հակառակը<sup>434</sup>:

<sup>433</sup> Մարրիան Չ., Ջանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ուղղությամբ, էջ 462:

<sup>434</sup> Նույն տեղում, էջ 463:

Այս խոսքերին փորձեց արձագանքել Թուրքիայի ներկայացուցիչը, սակայն Հուլյն նախագահող Էրիկա Թայսը ձայն չտվեց նրան, հայտարարելով, որ հարցի շուրջ քննարկումներն ավարտված են: Օգոստոսի 21-ին վերջապես քվեարկվեց գեկույցն ամբողջությամբ, ինչի արդյունքում ընդունվեց 14 - «կողմ», 1 - «դեմ» և 4 - «ձեռնպահ» ձայների հարաբերակցությամբ: Զեկույցին կողմ քվեակցին Արգենտինան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Մեքսիկան, Հարավսլավիան, Չինաստանը, Ճապոնիան, Նիգերիան, Եթովպիան, Գանան, Հնդկաստանը, Բելգիան, Կանադան և էկվադորը: Զեռնպահ էին քվեարկել Հորդանանի, Կուբայի, Մարոկկոյի և Բանգլադեշի ներկայացուցիչները, ևս վեց երկրների մասնագետ-պատվիրակներ քվեարկությանը չմասնակցեցին: Դեմ քվեարկած ԽՍՀՄ-ի ներկայացուցիչն իր դիրքորոշումը հիմնավորեց նրանով, որ իր կառավարությունը Համաձայն չէ Ուայթբերի գեկույցում տեղ գտած այն առաջարկների հետ, որոնք նպատակ են հետապնդում փոփոխություններ մտցնել ՄԱԿ-ի Գեղասպանության մասին կոնվենցիայի մեջ<sup>435</sup>: Կողմ քվեարկած ԱՄՆ-ի պատվիրակ Ջոն Քերին և Մեքսիկայի ու Բելգիայի պատվիրակները քվեարկություններից առաջ և նիստերի ընթացքում հայանպաստ դիրք էին զբաղվել:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքի Հանձնաժողովի Ենթահանձնաժողովում ձեռք բերված այս կարևոր հաջողության գլխավոր գրավականն այն էր, որ եթե 1970-ական թթ. 30-րդ պարբերության քննարկումներն ընթանում էին առանց հայերի գործուն մասնակցության, ապա թուրքական կառավարության ջանքերի շնորհիվ այդ պարբերության տապալումը 1980-ական թթ. հանգեցրեց սփյուռքի ներուժի Համախմբմանն ու ավելի նպատակային պայքարին, ինչի արդյունքում Համասփյուռքյան միասնական ջանքերի գնով հաջողվեց 30-րդ պարբերությունը վերահաստատել 24-րդ պարբերության տեսքով:

ԽՍՀՄ կազմալուծումից, Հայաստանի միջազգային իրավունքի սուբյեկտ և ՄԱԿ-ի լիիրավ անդամ դառնալուց հետո հնարավորություն ընձեռնվեց այդ կազմակերպության բարձր ամբիոնից տվյալ հարցի հետ կապված արդեն հնչեցնել Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը: 1998 թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանը ելույթ ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 53-րդ նստաշրջանում և ՄԱԿ-ի բարձր ամբիոնից բարձրացրեց նաև Հայոց ցեղասպանության ընդունման և դատապարտման անհրաժեշտության

<sup>435</sup> Մարրիան Չ., Ջանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ուղղությամբ, էջ 463:

Հարցը: Հայաստանի նախագահն իր ելույթում մասնավորապես ասաց. «Ընթացիկ տարին «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունման 50-ամյակի տարին է: Ինչպես Հայտնի է, Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թվականի ցեղասպանությունն իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտվեց համաշխարհային հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր հանցագործություններ կատարել»<sup>436</sup>: Հայաստանի Հանրապետության նախագահը Հայտարարեց նաև, որ Գլխավոր Ասամբլեայի 53-րդ նստաշրջանում Հայաստանի և Հինգ ալլ պետությունների համատեղ առաջարկությամբ նստաշրջանի օրակարգ է մտցվել կոնվենցիայի 50-ամյակի վերաբերյալ բանաձև ընդունելու հարցը: Հայաստանի նախագահը հետագայում Հայտարարեց, որ այդ հարցում մենք ուշացել ենք մոտ 7 տարի և անկախությունից անմիջապես հետո պետք է այս մասին բարձրաձայնվեր միջազգային կառույցներում ու մասնավորապես ՄԱԿ-ում<sup>437</sup>: Ցավալի է, որ չնայած հենց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի 11-րդ կետում է ամրագրված, որ «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»<sup>438</sup>, Հայաստանն առաջին անգամ այս հարցը միջազգային կառույցում, ինչպիսին ՄԱԿ-ն է առաջին անգամ պաշտոնապես բարձրաձայնեց այդքան ուշ:

1998 թ. դեկտեմբերի 2-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 53-րդ նստաշրջանը միաձայն ընդունեց «Ցեղասպանության կանխարգելման և պատժելիության կոնվենցիայի 50-ամյակի մասին» Հայաստանի և Հինգ ալլ երկրների ներկայացրած ցեղասպանության դատապարտման 53/43 բանաձևը<sup>439</sup>, որում երախտագիտություն էր հայտնվում բոլոր այն երկրներին, որոնք վավերացրել էին Կոնվենցիան, առաջարկվում էր միանալ կոնվենցիային այն երկրներին, որոնք դեռ չէին արել դա: Կոչ էր արվում բոլոր երկրներին ընդգայնել և ակտիվացնել ջանքերը այդ դրույթների կատարման ուղղությամբ, ինչպես նաև շարունակել կոն-

<sup>436</sup> <http://www.armworld.am/detail.php?paperid=3951&pageid=122324&lang=>

<sup>437</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>438</sup> Տե՛ս ՀՀ Անկախության հռչակագիր, ընդունված 23 օգոստոսի 1990 թ. <http://www.gov.am/am/independence/>

<sup>439</sup> <http://analitika.at.ua/news/2008-12-04-4754>.

վենցիայի դրույթների կատարման ուսումնասիրումը, վեր հանելով դրանց իրագործման խոչընդոտներին ու նախանշել հաղթահարման ուղիները ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում<sup>440</sup>:

Նույն օրը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում Կիպրոսի մշտական ներկայացուցիչը հանդես եկավ «Անկախ կատարման ժամկետից և զբաղեցրած դիրքից, ծանր միջազգային հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու մասին» գեկույցով: Չեկույցում ընդգծվում էր, որ 1915–1923 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում 1,5 մլն. հայերի կոտորածը հանդիսանում է ցեղասպանության օրինակ, որի դեմ դժբախտաբար ջանքեր են գործադրվում, որպեսզի այդ փաստը չօգտագործվի իբրև տվյալ հանցագործության պատմական օրինակ: Կիպրոսի ներկայացուցիչը ակնհայտորեն ակնարկում էր ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության իբրև տվյալ հանցագործության պատմական փաստի Հիշատակման պատճառով միջազգային ծանր հանցագործություն համարվող ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիան կատարելագործելու ուղղությամբ նախաձեռնված գործընթացի թուրքիայի կողմից տապալելու քայլերը: Կիպրոսի ներկայացուցիչն իր ելույթում նշեց նաև, որ եկել է ցեղասպանության հանցագործությունից տուժած ժողովրդի նկատմամբ արդարացի վարվելու և նրա արժանապատվությունը պաշտպանելու ժամանակը, որպեսզի բոլոր երկրները միասնաբար հանդես գան ցեղասպանության համար հանցագործ պետությանը պատասխանատվության կանչելու հարցում: Բանախոսն ընդգծում էր, որ, հաշվի առնելով ոչ վաղ անցյալի պատմությունը, առաջացել է Ցեղասպանության կոնվենցիայի գործնական կիրառության անհրաժեշտությունը<sup>441</sup>:

2001 թ. ապրիլի 25-ին ժնեում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 57-րդ նստաշրջանը միաձայն ընդունեց Հայաստանի նախաձեռնությամբ ներկայացված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի մասին բանաձևը, որի համաձայն, հանձնաժողովը, նկատի ունենալով այն տառապանքները, որոնք արդեն իսկ ցեղասպանությունը պատճառել է մարդկությանը և այն, որ դեռևս առկա է ցեղասպանության կրկնության վտանգը, մեկ անգամ ևս շեշտվում է այդ կոնվենցիայի մնայուն նշանակությունը և կիրառման կարևորությունը, ինչպես նաև որոշվում

<sup>440</sup> zakon2.rada.gov.ua/laws/show/995\_633

<sup>441</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 560.

է անդրադառնալ այդ հարցի քննարկմանը 2003 թ. կայանալիք 59-րդ նստաշրջանի ընթացքում:

2008 թ. մարտի 28-ին 58 պետությունների, այդ թվում Հայաստանի նախաձեռնությամբ ժնկում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն ընդունել է ևս մեկ բանաձև ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ, որը նպատակաուղղված էր քննարկելու ՄԱԿ-ի համակարգում ցեղասպանության վաղ կանխարգելման և նախազգուշացման ներդաշնակ մեխանիզմների մշակմանը:

Ամփոփելով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության քննարկումներն ու ընդունած զեկույցների պարբերությունները, ինչպես նաև անկախացումից հետո ՄԱԿ-ում այդ հիմնահարցի բարձրացման Հայաստանի ձեռնարկած քայլերը, կարող ենք արձանագրել, որ այդ հեղինակավոր կառույցում մեր երկրի նախաձեռնությունները այդքան էլ հետևողական ու նպատակային չեն եղել, բացակայում էր գործունեության ռազմավարությունը ոչ միայն այս, այլև Հայաստանի շահերի ու իրավունքների նարկայացման ու պաշտպանության մյուս հիմնախնդիրներում:

Կարծում ենք, որ Հայաստանն իբրև ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 53/43 բանաձևի նախաձեռնող երկիր պետք է հետևողական լինի տվյալ բանաձևի հատկապես այն կետերի կյանքի կոչման հարցում, որոնք վերաբերվում են Կոնվենցիայի դրույթների կատարման խոչընդոտներին և հատկապես դրանց հաղթահարման ուղիների մատնանշմանը:

Այս առումով Հայաստանը կարող է հրավիրել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ուշադրությունը այն փաստի վրա, որ իր հարևան Թուրքիան Հայոց ցեղասպանության ժխտողականության իր քաղաքականության մեջ՝ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում լուրջ խոչընդոտներ է առաջացնում ցեղասպանության կոնվենցիայի դրույթների կիրառման ճանապարհին՝ այդ հանցագործության կանխարգելման ու պատժելիության տեսակետից:

### 5.1.3. Եվրախորհրդարանում և Եվրախորհրդի

Խորհրդարանական վեհաժողովում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության քննարկումներն ու ընդունված բանաձևերը

Բնական է, որ 1970–80-ական թթ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության շուրջ

ծավալված քննարկումները և ընդունված զեկույցների պարբերություններում տրված գնահատականներն իրենց անդրադարձն ունեցան արդեն եվրոպական պաշտոնական կառույցներից մեկում՝ Եվրախորհրդարանում այդ հարցի շուրջ քննարկումների և ի վերջո «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունման վրա:

Դեռ 1981 թ. Եվրախորհրդարանի 20 անդամներ՝ Ժակել, Նիկոլաս և ուրիշներ առաջարկեցին բանաձև ընդունել հայերի դրության վերաբերյալ: Այդ բանաձևում խորհրդարանականները նշում էին, որ Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած ցեղասպանությունից հետո Հայ ժողովուրդը շարունակում է տարբեր բնույթի ճնշումների ենթարկվել մասնավորապես Թուրքական կառավարության կողմից, ուստի բանաձևի նախագծում պարունակվում էր պահանջ Թուրքական կառավարությանը՝ դադարեցնել մարդու իրավունքների խախտումներն իր պետության տարածքում<sup>442</sup>:

1983 թ. սեպտեմբերի 19-ին Սոցիալիստների խմբակցության անուկից Եվրախորհրդարան ներկայացվեց Պաոլա Դյուպորի (Ֆրանսիա) և Էռնեստ Գլինի (Բելգիա) «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը, որը 1984 թ. հունվարի 22-ին քննարկվեց Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերի հանձնաժողովի նիստում: Բանաձևում մասնավորապես նշվում էր, որ Եվրախորհրդարանը Եվրամիության նախարարների խորհրդից պահանջում է ճանաչել հայերի ցեղասպանությունը, հասնել այն բանին, որ ՄԱԿ-ը նույնպես ընդունի նույնանման բանաձև և ճնշում գործադրել Թուրքական կառավարության վրա 1915 թ. ցեղասպանության պատմական փաստն ընդունելու նպատակով, հասկացնելով վերջինիս, որ Թուրք-Հայկական խնդրի արդարացի ու հիմնավոր լուծումը հնարավոր է միայն քաղաքական երկխոսության միջոցով<sup>443</sup>:

Քննարկումների ժամանակ հանձնաժողովի որոշ անդամներ առաջարկեցին տվյալ հարցն ընդգրկել Թուրքիայի վերաբերյալ Եվրախորհրդարանին ներկայացվելիք ընդհանուր զեկույցագրի մեջ, սակայն Թուրքիային սատարող ԳՖՂ-ի պատգամավորների ջանքերով հանձնաժողովը հետաձգեց բանաձևի նախագծի քննարկումը մինչև 1984 թ. հունիսը՝ խորհրդարանական ընտրությունների ավարտը<sup>444</sup>:

<sup>442</sup> Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 816.

<sup>443</sup> Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչությունը, էջ 150:.

<sup>444</sup> Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմությունից, Եր., 2006, էջ 184:

1984 թ. Հոկտեմբերի 13-ին սոցիալիստական խմբակցության նախագահ Անրի Սաբին (Ֆրանսիա), Քաղաքական Հարցերի Հանձնաժողովի փոխնախագահ ժիզել Շարգատը, էռնեստ Գլինը, տիկին Ֆուլիեն և ուրիշներ կրկին Եվրախորհրդարանի քննարկամանն են ներկայացնում «Հայկական Հարցի քաղաքական կարգավորման մասին» բանաձևի նախագիծը, որը Հոկտեմբերի 23-ին Եվրախորհրդարանը կրկին փոխանցում է Քաղաքական Հարցերով Հանձնաժողովի քննարկմանը: Ի տարբերություն նախորդ նախագծի, սոցիալիստների նոր նախագծում ներկայացվում են բանաձևի ընդունման անհրաժեշտության ավելի ընդարձակ հիմնավորումներ: Փաստաթղթում արձանագրվում էր, որ Հայ ժողովուրդը զրկված է իր պատմական արմատներից, քանզի թուրքական կառավարությունը հրաժարվում է ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը: Նոր նախագիծը կրկնում էր նախորդի պահանջները, միայն ավելացվում էր, որ Եվրամիության անդամ-պետությունները նույնպես պետք է ճանաչեն Հայերի ցեղասպանությունը:

Իսկ պատգամավոր ժակեն առաջարկում էր նույնիսկ պատժամիջոց կիրառել թուրքիայի նկատմամբ՝ մասնավորապես Հետաձգել թուրքիային վերաբերող ֆինանսական արձանագրության Հաստատումը, որը նախատեսված էր Եվրամիության և թուրքիայի միջև ստորագրված ասոցիացիան պայմանագրով, քանի դեռ թուրքական կառավարությունը չի դադարեցնում Հայերի ցեղասպանության ժխտողականությունը և մարդու իրավունքների խախտումներն իր պետության տարածքում<sup>445</sup>:

Տիկին Դյուպորը բացի բանաձևի նախագիծ ներկայացնելուց 1984 թ. մայիսի 10-ին գրավոր Հարցում է անում Եվրամիության նախարարների խորհրդին, թե հնարավոր չէ արդյոք, որ նախարարների խորհրդի նախագահն առաջարկի Եվրամիության 10 անդամ երկրներին, քաղաքական համագործակցության ոգուց ելնելով, ճանաչել 1915 թ. Հայ ժողովրդի ցեղասպանությունը՝ համատեղ Հռչակագիր ընդունելու միջոցով: Եվրամիության արտաքին գործերի նախարարների խորհուրդը Հուլիսի 11-ին պատասխանում է Հարցմանը, որ 1915 և 1916 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները, որոնք բավական շատ մարդկային կորուստներ բերեցին Հայերին, անվիճարկելի են, և Եվրամիության 10 երկրները պաշտպանում են մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները. ինչպես նաև փոքրամասնությունների իրավունքները, սակայն Հաստատվում են ահաբեկչության գործողությունները՝ դատապարտելու Հարցում, անկախ այն պատճառներից, որոնք ընկած են դրանց հիմքում<sup>446</sup>: Դժվար չէ նկատել, որ Եվրամիության արտաքին գործերի նախարարների պատասխանը Հավասարակշռված դիվանագիտական փաստաթուղթ է, որում նախ փորձ է արվում անորոշ ձևակերպում տալ Հայոց ցեղասպանությանը, այն անվանելով «ողբերգական իրադարձություն», մյուս կողմից, այս պատասխանով Եվրամիությունը տվյալ Հարցով չարունակում էր իրենից կախվածության մեջ պահել ասոցիացիան գործընթացում գտնվող թուրքիային:

Սոցիալիստների խմբակցության անդամների նախորդ բանաձևերն ի մի բերելով, 1985 թ. Հունիսի 13-ին նույն խմբակցության Հուլյն պատգամավոր Կոլոկոտրոնիսը Հերթական առաջարկը ներկայացրեց Եվրախորհրդարանին: Ի տարբերություն նախորդների, այս նախագիծը վերնագրված էր «Հայկական Հարցի և ապրիլի 24-ը Հայերի ցեղասպանության օր Հռչակելու մասին»: Հուլյն պատգամավորն իր նախագծում առաջարկում էր Եվրամիության արտաքին գործերի նախարարների խորհրդին կոչ անել թուրքական կառավարությանը ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը և երկխոսություն սկսել Հայերի ներկայացուցիչների հետ: Բանաձևում միաժամանակ կոչ էր արվում Եվրամիության անդամ պետություններին ապրիլի 24-ը Հռչակել Հայոց ցեղասպանության օր և նույն առաջարկը բարձրացնել նաև ՄԱԿ-ում: Իր այս առաջարկը Կոլոկոտրոնիսը հիմնավորում էր նաև նրանով, որ Սորբոնում 1984 թ. ապրիլի 13-16-ը կայացած Հեղինակավոր միջազգային ոչ կառավարական կազմակերպությունը՝ Ժողովուրդների մշտական դատարանն իր նիստում, որոշում էր կայացրել այն մասին, որ ցեղասպանությունը վաղեմություն չունեցող միջազգային հանցագործություն է, ինչից ելնելով էլ ճանաչել ու դատապարտել է Հայերի ցեղասպանությունը: Բացի այդ էլ ճանաչել էր դատապարտել է Հայերի ցեղասպանությունը: Բացի այդ էլ ճանաչել էր «մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի գոհերի հիշատակի օր»<sup>447</sup>:

Եվրախորհրդարանը, 80-ական թվականների սկզբներին հեղիզված լինելով Հայկական Հարցի լուծման վերաբերյալ սոցիալիստ պատգամատվում են ահաբեկչության գործողությունները՝ դատապարտելու Հարցում, անկախ այն պատճառներից, որոնք ընկած են դրանց հիմքում<sup>446</sup>: Դժվար չէ նկատել, որ Եվրամիության արտաքին գործերի նախարարների պատասխանը Հավասարակշռված դիվանագիտական փաստաթուղթ է, որում նախ փորձ է արվում անորոշ ձևակերպում տալ Հայոց ցեղասպանությանը, այն անվանելով «ողբերգական իրադարձություն», մյուս կողմից, այս պատասխանով Եվրամիությունը տվյալ Հարցով չարունակում էր իրենից կախվածության մեջ պահել ասոցիացիան գործընթացում գտնվող թուրքիային:

Սոցիալիստների խմբակցության անդամների նախորդ բանաձևերն ի մի բերելով, 1985 թ. Հունիսի 13-ին նույն խմբակցության Հուլյն պատգամավոր Կոլոկոտրոնիսը Հերթական առաջարկը ներկայացրեց Եվրախորհրդարանին: Ի տարբերություն նախորդների, այս նախագիծը վերնագրված էր «Հայկական Հարցի և ապրիլի 24-ը Հայերի ցեղասպանության օր Հռչակելու մասին»: Հուլյն պատգամավորն իր նախագծում առաջարկում էր Եվրամիության արտաքին գործերի նախարարների խորհրդին կոչ անել թուրքական կառավարությանը ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը և երկխոսություն սկսել Հայերի ներկայացուցիչների հետ: Բանաձևում միաժամանակ կոչ էր արվում Եվրամիության անդամ պետություններին ապրիլի 24-ը Հռչակել Հայոց ցեղասպանության օր և նույն առաջարկը բարձրացնել նաև ՄԱԿ-ում: Իր այս առաջարկը Կոլոկոտրոնիսը հիմնավորում էր նաև նրանով, որ Սորբոնում 1984 թ. ապրիլի 13-16-ը կայացած Հեղինակավոր միջազգային ոչ կառավարական կազմակերպությունը՝ Ժողովուրդների մշտական դատարանն իր նիստում, որոշում էր կայացրել այն մասին, որ ցեղասպանությունը վաղեմություն չունեցող միջազգային հանցագործություն է, ինչից ելնելով էլ ճանաչել ու դատապարտել է Հայերի ցեղասպանությունը: Բացի այդ էլ ճանաչել էր դատապարտել է Հայերի ցեղասպանությունը: Բացի այդ էլ ճանաչել էր «մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի գոհերի հիշատակի օր»<sup>447</sup>:

Եվրախորհրդարանը, 80-ական թվականների սկզբներին հեղիզված լինելով Հայկական Հարցի լուծման վերաբերյալ սոցիալիստ պատգամատվում են ահաբեկչության գործողությունները՝ դատապարտելու Հարցում, անկախ այն պատճառներից, որոնք ընկած են դրանց հիմքում<sup>446</sup>: Դժվար չէ նկատել, որ Եվրամիության արտաքին գործերի նախարարների պատասխանը Հավասարակշռված դիվանագիտական փաստաթուղթ է, որում նախ փորձ է արվում անորոշ ձևակերպում տալ Հայոց ցեղասպանությանը, այն անվանելով «ողբերգական իրադարձություն», մյուս կողմից, այս պատասխանով Եվրամիությունը տվյալ Հարցով չարունակում էր իրենից կախվածության մեջ պահել ասոցիացիան գործընթացում գտնվող թուրքիային:

<sup>445</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 675-676.

<sup>446</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 677.  
<sup>447</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 678.

վորների առաջարկներով, ի վերջո ստիպված եղավ անդրադառնալ այդ հարցին:

Ուշադրության է արժանի Հայկական հարցի բանաձևի վերնագրում «քաղաքական լուծում» ձևակերպումը, ինչով փաստորեն ստորադասվում էր հարցի իրավական լուծման հնարավորությունը: Կարծես թե դե տավորյալ հարցը ուղղվել էր քաղաքական հանձնաժողովին, որպեսզի իրավական ուղղությունը ավելի խոր և կոնկրետ գործողություններ ենթադրող ուսումնասիրություններ չկատարվեն, որպեսզի Եվրախորհրդարանը հենց սկզբից շեղվի բուն նպատակից և բավարարվի լոկ Հայոց ցեղասպանության ճանաչմամբ և դատապարտմամբ, բացառելով հանցագործ պետության համար դրանից բխող հետևանքները: Սակայն ակնհայտ էր, որ Հայկական հարցի քաղաքական լուծումը չէր կարող բացառել դրա միջազգային իրավական լուծումը, հաշվի առնելով միջազգային իրավունքի ու քաղաքական գործընթացների փոխկապակցվածությունն ու փոխազդեցությունը:

1984 թ. հոկտեմբերի 23-ին Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովն այդ հարցով գումարեց առաջին նիստը, իսկ 1984 թ. նոյեմբերի 26-ին որոշվեց դրա վերաբերյալ հատուկ զեկուցում լսել: Դեկտեմբերի 20-ին հատուկ զեկուցող է նշանակվում էթնիկ փոքրամասնությունների հարցերով հայտնի մասնագետ ժակ Վանդեմյուլբրուքը (Բելգիա): Թուրքական դիվանագիտությունը ամեն ինչ արեց, որ տվյալ հարցով զեկուցող նշանակվի Քաղաքական հարցերով հանձնաժողովի թուրքամետ անդամներից որև մեկը, սակայն, երբ այդ փորձերը ձախողվեցին, արդեն ձգտում էր ոչ պաշտոնական շփման մեջ մտնել Վանդեմյուլբրուքի հետ<sup>448</sup>: Այդ փորձերը նույնպես տապալվեցին, զեկուլցի հեղինակը փաստաթուղթը կազմելու ընթացքում տեղեկություններ ստանալու և կողմերի դիրքորոշումներին ծանոթանալու նպատակով միայն պաշտոնական հանդիպումներ ունեցավ և՛ Հայերի, և՛ Թուրքերի հետ, փորձելով պահպանել անաչառությունը: Այդ իսկ պատճառով նա ենթարկվեց թուրքական պաշտոնատար անձանց և լրագրողների ուժեղ ճնշմանը: Նույնիսկ Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը հանդես եկավ սպառնալից հայտարարությամբ<sup>449</sup>:

Չնայած այդ ճնշումներին, այդուհանդերձ, Ժ. Վանդեմյուլբրուքը մեկ տարի անց՝ 1985 թ. դեկտեմբերին, ներկայացրեց իր զեկուլցը Եվրա-

խորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովին: Պետք է նշել, որ Վանդեմյուլբրուքը որոշակիորեն ընկել էր թուրքական տեսակետների ազդեցության տակ: Մասնավորապես Աբդուլ Համիդի կառավարումը նա ներկայացնում էր որպես հայերի համար «համեմատաբար հանգիստ» ժամանակաշրջան, շրջանցելով 1894–1896 թթ. Հայկական կոտորածները, որոնց արդյունքում բնաջնջվեց շուրջ 300.000 մարդ: 1909 թ. Ադանայի կոտորածը ներկայացվում էր իբրև հայ-թուրքական բախում, իսկ Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանը սահմանափակվում է 1915 թ., անտեսելով թուրքական հայաջինջ քաղաքականության շարունակությունը քեմալականների կողմից, մասնավորապես 1920 թ. Կիրիկիայի և 1922 թ. Ջմյուլուհիայի հայ բնակչության զանգվածային կոտորածները: Ջեկուլցի հեղինակը համառորեն չէր տեսնում տրամաբանական կապ և շարունակականություն թուրքական տարբեր վարչակարգերի կողմից հայերի նկատմամբ վարվող բնաջնջման ու հայրենագրման քաղաքականության մեջ:

Այդուհանդերձ, Վանդեմյուլբրուքը կարևոր տեսակետ է հայտնում, որ թուրքական իշխանությունների գործողությունները հայերի նկատմամբ ունեցել են կանխամտածված և պարբերական բնույթ, ինչը լիովին համապատասխանում է ցեղասպանության հանցագործության հանցակազմի հատկանիշներին և պատահական չէ, որ զեկուլցողը միանշանակ գալիս է այն եզրակացության, որ հայերի նկատմամբ կատարված գործողությունները համապատասխանում են ցեղասպանության հանցագործությանը՝ ըստ 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի<sup>450</sup>:

Ջեկուլցում հեղինակը, բնականաբար, չէր կարող անտեսել ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության նախորդած քննարկումները: Անդրադառնալով 30-րդ պարբերությանը, Վանդեմյուլբրուքն իր զեկուլցում նշում է, որ եթե անգամ Հայոց ցեղասպանության դրուլթը կրկին ներառվի 30-րդ պարբերությունում և զեկուլցը հավանության արժանանա ՄԱԿ-ի կողմից, ապա այդ ճանաչումը մեխանիկորեն չի հանգեցնի Թուրքիայի դատապարտմանը: Խնդիրն, ըստ հեղինակի, կայանում էր նրանում, որ չկա հեղինակավոր մի կառույց, որն առկա միջազգային իրավունքի պայմաններում կարողանար պետության նկատմամբ «քրեական գործ» հարուցել հանցավոր գործողությունների համար, առանց այն պետության համաձայնության, որին դա վերաբերվում է<sup>451</sup>: Այս առումով հարկ ենք

<sup>448</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 561.

<sup>449</sup> Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 184:

<sup>450</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 691–692.

<sup>451</sup> Նույն տեղում, с. 695.

Համարում նշել, որ Վանդեմյուլբրուքն իր եզրակացությունները ՄԱԿ-ի Ենթահանձնաժողովի զեկուլցյների վերաբերյալ կատարում է Հնացած տվյալների Հիման վրա, քանի որ իր ներկայացրած զեկուլցից ամիսներ առաջ՝ 1985 թ. օգոստոսի 29-ին Ենթահանձնաժողովն արդեն ընդունել էր Բ. Ուայթբերի զեկուլցը 24-րդ պարբերությամբ, որում Հայոց ցեղասպանությունը Հիշատակվում էր որպես այդ Հանցագործության պատմական օրինակ և կարծում ենք, որ Վանդեմյուլբրուքը չէր կարող այդ մասին չիմանալ: Բացի այդ, զեկուլցողի դատողությունները վիճելի են նաև բովանդակային իմաստով: Կան բազմաթիվ նախադեպեր, երբ առանց պետությունների Համաձայնության միջազգային Հանրությունը, մարդասիրական միջամտություններ իրականացնելով, միջամտել է սուվերեն պետությունների ներքին գործերին կամ արդարադատություն է իրականացրել իրավախախտ պետությունների նկատմամբ: Այս տեսակետից կարևոր նախադեպ էին Նյուրնբերգի ու Տոկիոյի միջազգային տրիբունալների գործունեությունը, երբ անկախ Գերմանիայի ու Ճապոնիայի Համաձայնությունից դատապարտվեցին գերմանացի ու ճապոնացի պատերազմական Հանցագործները: Բացի միջազգային իրավական պատասխանատվության մեխանիզմներից Երկրորդ աշխարհամարտում Հաղթանակած Հակահիտլերյան կոալիցիայի երկրները նաև քաղաքական պատասխանատվության ենթարկեցին այդ երկրներին, որոնց գործունեությունը Հանգեցրել էր բազում պատերազմական Հանցագործություններին և մարդկայնության դեմ ուղղված Հանցագործություններին: Դա դրսևորվեց ոչ միայն Հանցավոր վաչակարգերի տապալման, այլև Հանցավոր պետությունների որոշ տարածքների օտարման ձևերով:

Ձեկուլցողի կողմից քննարկվում է նաև այն Հարցը, որ ցեղասպանության մասին կոնվենցիայում նշված Ֆիզիկական անձանց պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության պարագայում կորցնում է իր իմաստը, քանզի պատասխանատուներն այլևս գոյություն չունեն, իսկ եթե անգամ նրանք ողջ լինեին թուրքական կողմը կարող էր օգտվել "non bis in idem" (նույն Հանցանքի Համար երկրորդ անգամ չեն դատում) սկզբունքից, մատնանշելով, որ թուրքական դատարանները թուրքական օրենքների Հիման վրա արդեն իսկ պատասխանատվության են ենթարկել մեղավորներին<sup>452</sup>: Ինչ վերաբերում է երիտթուրքերի դատավարությանը, ապա թուրքական ռազմական տրիբունալը երիտթուրք պարազուխներին մեղավոր ճանաչեց առաջին աստիճանի սպանութ-

յուններ կատարելու, սահմանադրության մեջ ամրագրված կառավարման ձևն ու էությունը փոխելու, իշխանությունը բռնազավթելու մեջ և դրա Հիման վրա նրանց նկատմամբ Հեռակա կարգով մահվան դատապարտության քրեական օրենսգրքում, բնականաբար, չկար ցեղասպանության Համար նախատեսված առանձին Հոդված, ուստի մեղավոր անձինք մահվան դատապարտվեցին Հայերի նկատմամբ զանգվածաբար «առաջին աստիճանի սպանություններ» կատարելու մեղադրանքով, ուստի տեսականորեն երիտթուրքերին Հնարավոր կլինեի ցեղասպանության նոր մեղադրանքով պատասխանատվության ենթարկել, եթե նրանք դեռևս ողջ լինեին:

Բացի դրանից, զեկուլցում նշվում է, որ ըստ կոնվենցիայի, Հատուցման սկզբունքը չի տարածվում ցեղասպանության մեջ մեղադրվող ֆիզիկական անձանց վրա, այն դեպքերում, երբ նրանք գործել են պետության անունից: Այդ դեպքում, ըստ զեկուլցողի, պատասխանատվություն ընկնում է պետության վրա: Ըստ այդմ, պետությունը, որն իրեն գոհ է Համարում, իրավունք ունի Հատուցում պահանջել այն պետությունից, որը կատարել է այդ Հանցագործությունը, տվյալ դեպքում՝ Թուրքիայից: Հայ ժողովուրդը եղել է գոհ, բայց չի Հանդիսացել միջազգային իրավունքի սուբյեկտ, ուստի չի կարող ներկայացնել Հատուցման պահանջ, բացի այն դեպքերից կամ պարտավորություններից, որոնք թուրքական կողմը քննարկվող ժամանակաշրջանում պետք է կատարեր իր Հայ Հպատակների նկատմամբ<sup>454</sup>: Այս վերջին դրույթն արդեն իսկ Հնացած է, քանզի Հայ ժողովուրդն արդեն վերականգնել է իր անկախ պետականությունը, և Հայաստանն իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ կարող է ներկայացնել ու պաշտպանել Հայության իրավունքները՝ այդ թվում նաև Հատուցման Հարցի Հետ կապված:

Ձեկուլցողն, այդուհանդերձ, ցեղասպանության Հանցագործության Հետ կապած պետության պատասխանատվության Հարցում լուրջ Հեռանկարներ չի տեսնում, պատճառաբանելով միջազգային իրավունքի դեռևս ցածր զարգացման աստիճանը: Վանդեմյուլբրուքը, սակայն, չէր կարող չիմանալ, որ ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի Հանձնաժողովում տասնամյակներ շարունակ այդ ուղղությամբ լուրջ քննարկումներ են

<sup>452</sup> Генциал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 695.

<sup>453</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 126:

<sup>454</sup> Генциал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 695.

ընթացել, նախագծեր են կազմվել ու ներկայացվել նաև Գլխավոր Ասամբլեային, սակայն նա այդ մասին ոչինչ չի հիշատակում: Այս ամենը վկայում է այն մասին, որ զեկուցողը ընդամենը փորձում էր ներկայացնել փոխզինումային մի նախագիծ, որի նպատակն էր բավարարվել լոկ Հանցագործության փաստն արձանագրելով, բացառելով դրա համար մեղավոր կողմի համար որևէ լուրջ հետևանքները: Թուրքիայի նկատմամբ զգուշավոր մոտեցումը թերևս պայմանավորված էր ոչ միայն Եվրախորհրդարանի որոշ երկրների համար ՆԱՏՕ-ի շրջանակներում գործընկեր Հանդիսացող երկրին ծանր վիճակի մեջ չզգցելու ցանկությունը, այլ նաև այն մտահոգությունը, որ պետության պատասխանատվության դրույթների ամրագրման դեպքում բանաձևն առհասարակ կարող էր չընդունվել ու տապալվել հենց Քաղաքական Հարցերի Հանձնաժողովում, չհասնելով Եվրախորհրդարանի քննարկմանը:

Զեկուցողը փորձում է Հայկական Հարցի քաղաքական լուծումը Հանգեցնել բացառապես Թուրքիայի կողմից տարբեր միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանը, այլ ոչ թե կատարված միջազգային ծանր Հանցագործության համար պատասխանատվության կրելուն: Զեկուցումը նշվում է, որ Թուրքիան ստորագրել է փոքրամասնությունների մշակութային իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի կոնվենցիան, վավերացրել է «Մշակութային հուշարձանների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան, որով նախատեսվում է փոքրամասնությունների մշակութային հուշարձանների պահպանությունը, վերանորոգումն ու պաշտպանությունը: Զեկուցման մեջ արձանագրվում է, որ Հայկական համայնքը բազմիցս բարձրացրել է Հայկական հուշարձանների Հայոց պատրիարքարանին վերադարձնելու հարցը, սակայն ապարդյուն: Մինչդեռ կարելի էր, Հայոց պատրիարքարանին փոխանցելով հուշարձանները, նրա վրա դնել նաև դրանց պահպանությունը, ինչը պետք է կատարվի ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցությամբ<sup>455</sup>: Այս Հանգամանքի արձանագրումը զեկուցումը վկայում է այն մասին, որ Թուրքական իշխանությունների կողմից Հայկական հուշարձանների պահպանության և խնամքի ջանքերը գնահատվում են անբավարար:

Զեկուցման հեղինակը եզրակացնում է, որ Հայկական Հարցը չի կարող ունենալ միջազգային իրավական հետևանքները, այլ կարող են ներկայացվել միայն բարոյական պահանջներ: Ելնելով այս եզրակա-

<sup>455</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 696.

ցությունից նշվում է, որ Եվրոմիություն 12 անդամ-երկրները պետք է ՄԱԿ-ում միասնական դիրքորոշմամբ հանդես գան և հասնեն նրան, որ Մարդու իրավունքների Հանձնաժողովը հայերի ցեղասպանության հարցը ներառի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիայի» կատարելագործմանն ուղղված իր զեկուցումը, քանզի այդ Հանձնաժողովը հարմար հարթակ է, որպեսզի անցած իրադարձություններից 70 տարի անց հնարավոր լինի հասնել Հայկական Հարցի քաղաքական լուծմանը:

Այս եզրակացությամբ անթաքույց ձգտում էր նկատվում Հարցի լուծումը ուղղակիորեն թողնել ՄԱԿ-ի Մարդու իրավունքի Հանձնաժողովի հայեցողությանը, խուսափելով սեփական իրավական դիրքորոշումը հստակ արտահայտելուց:

Սակայն նույնիսկ այս փոխզինումային տարբերակով Եվրախորհրդարանի Քաղաքական Հարցերով Հանձնաժողովի անդամների մի մասը չհամաձայնվեց զեկուցողի արտահայտած որոշ տեսակետների հետ: «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» զեկուցումը Քաղաքական Հարցերով Հանձնաժողովը քննարկեց 1986 թ. հունվարի 22-ի նիստերում, իսկ 1986 թ. փետրվարին Հարցի քննարկումը հետաձգվեց Հանձնաժողովի անդամների կողմից տեքստում բազմաթիվ ուղղումներ մտցնելու պատրվակով, ընդ որում, 32 ուղղումներից 21-ը Թուրքամետ բնույթի էին և ներկայացվել էին ԳՖՂ-ի և Դանիայի պատգամավորների կողմից<sup>456</sup>:

Օրինակ, անընդունելի էր համարվում Եվրոմիության արտաքին գործերի նախարարների խորհրդից 1915 թ. պատմական իրադարձությունները որպես Հայ ժողովրդի ցեղասպանություն ճանաչելու պահանջը: Թուրքիային սատարող երկրները ներկայացնող Հանձնաժողովի անդամներն ափսոսանք հայտնելով Հայ ժողովրդի հետ պատահած «ողբերգության» ու «անարդարության» կապակցությամբ, այնուամենայնիվ, գտնում էին, որ կատարված իրադարձությունները չեն համապատասխանում «ցեղասպանություն» տերմինին<sup>457</sup>: Հանձնաժողովի որոշ անդամներ նաև գտնում էին, որ Եվրախորհրդարանի հայտարարությունը կլինի հայտարարություն պատմական Հարցերի հետ կապված, ինչը տվյալ մարմնի իրավասությունների մեջ չի մտնում, ու քանի որ Եվրախորհրդարանը չի տիրապետում այդ հարցի հետ կապված պատմական

<sup>456</sup> Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 185:

<sup>457</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 697.



Հետազոտութիւններին փաստերին, ուստի աննպատակահարմար է նման հայտարարութեամբ հանդես գալը:

Հանձնաժողովի որոշ անդամներ տեսակետ էին հայտնում, որ զեկուցողը թերացել է այն հարցում, որ կանգ է առել միայն Թուրքիայի վրա, մինչդեռ բացի Թուրքիայից հայերի կյանքն առավել ուշադրութեան է արժանի այնպիսի երկրներում, ինչպիսիք են Իրանը, որտեղ հայոց լեզուն և հայկական հանրակրթական դպրոցները ճնշումների են ենթարկվում, այնպիսի, հանձնաժողովների անդամները գտնում էին, որ հայերը Խորհրդային Միութիւնում պետք է պահպանեին իրենց ինքնատիպութիւնը, սակայն նրանք շարունակում են տուժել անհատների իրավունքների ու ազատութիւնների խախտումներից և այլն<sup>458</sup>: Այս վերջին դիտարկումներում, անշուշտ, կային օբյեկտիվ տարրեր, սակայն ակնհայտ էր, որ տվյալ դիտողութիւնները նպատակ էին հետապնդում ոչ թե պաշտպանել հայերի իրավունքներն ու շահերը Իրանում կամ ԽՍՀՄ-ում, այլ ակնհայտորեն շեղում էին ուշադրութիւնը բուն խնդրից՝ հայերի ծանր դրութիւնից Թուրքիայում, ինչը Հայկական հարցի լուծված չլինելու ուղղակի հետևանք էր: Ցանկութեան դեպքում Եվրախորհրդարանը կարող էր առանձին բանաձև ընդունել հայերի դրութեան ու նրանց իրավունքների պաշտպանութեան մասին Իրանում, ԽՍՀՄ-ում և այլ երկրներում: Այս լրացումներով միանշանակ փորձ էր կատարվում մեղմել Թուրքիային ուղղված մեղադրանքները, ցույց տալով, որ հայերի իրավունքները ոտնահարվում են նաև այլ երկրներում, ինչը պետք է որոշ առումով թուլացներ Թուրքիայի նկատմամբ կոշտ դիրքորոշումը:

Օբյեկտիվ առաջարկների ու դիտողութիւնների շարքում պետք է նշել այն, որ հղում էր կատարվում Լոզանի պայմանագրով ոչ մահմեդական փոքրամասնութիւնների ինքնութեան պահպանութեան հետ կապված Թուրքիայի ստանձնած պարտավորութիւնների վրա և դրա հիման վրա պնդվում էր, որ թուրքական իշխանութիւնները պետք է ավելի լավ պաշտպանեն հայկական կրօնական ճարտարապետական հուշարձանները: Հանձնաժողովն այս առումով նշում էր նաև, որ Եվրամիութեան և Թուրքիայի միջև կնքված ասոցիացման պայմանագրի դրույթներով նախատեսված է քրիստոնեական մշակութային հուշարձանների պահպանութիւնն ու վերականգնումը<sup>459</sup>: Քննարկումների արդ-

յունքում զեկուցողը ստիպված եղավ որոշ շտկումներ կատարել բանաձևի նախագծում, ինչն այն դարձրեց էլ ավելի անորոշ:

Այդ հարցին նվիրված հանձնաժողովի նիստեր տեղի ունեցան նաև մարտի 19-ին և հունիսի 26-ին: Զեկույցի ընդունման հակառակորդները ձգտում էին անգամ թույլ չտալ դրա քննարկումը, հիմնվելով արարողակարգային դրույթների վրա, սակայն նրանց բողոքները 1986 թ. նոյեմբերի 27-ին մերժվեցին Եվրախորհրդարանի ընդհայնված բյուրոյի որոշմամբ, իսկ 1987 թ. փետրվարի 25-ին զեկույցի նախագիծն ընդունվեց անվանական քվեարկութեամբ, կողմ՝ 25, դեմ՝ 23, ձեռնպահ՝ 2 ձայների հարաբերակցութեամբ: Քվեարկութեան արդյունքներից դժվար է հասկանալ, որ զեկույցն ընդունվել է բուռն և անզիջում պայքարի արդյունքում: 1987 թ. ապրիլի 15-ին Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովի անունից հատուկ զեկուցող Ժ. Վանդեմյուլ-բրուքը զեկույցի վերջնական տարբերակը և դրան կցված բանաձևի նախագիծը ներկայցնում է խորհրդարանին:

Պետք է նշել, որ Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերի հանձնաժողովի կողմից զեկուցողի ուսումնասիրութիւնում և դրան կցված բանաձևի նախագծի փոփոխութիւններից հետո վերջնական տեքստում ամրագրվել էին այնպիսի դրույթներ, որոնք զգալիորեն աղավաղում էին նախնական տարբերակը: Օրինակ, Եվրախորհրդարանին ներկայացված բանաձևի վերջնական տեքստում, նշվում էր, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրք պատասխանատու պաշտոնյաները դեպքերի կատարման պահին չեն ունեցել հայ բնակչութեանը բնաջնջելու մտադրութիւն, ինչը «գենոցիդ» եզրի կարևոր բաղադրիչներից է, ինչպես նաև պաշտոնական թուրքական հայտարարութիւններն առ այն, որ 1915 թ. դեպքերը ճանաչվում են իբրև մեծ ողբերգութիւն, որը տառապանքներ բերեց Օսմանյան կայսրութեան՝ տարբեր ազգութիւնների միլիոնավոր մարդկանց և նկատի ունենալով, որ դեպքերի որակումը իբրև ցեղասպանութիւն չի կարող ունենալ իրավական հետևանքներ, Եվրախորհրդարանը

1. ցավում է այն անարդարութիւնների համար, որոնք կատարվել են հայ ժողովրդի նկատմամբ 1915 թ.;

<sup>458</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 698.

<sup>459</sup> Նույն տեղում:

\* Քաղաքական հարցերով հանձնաժողովի կողմից Եվրախորհրդարանին ներկայացրած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի նախագիծ տեքստում բացի Օսմանյան կայսրութիւնից հատուկ նշվում էր «և Արևելյան Անատոլիայի», ինչը նույնպես վկայում է փաստաթղթի բուրբամետ բնույթի մասին:

2. գիտակցելով անցյալի այդ տառապանքները, պաշտպանում է Հայերի ցանկությունը զարգացնել իրենց ինքնատիպությունը, ինչը պետք է կատարվի թուրքական սահմանադրության համաձայն՝ առանց մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակումների և ապահովելով փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը<sup>460</sup>: Այսպիսով, Քաղաքական Հարցերի Հանձնաժողովը բանաձևի իր նախագծում Հայերի նկատմամբ կատարված հանցագործությունը չէր տալիս պատշաճ ձևակերպում, ընդամենը կրկնվում էին թուրքական ժխտողականության վարկածի դրուժները՝ «մեծ ողբերգություն», «անարդարություններ», «գժբախտություններ» և այլն:

Անշուշտ, այս զարգացումներին հետևում էր նաև եվրոպական հասարակայնությունը, ինչպես նաև Փրանսահայ Համայնքը, որը փորձեց ներագրել «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունման վրա: 1987 թ. Հունիսին «Ֆրանս-Հայկական Համերաշխություն» հասարակական կազմակերպությունը Եվրախորհրդարանի պատգամավորներին կոչ էր անում որպես ցեղասպանություն որակել բնաջնջման այն ծրագիրը, որն իրականացվել էր Հայերի նկատմամբ<sup>461</sup>: Կոչի տակ ստորագրել էին մեծ հեղինակություն վայելող այնպիսի դեմքեր, ինչպիսիք են՝ գրողներ Ֆրանսուազ Սագանը, էժեն Իոնեսկուն և Անրի Թրուայան, երգիչ Շարլ Ազնավուրը, պատմաբան Իվ Տերնոնը, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Անդրեյ Լվոֆն ու Լուի Նոելը և շատ ուրիշներ:

Բանաձևն ի վերջո մտցվեց Եվրախորհրդարանի 1987 թ. Հունիսի 15–19-ը ընթացած նիստի օրակարգ: Նիստի ընթացքում «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունման օգտին համատեղ առաջարկությամբ հանդես եկան Համայնավարական և սոցիալիստական խմբակցությունները, ինչի արդյունքում 1987 թ. Հունիսի 18-ին 68 - «կողմ» և 60 - «դեմ» ձայների հարաբերակցությամբ Եվրախորհրդարանն ընդունեց «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը: Ձայների այս հարաբերակցությունը նույնպես վկայում է, որ փաստաթղթերը ընդունվել է լուրջ հակազդեցության պայմաններում:

Հատկանշական է, որ հենց բանաձևի նախաբանի դրուժներում, որոնցով հիմնավորվում են փաստաթղթի ընդունման շարժառիթներն ու անհրաժեշտությունը, նկատվում են հակասություններ: Մի կողմից նա-

խաբանում նշվում է, որ պատմականորեն ապացուցված Հայերի ցեղասպանությունը մինչև տվյալ պահը չի ենթարկվել ոչ քաղաքական դատապարտման և ոչ էլ ստացել է համապատասխան հատուցում, սակայն մյուս կողմից, իբրև Հարցի լուծման տարբերակ Հայոց ցեղասպանության ճանաչումը դիտարկվում է իբրև Հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակտ, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը: Այսինքն, բանաձևում Հայկական Հարցի հանգուցալուծումը անգամ քաղաքական լուծման համատեքստում սահմանափակվում էր միայն բարոյականության շրջանակներում, ինչը քաղաքականության մեջ բավական հայեցողական հասկացություն է, քանզի ամեն երկիր քաղաքական գործընթացներում առաջնորդվում է բարոյականության սեփական չափանիշներով:

Կարևոր էր, որ բանաձևի նախաբանում անուղղակիորեն ակնարկվում էր հանցագործության շարունակականության հանգամանքը, ընդգծելով, որ «թուրքական կառավարությունը, մերժելով մինչ օրս ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը, շարունակում է այդպիսով զրկել Հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից»: Հայկական խմբավորումների ահաբեկչությունները դատապարելով հանդերձ, նախաբանում հատուկ նշվում է, որ Հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից դա նույնպես չի ընդունվում, բայց դրա պատճառը Եվրախորհրդարանը տեսնում է «իրար Հանդիման թուրքական կառավարությունների անհաշտ դիրքորոշման մեջ Հայկական Հարցի նկատմամբ, որը ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը»<sup>462</sup>:

Ի տարբերություն Քաղաքական Հարցերի Հանձնաժողովի բանաձևի նախագծի, Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձևի 2-րդ հոդվածով արձանագրվում է, որ «Օսմանյան կայսրության մեջ Հայ բնակչության հանդեպ 1915–1917 թվականներին գործադրված ողբերգական իրադարձությունները համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի, հանդիսանում են ցեղասպանություն»<sup>463</sup>: Դրանից ելնելով, երրորդ հոդվածով պահանջվում էր Եվրախորհրդից ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915–1917 թթ.

<sup>460</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 674–675.

<sup>461</sup> Կիրակոսյան Ա., Գլխ. աշխ., էջ 185:

<sup>462</sup> European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, [http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc\\_meeting/resolutions/1987\\_07\\_20.pdf](http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf)

<sup>463</sup> Տե՛ս նույն տեղում:

Հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսություն հաստատմանը Թուրքիայի և Հայերի լիազոր պատվիրակների միջև: Այս կետը փաստորեն ամբողջությամբ կրկնում է հուլյն սոցիալիստ պատգամավոր Կոլոկոտրոնիսի բանաձևի նախադժի դրույթը: Սակայն, միևնույն ժամանակ նշվում էր, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և պատմական իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն չի կարող առիթ հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի ներկայացման համար այսօրվա Թուրքիային<sup>464</sup>: Անհաշտ պայքարի արդյունքում ձևակերպված փոխզիջումային այս դրույթը Թերևս միտված էր Հանգստացնելու Թուրքերին, որ Հայերի ցեղասպանության ճանաչումը իրենց համար ունենալու է միայն բարոյական հետևանքներ, սակայն ինչպես հետագայում պարզվեց, անգամ այս ձևակերպման հետ Թուրքերը չհամակեցվեցին, և սկսեցին բողոքել բանաձևի դեմ:

Չորրորդ հոդվածով արձանագրվում են Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելու հստակ նախապայմանները: Բացի Հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության ճանաչումից հրաժարումը, իբրև անդամակցության խոչընդոտներ թվարկվում են նաև Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարումը, Կիպրոսի Թուրքական օկուպացիոն զորքերի պահպանումը, ինչպես նաև քուրդ փոքրամասնության իրավունքների խախտումները, ժողովրդավարության բացակայությունը և կրոնական ազատությունների ոտնահարումը<sup>465</sup>:

Բանաձևի 6-րդ և 7-րդ կետերում Թուրքիայի առջև պահանջ էր դրվում այդ երկրում բնակվող Հայ փոքրամասնության ազգային ինքնություն, նրա լեզվի, կրոնի, մշակույթի և կրթական հաստատությունների նկատմամբ ցուցաբերել արդարացի վերաբերմունք, բացի այդ, պահանջվում էր միջոցներ ձեռնարկել պատմական հուշարձանների ու մասնավորապես Հայ կրոնական ճարտարապետական կառույցների պահպանման ու խնամքի ուղղությամբ: Վերջին դրույթի արձանագրումը հիմնավորվում էր նաև Եվրախորհրդի մշակութային հարցերով նախա-

րարների խորհրդակցության արդյունքում 1986 թ. նոյեմբերի 13-ին ընդունված որոշմամբ, որը վերաբերվում էր եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանմանը, ներառյալ Եվրամիության երկրների տարածքից դուրս գտնվող հուշարձանները<sup>466</sup>: Միաժամանակ հիշեցվում էր, որ Թուրքիայի Հանրապետությունը դեռ 1923 թվականին Լոզանի պայմանագրի 37–45-րդ հոդվածներով վերընշված հարցերի հետ կապված արդեն ստանձնել է որոշակի պարտավորություններ: Տվյալ պարագայում Լոզանի պայմանագրի ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում Հայերի, իրավունքների պաշտպանությանը վերաբերող հոդվածների հիշեցումը պետք է դիտարկել իբրև այդ պայմանագրի կողմ հանդիսացող Թուրքիայի ստանձնած պարտավորությունների չկատարման փաստի արձանագրում այն երկրների կողմից, որոնք նույնպես հանդիսանում են Լոզանի պայմանագիրը ստորագրած կողմ: Բանաձևում այս դրույթի ամրագրմամբ Լոզանի պայմանագիրը ստորագրած մյուս երկրները փաստորեն օգտվում էին տվյալ պայմանագրի կողմ հանդիսացող Թուրքիային վերջինիս ստանձնած պարտավորությունների հիշեցնելու և դրանց կատարման վրա պնդելու իրենց իրավունքից:

Բանաձև 10-րդ և 11-րդ կետերում, այնուամենայնիվ, անդրադարձ կատարվեց Իրանում և ԽՍՀՄ-ում Հայերի իրավունքների պաշտպանության հարցերին, ինչը պետք է համարել որոշակի շեղում բանաձևի բուն նպատակից:

Չափազանց կարևոր էր 13-րդ կետը, որով կոչ է արվում Եվրամիության անդամ-երկրներին սահմանելու «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների զոհերի հիշատակի օր», մասնավորապես այն ոճրագործությունների, որոնց զոհ զնացին Հայերն ու հրեաները<sup>467</sup>: Այս դրույթով, փաստորեն, իբրև ցեղասպանություն և մարդկության դեմ կատարված հանցագործություն մասնավորեցվում ու նույնականացվում են հաջորդաբար Հայերի ու հրեաների նկատմամբ կատարված զանգվածային սպանությունները:

Վերջապես բանաձևի 14-րդ հոդվածը նախատեսում էր սույն փաստաթղթի պաշտոնական փոխանցումը Եվրախորհրդին, Եվրամիության

<sup>466</sup> Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից. էջ 10:

<sup>467</sup> European Parliament Resolution on a political solution to the Armenian question. Doc. A2-33/87, [http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc\\_meeting/resolutions/1987\\_07\\_20.pdf](http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf)

<sup>464</sup> European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, [http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc\\_meeting/resolutions/1987\\_07\\_20.pdf](http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf)

<sup>465</sup> Տե՛ս նույն տեղում:

անդամ-պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդին, «Եվրամիություն-Թուրքիա» համագործակցության խորհրդին, Թուրքիայի, Իրանի և ԽՍՀՄ կառավարություններին, ինչպես նաև ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին<sup>468</sup>։

Գնահատելով Եվրախորհրդարանի ընդունած «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը, պետք է նշել, որ ընդունված փաստաթղթի տեքստից հնարավոր եղավ դուրս թողնել ակնհայտ թուրքամետ որոշ ձևակերպումներ, որոնք աղավաղում էին խնդրո առարկան։ Չնայած այն հանգամանքին, որ ընդունված բանաձևում նույնպես առկա են որոշ հակասական ձևակերպումներ, այդուհանդերձ, այն միջպետական միջազգային կառույցի կողմից առաջին պաշտոնական փաստաթուղթն էր, որով Առաջին աշխարհամարտի տարիների Օսմանյան կայսրությունում Հայերի զանգվածային կոտորածները, ըստ 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի սահմանման, ճանաչվում էին որպես ցեղասպանություն։

Բանաձևի ընդունումից անմիջապես հետո թուրքական կառավարությունը պաշտոնական հայտարարություն ընդունեց, որը տարածվեց Եվրամիությանն առընթեր թուրքական մշտական պատվիրակության կողմից, որում բանաձևը բնութագրվում էր իբրև «կողմնակալ» ու «առասիտական» փաստաթուղթ, որը չի ընդունվում թուրքական կառավարության կողմից<sup>469</sup>։ Թուրքական պաշտոնական արձագանքին հետևեց նաև «ոչ պաշտոնականը»։ 1987 թ. օգոստոսի 10-ին ամերիկյան «Թայմ» շաբաթաթերթում հրատարակվեց թուրքական 13 կազմակերպությունների «Ուղերձը Եվրախորհրդարանի անդամներին», որում կրկնվում էին ցեղասպանության ժխտողականության թուրքական պետական մոտեցումները, ինչի հիման վրա կարելի է պնդել, որ թուրքական կազմակերպությունների «ուղերձը» ընդամենը պաշտոնական պատասխանի հավելվածն էր և պատվիրված էր նույն պետական մարմինների կողմից։ Ամբողջ աշխարհը կրկին ականատես եղավ, որ թուրքական կողմը Հայկական Հարցի անգամ նման կիսալուծում առաջարկող բանաձևը համարում է իր համար վտանգավոր ու անընդունելի։

Հայաստանի անկախության հռչակումից հետո էլ Հայոց ցեղասպանության Հարցը շարունակեց մնալ Եվրախորհրդարանի օրակարգում։ Սակայն պետք է նշել, որ տվյալ Հարցը եվրոպական այս կառույցի կողմից ընդամենն օգտագործվում էր Թուրքիայի դեմ, այն իմաստով, որ

այն մեկ ներառվում էր Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելու նախապայմանների շարքում, մեկ անհետանում։

Այսպես, 1998 թ. հունիսի 16-ին Եվրախորհրդարանի լիագումար նիստում Ֆրանսիացի և հույն պատգամավորներն առաջարկել են օրակարգ մտցնել Հայերի ցեղասպանության ճանաչման Հարցը, սակայն ձայների մեծամասնությունը չապահովելու պատճառով առաջարկը չընդունվեց։ 2000 թ. նոյեմբերի 15-ին Եվրախորհրդարանը, լսելով «Թուրքիայի առաջընթացը Եվրամիության անդամակցության ճանապարհին» խորագրով զեկույցը, 234 «կողմ» և 213 «դեմ» ձայների Հարաբերակցությամբ ընդունել է հռչակագիր, որի 10-րդ հոդվածով Եվրախորհրդարանը կոչ է անում Թուրքիայի կառավարությանը, Ազգային մեծ ժողովին լրացուցիչ ջանքեր գործադրել Հայ փոքրամասնության, իբրև թուրքական Հասարակության մի մասնիկի, իրավունքները պաշտպանելու ուղղությամբ, մասնավորապես ցեղասպանության հրապարակային ճանաչման միջոցով, ինչին ենթարկվել է այդ փոքրամասնությունը նախքան ժամանակակից թուրքական պետության առաջացումը։ Հռչակագրում թվարկված են Եվրամիությանը Թուրքիայի անդամակցություն հետ կապված վերջինիս առջև դրված նախապայմանները, որոնց թվում՝ 20-րդ կետում նշված է նաև բոլոր Հարևանների հետ Հարաբերությունների կարգավորման Հարցը, իսկ 21-րդ կետով հատուկ ամրագրված է Հայաստանի հետ երկխոսություն սկսելու հանգամանքը, որն ուղղված է լինելու բնականոն դիվանագիտական և առևտրային Հարաբերությունների հաստատմանը և առկա շրջափակման վերացմանը<sup>470</sup>։ Սակայն, 2001 թ. հոկտեմբերի 25-ին Եվրախորհրդարանը ձայների 149 «կողմ», 275 «դեմ» Հարաբերությամբ կրկին մերժում է Հայոց ցեղասպանության Թուրքիայի կողմից ճանաչումն իբրև այդ երկրի Եվրամիությանն անդամակցելու նախապայման դիտելու դրույթը։

2002 թ. փետրվարի 28-ին, լսելով «Կանաչների» խմբակցության շվեյցարացի պատգամավոր Պիեր Գարտոնի պատրաստած «Կովկասյան զեկուցագիրը» և, լինելով Հարավային Կովկասի ու Եվրամիության Հարաբերություններից, «Գործընկերության ու համագործակցության պայմանագրի» դրույթներից, Եվրախորհրդարանն ընդունում է բանաձև, որով կրկին վերահաստատվում է 1915 թ. Հայերի ցեղասպանությունը ճանաչող 1987 թ. հունիսի 18-ի բանաձևը և կոչ է արվում Թուրքիային

<sup>468</sup> Նույն տեղում։

<sup>469</sup> Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 187։

<sup>470</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 816.

քայլեր ձեռնարկել հաշտության հասնելու համար<sup>471</sup>: Խորհրդարանը միաժամանակ քննարկել է լիբերալ-ժողովրդավարական խմբակցության անդամ, բրիտանացի պատգամավոր Էնդրյու Դաֆի և Եվրամիություն-Թուրքիա հարաբերությունների նախկին համակարգող Ալան Լամասուրի «Հայոց ցեղասպանություն» ձեռագրի մասին շրջանցող թուրքամետ ալլընտրանքային նախագիծը, որը մերժվել է 96 «կողմ», 391 «դեմ», 15 «ձեռնպահ» ձայների հարաբերակցությամբ:

2006 թ. սեպտեմբերի 4-ին Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեն ձայների մեծամասնությամբ ընդունել է մի գեկուլյց, որով կոչ է արել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը կրկին դիտարկել որպես նախապայման՝ Եվրամիությանն անդամագրվելու համար:

Եվրոպական այս կառույցի նման զիզգազային քաղաքականութան որդեգրումը Հայոց ցեղասպանության հիմնահարցի նկատմամբ պայմանավորված է ոչ միայն այդ կառույցում ընտրություններից հետո ուժերի հարաբերակցության փոփոխություններով և Թուրքիայի հետ որոշ եվրոպական երկրների ունեցած տնտեսական շահերով, այլև որոշ առումով նաև մեր պատիվությամբ ու անհետևողականությամբ, քանզի տվյալ հարցի քննարկումները մեծ հաշվով ընթանում էին առանց անմիջական շահագրգիռ կողմի՝ Հայաստանի մասնակցության:

Այս իմաստով կարելի է արձանագրել, որ Հայաստանի անկախացումից և Եվրոխորհրդին անդամակցությունից հետո որոշ ակտիվացում սկսեց նկատվել մասնավորապես Եվրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հայոց ցեղասպանության հարցի արձարձման իմաստով: Այսպես, 1998 թ. ապրիլի 24-ին ԵՆՆՎ մի խումբ պատգամավորներ ընդունեցին հռչակագիր, որում նշվում էր, որ 1915 թ. ապրիլի 24-ը համարվում է Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման նպատակ հետապնդող ծրագրի իրականացման սկիզբը: Փաստաթղթում այնուհետև նշվում էր, որ հայերի զանգվածային սպանությունները համարվում են 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը և անհրաժեշտ է հարգել այն հայ նահատակների հիշատակը, ովքեր դարձան մարդկության դեմ կատարված այդ հանցագործության զոհերը<sup>472</sup>: Հռչակագրի տակ ստորագրել էին ինչպես Հայոց ցեղասպանությունը ճանաչած, այնպես էլ դեռևս չճանաչած 20 երկրներից 51 պատգամավորներ, որոնք վեհա-

ժողովում ներկայացնում էին Սոցիալիստների, Եվրոպական ժողովրդական կուսակցության, Դեմոկրատական և բարեփոխումների խմբակցությունները:

2001 թ. ապրիլի 24-ին ԵՆՆՎ պատգամավորներն ընդունեցին նոր հռչակագիր, որը նախկինից տարբերվում է նրանով, որ հիշեցում է կատարվում, որ տարբեր եվրոպական կառույցներ, Եվրոպայի խորհրդի կազմի մեջ մտնող երկրներ ընդունել են բանաձևեր, որոնցով ճանաչվել է հայերի ցեղասպանությունը, իսկ Ֆրանսիան նույնիսկ ընդունել է հատուկ օրենք: Հռչակագիրը ստորագրողները կոչ էին անում ԵՆՆՎ բոլոր անդամներին քայլեր ձեռնարկել Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կատարված 20-րդ դարի առաջին ցեղասպանության ճանաչման ուղղությամբ<sup>473</sup>: Հռչակագիրը ստորագրել էին արդեն 26 երկրներ ներկայացնող 62 պատգամավորներ: Անշուշտ դրական է, որ հռչակագրի ստորագրմանը մասնակցել էին նաև Հայաստանը ներկայացնող պատգամավորները, սակայն միայն մասնակցությունը պետք է համարել անբավարար, անհրաժեշտ է մշակել ու կիրառել գործողությունների անփական օրակարգը ինչպես այս, այնպես էլ եվրոպական մյուս կառույցներում: Հարկավոր է առաջնորդվել ոչ թե իրավիճակային, այլ իսկապես նախաձեռնողական դիվանագիտությամբ, քանզի այլ կերպ անհնար է շոշափելի հաջողություններ գրանցել ոչ միայն Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման, այլև համահայկական բնույթի նաև մյուս հարցերում:

Ամփոփելով Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության շուրջ միջազգային միջկառավարական կառույցներում ծավալված քննարկումները, ինչպես նաև Ազգերի լիգայի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում և Եվրախորհրդարանի կողմից այդ հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները, պետք է արձանագրենք, որ դրանք ընդունվել են մեր կողմից հախուռն, անկազմակերպ ու չհամակարգված պայքարի պայմաններում: Ներկայացված փաստաթղթերում առկա հակասական ու անորոշ ձևակերպումները պետք բացատրել նաև այս հանգամանքով: Ներկայումս, երբ արդեն ունենք անկախ պետություն, որը հանդիսանում է միջազգային իրավունքի սուբյեկտ, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ, մենք այլևս իրավունք չունենք մեզ չալլություն թույլ տալու և ինքնիշխան շարունակելու իրավիճակային դիվանագիտությունը ոչ միայն Հայոց ցեղասպա-

<sup>471</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 837.

<sup>472</sup> Նույն տեղում, с. 746.

<sup>473</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 830.

նության դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման, այլև համահայկական նշանակություն ունեցող բոլոր հարցերում: Այս իմաստով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում և Եվրախորհրդարանի Հայոց ցեղասպանության քննարկումներն ու ընդունված որոշումներն իբրև լավ նախադեպեր կարող են օգտագործվել հայկական դիվանագիտության կողմից՝ Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման հարցը այս, ինչպես նաև այլ միջազգային միջկառավարական կառույցներում բարձրացնելու և պաշտպանելու համար: Այդ նպատակով Հայաստանը և Սփյուռքի համապատասխան կառույցները միասնաբար պետք է մշակեն միջազգային միջկառավարական կազմակերպություններում համահայկական հիմնախնդիրների ներկայացման ու պաշտպանության հստակ օրակարգ, ինչը ենթադրում է կոնկրետ կառույցների հետ աշխատելու ռազմավարություն ու մարտավարություն և այդ կազմակերպությունների ընթացակարգային հնարավորությունների և դրանցում ուժերի հարաբերակցության լրակատար տիրապետում:

Հայոց ցեղասպանության դատապարտման և դրա հետևանքների հաղթահարման հարցերի բարձրացման ու պաշտպանության տեսակետից մասնավորապես անհրաժեշտ է հետևողական աշխատանքներ կատարել միջկառավարական հետևյալ կառույցներում և ենթակառույցներում՝

1. Միջազգային իրավունքի հանձնաժողովին ավելի քան կես դար աշխատում է միջազգային հանցագործությունների համար պետությունների պատասխանատվության նորմերի մշակման ուղղությամբ և նրա ջանքերով 1996 թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան արդեն իսկ ընդունվել է առաջին փաստաթուղթը՝ 56/83 բանաձևը, որում «միջազգային հանցագործության» փոխարեն կիրառվել է «միջազգային հակիրավական արարք» ձևակերպումը, փորձելով չբռնականացնել միջազգային իրավունքի նորմեր ստեղծող սուբյեկտներին՝ պետություններին: Հաշվի առնելով այս հանգամանքը, Հայաստանը և Սփյուռքն իրենց համապատասխան կառույցներով պետք ակտիվորեն աշխատեն ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի խորհրդի անդամ հանդիսացող միջազգային իրավունքի ականավոր մասնագետների հետ՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ապագայում ընդունվելիք բանաձևերում մեզ համար բարենպաստ ձևակերպումներ ամրագրելու առումով:

2. 2001 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1366 բանաձևի համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին կից ստեղծվել է Ցեղասպանության կանխարգելման հարցերով զբաղվող հատուկ խորհրդակա

զբառնյակ: Հատուկ խորհրդակալների իրավասությունների շրջանակների մեջ մտնում են հետևյալ գործառույթները՝

ա/ իրազեկության բարձրացում և ցեղասպանության կանխարգելման մասին գիտելիքների տարածում, ինչը ՄԱԿ-ին հնարավորություն կտա վերլուծել և վերահսկել ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվությունը, որպեսզի ՄԱԿ-ի համակարգը և միջազգային հանրությունը համատեղ գործեն ցեղասպանության կանխարգելման հարցում;

բ/ տեղեկությունների հավաքագրում էթնիկ, ռասայական բնույթի զանգվածային կոպիտ խախտումների վերաբերյալ, որոնք չկանխարգելելու դեպքում կարող են վերածվել ցեղասպանության: Բացի այդ, հատուկ խորհրդակալների զբառնյակը Գլխավոր քարտուղարի միջոցով Անվտանգության խորհրդին պետք է ներկայացնի նման իրավիճակներում գործողությունների մեխանիզմների ծրագրեր<sup>474</sup>:

Նման նեղ մասնագիտացված կառույցի գոյությունը ՄԱԿ-ում չափազանց կարևոր է ցեղասպանության ենթարկված ժողովրդի շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու համար, և Հայաստանը պետք է ակտիվորեն համագործակցի ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին կից Ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ խորհրդակալների զբառնյակի հետ, ներկայացնելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստական նյութեր, ընդգծելով, որ այդ օրինակը սովյալ հանցագործության մոդել է դարձել մյուս բոլոր դեպքերի համար և նաև այդ հանցագործության պատշաճ ձևով չդատապարտելն է, որ հանգեցնում է դրա կրկնություններին: Պետք է անընդհատ շեշտվի, որ Հայոց ցեղասպանության պատճառով հատուկ կանխարգելման գործընթացում, քանզի անհնար է կանխարգելել այն հանցագործությունը, որի առաջին օրինակը դեռևս մնում է անպատիժ:

3. ՄԱԿ-ի վերընշված ենթակառույցների հետ տարվող արդյունավետ աշխատանքը պետք է հասունացնել և հասնել նրան, որ Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման հարցը դառնա Գլխավոր Ասամբլեայի և Անվտանգության խորհրդի քննարկման առարկա և արդյունքում սովյալ հարցի նկատմամբ որդեգրվի հստակ դիրքորոշում:

4. Հայաստանի Հանրապետությունը և Սփյուռքի համապատասխան կառույցները մի կողմից եվրոպական կառույցների ուշադրությունը անընդհատ պետք է հրավիրեն Թուրքիայի կողմից Եվրախորհրդա-

<sup>474</sup> <http://www.un.org/en/preventgenocide/adviser/index.shtml>

րանի «Հայկական Հարցի քաղաքական լուծման» բանաձևի դրույթների չկատարման վրա և հասնեն նրան, որ Հայոց ցեղասպանության ճանաչման նախապայմանը ոչ թե ժամանակ առ ժամանակ, այլ մշտապես առաջադրվի Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելու նախապայմանների ցանկում: Մյուս կողմից Հետևողական ջանքեր պետք է գործադրվեն, որպեսզի վերանայվի նշված բանաձևի երրորդ հոդվածի այն ձևակերպումը, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի կարող վերջինիս համար ունենալ քաղաքական, իրավական կամ նյութական հետևանքներ, քանզի նման ձևով այդ մարմինը, հակասելով միջազգային իրավունքի նորմերին, ապօրինաբար հանցավոր պետությունը փաստորեն ազատում է պատասխանատվությունից այնպիսի ծանր միջազգային հանցագործության համար, ինչպիսին ցեղասպանությունն է: Այս գործում հարկավոր է օգտագործել նաև Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչած երկրների ներուժը:

## 5.2. Միջազգային ոչ կառավարական կազմակերպություններում Հայոց ցեղասպանության քննարկումներն ու ընդունված բանաձևերը

Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն իրենց թվաքանակով գերազանցում են միջազգային այն միջկառավարական կառույցներին, որոնք իրավական և քաղաքական գնահատական են տվել Հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում կատարված հանցագործությանը: Այս հանգամանքը թերևս բացատրվում է նրանով, որ միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն իրենց որոշումներում ավելի անկաշկանդ են և նրանց գնահատականները պայմանավորված չեն այս կամ այն երկրների շահերով ու միջպետական հարաբերություններով: Ու թեև ոչ կառավարական կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերը իրավական տեսակետից հայեցողական են ու ոչ պարտադիր, այդուհանդերձ, դրանք կարևոր նշանակություն ունեն հայանպաստ միջազգային հասարակական կարծիքի ձևավորման առումով և նույնպես նպաստում են Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացին: Միջազգային ոչ կառավարական կառույցներից Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել են այնպիսի կազմակերպություններ, ինչպի-

սիք են՝ Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսը (1965 թ.), Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը (1983, 1989 թ.), Ժողովուրդների մշտական տրիբունալը (1984 թ.), Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան (1997, 2005, 2007 թ.), Երիտասարդների քրիստոնեական ասոցիացիան (2002 թ.), Նոբելյան մրցանակակիրների կազմակերպությունը (2007 թ.) և այլն: Թվարկված կազմակերպություններից, առկայի, նպատակահարմար գտանք անդրադառնալ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, Ժողովուրդների մշտական տրիբունալի և Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի ընդունմանը, որոնք, մեր կարծիքով, առավել ազդեցիկ են Հայոց ցեղասպանությունը ճանաչած ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների շարքում:

### 5.2.1. Եկեղեցիների համաշխարհային խորհրդում Հայոց ցեղասպանության քննարկումներն ու ընդունված բանաձևերը

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը միավորում է աշխարհի բոլոր քրիստոնեական եկեղեցիները և նման հեղինակավոր միջազգային կազմակերպության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը չափազանց կարևոր քայլ էր Հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում:

Պետք է նշել, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը Հայոց ցեղասպանության վերաբերյալ ընդունել է երկու բանաձև: Առաջին անգամ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը «Հայոց ցեղասպանության մասին» զեկույցը քննարկել է 1983 թ. հուլիսի 24-ից օգոստոսի 10-ը կանադայի Վանկուվեր քաղաքում գումարված VI Ասամբլեայում: Քննարկումների արդյունքում ընդունված բանաձևում նշվում է. «Մենք ևս մեկ անգամ պետք է հիշենք դարասկզբին Թուրքիայում 1,5 միլիոն հայերի ողբերգական կոտորածները և մյուս կես միլիոնի բռնազաղթ իրենց պատմական հայրենիքից»<sup>475</sup>: Չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ Խորհուրդը Հայերի նկատմամբ կատարված հանցագործությունը դատապարտելուց բացի մատնանշում է հանցագործության կատարման վայրը՝ Հայերի պատմական հայրենիքը, այդ կերպ

<sup>475</sup> Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչությունը, էջ 144:

ընդգծելով, որ հանցագործությունը կատարվել է տեղաբնիկ հայ ժողովրդի նկատմամբ, ստիպելով նրան հեռանալ իր հայրենիքից:

Այնուհետև բանաձևում նշվում է, որ Համաշխարհային հանրութայան կողմից Հայոց ցեղասպանությունը լուսթյան մատնելու և որոշ դեպքերում պատմական փաստերը ժխտելու միտումնավոր ջանքները մեծապես անհանգստացնում են հայ ժողովրդին ու Հայոց եկեղեցուն, ուստի այս որոշման մասին Խորհուրդը տեղյակ է պահում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովին, կոչ անելով այդ խնդիրը քննարկել ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի պրիզմայով<sup>476</sup>: Այս ձևակերպումներից երևում է, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը տեղյակ էր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում ու մասնավորապես Խորհրդանութայան կանխարգելման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության շուրջ ծավալվող պայքարի մասին: Հատկանշական է, որ բանաձևի ընդունումից երկու տարի անց 1985 թ. օգոստոսի 19-ին նշված Ենթահանձնաժողովի նիստում ելույթ ունեցավ նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի միջազգային հարցերի հանձնաժողովի ներկայացուցիչ, հայազգի պրոֆեսոր Շավարշ Թորիկյանը<sup>477</sup>, որը նաև Խորհրդի անունից պաշտպանեց ներկայացված զեկուցում Հայոց ցեղասպանության մասին հիշատակման անհրաժեշտությունը, քանզի Հայոց ցեղասպանությունը համապատասխանում էր ՄԱԿ-ի Ծեղասպանության մասին կոնվենցիայով սահմանված այդ հանցագործության հատկանիշներին:

Երկրորդ անգամ Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը 1989 թ. մայիսին Սան Անտոնիայում (ԱՄՆ) կայացած համագումարում կրկին հատուկ որոշում ընդունեց հայերի ցեղասպանության մասին, կոչ անելով Խորհրդի բոլոր անդամներին «դիմել իրենց երկրների կառավարություններին ճնշում գործադրելու Թուրքիայի վրա՝ հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով»<sup>478</sup>: Նախորդ բանաձևի ընդունումից վեց տարի անց Խորհուրդը նորից անդրադառնում էր Հայոց ցեղասպանության հարցին, քանզի ակնհայտ էր, որ Թուրքական իշխանությունները բացարձակապես հետևություններ չէին արել այդ տարի-

ների ընթացքում բազմաթիվ կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերից: Հաշվի առնելով այդ իրողությունները, Խորհուրդը հարցի լուծման ճանապարհը տեսնում էր արդեն նրանում, որ կազմակերպության անդամ եկեղեցիները փորձեն ազդել սեփական կառավարությունների վրա, որ նրանք էլ իրենց հերթին ճնշում գործադրեն Թուրքիայի վրա՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու առումով:

Միաժամանակ բանաձևը Թուրքիայից պահանջում էր ազատել զավթած Հայաստանը և ապահովել հայերի իրենց հայրենիքը վերադառնալու իրավունքը, ինչպես նաև սկսել վերականգնել վերջին 75 տարում ավերված ավելի քան 2000 տաճարներն ու եկեղեցիները<sup>479</sup>: Այս պահանջներն իրենց մեջ պարունակում են Հայոց ցեղասպանության համար Թուրքական պետությանը պատասխանատվության ենթարկելու որոշակի մեխանիզմներ, որոնցով Խորհրդի համագումարի ներկայացուցիչների կարծիքով հնարավոր կլինեի վերականգնել պատմական արդարությունը և տասնամյակների ընթացքում հայ ժողովրդի խախտված իրավունքները: Բանաձևի նման ձևակերպումների օգտին միաձայն քվեարկեցին խորհրդի բոլոր 350 ներկայացուցիչները:

Ամփոփելով նշենք, որ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կողմից ընդունված այս երկու բանաձևերը չափազանց կարևոր նշանակություն ունեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում:

## 5.2.2. Ժողովուրդների մշտական դատարանում Հայոց ցեղասպանության գործի լսումն ու կայացրած որոշումը

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի առաջին քննարկումից ու ընդունված բանաձևից հետո մեկ այլ ոչ կառավարական հեղինակավոր միջազգային կազմակերպություն Հայոց ցեղասպանության հարցը դարձրեց իր քննարկման առարկա: 1984 թ. ապրիլի 13–16-ը Փարիզում տեղի ունեցավ ժողովուրդների մշտական դատարանի Հայոց ցեղասպանությանը նվիրված հատուկ նստաշրջանը, որն ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում:

<sup>479</sup> Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, էջ 275:

<sup>476</sup> Նույն տեղում:

<sup>477</sup> Մսերյան Զ., Ձանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ոլորտում, էջ 462:

<sup>478</sup> Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Եր., 2006, էջ 36:



Ինչպես վկայում են դատարանի նիստերի արձանագրությունները, դատարանը Հայոց ցեղասպանության գործը քննության է առել մի շարք կազմակերպությունների՝ «Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խումբ» (Ֆրանսիա, Փարիզ), «Մշակութային գոյատևում» (ԱՄՆ, Քեմբրիջ, Մասաչուսեթս) և «Ապառնալիքի տակ գտնվող ժողովուրդների ընկերություն» (Գերմանիա, Գյոթինգեն), կողմից համապատասխան Հայցերի ներկայացնելու արդյունքում<sup>480</sup>։ Դատավարության ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին՝

1. Արդյո՞ք հաստատված է, որ արևմտահայությունը Օսմանյան կայսրությունում տեղահանությունների և կոտորածների է ենթարկվել;

2. Արդյո՞ք այդ փաստերը որակվում են իբրև ցեղասպանություն և համապատասխանում են «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» միջազգային կոնվենցիայի դրույթներին, և տարածվում է արդյո՞ք այդ դեպքերի վրա «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» միջազգային կոնվենցիայի իրավասությունը;

3. Ելնելով այդ հարցերի պատասխաններից ի՞նչ հետևություններ կարելի է անել միջազգային համագործակցության և շահագրգիռ կողմերի համար<sup>481</sup>։

Դատարանը մինչև դատավարության սկսելը քայքայեց ձեռնարկեց անաչառությունը և հավասարության սկզբունքները պաշտպանելու նպատակով։ Նիստերից առաջ հատուկ նամակ ուղարկվեց թուրքական կառավարությանը, առաջարկելով ներկայացուցիչներ կամ համապատասխան փաստաթղթեր ուղարկել իր դիրքորոշումը պարզաբանելու համար։ Պատասխան չստանալով թուրքական կողմից, դատարանը որոշեց նիստերի արձանագրություններին կցել թուրքական կողմի հիմնական փաստարկները արտահայտող երկու փաստաթուղթ՝ Անկարայի «Արտաքին քաղաքականության ինստիտուտի» կողմից 1982 թ. հրատարակված «Հայկական հարց. ինը հարց, ինը պատասխան» վերնագրով գրքույկը և Անկարայի համալսարանի պրոֆեսոր Թուրքայա Աթայովի 1984 թ. Փարիզի քրեական դատարան ներկայացրած գրավոր ցուցմունքը։ Թուրքական այդ երկու նյութերը հիմնականում արտահայտում էին Թուրքիայի պաշտոնական տեսակետները, որոնցով ժխտվում էր Հայոց

ցեղասպանությունը և հայտարարվում էր, թե Արևմտյան Հայաստանը չի հանդիսանում Հայերի հայրենիքը։

Հայկական կողմից դատարանում զեկուցումներով հանդես եկան Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը՝ «Հայկական հարցի պատմությունը 1878–1923 թթ.» զեկուցյով և «Զորյան ինստիտուտը» ներկայացնող Ժիրայր Լիպարիտյանը՝ «Երիտթուրքերի շարժման գաղափարախոսությունը» զեկուցմամբ։ Կալիֆորնիայի պետական համալսարանի պրոֆեսոր Տ.Գուլյումճյանը ներկայացրեց իր «Հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության թուրքական քաղաքականության շարունակություն» թեմայով զեկուցումը<sup>482</sup>։ Բացի հայազգի մասնագետներից դատարանում հանդես եկան նաև օտարազգի մասնագետներ՝ անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ուոլբերը՝ «Հայերի ցեղասպանությանն առնչվող բրիտանական աղբյուրները», Արևմտյան Բեռլինի համալսարանի պրոֆեսոր տիկին Տեսա Հոֆմանը՝ «Հայերի ցեղասպանությանն առնչվող ավստրիական և գերմանական աղբյուրները» և Ֆրանսիացի հայտնի պատմաբան Իվ Տերնոնը՝ «1915–1916 թթ. Օսմանյան կայսրությունում կատարված հայերի ցեղասպանությունը» զեկուցումներով։ Վերջինս դատարանի դահլիճում տարբեր փաստացի տվյալների համադրությամբ հայտարարեց, որ Արդու Համիդից մինչև երիտթուրքեր և քեմալականներ, երեսուն տարիների ընթացքում սպանվել է ընդհանուր առմամբ շուրջ երկու միլիոն հայ<sup>483</sup>։

Դատարանում հանդես եկան նաև միջազգային իրավունքի ճանաչված ու հեղինակավոր մասնագետներ, որոնք իրենց տեսակետներն ու մտտեցումները ներկայացրեցին Հայերի զանգվածային սպանությունների կապակցությամբ։ Մասնավորապես դատարանում ելույթներ ունեցան ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Փոքրամասնությունների խտրականության կանխարգելման ու պաշտպանության ենթահանձնաժողովի նախկին նախագահ հոլանդացի Թեո Վան Բովներ, որը մանրամասն ներկայացրեց իր հիշողությունները կապված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում Հայերի ցեղասպանության քննարկումների, մասնավորապես՝ 30-րդ պարբերության շուրջ ծավալված իրադարձությունների մասին։ Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Լեո Կուպերն անդրադարձավ Հայերի բնաջնջման քաղաքականության վե-

<sup>480</sup> Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու անաբեկչությունը, էջ 145։

<sup>481</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, կազմող և մերձակամի հեղինակ Լ. Ա. Բարսեղյան, Եր., 1999, էջ 5։

<sup>482</sup> Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի..., էջ 177։

<sup>483</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, էջ 7։

րաբերյալ «ցեղասպանութիւն» եզրույթի կիրառելիութեան հարցին<sup>484</sup>: Իսկ Լուվենի կաթողիկէ համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Ջո Վերհովենն իր «Հայ ժողովուրդը և միջազգային իրավունքը» գեկույցում անդրադարձաւ հայոց ցեղասպանութեան որպէս ծանր միջազգային հանցագործութեան իրավական հարցերին<sup>485</sup>:

Բացի գեկուցումներից դատարանը լսեց նաև Հայոց ցեղասպանութեան վերապրող հայ ականատես վկաների ցուցմունքները: Իրենց հիշողութիւնները ներկայացրեցին Ֆրանսիայում բնակվող սերաստացի Արամ Կյուրեղյանը, ամասիացի Բաբկեն Ինջիրաբյանը, ԱՄՆ-ում բնակվող խարբերդցի Պոլ Նահապետյանը և էսքիչեհիրցի Հայկուհի Բոյաջյանը<sup>486</sup>:

Դատարանի նախագահ Ֆ.Ռիգոն դատական նիստում հրապարակեց նաև թուրքիայից հայտնի ուժիտոր, ազգութեամբ քուրդ Յըլմազ Գյուլենի նամակը, որում հեղինակը ողջունելով այդ գործով դատավարութիւնը, ցանկութիւն էր հայտնում, որ հայ ժողովրդի նկատմամբ կատարվածը, որը երկար ժամանակ լուռութեան ու անտարբերութեան էր մատնվել, դատապարտվի և այլևս ոչ մի տեղ հնարավոր չլինի դա իրականացնել<sup>487</sup>:

Դատարանը մանրագնին ձևով քննարկեց ներկայացված գեկույցները, փաստերն ու վկայութիւնները: Հատուկ անդրադարձ կատարվեց նաև թուրքական ժխտողականութեան փաստարկներին, կապված մահացած հայերի թվի չափազանցված լինելու, կանխամտածվածութեան ժխտման, հայ հեղափոխականների ապստամբական գործողութիւնների հետ, որոնք դատարանի կողմից որակվեցին իբրև անհիմն և պատասխանատվութիւնից խուսափելու նպատակ հետապնդող փաստարկներ: Միևնույն ժամանակ դատարանը գտավ, որ թուրքական կառավարութեան պնդումները կապված հայերի խուճովութեան կամ դավաճանութեան հետ անհիմն են, սակայն, անգամ եթե դրանք հիմնավոր էլ լինեին, ապա միևնույն է այդ ամենը որևէ կերպ չի կարող արդարացնել հայերի զանգվածային սպանութիւնները, քանզի ցեղասպանութեան հանցագործութիւնը արդարացում չունի<sup>488</sup>:

Դատարանը ցավով արձանագրեց, որ հայերի ցեղասպանութեան փաստի ընդունումից հրաժարումը հանգեցնում է թուրք դիվանագետների և այլ անձնաց դեմ ահաբեկչական գործողութիւնների: Առավել

<sup>484</sup> Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի..., էջ 177:

<sup>485</sup> Միջազգային հանրութիւնը դատապարտում է Հայոց ցեղասպանութիւնը, էջ 17:

<sup>486</sup> Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի..., էջ 177:

<sup>487</sup> Նույն տեղում, էջ 179:

<sup>488</sup> Միջազգային հանրութիւնը դատապարտում է Հայոց ցեղասպանութիւնը, էջ 40:

բացասական գնահատական տրվեց այն պետութիւնների վարքագծին, որոնք որոշակի շահերից ելնելով, պաշտպանում են տվյալ հարցով որևէ անաչառ հետազոտութիւն բացառելու և դրա իրավական որոշումը խոչընդոտելու թուրքական կառավարութեան ջանքները:

Ուսումնասիրելով գործի նյութերն ու կողմերի փաստարկները, դատարանը գտավ, որ՝

ա.) Հայ ժողովուրդը մի ժողովուրդ է, որի հիմնարար և անհատական իրավունքները պետք է պահպանվեն և այսօր էլ պետք է պահպանվեն միջազգային իրավունքին համապատասխան;

բ.) ցեղասպանութիւնը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի սահմանմամբ՝ Հայ ժողովրդի բնաջնջումը բռնագաղթի և զանգվածային սպանութիւնների միջոցով ցեղասպանութիւն է;

գ.) երիտթուրքերի կառավարութիւնը պատասխանատվութիւն է կրում այդ ցեղասպանութեան, 1915–1916 թթ. կատարած գործողութիւնների համար;

դ.) հայերի ցեղասպանութիւնը նաև «միջազգային հանցագործութիւն» է, որի պատասխանատվութիւնը պետք է կրի թուրքական պետութիւնը, չփորձելով խուսափել դրանից՝ ներկայիս թուրքական պետութեան իրավահաջորդութեան բացակայութեան պատճառաբանութեամբ;

ե.) այդ պատասխանատվութիւնը պարտավորեցնում է պաշտոնապես ճանաչել ցեղասպանութեան փաստը և իբրև հետևանք՝ հատուցել Հայ ժողովրդին պատճառած վնասները;

զ.) ՄԱԿ-ը և նրա յուրաքանչյուր անդամ իրավասու են պահանջել այդպիսի ճանաչում և այդ գործում աջակցել Հայ ժողովրդին»<sup>489</sup>:

Այսպիսով ժողովուրդների մշտական ատյանի որոշման համաձայն թուրքիայի Հանրապետութիւնը դիտվում էր իբրև Օսմանյան կայսրութեան իրավահաջորդ և դրան հակասող պատճառաբանութիւններով թուրքական պետութիւնը չէր կարող խուսափել Հայոց ցեղասպանութեան համար պատասխանատվութիւնից: Դատարանը չբավարարվեց կատարված հանցագործութիւնը ՄԱԿ-ի ցեղասպանութեան մասին կոնվենցիայի հատկանիշներով ցեղասպանութիւն որակելով ու դատապարտելով, այլ պնդեց այդ հանցագործութեան հետևանքների հաղթահարման և մասնավորապես հատուցման վրա, որի պահանջը թուրքիային այն ժամանակ կարող էր ներկայացնել ՄԱԿ-ի ցանկացած պետութիւն, քանի որ, դատարանի կարծիքով, կատարվածը ծանր միջազգային հան-

<sup>489</sup> Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, էջ 147:

ցազործութիւնն է, որն ուղղված է ոչ միայն Հայ ժողովրդի, այլև ընդհանրապես մարդկութեան դեմ:

Դատարանի դատավորներ էին Հանդիսանում միջազգային իրավունքի ժամանակի լավագույն ու հեղինակավոր մասնագետները, որոնք իրենց աշխատութիւններով նպաստել են միջազգային իրավունքի զարգացմանը: Մասնավորապես դատավորների կազմում ընդգրկված էին՝ Ալժիրի Համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Մարջիդ Բենչիկը, ԱՄՆ-ի Փրինսթոնի Համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Ռիչարդ Ֆոլքը, Հոմի Համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Անդրեա Ջիարդինին, Բելգիայի Լուվենի կաթոլիկ Համալսարանի իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր Ֆրանսուա Ռիզոն, ինչպես նաև Նոբելյան մրցանակի դափնեկիրներ՝ արգենտինացի Արուֆո Պերեզ Էսքուելելը, իռլանդացի Սին Մաքքրայթը, ամերիկացի Ջորջ Ուոլդը:

Ժողովուրդների մշտական ատյանի վճիռը Հայոց ցեղասպանության հետևանքների Հաղթահարման տեսակետից ունի կարևոր տեսական նշանակություն, քանզի այն կայացվել է ոչ թե կամայականորեն, այլ փաստերի մանրակրկիտ ուսումնասիրության և գործող միջազգային իրավական նորմերի, ինչպես նաև միջազգային կոնվենցիաների դրույթների հիման վրա: Բացի անմիջականորեն ցեղասպանության հանցագործությանը վերաբերող ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի և 1968 թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիաներից, դատարանը հիմնվել է 1948 թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, 1976 թ. հուլիսի 4-ի Ալժիրում ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր Հայտարարագրի, 1951 թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից հաստատված Նյուրնբերգյան սկզբունքների և այլ միջազգային իրավական փաստաթղթերի վրա:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ժողովուրդների մշտական դատարանը որոշակի փորձառություն արդեն ունի գործեր քննելու համար, ինչը մասնագիտական առումով Հայոց ցեղասպանության գործով այս ատյանի կայացրած վճիռին տալիս է ավելի ծանրակշիռ նշանակություն: Մինչև Հայոց ցեղասպանության գործի քննությունը դատարանը, որը ստեղծվել էր 1976 թ., քննարկել է Տրեթի, Արևմտյան Սահարայի, Արգենտինայի, Էրիթրեայի, Ֆիլիպինների, Աֆղանստանի, Զաիրի, Նիկարագուա ԱՄՆ-ի ներխուժման, Բրազիլական Ամազոնի<sup>490</sup>, ինչպես նաև 1981 թ. փետրվարի 11-ին Սալվադորի ժողովրդի, 1981 թ. հուլիսի 21-ին՝ Արևելյան Թիմորի մորիբ ցեղի և 1983 թ. հունվարի 31-

ին՝ Գլատեմալայի հնդկացի ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության գործերը և դրանց հետ կապված ընդունել էր Համապատասխան որոշումներ<sup>491</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ ժողովուրդների մշտական դատարանը Հանդիսանում է ոչ պաշտոնական դատական ատյան, որի որոշումները կրում են ոչ պարտադիր, խորհրդատվական բնույթ, այդուհանդերձ, այս կառույցի ապաքաղաքականացված լինելու հանգամանքը նրան զերծ պահեց ազդեցություններից և ապահովեց նրա որոշման անաչառությունը: Ի տարբերություն նվրախորհրդարանի, որը Հայերի զանգվածային սպանությունները ցեղասպանություն որակելով հանդերձ, խուսափում էր այդ հանցագործության համար պատասխանատվության ամրագրումից ու հանցագործության հետևանքների Հաղթահարման հիմնահարցից, ժողովուրդների միջազգային դատարանը ամրագրում էր թուրքիայի, որպես հանցագործ պետության պատասխանատվությունը, պնդելով նաև ցեղասպանության հետևանքների հաղթահարման անհրաժեշտության վրա:

### 5.2.3. Ծեղասպանագետների միջազգային ասոցիացիայի կողմից Հայոց ցեղասպանության քննարկումներն ու ընդունված բանաձևերը

Բնականաբար Հայոց ցեղասպանությունը չէր կարող չընթացվել այնպիսի մասնագիտացված միջազգային կազմակերպության կողմից, ինչպիսին Ծեղասպանագետների միջազգային ասոցիացիան է, քանզի այդ կազմակերպությունը զբաղվում է ցեղասպանությունների պատճառների ու բնույթի բացահայտման, իրագործման մեխանիզմների, մեթոդների ու հետևանքների ուսումնասիրման և այդ հանցագործությունը կանխարգելելու և հանցագործներին պատժի ենթարկելու հիմնահարցերով:

Պետք է նշել, որ Ծեղասպանագետների միջազգային ասոցիացիան Հայոց ցեղասպանության վերաբերյալ ընդունել է երեք բանաձևեր: Առաջին անգամ Օսմանյան կայսրությունում Հայերի զանգվածային ջարդերը կազմակերպության կողմից որակվել են որպես ցեղասպանություն 1997 թ. հունիսի 11-13-ը Մոնրեալում (Կանադա) կայացած կոնֆե-

<sup>490</sup> Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու անաբեկությունը, էջ 145:

<sup>491</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, էջ 43:

րանսում: Բացի այդ, շատ կարևոր էր այն հանգամանքը, որ կոնֆերանսի ընթացքում միաձայն ընդունված բանաձևում դատապարտվել է նաև Թուրքական կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, որն իրականացվում էր նրա պաշտոնական և ոչ պաշտոնական ներկայացուցիչների միջոցով<sup>492</sup>:

2005 թ. հունիսին կազմակերպությունը կրկին անուղղակիորեն անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը, երբ Ֆլորիդայում կայացած հերթական կոնֆերանսում քննարկվեց «Իննսուն տարի Հայոց ցեղասպանությունից, վաթսուն տարի Հոլոքոստից հետո» հարցը: Պետք է նշել, որ նման հարցադրումն ինքնին չափազանց կարևոր էր, քանզի գուգահեռներ տանելով երկու ցեղասպանությունների միջև, մեկ անգամ ևս փաստվում էր այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոստը պետք է դիտվեն միևնույն հարթության վրա և հետևաբար Հայոց ցեղասպանությունը պետք է դատապարտվի ճիշտ այնպես, ինչպես դա կատարվեց Հոլոքոստի պարագայում և հանցագործ պետությունը հատուցեց զոհ ժողովրդին նրա նկատմամբ կատարված հանցագործության համար:

Շատ կարևոր էր, որ նախորդ բանաձևի համեմատ Ասոցիացիան արդեն հստակեցնում էր զոհված հայերի թվաքանակը՝ 1,5 մլն. և այն անվանում էր XX դարի առաջին ցեղասպանություն: Բացի դրանից, բանաձևում ընդգծվում էր այն միտքը, որ ժամանակակից Թուրքիան պետք է հրաժարվի Հայոց ցեղասպանությունը ժխտելու իր քաղաքականությունից, հաշտվի իր պատմության սև էջի հետ և ընդունի կատարված հանցագործությունը, ներողություն հայցելով հայ ժողովրդից, քանզի այդ հանցագործության համար պատասխանատու է եղել Թուրքական պետությունը<sup>493</sup>: Այս բանաձևի հիման վրա Ասոցիացիան հունիսի 13-ին նաև բաց նամակ է ուղղում Թուրքիայի վարչապետ էրդողանին, որում ընդունված բանաձևի ոգուց ելնելով քննադատվում էր Թուրքական կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը և հատուկ ընդգծվում էր, որ այդ հանցագործության փաստը հաստատվում է ոչ թե հայերի, այլ այդ ոլորտի գիտնականների ճշող մեծամասնության կողմից, որոնք կապ չունեն կառավարությունների հետ<sup>494</sup>:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ արդեն երրորդ բանաձևը Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան ընդունեց 2007 թ. հոկտեմբերի 5-ին, ընդ որում, նոր բանաձևում նշվում էր, որ 1914–1923 թթ. Օսմանյան կայսրությունում ցեղասպանություններ են իրականացվել հայերի, ասորիների և պոնտական ու անատոլիական հույների նկատմամբ<sup>495</sup>: Տվյալ բանաձևով արդեն ընդունվում էր Թուրքիայի իրավանախորդ Օսմանյան կայսրության ցեղասպան պետություն լինելու հանգամանքը, որը ցեղասպանային քաղաքականություն է իրականացրել ոչ միայն հայերի, այլ նաև մյուս քրիստոնյաների նկատմամբ:

Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի երեք բանաձևերը ուսումնասիրելու արդյունքում դժվար չէ նկատել Հայոց ցեղասպանության հարցում տրված գնահատականների դրական օբյեկտիվ տեղաշարժերը, ինչը պետք է բացատրել նաև նրանով, որ այդ կազմակերպության աշխատանքներին սկսեցին մասնակցել հայազգի մասնագետները, իրենց զեկուցումներով նպաստելով ցեղասպանագետ գործընկերների շրջանում Հայոց ցեղասպանության մասին անաչառ տեղեկատվության տարածմանը:

Ամփոփելով Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայում Հայոց ցեղասպանության քննարկումներն ու ընդունված բանաձևերը, պետք է փաստենք, որ ի տարբերություն մյուս կազմակերպությունների, սա մասնագիտացված միջազգային կառույց է և վերջինիս կողմից Հայոց ցեղասպանությունը տրված գնահատականներն, անշուշտ, ուրույն տեղ են զբաղեցնում մեր ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում:

Ամփոփելով միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի քննարկումը, հանգում ենք հետևյալ գործնական եզրահանգումների՝

1. պետք է հետամուտ լինել, որ իրականացվի Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի 1989 թ. Սան Անտոնիոյի համագումարի որոշումն առ այն, որ կազմակերպության անդամ եկեղեցիներն իսկապես սկսեն ազդել իրենց կառավարությունների վրա, որ նախ տվյալ երկրները ճանաչեն ու դատապարտեն Հայոց ցեղասպանությունը, և դրանից հետո էլ սկսեն ճնշում գործադրել Թուրքիայի վրա նույն պահանջով:

<sup>492</sup> Генцинд армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 739.

<sup>493</sup> Հովհաննիսյան Ն., Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, էջ 223:

<sup>494</sup> Նույն տեղում, էջ 164:

<sup>495</sup> Նույն տեղում, էջ 204:

2. Ժողովուրդների մշտական դատարանի դատավարության նյութերը պետք է տարածվեն միջազգային կառավարական և ոչ կառավարական այն կազմակերպություններում, որոնք դեռևս չեն ընդունել համապատասխան բանաձևեր Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Չպետք է անտեսել նաև այն, որ Ժողովուրդների մշտական դատարանի հեղինակավոր իրավաբան-միջազգայնագետների գիտելիքները, փորձը և նրանց սկզբունքային դիրքորոշումը անգին նշանակություն կարող են ունենալ արդեն պաշտոնական միջազգային դատական ատյանում ընդդեմ Թուրքիայի Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման դատական գործը ներկայացնելու և պաշտպանելու ժամանակ:

3. Գեղասպանագետների միջազգային ասոցիացիում Հայ գիտնականները պետք է շարունակեն հետևողական աշխատանքներ տանել, հասնելով նրան, որ Հայոց ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ կազմակերպություն իր խորհրդաժողովներն անցկացնի Հայաստանում և նրա ջանքերն ուղղվեն նրան, որ այդ կառույցի շրջանակներում ավելի գործուն մեխանիզմներ մշակվեն միջազգային մակարդակով հանցագործ պետության նկատմամբ ճնշումներ գործադրելու առումով:

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայ ժողովուրդն արդեն մի քանի տասնամյակ պայքարում է 20-րդ դարասկզբին իր նկատմամբ իրագործված ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար: Այդ ժամանակամիջոցում ծավալված պայքարի արդյունքները հիմնականում դրսևորվել են տարբեր երկրների խորհրդարանների կամ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևերի ընդունման տեսքով: Նման ճանաչումներն ու դատապարտումներն, անուշտ, չափազանց կարևոր են, քանզի դրանով տարբեր երկրների օրենսդիր մարմիններն ու միջազգային կազմակերպություններն իրենց սկզբունքային դիրքորոշումն են արտահայտել հայերի նկատմամբ 20-րդ դարասկզբին կատարվածի վերաբերյալ, այն որակելով իբրև ցեղասպանություն և մատնանշելով տվյալ միջազգային հանցագործության համար պատասխանատու պետությանը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան ոչ միայն պատրաստ չէ ընդունել իր մեղքն ու հատուցել, ինչպես դա արեց Գերմանիան՝ Հոլոքոսթի պարագայում, այլև պետական մակարդակով շարունակում է ժխտել սեփական հանցագործությունը և նույնիսկ գործուն քայի է ձեռնարկում Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր խորհրդարաններում ընդունվող բանաձևերը տապալելու ուղղությամբ, ակնհայտ է, որ նման գործեակերպով անհնար է հասնել հարցի հանգուցալուծմանը, այն է՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի նման ընթացքն ունեցել է որոշակի օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ, քանզի խորհրդայնացումից հետո Հայաստանը, լինելով ԽՍՀՄ-ի կազմում, ի գորու չէր բարձրացնել այդ հարցը միջազգային ատյաններում: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործը, չլինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, իր վրա էր վերցրել Սփյուռքը<sup>496</sup>, որն իր ուժերի ու հնարավորությունների սահմաններում ձգտում էր գոնե՝ հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը կոնկրետ երկրների կողմից:

<sup>496</sup> Տե՛ս Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, էջ 511:

Հայոց ցեղասպանութեան հետեանքների հաղթահարմանն ուղղված տվյալ մարտավարությունը եթե կարող էր արդարացված կամ ընդունելի համարվել մինչև Հայաստանի անկախության հռչակումը, ապա դրանից հետո այլևս չի կարող լինել բավարար: Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանն առաջադրանքն այժմ հռչակված է Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Սակայն, մեր կարծիքով, նախկին ժամանակաշրջանից եկող ինքնազոհությամբ տվյալ հիմնախնդիրն այսօր էլ թերի է ձևակերպված: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը ինքնանպատակ չէ, ճիշտ այնպես ինչպես ինքնանպատակ չէ ցանկացած հանցագործության փաստի արձանագրումը և հանցագործի դատապարտումը: Տուժածին հասցված վնասի հատուցումը տվյալ գործընթացում ոչ պակաս կարևոր է, քան հանցագործի դատապարտումը: Ուստի այսօր անհրաժեշտ է ձեռքառնել նախկին կարծրատիպերից, և խնդիրը ձևակերպել որպես Հայոց ցեղասպանության հետեանքների հաղթահարում, ինչը ենթադրում է տվյալ հանցագործության թե՛ ճանաչումն ու դատապարտում և թե՛ դրա հետեանքով տուժած Հայ ժողովրդին հասցված վնասների հատուցում:

Ներկայումս, նախքան Հայոց ցեղասպանության հետեանքների հաղթահարմանն ուղղված մեր օրենքային և քաղաքական քայլերը, Հայաստանի և Ափյուռքի համապատասխան կառույցներն ու մասնագետները նախևառաջ պետք է միասնաբար մշակեն Հայոց ցեղասպանության հետեանքների հաղթահարման համար թուրքիային ներկայացվելիք պահանջները հիմնավորող պատմափրավական փաթեթ-փաստաթուղթը:

Այս հիմնարար փաստաթղթում առկա հիմնախնդիրը ճիշտ ձևակերպելուց զատ պետք է հստակ պատասխաններ տրվեն այն հարցերին, թե ի՞նչ ենք կոնկրետ հասկանում Հայոց ցեղասպանության հետեանքներ ասելով և ինչպե՞ս կամ ի՞նչ չափով ենք պատկերացնում դրանց հաղթահարումը կամ մասնակի վերացումը, քանզի կան հետեանքներ, որոնք ուղղակիորեն անվերականգնելի են:

Մեզանում թյուրիմացաբար հաճախ կատարվում է Հայոց ցեղասպանության հասցրած կորուստների նույնականացումը այդ հանցագործության հետեանքների հետ, մինչդեռ դրանք բոլորովին տարբեր բաներ են: Ի տարբերություն Հայոց ցեղասպանության կորուստների, այդ հանցագործության հետեանքները անցյալում չեն մնացել: Արդեն մեկ դար է, ինչ Հայ ժողովուրդը Հայաստանում ու Ափյուռքում շարունակում է իր ուսերի վրա կրել դրանց բեռը: Եվ պատահական չէ, որ որոշ հետազոտողներ հակված են այն կարծիքին, որ քանի դեռ թուրքիան չի ճանաչել

Հայոց ցեղասպանությունը և չեն հաղթահարվել այդ հանցագործության հետեանքները, գործ ունենք շարունակվող ցեղասպանության հետ:

Հայոց ցեղասպանության իրականացման միջոցով Հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստները ըստ առաջնահերթության կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) Հայրենագրվում, բ) մշակութային ժառանգության կորուստ, գ) մարդկային կորուստներ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեկան խեղումներ:

Հայրենագրվում. Հայ ժողովրդին իր բնօրրանից զրկելը, Հայոց ցեղասպանության զլխավոր կորուստն է: Միաժամանակ՝ այն ցեղասպանության կազմակերպիչների համար հանդիսացել է այդ հանցագործություն կատարելու կարևորագույն շարժառիթը և նպատակը<sup>497</sup>: Քանի որ խոսքը Հայրենիքի մեծ մասի կորստի մասին է, ուստի պետք է հստակեցնել, թե դա ինչ հետեանքներ է ունեցել և ինչպես է անդրադարձել մեր ժողովրդի հետագա կենսագործունեությանն ու զարգացման վրա:

Մի կողմից՝ Հայրենիքի կորստի հետևանք պետք է համարել Ափյուռքի գոյավորումը, քանզի այդ գործընթացում ցեղասպանությունից հրաշքով փրկված արևմտահայերը, կորցնելով իրենց Հայրենի օջախները, ստիպված էին Հայրենիքից դուրս ամեն ինչ սկսել զրոյից, օտար միջավայրում անցնելով համակերպման դժվարին ճանապարհը: Մյուս կողմից՝ Հայրենիքի մեծ մասի կորուստը և արևմտահայության ողջ մնացած հատվածի դուրս մղումը Արևմտյան Հայաստանից երկփեղկել է Հայ ժողովրդին, խաթարել է նրա միասնականությունը, ջլատել ուժերը ու կասեցրել բնականոն զարգացման հեռանկարները: Ցեղասպանության հետևանքով աշխարհագրորեն միմյանցից հեռացվել են Հայ ժողովրդի երկու հիմնական հատվածները, ինչը լուրջ խզում է առաջադրել նրանց միջև: Արդյունքում արևմտահայերը դարձել են սփյուռքահայեր, իսկ արևելահայերն ու Արևելյան Հայաստանում հաստատված արևմտահայ գաղթականության մի հատվածը՝ հայաստանցիներ: Ապրելով տարբեր վարչակարգերի պայմաններում ժամանակի ընթացքում նրանք ձեռք են բերել միմյանցից տարբերվող մտածողություն, ինչն էականորեն բարդացնում է համահայկական հարցերի լուծման գործընթացը:

Մշակութային ժառանգության կորուստ. Հայոց ցեղասպանության հետևանքով Հայ ժողովրդին հասցվել են վիթխարի մշակութային կորուստներ: 1914 թ. թուրքական-պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 հայկական

<sup>497</sup> Տե՛ս Մեղրոյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, էջ 427:

եկեղեցիներ ու մատուռներ, 451 վանքեր և շուրջ 2000 վարժարաններ<sup>498</sup>։ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն է մնացել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464 լիովին ոչնչացվել են, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունի<sup>499</sup>։ Ակնհայտ է, որ նույն ճակատագրին են արժանացել նաև Հայկական առաջնորդարաններն ու վարժարանները։ Պետք է նշել, որ երբ խոսում ենք «չարունակվող ցեղասպանության» մասին, նկատի ունենք նաև Թուրքիայի կողմից Հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պետականորեն շարունակվող՝ ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տիրոջ՝ Հայերի մասին։

Մշակութային ժառանգության կորուստ ասելով, սակայն, չպետք է սահմանափակվել միայն պատմաճարտարապետական կառույցների ոչնչացումով։ «Գենոցիդ» եզրի և ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի հեղինակներից մեկը՝ Ռաֆայել Լեմկինը, դեռևս 1933 թ. Մադրիդում կայացած միջազգային քրեական իրավունքի կանոնակարգման հինգերորդ կոնֆերանսում ունեցած իր հատուկ զեկուլյուցում առաջին անգամ բավականին հստակորեն տվել է զգալի-մշակութային ցեղասպանության սահմանումը։ Մանրամասն ներկայացնելով Օսմանյան կայսրությունում Հայերի զանգվածային ոչնչացումը, Լեմկինը դա անվանում էր «անանուն հանցագործություն» և դրա դրսևորումներից էր համարում նաև «վանդալիզմի այն գործողությունները, որոնք ուղղված են ազգային, կրոնական, ռասայական կամ էթնիկ խմբի մշակութային արժեքների ոչնչացմանը՝ մայրենի լեզուն արգելելու, տպագիր գրքերի, դպրոցների, պատմական հուշարձանների, պաշտամունքային օջախները ոչնչացնելու կամ դրանցից օգտվելու արգելքի միջոցով (ընդգծումը մերն է – Ա. Մ.)»<sup>500</sup>։

<sup>498</sup> Տե՛ս Աստույան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915–1923 թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վեմ», Եր., 2010, քիվ 3 (31), հավելված, էջ XVI–XVII։

<sup>499</sup> Տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լուսններ, 19–20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 144։

<sup>500</sup> Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, с. 7.

Ուրեմն՝ Հայերի նկատմամբ մշակութային եղեռնի դրսևորում պետք է համարել նաև Հազարավոր Հայկական ձեռագրերի ոչնչացումը, որոնցում ամփոփված էր Հայ ժողովրդի Հազարամյա գիտական միտքն ու հանճարը։ Այդպիսով ցեղասպանության կազմակերպիչները մեզ մասնակիորեն կտրել են մեր նախնիների մտքից ու ոգուց, այն անգին գիտելիքներից, որոնք նրանք մեզ փորձում էին փոխանցել այդ ձեռագրերի միջոցով<sup>501</sup>։ Մշակութային ցեղասպանության այս հետևանքները չեն կարող վերականգնվել որևէ նյութական փոխհատուցմամբ։

Մարդկային կորուստները Հայոց ցեղասպանության ընթացքում կազմեցին շուրջ 1,5 միլիոն մարդ։ Սակայն, մարդկային կորուստների թիվը հստակեցնելիս, անպայմանորեն պետք է հաշվի առնվի նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում իսլամացած Հայերի թիվը, որոնք ցեղասպանության զոհ-ժողովրդի համար նույնպես մարդկային կորուստ են, քանզի ուժացման այդ գործընթացի հետևանքով նրանք դադարել են իրենց Հայ համարել։

Մարդկային կորուստների թվի հստակեցումից հետո անհրաժեշտ է պարզել, թե այդ կորուստները ի՞նչ հետևանքներ են ունեցել և ինչպե՞ս են անդրադարձել Հայ ժողովրդի հետագա վերարտադրման վրա և որքան կկազմեր Հայերի թիվն այսօր՝ հանցագործությունից մոտ մեկ դար անց, եթե հանցագործության զոհերը ողջ լինեին։ Այս առումով պետք է հաշվի առնել այն, որ արևմտահայերի ընտանիքները, որպես կանոն, բազմազավակ էին։ Բացի այդ, 25 տարին մեկ կատարվում է բնակչության վերարտադրություն (ռեգեներացիա), այսինքն՝ անցած մեկ դարի ընթացքում առնվազն չորս անգամ պետք է կատարվեր նաև սպանված արևմտահայերի վերարտադրությունը, եթե նրանք ողջ մնային։

Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հետ կապված հիմնականում հիշատակվում է 1919 թ. Փարիզի ինդադրության վեհաժողովին Պողոս Նուբար փառայի գլխավորությամբ Ազգային պատվիրակության ներկայացրած հուշագիրը, որի համաձայն 1915–1919 թթ. Հայերի ունեցած նյութական կորուստները հաշվվում էին 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ, որից 14.598.460.000 բաժին է ընկնում արևմտահայությանը, իսկ 4.532.472.000 Հայաստանի Հանրապետությանը<sup>502</sup>։ Սակայն հաշվի առնելով այն, թե ինչ պայմաններում է կազմվել ու վե-

<sup>501</sup> Стратегические последствия геноцида армян, “Византийское наследие”, (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3, с. 15.

<sup>502</sup> Ցեղապանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող Լ. Բարսեղյան, Եր., 1999, էջ 13։

Հատողովին ներկայացվել այդ փաստաթուղթը, ակնհայտ է դառնում, որ նշված թիվն ամենևին էլ չի կարող մեկնակետ համարվել:

Բանն այն է, որ Փարիզի վեհաժողովին կից գործում էր «Փոխհատուցումների հանձնաժողովը», որը զբաղվում էր պարտավածների կողմից հաղթողներին տրվելիք ռազմատուգանքների չափերի հստակեցումով: Քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ պարտաված տերութունները պետք է փոխհատուցումներ վճարեն նաև այլ երկրներին՝ պատերազմի արդյունքում նրանց հասցված վնասների դիմաց: 1919 թ. մարտի 7-ին Հանձնաժողովին կից ստեղծվում է «Հատուկ հանձնախումբ», որն էլ մարտի 8-ին դիմում է մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանին, նյութական վնասների հաշվարկ ներկայացնելու հարցով: Հանձնախումբը ներկայացված հաշվարկներն ամփոփում է 1919 թ. ապրիլի 14-ին<sup>503</sup>: Այսինքն, Ազգային պատվիրակությունն այդ լուրջ և պատասխանատու աշխատանքի համար ունեցել է ոչ ավել քան մեկ ամիս ժամանակ, որի ընթացքում ուղղակի անհնար էր ամբողջական տվյալներ հավաքել ու համակողմանիորեն դրանք համակարգել: Ակնհայտ է, որ նման սեղմ ժամկետում կատարված հաշվարկները չեն կարող համարվել վերջնական ու անթերի, ուստի՝ տվյալ փաստաթղթի տվյալները պետք է ճշգրտվեն, հաշվի առնելով որոշ իրողություններ:

Մասնավորապես, Ազգային պատվիրակության ներկայացրած հուշագրում ամբողջական չի ներկայացվել արևմտահայության ազգային սեփականության՝ առաջնորդարանների հայկական եկեղեցիների և մատուռների, վանքերի, վարժարանների, դպրեվանքերի և որբանոցների ողջ ունեցվածքը՝ իրենց կալվածքներով, կահկարասիով և այլն: Բացի այդ, պատվիրակության տեղեկագրում չեն ներկայացված հայ կաթոլիկների և բողոքականների նյութական կորուստները: Օրինակի համար՝ կայսրությունում հայ բողոքականներն ունեին 310 ժողովարան, որոնց բացարձակ մեծամասնությունը Հիմնահատակ կործանվել է<sup>504</sup>:

Պողոս Նուբարի հուշագրում չեն հաշվառվել այն նյութական վնասները, որոնք թուրք-ադրբեջանական զորքերի կողմից հասցվել են Բաքվի հայությանը 1918 թ. և բնականաբար չէին կարող նաև հաշվառվել փաստաթուղթը ներկայացնելուց հետո արդեն քեմալականների կողմից 1920 թ. արևելահայությանը, 1921 թ. կլիկիահայությանը և 1922 թ.

Ձմյուռնիայի հայությանը հասցված նյութական վնասները<sup>505</sup>: Ուստի՝ որոշ հեղինակների կարծիքով, ցեղասպանության շարունակության քաղաքականության արդյունքում հայերին հասցված նյութական վնասի նշված թիվը պետք է ավելանա առնվազն 20%-ի չափով<sup>506</sup>:

Պողոս Նուբարի հուշագիրը շատ հպանցիկ է անդրադարձել հայերի բանկային ավանդներին, մինչդեռ հետագայում բացահայտվել են այդ ավանդների չափերը ու դրանց բռնազրավման մեխանիզմները: Ֆրիտ-յոֆ Նանսենի «Նաբված ժողովուրդ» գրքում առկա է Մեծ Բրիտանիայի պահպանողականների և լիբերալների պարագլուխներ Սթենլի Բուդոլֆ-նի և Հերբերտ Ասկվիտի կողմից իշխող լիբերալիստական կուսակցությունը ներկայացնող վարչապետ Ռամզեյ Մակդոնալդին 1924 թ. սեպտեմբերին հղված դիմումը: Նրանում բրիտանական կառավարությունը մեղադրվում էր 1915 թ. հայերի կոտորածից ու արտաքսումից հետո նրանց մոտ 5 մլն. ֆունտ ստերլինգ (թուրքական ոսկով) չափով հարստությանը տիրանալու մեջ: Հայերի զանգվածային սպանություններից ու բռնի տեղահանությունից հետո Օսմանյան բանկում արևմտահայերի ընթացիկ և ավանդային բանկային հաշիվները թուրքական կառավարության հրամանով փոխանցվեցին Կ. Պոլիս՝ պետական գանձատուն, իսկ 1916 թ. կառավարությունն այդ գումարից 5 միլիոն ֆունտ ստերլինգ ուղարկեց Բեռլին՝ Գերմանիայի կայսերական բանկ (Reichbank)՝ նոր արժեթղթերի թողարկման նպատակով<sup>507</sup>: 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն. օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր<sup>508</sup>: Դժվար չէ նկատել կապը՝ բաց թողնված արժեթղթերի և Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացված ոսկու միջև: Անգլիական դիվանագիտական փաստաթղթերից պարզ է դառնում, սակայն, որ նշված գումարը Գերմանիան բռնագանձել էր Օսմանյան կայսրությունից իբր՝ օսմանյան պարտքի դիմաց, իսկ Մեծ Բրիտանիան այդ գումարը բռնազրավեց Բեռ-

<sup>503</sup> Պասլյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը, էջ 42:

<sup>504</sup> Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ XXVI:

<sup>505</sup> Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, էջ 11:

<sup>506</sup> Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիսլյուտա-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական գեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 180:

<sup>507</sup> Արզումանյան Մ. Վ., Նանսենը և Հայաստանը, Եր., 1986, էջ 128-129:

<sup>508</sup> Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, «Կեն», Եր., 2011, թիվ 1 (33), էջ 172:



լինից՝ իբրև ռազմատուգանք<sup>509</sup>: Ի դեպ, Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացած այս 30.000 կգ ոսկու հարցը հայերի կողմից առաջին անգամ բարձրացվել է 1984 թ. Տիգրան Քուլումճյանի կողմից՝ Ժողովուրդների Մշտական տրիբունալում Հայոց ցեղասպանության հարցը քննարկելու ժամանակ, երբ տրիբունալին հանձնվեց «Հայոց սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» վերնագրով զեկուլյը<sup>510</sup>: Կարծում ենք, որ նմանօրինակ և այլ ավանդները նույնպես պետք է հաշվարկվեն՝ Հայերի ունեցած նյութական կուրուստերի թիվը հստակեցնելիս:

Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի, թե ինչ տնտեսական օգուտներ է քաղել թուրքական պետությունը հայերի զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից, բավական է նշել, որ հակառակ պատերազմական ծանր պայմաններին և կայսրության տնտեսության կատվածահար վիճակին, երկրի պետական բյուջեի արձանագրեց աննախադեպ աճ, այսպես՝ եթե 1913–1914 թթ. այն կազմում էր 35 մլն. օսմ. ոսկի, ապա 1915–1916 թթ. 38 մլն., իսկ 1917–1918 թթ.՝ 85 մլն.<sup>511</sup>: Ակնհայտ է, որ տվյալ պայմաններում թուրքական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավման հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել դատապարտելի այն փաստը, որ թուրքական պետությունը փաստորեն օգտվում էր իր իսկ կողմից կազմակերպված ու իրագործված հանցագործություն՝ Հայոց ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է:

Պողոս Նուբարի հուշագիրը պետք է ճշգրտվի նաև՝ ըստ Հոլոքոստի հետևանքով Գերմանիայի կողմից Հրեաներին հասցված վնասների հատուցման փաստաթղթերի, որոնք, մեր կարծիքով, նախադեպ ու հիմք կարող են հանդիսանալ Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասները հաշվարկելու գործընթացում: Ըստ 1952 թ. սեպտեմբերի 10-ին կնքված Լյուքսեմբուրգյան համաձայնագրի, գումարները Իսրայելին պետք է վճարվեին որպես հատուցում Հոլոքոստի տարիներին ոչ միայն Հրեաների նկատմամբ կիրառված հալածանքների, հետապնդումների, այլ նաև՝ նացիստների գողացած կամ թալանած Հրեական սեփականության և նրանց ստրկական աշխատանքի

համար<sup>512</sup>: Եթե Հրեաները ստրկական աշխատանքներ են կատարել համակենտրոնացման ճամբարներում, ապա երիտթուրքերը ստիպել են շատ հայ արհեստավորների և մանավանդ՝ օսմանյան բանակ զորակոչված հայ տղամարդկանց կատարել ինժեներա-շինարարական (կառուցել են կամուրջներ, ճանապարհներ, փորել խրամատներ) և այլ բնույթի աշխատանքներ: Այս ծանր աշխատանքների դիմաց «վճարը» նրանց առժամանակ կենդանի թողնելն էր: Ուստի պետք է հաշվարկվեն նաև տվյալ աշխատանքների համար չվճարված գումարները:

1951 թ. Իսրայելի արտաքին գործերի նախարար Մ.Շարեթը Գերմանիայից պահանջել էր Իսրայելում վերաբնակեցված, ցեղասպանությունից փրկված 500.000 Հրեաների արտորբացիայի համար վճարել 1,5 մլրդ., այսինքն՝ յուրաքանչյուրի համար 3000-ական դոլար<sup>513</sup>: Ազգային պատվիրակության ներկայացրած հուշագրում նույնպես անդրադարձ է կատարվել այս հարցին, սակայն նախատեսված էր արքայից վերապրած և արտասահմանում ապաստանած յուրաքանչյուր հայ ընտանիքին, այլ ոչ թե անհատին, հատուցել 1919 թ. համարվեցով 4.000 Ֆրանսիական Ֆրանկի չափով<sup>514</sup>: Նշենք նաև, որ ի տարբերություն հայերի, Հրեաներին գումարը սրվում էր Հրեական պետությունում արտորբացիայի համար, մինչդեռ արևմտահայերը դժվարին արտորբացիայի գործընթաց են անցել օտար պետություններում բացարձակապես ոչինչ չստանալով դրա դիմաց: Այնպես որ այս խնդիրը նույնպես պետք է հաշվառվի նյութական վնասի մեջ:

Բացի դրանից՝ նման հաշվարկներ կատարելիս պետք է անպայմանորեն հաշվի առնել թուրքիայի կողմից Լոզանի պայմանագրի դրույթները կոպտորեն խախտելու միջոցով հայկական համայնքի կալվածքների ապօրինի բռնագրավման հանգամանքը<sup>515</sup>: Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի զանգվածային ունեղրկումը կանխեց այդ նյութական հարստության բազմապատկման հնարավորությունը: Ցեղապանությունից հրաշքով փրկված տասնյակ հազարավոր հայեր, կորցնելով իրենց ունեցվածքը, ստիպված էին արտասահմանում ամեն ինչ սկսել

<sup>509</sup> Մարտիանյան Ս., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915–1918), Եր., 2005, էջ 90–91:

<sup>510</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 169:

<sup>511</sup> Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ XXIX:

<sup>512</sup> Մարտիանյան Հ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պատմագիտությունից հիմնախնդիրները», (գիտագործմական միջազգային գիտաժողով). Կիպրոս-Նիկոսիա, 18–19 ապրիլի, 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու». Մոսկվա, 2008, էջ 83:

<sup>513</sup> Նույն տեղում, էջ 81:

<sup>514</sup> Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 9:

<sup>515</sup> Թորիկեան Ե., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, էջ 138:

զրոյից՝ կրելով անասելի սոցիալ-տնտեսական զրկանքներ: Այդ իսկ պատճառով, Հայոց ցեղասպանութեան նյութական հետեանքները հաշվարկելիս չպետք է մոռանալ նաև բաց թողնված շահույթի մասին: Նյութական կորուստների հետեանքների հետ կապված պետք է հաշվարկվեն նաև անցած տասնամյակների ընթացքում այդ գումարի վրա ավելացած՝ թե՛ սղաճը, և թե՛ բանկային տոկոսները, որով միայն կամբողջականացվի Հայերին հասցված նյութական կորուստների վերջնական թիվը:

Հոգեկան խեղումները. Հայոց ցեղասպանութեան հետեանքով հասցված հոգեբանական սթրեսները նույնպես անհետևանք չեն մնացել և անդրադարձել են Հայ ժողովրդի հետագա կենսագործունեության վրա: Հարցի այս կողմը, թերևս պակաս կարևոր չէ, քան վերը թվարկվածները: Ցեղասպանութեան հետեանքով Հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ հոգեբանական բարդություններ ու վախեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն եղեռնի անմիջականորեն վերապրածների, այլ նաև հաջորդ սերունդների վրա: Ընդ որում, խոսքը ոչ միայն ցեղասպանությունից անմիջականորեն վերապրածների ու նրանց սերունդների, այլև ողջ Հայ ժողովրդի մասին է, որի մոտ առաջացել են թերարժեքության բարդություններ: Ձի վերացել այն վախը, որ կատարվածը մի օր կարող է կրկնվել, քանի դեռ մեղավոր կողմը ոչ միայն չի ընդունել իր մեղքը և չի ապաշխարհել, այլև շարունակում է ժխտել պատմական իրողությունը: Իր Հայրենիքի մեծագույն մասը կորցնելով՝ Հայ ժողովուրդը զրկվել է սեփական կենսատարածքի և նախնիների կերտած ազգային արժեքների հետ շփվելու հնարավորությունից: Դրա հետևանքով առաջացած թերարժեքության բարդություններից մեկն էլ պետք է համարել այն, որ ոմանց մոտ առաջացել է թերահավատություն և անվստահություն ազգի ապագայի, սեփական ուժերի ու կարողությունների հանդեպ և օտար արժեքների ապավինելու հակում<sup>516</sup>: Ուստի՝ Հայ ժողովրդի մոտ զարգացման ու առաջադիմության ձգտումների փոխարեն Սփյուռքում ու Հայաստանում տասնամյակներ, շարունակ տիրապետել և այսօր էլ մասամբ իշխում է գոյատևման փրկիստիպալությունն ու հոգեբանությունը:

Հոգեբանական լուրջ հարված է հասցվել նաև ցեղասպանության ընթացքում բռնի մահվանականացված Հայերին, որոնք մահվան սպառնալիքի տակ ստիպված հրաժարվել են իրենց ազգային պատկանելու-

թյունից և ընդունել օտարի կրոնը և հատկանիշները: Տասնամյակներ շարունակ նրանք թուրքիայում ապրել ու ապրում են վախի մթնոլորտում ստիպված թաքցնելով իրենց իրական ինքնությունը<sup>517</sup>: Ներկայումս այսպես կոչված՝ «թաքուն Հայերի» շրջանում դրական միտում է նկատվում, քանզի նրանցից ոմանք արդեն խոսում են իրենց հայկական արմատների մասին և նույնիսկ փորձում են վերադառնալ առաքելական հավատքին, սակայն պետք է խոստովանել, որ դա կատարվում է լուրջ հոգեբանական բարդությունների, առաջին հերթին՝ վախի հաղթահարման դժվարին ճանապարհով:

Թուրքիայի Հանրապետության կողմից ներկայումս պետականորեն իրականացվող՝ Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, որը կասկածի տակ է դնում կատարված հանցագործությունը, և այդպիսով անարգում է անմեղ նահատակների հիշատակը, վիրավորում ոչ միայն նրանց ժառանգների, այլև ողջ Հայ ժողովրդի արժանապատվությունը: Ուստի տվյալ քաղաքականությունը պետք է դիտարկել իբրև ցեղասպանության գոհ դարձած Հայ ժողովրդին հասցվող լրացուցիչ հոգեբանական հարված: Համաձայն այդ քաղաքականության «տրամաբանություն»՝ Հայ ժողովուրդը պետք է, ըստ էության, զբաղվի մազոխիզմով և, կրկին վերապրելով դաժան իրողությունները, ապացուցի այն պատմական ճշմարտությունը, որն անհերքելի է բոլորի համար, բացառությամբ թերևս՝ Թուրքիայի ու նրա սատելիտ Ադրբեջանի: Այդ իսկ պատճառով նման քաղաքականությունը պետք է զնահատվի իբրև Հայոց ցեղասպանության քաղաքականություն շարունակություն՝ արդեն տեղեկատվական դաշտում:

Հայոց ցեղասպանության կորուստներն ու հետեանքները հստակեցնելուց հետո՝ պետք է իրավական տեսակետից հիմնավորվեն ցեղասպանության հետեանքները հաղթահարելու առումով Թուրքիային ներկայացվելիք պահանջները:

Հայոց ցեղասպանության գլխավոր հետեանքի՝ Հայրենագրվման հաղթահարման պահանջն ավելի խելամիտ ու իրատեսական է ամփոփել այն սահմաններով, որոնք ամրագրված են 1920 թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով, ինչը ոչ միայն չի հակասում, այլև համապատասխանում է ցեղասպանության իրակա-

<sup>516</sup> Стратегические последствия геноцида армян, “Византийское наследство”, (информационно-аналитический журнал), с. 16.

<sup>517</sup> Տե՛ս Այլախու և այլադավան հայեր, Եր., 2007:

<sup>\*</sup> Խոսքը չի վերաբերում 1878–1918–1920 թթ. սկզբում՝ Ռուսաստանյան կայսրության, իսկ հետո էլ Հայաստանի Հանրապետության անբաժան մասը կազմող՝ Կարսի մարզին, Բաթումի մարզի հարավային հատվածին և Սուրմալուի գավառին, որոնք միացվել են Թուրքիային՝ Մոսկվայի ու Կարսի անօրինական պայմանագրերով:

նացման պահին գործող միջազգային իրավական նորմերի, մասնավորապես՝ 1907 թ. Հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի դրույթներին, որոնց համաձայն կողմերի միջև վեճի կարգավորման եղանակ էր դիտարկվում նաև միջազգային իրավարարությունը (արբիտրաժը): Ուստի՝ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռն իրավացիորեն կարելի է համարել իբրև քաղաքական պատասխանատվություն՝ հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության համար<sup>518</sup>:

Ազգային-մշակութային ցեղասպանության դրույթը ներկայացված է եղել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագծում, սակայն որոշ երկրների հակազդեցության հետևանքով, այն դուրս է մղվել, ուստի բացակայում է փաստաթղթի տեքստից: Նման դրույթի ընդունումով կարելի էր պատասխանատվության կանչել մշակութային արժեքները ոչնչացնողներին: Սակայն վերջինիս բացակայությունը չի նշանակում, որ նույն նպատակին չի կարելի հասնել այլ փաստաթղթերի միջոցով: Օրինակ՝ Հայոց ցեղասպանության արդյունքում մշակութային ժառանգության կորուստների վերականգնման պահանջը, կարող է հիմնավորվել 1923 թ. Հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի՝ ոչ մահացողականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող 37-44 հոդվածներով: Մասնավորապես պայմանագրի 42 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թուրքական կառավարությունը պարտավորվել է լիակատար պահպանության տակ առնել եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և փոքրամասնությունների այլ կրոնական հաստատությունները: «Լիակատար պահպանության» տակ պետք է հասկանալ ոչ միայն եկեղեցիները չքանդելն ու չավերելը, այլև դրանց ամրացումն ու նորոգումը<sup>519</sup>: Բացի դրանից, թուրքիայում առկա հայկական մշակութային ժառանգության հարցը կարող է պաշտպանվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության դրույթներով, քանի որ թե՛ Հայաստանը և թե՛ թուրքիան այդ կազմակերպության անդամ-երկրներ են:

Միջազգային իրավունքն, անշուշտ, նախատեսում է պատասխանատվություն նաև՝ նյութական վնասները հատուցելու իմաստով: Հատուցման համընդգրկուն ձևն, ինչպես հայտնի է, փոխհատուցումն է,

<sup>518</sup> Մարտիյան Ա., ԱՄՆ Գաղափարի Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը քաղաքական ու միջազգային իրավական նշանակությունը, «Մեծ եղեռն. դատապարտումից հատուցում», (հոդվածների ժողովածու), Եր., 2011, էջ 97:

<sup>519</sup> Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը, էջ 48:

սակայն կա նաև ռեստիտուցիայի ինստիտուտը, որը ենթադրում է նյութական արժեքների կամ նախկին իրավական վիճակի վերականգնումը, այդ թվում՝ բնեղենով: Ռեստիտուցիան նախատեսում է, որ պետք է վերականգնվեն այն բոլոր իրավունքները, որով օժտված են եղել հանցագործության զոհ-խմբի անդամները՝ մինչև դրա կատարումը: Այսինքն՝ միջազգային իրավունքը նախատեսում է ոչ միայն Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասի հատուցում, այլև նրանց իրավունքների վերականգնում այն գույքի և ունեցվածքի նկատմամբ, որը հանրապետության գույքի և ունեցվածքի նկատմամբ, որը հանրապետության գույքի է տվյալ հանցագործության հետևանքով:

Գոյություն ունի թյուր կարծիք թե իբր՝ որոշ ապահովագրական կազմակերպությունների, օրինակ "New York Life Insurance Company"-ի կողմից Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներին տրված գումարների վերադարձը նյութական հատուցում է՝ այդ հանցագործության դիմաց: Ապահովագրական վճարների տրամադրումը, այսինքն՝ Օսմանյան կայսրությունում իրենց կյանքն ապահովագրած ցեղասպանության զոհերի պահ տրված ապահովագրական գումարների վերադարձը, ընդամենը՝ լրացուցիչ կերպով վերահաստատում է Հայոց ցեղասպանության եղելությունը, բայց դա ոչ մի կերպ չի կարող դիտվել որպես հատուցում տվյալ հանցագործության դիմաց: Դրանք ընդամենը՝ ապահովագրական կազմակերպության կողմից իր հաճախորդների նկատմամբ ուշացումով կատարվող պարտավորություններ են<sup>520</sup>:

Վերջապես՝ Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման համար փայլուն նախադեպային հիմք կարող է հանդիսանալ 1952 թ. սեպտեմբերի 10-ի Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Գերմանիային ուղղված Հրեական նյութական պահանջների կոնֆերանսի կամ կրճատ՝ Պահանջների կոնֆերանսի միջև կնքված Լյուքսեմբուրգյան համաձայնագիրը, որով Գերմանիան սկսեց Հոլոքոստի նյութական վնասների հատուցումը:

Հայոց ցեղասպանության հոգեբանական կամ բարոյական հետևանքների վերականգնման տեսակետից միջազգային իրավունքում կիրառելի է սատիսֆակցիան, որը կարող է արտահայտվել խախտման ճանաչման, ափսոսանքի արտահայտման, պաշտոնական ներողության կամ որևէ այլ պատշաճ ձևերով: Այս առումով սատիսֆակցիայի կարևոր դրսևորում կարող է համարվել նախևառաջ՝ թուրքիայի կողմից

<sup>520</sup> Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 81:

պետականորեն վարվող Հայոց ցեղասպանութան ժխտողական քաղաքականության դադարեցումը:

Ի դեպ, Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը շատ է հիշեցնում նրա իրավանախորդի՝ Օսմանյան կայսրության քաղաքականությունը, երբ 1877-1878 թթ. ուս-թուրքական պատերազմից հետո, ընթացած բանակցություններում Թուրքական կողմը, խեղաթյուրելով իրողությունները, պնդում էր, թե Հայերի զանգվածային կոտորածներն իրականացվել են ոչ թե իշխանությունների կամ Թուրքերի, այլ քրդերի ու չերքեզների կողմից: Թեև Սան Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերի համապատասխանաբար՝ 16 ու 61 հոդվածներում հիմք ընդունվեց այդ տեսակետը, բայց, այդուհանդերձ, դա Օսմանյան կայսրությանը չփրկեց մեծ տերությունների մարդասիրական միջամտությունից: Ուրեմն՝ ժամանակակից Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը նույնպես չի կարող խուսափել որոշ եվրոպական երկրներում արդեն ակիզբ առած ցեղասպանության հանցագործության ժխտումը քրեականացնող օրենսդրության նախատեսած պատիժներից:

«Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հիմնավորման պատմաիրավական փաթեթը» (այսուհետ՝ Պահանջների փաթեթ) Հայաստանի և Սփյուռքի կողմից միասնաբար մշակելու հանգամանքը կարևոր է այնքանով, որ ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հարցում կձևավորվի միասնական համազգային մոտեցում, որից այլևս չի կարող լինել որևէ շեղում: Այդպիսով կբացառվեն Հայոց ցեղասպանության հետևանքների և ներկայացվելիք պահանջների հետ կապված տարաբնույթ մեկնաբանություններն ու շահարկումները՝ տարբեր կառույցների և առանձին անհատների կողմից: Հարկավոր է քաջ գիտակցել, որ այս հարցում ցանկացած ինքնագործունեություն կամ մոտեցումների տարբերություններ անպայման օգտագործվելու են մեր դեմ՝ նպատակ հետապնդելով տարածայնություններ մտցնել հայ ժողովրդի հատվածների միջև և շեղել ճիշտ ճանապարհից:

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը «Պահանջների փաթեթին» պետք է տա Հայեցակարգի կարգավիճակ, որպեսզի քաղաքական կոնյուկտուրայի փոփոխությունից անկախ, երկրի արտաքին քաղաքականության մեջ այս ուղեծրից ոչ մի շեղում չկատարվի: Այս քայլի նպատակը պետք է լինի այն, որ պաշտոնապես արգելվի որևէ գործողություն, առավել ևս՝ որևէ փաստաթղթի ստորագրում, որը կլինի շեղում ընդունված Հայեցակարգից: Հայեցակարգի ընդունումից հետո,

այն լինելու է բաց և հրապարակային փաստաթուղթ, լայնորեն տարածվելու է հայության շրջանում և աշխարհով մեկ:

Ռազմավարական այս փաստաթղթի հիման վրա՝ Սփյուռքի ու Հայաստանի համապատասխան կառույցների ու մասնագետների համատեղ ջանքերով պետք է մշակվի նաև մարտավարական, կիրառական փաստաթուղթը՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործողությունների ծրագիրը» (այսուհետ՝ Գործողությունների ծրագիր): Գործողությունների ծրագրում մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է լինելու հասնել վերը նշված հետևանքների հաղթահարմանը: Այս փաստաթուղթն ի տարբերություն առաջինի, լինելու է փակ, սահմանափակ օգտագործման համար նախատեսված՝ թույլ չտալու համար, որ հակառակորդը նախապես իմանալով հնարավորություն ստանա կանխարգելիչ քայլերով չեզոքացնել իր համար անբարենպաստ հետևանքները:

